

Ա. Խ. Գյուղացի

Ա Կ Ե Ա Ր Կ Ն Ե Ր
Ա Ծ Խ Ա Ր Հ Ա Բ Ա Ր Ի
Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն

Երևան 1963

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА

История армянского языка

4

С. А. ГАЛСТЯН

**ОЧЕРКИ ПО ИСТОРИИ
АШХАРАБАРА**

(1850—1860-ые годы)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН

1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԼԵԶՎԻ ԲՆԱՌԱՑՈՒՑ

Հայոց լեզվի պատմություն

491.99-53

4

Ս. Ա. ԳԱԼԱՑԱՆ

ԱԿՆԱՐԿՆԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ

(1850—1860-ական թվականներ)

Հ 26321



ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ՀՐԱՄԱՆԱԳՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1963

Աշխատությունը նվիրված է XIX դարի 50—60-ական թթ. մեր գրական լեզվի զարգացման որոշ խնդիրների լուսաբանմանը:

Քննարկված ու գնահատված են Հյուսիսաֆալլյան աշխարհաբարի լեզվական հիմնական իրողությունները, հնչյունական, բառային ու քերականական երևույթները:

Աշխատությունը կարող է օգտակար լինել բանափրական ֆակուլտետների ուսանողներին ու Հայոց լեզվի պատմությամբ հետաքրքրվողներին:

«ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍԵՆԱՇԱՐՈՎ, ՄԻՆԶԵՎ, ԱՅԺՄ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

1. Ա. Ղ. Ղազարյան, Միջին Հայերեն, գիրք Ա:
2. Գ. Ա. Ղափանցյան, Հայոց լեզվի պատմություն, Հին բրձան:
3. Թ. Ա. Ղարազյովյան, Հին Հայերենի խոնարհման համակարգի ծագումը:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արևելահայ գրական լեզվի պատմության մեջ գրական աշխարհաբարի մշակման հյուսիսափայլյան ուղղությունը բացառիկ կարևոր դեր է կատարել: Անցյալ դարի 50—60-ական թթ., երբ սուր պայքար էր մղվում աշխարհաբար գրական լեզվի իրավունքների, նրա համակարգի շուրջը, Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի անմիջական շանքերով հիմնադրված «Հյուսիսափայլ» ամսագիրը ու միայն ամենայն կրրուտությամբ կանգնեց նոր գրական լեզվի իրավունքների պաշտպանության դիրքերում, այլև գործնականում ձեռնամուխ եղավ նրա մշակմանը՝ մանրամասնաբար քննելով աշխարհաբարի համակարգի բաղադրիչները, յուրաքանչյուր բառ ու դարձվածք «Հափ ու կշռի տակ դնելով»: Զեռնարկելով գրական աշխարհաբարի մշակմանը՝ նրան որոշակի, խորապես գիտակցված ու տեսականորեն հիմնավորված լեզվական որակ տալու նպատակով, «Հյուսիսափայլ» հեղինակները ամսագրում տեղ էին տալիս բագմապիսի գրական տեսակների՝ գեղարվեստական գրականություն (արձակ և շափածո, ինքնուրուց և թարգմանական), գրական քննադատություն, գիտական գրականություն (բնագիտություն և հասարակական գիտություններ) և այլն: Այս հանգամանքը, անկասկած, իր կնիքն էր դնում «Հյուսիսափայլ» լեզվի և ոճի վրա:

«Հյուսիսափայլը» առանձնապես 1858—1860-ական թթ. լեզվական մշակույթի իր բարձր մակարդակով և տեսական ճիշտ նպատակագրումներով ամենից առաջ պարտական էր Ստ. Նազարյանին և Մ. Նալբանդյանին, Հատկապես Մ. Նալբանդյանին, որը ամսագրի ոգին էր: Մ. Նալբանդյանի դերը մեր գրական լեզվի պատմության մեջ առանձնապես մեծանում է այն հանգամանքի շնորհիվ, որ նա 1863—1866-ական թթ. զգաց իր դավանած ուղղության սխալները գրական նոր լեզվի

մշակման խնդիրներում և ձեռնամուխ եղավ գրանց շտկմանը՝ ուրվագծելով այն ճանապարհները, որոնցով պետք է զարգանար հյուսիսափայլան աշխարհաբարը:

Հյուսիսափայլան աշխարհաբարը, «Հյուսիսափայլի» հեղինակների լեզվական քաղաքականությունը տարբեր գնահատականների է արժանացել: Ոմանք ժիստել են մեր ազգային լեզվի մշակմանու կատարելագործման ասպարեզում «Հյուսիսափայլի» և հատկապես Ստ. Նազարյանի ու Մ. Նալբանդյանի դերը: «Մեղու Հայաստանի» թերթի և «Ճուաքաղ» ամսագրի «Հյուսիսափայլի» գեմ գրված բոլոր հոդվածներում արտահայտված այս տեսակետը հետագայում պաշտպանել են, օր.՝ Ռ. Պատկանյանը¹ (իմինին նվիրված իր հուշերում) և Ա. Երիցյանը²: Վերջինիս կողմնակալ Հարցադրումների գեմ իր ժամանակին ամեն այն կրոտությամբ հանդես է եկել Սմբ. Շահագիզը³, որը հյուսիսափայլան աշխարհաբարի և հատկապես Ստ. Նազարյանի լեզվի կոնկրետ օրինաշափությունների մասին բազմաթիվ հետաքրքիր դիտողություններ է արել: Այսուհետեւ հյուսիսափայլան ուղղության և նրա առանձին հեղինակների (հատկապես Մ. Նալբանդյանի) կոնկրետ լեզվական իրողությունների մասին մասնակի դիտողություններ են անում Մ. Բերբերյանը, Ե. Շահագիզը, Գ. Աղայանը, Հ. Զրաբյանը, Լ. Մանվելյանը, Կ. Կուտիկյանը, Ա. Տերտերյանը և ուրիշներ⁴:

Գիտական հետաքրքրությունը մեր գրական լեզվի մշակման այս ուղղության նկատմամբ իրապես սկսվում է XX դ. 30-ական թվականների վերջերին, երբ առաջնահերթ խնդիր է ճանաչվում աշխարհաբարի պատմության ուսումնասիրությունը:

1939 թ. լուս տեսած՝ Գ. Ակակի «Ժամանակակից Հայոց լեզվի տեսության» Ա. գիրքը, որի մեջ հատուկ ուշադրություն է դարձված գրապահքարին և հյուսիսափայլան աշխարհաբարի դերին, և որը որոշ փոփոխություններով մտավ 1955 թ. հրատարակված «Ժամանակակից Հայոց լեզվի դասընթացի» մեջ, այս շարքի առաջին ուշագրավ աշխատությունն է:

¹ Ռ. Պատկանյան, Ընտիր երկասիրություններ, հ. 3, մաս 2-րդ, Գ.-Ռոստով, 1904, էջ 16:

² Տե՛ս «Փորձ» 1879—1880 թթ., № 4 («Ստ. Նազարյանց և նրա գրականական գործունեությունը»):

³ Տե՛ս Սմբ. Շահագիզ, Հրապարակախոս ձայն, Մոսկվա, 1881:

⁴ Տե՛ս «Նոր-դար», 1891, № 138, Երվ. Շահագիզ, Միքայել Ղազարյան Նալբանդյանց Մոսկվա, 1897: Գ. Աղայան, Երկեր, հ. 3, էջ 85. «Բաղմավեպ», 1902, № 2, էջ 76—77; Լ. Մանվելյան, Ուսուահայ գրականության պատմություն, մաս 2, 1910: «Մուրճ», 1906, № 1, էջ 66: Արսեն Տերտերյան, Միքայել Նալբանդյան, աշխատության հրապարակախոսը, Ալեքսակ, 1910 և այլն:

Այսուհետեւ, 1948 թ. լուս տեսան պրոֆ. Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմությունը», 1951 թ.՝ Հ. Աճառյանի «Հայոց լեզվի պատմության» 2-րդ մասը (ավարտված է եղել և պատրաստ հրատարակության 1939 թ.), 1954 թ.՝ պրոֆ. Ս. Ղազարյանի «Հայոց լեզվի համառոտ պատմությունը»: Հարցադրումների թարմությամբ և առաջ քաշված խնդիրների բազմազանությամբ հետաքրքիր աշխատություն է Գ. Զահուկանի դեռևս անտիպ դոկտորական դիսերտացիան (տե՛ս ավտոռեֆերատը «Армянская лингвистическая мысль и вопросы новоармянского языка в XVIII—XIX веках», 1955, Երևан): Նշված բոլոր աշխատություններում, նրանց նպատակների ու ծավալների ընձեռած սահմաններում, առանձին ուշագրություն է դարձված մեր լեզվի զարգացման XIX դ. 50—60-ական թթ. շրջանին՝ գրապայքարին, գրական աշխարհաբարի մշակման հյուսիսափայլյան ուղղության գնահատմանը և հատկապես Ստ. Նազարյանի ու Մ. Նալբանդյանի գերին, որպես աշխարհաբար տեսաբանների և հեղինակների: Այդ հետազոտություններում դրված ու լուծված են հյուսիսափայլյան աշխարհաբարին վերաբերող մի շաբթ խնդիրներ: Հատկապես պետք է նշել, որ պրոֆ. Գ. Սևակի «Ժամանակակից հայերենի համառոտ պատմության» մեջ նկարագրված են հյուսիսափայլյան աշխարհաբարի հիմնադիր հեղինակների՝ Նազարյանի և Նալբանդյանի լեզվական համակարգի բաղադրիչները (լեզվական սպեկտր, էջ 33, ներդիր):

Այս պրոբլեմների լուծմանը խոշոր չափով նպաստեցին վերջին տարիներին լույս տեսած նալբանդյանագիտական աշխատությունները, որոնցից պետք է նշել Ա. Հովհաննիսյանի մեծարժեք «Նալբանդյանը և նրա ժամանակը» (Երևան, 1955) երկնականացման ամենալավագույն աշխատությունը և Ա. Ռնճիկյանի «Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը» (Երևան, 1954):

Նալբանդյանի լեզվագիտական հայացքներին ու գործունեությանն են նվիրված Խ. Մարգարյանի «Միկայել Նալբանդյան և вопросы языка» (Երևան, 1955) և Ալ. Մարգարյանի «Մ. Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը» (Երևան, 1957) աշխատությունները:

Անվիճելի է, որ գրական աշխարհաբարի պատմության XIX դ. 50—60-ական թթ. և հետագա շրջանի դեռևս վիճելի խնդիրների լուծմանը զգալիորեն կնպաստեր աշխարհաբարի մշակման հյուսիսափայլան ուղղության և նրա առանձին հեղինակների լեզվական իրողությունների հետազոտությունը: Վերջին Հանգամանքը հատկապես կարևոր է, որովհետև գրական լեզվի մշակման ընդհանուր հարցե-

բում միասնական լինելով՝ «Հյուսիսափայլի» հեղինակների լեզուն
կոնկրետ շատ հարցերում տարասեռ է: Այդ շատ պարզ երևում է,
եթե համեմատում ենք, օրինակ, Մ. Նալբանդյանի, Ստ. Նազարյանի
և «Հյուսիսափայլի» մյուս հեղինակների լեզվական համակարգի
բաղադրիչները:

Ներկա աշխատանքը նվիրված է Հյուսիսափայլյան աշխարհա-
բարի լեզվական կոնկրետ իրողությունների առավել քիչ ուսումնա-
սիրված մի քանի հարցերի լուսաբանմանը: Դուք կլինենք, եթե այն
թեկուզ ամենափոքր շափով նպաստի հյուսիսափայլյան աշխարհա-
բարի ամբողջական պատմության ստեղծմանը, որը ապագայի
գործ է:

ՀՅՈՒՍԽԱՓԱՅՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Ստ. Նազարյանի նախահյուսիսափայլյան շրջանի լեզուն.—
Խ. Աբովյանի՝ գրաբարի դեմ գրած աշխատություններից միայն
մեկը՝ «Նախաշավիղն» է, որ հրատարակման թվականով ժամանա-
կագրական տեսակետից նախորդել է Ստ. Նազարյանի 1844 ու
1846 թթ. լույս տեսած ոռուսերեն երկու աշխատություններին, որոն-
ցով նա սկսեց աշխարհաբար լեզվի դատի պաշտպանությունը: Այդ
իսկ պատճառով դժվար է գերազանցատել այն դերը, որ կատարել
է աշխարհաբարի իրավունքների պաշտպանության, ինչպես և նրա
մշակման գործում անցյալ դարի 40—60-ական թթ. խոշոր գործիչ
ու մեծանուն գիտնական Ստեփանոս Նազարյանը: Լինելով Խ. Աբովյանի մտերիմ դասընկերը (Ներսիսյան դպրոցում)¹ Ստ. Նազարյանը,
բնականաբար, ծանոթ պետք է եղած լիներ ազգի լուսավորության,
նրա պետքերի մասին Խ. Աբովյանի խոհերին: «Ամեն բանից երեսում
է, որ երկու մտերիմ ընկերները դեռ իրենց աշակերտության օրերով
ուստ են կապած եղել միասին ուսանելու, միասին կատարելագործ-
վելու ուսման մեջ և ավարտելուց ու կյանքի ասպարեզը թևակոփե-
լուց հետո, նույն գործին ծառայելու, ազգի լուսավորության
գործին»²: Ստ. Նազարյանն իր ժամանակի համար լավագույն կրթու-
թյուն է ստացել, նա առանձնապես հմտություն է եղել լեզուների իմա-
ցության մեջ: Դեռևս մինչև Դորպատ գնալը, Հ. Ալամդարյանի վկա-
յությամբ, նա եղել է «յառաջադէմ զարգացեալ յոյժ ի դպրութիւնս
հայ, ոռու, պարսիկ և գաղղիուկան լեզուաց»², Դորպատի գիմնա-
զիոնում դրա վրա ավելանում է գերմաներենը: Եթե սրանց գումա-
րենք համալսարանում նրա ձեռք բերած լավագույն գիտելիքները,

¹ Նախագիգ Երվ., ֆիլ. գիտ. դոկտոր, Խաչատուր Աբովյանի կենապրությունը, Երևան, 1945, էջ 46:

² Նույն տեղում, էջ 47:

որի հիանալի ապացուցն է «Հյուսիսափայլը», ապա պարզ կլինի, որ աշխարհաբարի պաշտպանությանն իր կյանքը նվիրել էր քաջաշմուտ մի գիտնական, որի արժանի գնահատությունը բազմաթիվ անգամներ տվել է նրանով հիացած Մ. Նալբանդյանը:

Հայտնի է, որ աշխարհաբարի դատի պաշտպանությունը Ստեղծաբարյանն սկսեց ոռուերեն լեզվով. դրանից նա անցավ գրաբարին՝ 1851 թ. հրատարակելով «Հաղապա փորձական հոգեբանության ճառ» աշխատությունը, որի հիմնական նպատակներից մեկը, եթե ոչ հիմնականը, գրաբարի իր իշմացությունը ցուց տալն էր: Եվ աշխարհաբարին քաղաքացիական իրավունքներ տալ պահանջող իր առաջին աշխատությունից միայն ինը տարի հետո նա հրատարակեց իր առաջին աշխարհաբար գրքերը՝ «Վարդապետարան կրոնի» և «Առաջին հոգեղին կերակուր»՝ հայ մանուկների բարոյական դաստիարակության, ինչպես և նորանց մայրենի լեզվին, բնագիտության ու մաթեմատիկայի տարրական հիմունքներին ծանոթացնելու համար:

Աշխարհաբարի մշակման գործում նազարյանը սկզբից և այսօնանազատվում է նախորդ ու ժամանակակից բոլոր ուղղություններից: «Մեր նորախոս լեզուն չէ ոչ մի քաղաքի մասնավոր կամ առանձին բարբառ,— գրում է նա «Վարդապետարան կրոնի» աշխատության առաջարանում,— այլ՝ մոտավորապես՝ այն մաքուր և հստակ հայախոսությունը, որ լսվում է ազգի մեջ հարյուրավոր և հազարավոր լավ խոսողների բերանից՝ ուր և գտանքին նոքա»¹: Նազարյանը անհնար է համարում որպես ընդհանուր գրական լեզու օգտագործել որևէ բարբառ. նրա կարծիքով «այդ աղավաղյալ և վայրենացյալ լեզվովը չէ կարելի ոչինչ գործ հառաջ տանել»: Իր ընտրած լեզուն ևս նա պատճենելու կոչ չի անում. այդ լեզուն, նրա կարծիքով, հարկավոր է մշակել, «բանաստեղծի պես հնարել և ճարտարապետել»², իսկ վերջինս հնարավոր է միայն մատենագրության լեզու՝ գրականության լեզու գարձնելով աշխարհաբարը: Զարկ տալ աշխարհաբար լեզվով մատենագրությանը, առանց որի ազգային լուսավորությունը (վերջնական նպատակ) անհնար է—սա է նազարյանի լուսավորչական ծոսպիրը, և այդ ծրագրի իրավորժմանը նա նվիրեց իր ամբողջ կյանքը՝ գրելով, թարգմանելով ու կազմելով, բազմաթիվ զրպարտությունների ու այլնալլ հարձակումների ենթարկվելով, ոմանց պատասխանելով, մյուսների պատասխանը իր թարկվելով:

¹ Ստ. Նազարյան, Վարդապետարան կրոնի, հասարակաց հայախոսությամբ, մասն առաջին, 1853, Մոսկվա, էջ 5—6:

² Նույն տեղում, էջ 6:

բարեկամին՝ Մ. Նալբանդյանին թողնելով և իր գործի դատաստանը միշտ իր «սիրեցյալ ազգին» վերապահելով:

Ոչ միայն աշխարհաբարի մշակման իր տեսությամբ, այլև պրակտիկայով նազարյանը տարբերվում էր գրական լեզվի մշակման նախորդ ու ժամանակակից բոլոր ուղղություններից: Այդ տարբերությունը ամենաընդհանուր կերպով կարելի է բնորոշել Հետեւյալ կերպ:

Նախանազարյանական և հրան ժամանակակից ոչ մի նեղինակի մոտ գրական աշխարհաբարը որոշակի համակարգ չունի, այն խառն է բարբառային՝ մեծ մասամբ մշակողի մայրենի բարբառի և գրաբարյան՝ նեղինակի համար նախընտրելի ձևերով: Նազարյանի լեզուն, ընդհակառակն, սկզբից եեր դրված է որոշակի համակարգի տակ: Ժամանակի աշխարհաբարի տարբեր ուղղությունների տարբերացությունների համեմատությամբ՝ աշխարհաբարի մշակման և առանձնապես բարբառայնությունից աղատ պահելու գործում այդ անգնահատելի անաջագիմական քայլ էր: Նազարյանը դարձավ աշխարհաբարի մշակման այն նոր ուղղության հիմնադիրը և Հեղինակներից մեկը, որը հետագայում «Հյուսիսափայլ» ամսագրի անունով հյուսիսափայլյան աշխարհաբար կոչվեց: Սակայն նազարյանի նախահյուսիսափայլյան շրջանի լեզուն բոլոր գծերով չէ, որ պահպանվեց «Հյուսիսափայլում»:

Որո՞նք են Ստ. Նազարյանի նախահյուսիսափայլյան շրջանի լեզվի հիմնական տարբերիչ հատկանիշները:

1. Որպես կանոն բացառական հոլովը Ստ. Նազարյանը կազմում է միայն աշխարհաբարյան -ից վերջավորությամբ. -էն վերջավորությամբ կազմված բացառականը, որը սովորական էր առանձնապես Ռ. Պատկանյութի լեզվում, Նազարյանը մերժում է: Առավել շատ, քան որևէ այլ նեղինակի մոտ, որոշիչ հոդ (մեծ մասամբ ը) է օգտագործվում բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ: Օրինակ՝ բաց. խորքիցը (Վկ, 6), նորիցը (Վկ, 8), կամքիցը (ԱՀկ, 24), փոշուցը (ՀնՀ, 1, 30), այգեալանիցը (ն.տ., 32), մարդերիցը (ն.տ., 42), գլխիցը (ՀնՀ, 2, 10) և այլն. գործ. Հաջողելովը (Վկ, 5), լեզվովը (Վկ, 6), քանդելովը (ԱՀկ, 14), արյունովը (ն.տ., 24), դատաստանովը (ՀնՀ, 1, 40), խստությամբը (ն.տ., 230), պտղովը (ն.տ., 232), կրակներովը... կատարներովը... կերպարանքովը (ՀնՀ, 2, 9). Ներդ. օրերումը (Վկ, 5), քաղաքումը (կ, 1902, № 4, 217), այգեալանումը (ԱՀկ, 14), կղզիներումը (ն.տ., 24), ուկեհանքերումը և արծաթահանքերումը (ն.տ.), համալսարանումը (ՀնՀ, 1, 120), միջոցումք. արոտներումը (ՀնՀ, 2, 9):

Աշխարհաբարի համար անսովոր երկույթ է -ի-ով վերջացող

որոշ բառեր՝ ի-ն պահպանելով ու հոլովման հնթարկելը: Օրինակ՝
ուզգ. «Մահուկ Մեհերին... թաք կացավ» (ՀնՀ, 1,118), սեռ. Մա-
հուկ Մեհերիու հետ (ն.տ., 119), բաց. «...Հրաժարվեցավ գեղեցիկ
Մահուկ Մեհերիուցը» (ն.տ.):

2. Անձի առման դեպքում տրականածև հայցական հոլովի կի-
րառման ալժմ սովորական կանոնը Ստ. Նազարյանի լեզվում գեռես
կայուն չէ. բազմաթիվ անձի անոններ, որոնք անձի առումով են
օգտագործված, դրվում են դեռևս ուղղականածև հայցականով:
Օրինակ՝ «Համբուրեց յուր փոքրիկ բույրը» (ՀնՀ, 1,112), «Սիրում էր
յուր հայրը և վարժապետը» (ն.տ., 229), «Ողջունեցին պարոն
Բերգը և յուրյանց ընկեր Հասկոն» (ն.տ., 133) և այլն: Որպես բա-
ցառություն հանդիպում է բուրովին հակառակ երկույթը երբ իրի
անունը՝ իրի առման դեպքում տրականածև հայցականով է դրվում:
Օրինակ՝ «Այս վերքին չկարողացավ տաճել հայրը» (ՀնՀ, 1,230):
Վերջինս կատարվում է գերանունների աղղեցությամբ. նկատվում
է ընդհանրապես, որ երբ իրի անոն և իրի առումով օգտագործված
ուղիղ խնդիրը հաջորդ նախադասության մեջ փոխարինվում է դե-
րանվամբ, ապա այդ գերանունը դրվում է տրականածև հայցակա-
նով: Օրինակ՝ «Մատուցանելով ձեր սիրելությանը իմ գործի առաջին
հատոր... խնդրում եմ բաղցրությամբ ընդունել նորան» (լ, 1902,
№ 4, 217): «Քանդեցեք այդ տաճարը և ես կնորոգեմ դուրան երեք օրի
մեջ» (ՎԿ, 94):

3. 1850—57-ական թթ. Ստ. Նազարյանի լեզվում -ուրյուն
(-ութիւն)¹ ածանցով կազմված բառերի հոգնակին կազմվում է և՝
գրաբարյան -ք, և՝ աշխարհաբարյան -ներ վերջավորություններով.
թեքման ժամանակ խառն կերպով օգտագործվում են նույն բառերի
հնչյունափոխված (-քեն-) և չհնչյունափոխված (-քյուն-) հիմքերը:
Հոգնակի սեռականում այդ բառերը առավելապես -ի հոլովման են
հնթարկվում: Օրինակ՝ շինություն (ԱՀԿ, 65), վիրավորությունք,
փորձությունք (ՀնՀ, 1,412), մարգարենությունք (ն.տ., 503), ակ-
նարկությունք, տարածայնությունք (ՀնՀ, 2, 278), բայց և՝ դիտավո-
րություններ (ԱՀԿ, 229), տպավորություններ, զուգաձայնություն-
ներ (ՀնՀ, 2,394), ավանդություններ (ՀնՀ, 1,503) թշվառութենից
(ԱՀԿ, 24), արագութենով (ն.տ., 65), մտածութենների (ՀնՀ, 2,11),
հափշտակութեններով (ն.տ., 453), ակնարկութեններին (ն.տ., 278):

Բայց և՝ հնարագործություններով (ՀնՀ, 1,489), տեղեկու-
թյուններով (ն.տ., 503), իշխանությունների, տերությունների (ՀնՀ,

¹ Օրինակները մեջ ենք բերում նոր ուղղագրությամբ, բացառությամբ այն դեպ-
քերի, երբ հարկ է եղել պահպանել հինը:

2,453), բազմոքյունների (ն.տ., 341), հատկություններիցը (ն.տ., 157) և այլն:

4. Ստ. Նազարյանի լեզվում իր լուրօրինակ արտացոլումն է գտել ի հոլովման միակը դառնալու ձգտումը. պատմականորեն բազմաթիվ այլ հոլովումների պատկանող բառեր ենթարկվում են ի հոլովման: Օրինակ՝ օրի մեջ (ՎԿ, 94), մարդերի (ն.տ., 5), ընկերի հետ (ն.տ., 6), գիշերի (ՀՆՀ, 1, 233). Հմմտ. նաև՝ ամուսնից (ն.տ., 122), տղամարդին (ն.տ., 40), մահին (ԱՀԿ, 14) և այլն:

5. Ի տարրերություն և ի հակադրություն նախորդ և ժամանակակից բոլոր հեղինակների Ստ. Նազարյանը գրաբարյան ձեռվ է օգտագործում՝

ա) Մենք գերանունը. «Մեք ևս արժան տեսանք» (ՎԿ, 5), «պատճառ ունեինք մեք» (ԱՀԿ, 25 և ամենուր):

բ) Ենք, սա, դա, նա գերանունների թեքված ձեերի հիմքը. յուրյանց ձեռքումը (ԱՀԿ, 24), առանց սնուցանելու նորան, նորա սրտի հետ (ՎԿ, 8), նոցա (ն.տ., 5), դրանից (Լ, 1902, № 4, 216), գանչեց նորանց (ԱՀԿ, 14), առանց դորան (ն.տ., 65), նորանից (ՀՆՀ, 1, 230) և այլն: Առանձին բացառությունների կարգով հանդիպում են նաև որոշ աշխարհաբար ձեեր: Օրինակ՝ սրանով (ն.տ., 129):

6. Առանց որևէ բացառության Ստ. Նազարյանն օժանդակ բայի եղակի երրորդ գեմքի ժխտական ձեփ համար օգտագործում է չե: Օրինակ՝ չե կարելի (ՎԿ, 6), չե կարող (ԱՀԿ, 14): Նույն գեմքի հաստատական խոնարհման համար միշտ ունենք չե: Օրինակ՝ արմատախիլ է առնում (ն.տ., 65), առել չե (ն.տ., 120), կարող է (ՀՆՀ, 1ա), վեր չե պահում (ն.տ., 285) և այլն:

7. Պատճառական (ներգործական) բայերի հիմքը չնշին բացառություններով գրաբարյան ձեռվ է օգտագործվում: Օրինակ՝ պիտո է աճեցուցանեին (ՎԿ, 7), աճեցուցանում է (ն.տ., 9), առանց սնուցանելու (ն.տ., 8), ոտք խաղացուցի և գլուխ բարձրացուցի (Լ, 1902, № 4, 217), բարձրացուցանելով (ՀՆՀ, 1, 121), անցուցանում էր (ն.տ., 122), զարթուցանել (ՀՆՀ, 2, 388), հասուցանել (ն.տ., 389), բայց և բարձրացընես (ԱՀԿ, 13), արմատացընելով (ՎԿ, 7):

8. Բոլոր գեպքերում պահպանվում է «ներքին ա հոդակապը»¹ (-ան-սոսկածանցի-ա-ձայնավորը): Օրինակ՝ Ըսկանեն (ՎԿ, 10), գտանվելուց հետո (ն.տ., 5), տհսանելով (ԱՀԿ, 14), անցանել (ն.տ., 65), մեռանում էին (ն.տ., 24), մտանեն (ՀՆՀ, 2, 8):

9. Լայն կիրառում ունի առաջին խոնարհման բայերի անցյալ

¹ Պրոֆ. Հր. Աճառյանի տերմինն է:

կատարյալի -այ, -ար, -ավ, -անք, -աք, -ան լեռջավորությունը: Օրինակ՝ ըստ հավանեցան (ԱՀԿ, 14), թեքվեցավ (ՀՆՀ, 1,31), թակ-վեցավ (ն.տ., 33), արբեցավ, վառվեցավ (ն.տ., 230):

ինչպես տեսնում ենք, այդ ձևն օգտագործվում է ինչպես կրա-վորական ու շեղոր, այնպես էլ ներգործական բայերի հետ:

10. 1850—57 թթ. միայն նազարյանական լեզվին հատուկ բա-ղադրիչ է (մինչև 50-ական թթ. կեսերը միայն նազարյանին հա-տուկ) պիտո է միադիմի բայը (կամ եղանակիչը): «Կարդապետա-րան կրոնի» աշխատության մեջ այս ձեւ հետ մեծ շափերով օգտա-գործվում է նաև պետք է-ն, սակայն աստիճանաբար պիտո է ձեւ գերակշռում է: Օրինակ՝ պիտո է մեզ համբերել (լ, 1902, № 4, 218), պիտո է դորան գնալ (ՀՆՀ, 1,227), պիտո է համարել (ԱՀԿ, 24), պիտո է... պատե (ՀՆՀ, 1,231), պիտո է ասել (ն.տ., 32), պիտո է վարվիլ (ն.տ.):

11. Նկարագրվող շրջանում միայն Ստ. նազարյանի լեզվին հա-տուկ երևույթ է անցյալ անկատար ժամանակի կիրառությունը ներ-կայի փոխարեն: Օրինակ՝ «Այն հողմը սաստիկ է, երբ մի ժամի մեջ կատարում էր ութ մըղոն... նա դառնում է հողմի մրրիկ, երբ անցու-ցանում էր քըսան մըղոն, ասվում է մեծ մրրիկ, եթե մի ժամի մեջ վազում էր երեսուն մինչև քառասուն մըղոն» (ԱՀԿ, 65): Բերված նախադասության մեջ բոլոր երեք երկրորդական նախադասություն-ներում էլ ստորոգալը ներկայի փոխարեն դրված է անցյալի անկա-տար ժամանակով:

12. Աշխարհաբարում անորոշ գերբայի գործիական հոլովով կազմված ձեւի և ժամանակի պարագա դերբայական դարձվածի կողմնակի ենթական նույնանում է գլխավոր նախադասության են-թակայի հետ, և անորոշ գերբայի գործիականը ցուց է տալիս նույն նախադասության ենթակայի կատարած հիմնական գործողության հետ միաժամանակ կամ նրանից անմիջապես առաջ, բայց էլի նույն ենթակայի կատարած մի այլ գործողություն:

Նազարյանի լեզվում, հաճախ, նման դեպքերում, օտար լեզու-ների աղքեցության տակ (առավելապես ֆրանսերենի՝ գալլիցիզմ) այդ գերբայական ձեռվ ոչ միայն նույն ենթակայի կատարած գոր-ծողությունն է արտահայտված, այլև այլ ենթակաների: Օրինակ՝ «Ալեքսանդրը մարմնով թեթևաշարժ լինելով և ոտերով շուշտ, նո-րան բաշակարած հայրը» (ՀՆՀ, 1, 5): «Բայց օտարականը կամակր-

¹ Օրինակ՝ Արամը երգելով եկավ նախադասության մեջ երգելով ձեռ ցուց է տալիս, որ Արամը (ենթական) գալու հետ միասին երգում էր: Եթե երգելով-ից առաջ և հետո մի փոքրիկ դադար տանք (Արամը, երգելով, եկավ) երգելու գոր-ծողությունը կնախորդի դադուն և կստացվի մեր նշած երկրորդ իմաստը՝ Արամը երգելուց հետո եկավ, Արամը երգեց և հետո եկավ:

վելով յուր պահանջողության վերա, նորա և տնտեսի մեջ բացվեցավ երկար ու սաստիկ կրիվ» (ն.տ.):

13. Որոշ կապեր, որոնց հետ այդ ժամանակ էլ սովորաբար տրական հոլովով գերանուն կապի խնդիր էր օգտագործվում, նազարյանը դնում է սեռական կապի խնդրի հետ: Օրինակ՝ ձեր համար, իմ հետ (Լ, 1902, № 4, 216), ո՞ն ԷԵՄ (ՀՆՀ, 1, 11), իմ համար (ն.տ., 15) և այլն: Վրա կապը նրա մոտ արգեն բացառապես վերայ գրաբարյան ձեռվ է օգտագործվում: Օրինակ՝ որոնց վերայ (ն.տ., 229), կուրծքի վերայ (ն.տ., 230), կերպարանքի վերայ (ն.տ., 231), աշխարհիս վերայ (Լ, 1902, № 4, 216):

Քննարկված օրինաչափությունների որոշ մասը ժամանակի լեզվում եղել է քիչ կամ շատ տարածված, իսկ մի քանիսն էլ որպես միայն նազարյանի լեզվի բնորոշ առանձնահատկություններ են հանդես գալիս 50-ական թթ. սկզբին և կեսերին: Սակայն նազարյանի լեզվի պատկերը լրիվ չի լինի առանց նրա բառապաշտարին և դրա օգտագործման եղանակներին թեկուզ և ամենահամառոտ ձեռվ ծանոթանալու:

Ստ. նազարյանի լեզվի բառապաշտարը ուսումնասիրելիս և ժամանակի այլ գործիչների մշակած աշխարհաբարի հետ համեմատելիս՝ առաջին հատկանիշը, որ աշրի է ընկնում, բարբառային բառերի համարյա իսպառ բացակայությունն է: Զի կարելի գտնել որևէ բարբառային բառ կամ քերականական իրողություն, որն օգտագործված լիներ միայն նազարյանի լեզվում և բնորոշ վիճեր գրական լեզվի նույն շրջանի այլ մշակողների համար: Ուրիշների օգտագործած բազմաթիվ բարբառային իրողությունների փոխարեն նազարյանի լեզվում ունենք միայն հոդի գործածությունը բացառական, գործիական ու ներգոյական հոլովների հետ, որը նկարագրեցինք վերևում և մին բառը, որը լայնորեն օգտագործվում է բոլորի կողմից՝ սակավ շեղումներով հօգուտ մի և մեկ ձեռքի: Այդ բառի օգտագործումը նազարյանի կողմից կատարվում է նույն ձեռվ, ինչպես մյուս ժամանակակիցների մոտ, այսինքն՝ առավել շատ, եթե համարվում կամ հակադրվում է մյուս գերանվանը, օր՝ «Մինը գրել շիմանալով... մյուար գրել իմանալով» (Լ, 1902, № 4, 216): «Մինը մյուախն... ընծաեին ուղարկում» (ՀՆՀ, 1, 38), «Մինը մյուսի քամակից» (ն.տ., 119), կամ եղբ կապվում է բացառական հոլովով գրված բառի հետ, ըստ էության նրա հետ հանդես գալով որպես նախադասության մի անդամ (ենթակա, ստորոգելիսական վերադիր կամ լրացում): Օրինակ՝ «Նորանցից մինը ասաց» (ՀՆՀ, 1, 31), «Հրամայեց յուր ժառաներից մինին» (ՀՆՀ, 36): Օգուտներից մինը (ԱՀԿ, 24)¹⁾:

¹⁾ Հմմտ. նաև մինի ձեռքով (ՀՆՀ, 1, 32), «Մինը հարցումն արեց» (ն. տ., 34),

Աշխարհաբարի մշակման Ստ. Նազարյանի տեսությունը իր սուր ծայրով ուղղված էր գրական լեզուն բարբառայնությամբ խճողելու դեմ: Այս է պատճառը թերեւ, որ նրա լեզվում բարբառացին փոքրաթիվ տարրերի կողքին տեղ գտան ամենաբազմապիսի գրաբարյան իրողություններ, սկսած շարագասությունից, օր՝ «Ուներ լավ դիտավորություններ... շատ»—(ՀնՀ, 1,229), «Կա անհամար բազմություն աշխարհային մարմինների»—(ն.տ., 236), մինչև բառերի գրաբարյան հնացած իմաստներով օգտագործումը: Խոսքը որոշ քարացած գարձվածքների կամ գրաբարյան առանձին նախդիրների գործածման մասին չէ, որոնք այսօրվա մեր լեզվում ևս կան, օրինակ՝ առ ի սրտե, ըստ որում (ն.տ., 229), վեր ի վայր շրջեն (ԱՀԿ) և այլն, այլ այնպիսի բառերի, ինչպես, ասենք՝ ըմբռնել «Ըմբռնեց առաջին ավազակի վզից» (ՀնՀ, 1,134), «Ըմբռնեց ձեռքից» (ն.տ., 140), «Մի նավ ըմբռնվեր այգիսի թաթառից» (ն.տ., 373), «Ըմբռնեն վանքերից փախած արեղայքը» (ՀնՀ, 2,247), հատկացուցիչ «Ունի մի քանի հատկացուցիչ նշաններ» (ՎԿ, 23), ամենեին «ամենեին կատարյալ է» (ՎԿ, 7), «ամենեին ոչինչ ծանոթություն չունենալով» (ՎԿ, 8), ոչինչ «Զէի պակասեցրած ոչինչ տարիններ» (ՀնՀ, 1,230), «Ոչինչ մեղմախոս ձայն չէր ասում» (ՀնՀ, 1,233), ամենայն «Ամենայն տեղ հանդիպում էին», ամենայն երեխա, ամենայն զանգակի ձայն, ամենայն փոս, ամենայն ժամացուցի բնեու (ՀնՀ, 1,232) և այլն:

Այս և նման բազմաթիվ այլ բառերի փոխարեն ժամանակին գործածական էին նաև նրանց աշխարհաբարյան նույնանիշները, սակայն ինչ-ինչ պատճառներով Ստ. Նազարյանը, իսկ հետո, ինչպես կտեսնենք, նաև Մ. Նալբանդյանը, նպատակահարմար չէին համարում օգտագործել գրանք և որոշ շրջանում գերազասում էին գրաբարյան ձևերը:

Այս շաբրում առանձին տեղ են գրավում -իշ և -յալ (-եալ) ածանցներով կազմված բառերը, որոնք մեծ թիվ են կազմում նազարյանի բառապաշարում: Օրինակ՝ «Հանդես նոր հայախոսության» աշխատության առաջին հատորի պատահականորեն վերցված 229-րդ էջում ունենք՝ մոլորեցուցիչ, զգուշացուցիչ, ապականյալ, այլանդակյալ, գոսացյալ, մտատանջյալ, հանգուցյալ: Հմմտ, նաև՝ ծածկյալ, բազավորյալ—(ՎԿ, 9), աղավաղյալ, վայրենացյալ, կրբյալ (ն.տ., 6) և այլն և այլն:

Նույնատիպ հնաձև բառեր են առնել («անել»), առնոլ, բողով բայերը, որոնք Ստ. Նազարյանի լեզվում, իսկ այնուշետև նաև ողջ «Հյուսիսափայլում», համառորեն օգտագործվում են գրաբարյան իմաստով, ըստ որում վերջին երկուսը պահպանում են գրաբարյան

լծորդը: Օրինակ՝ առնել («անել»)՝ արմատախիլ առնեն, չկամեցան առնել (ԱՀԿ, 14), «Պարտք... առել է» (ՀՆՀ, 1, 120), եղբակացություն առնել (ն.տ., 33) և այլն: Առնով («առնել, վերցնել»), «Առնուն էշը և փախչեն» (ն.տ., 31), թողություն առնու (ն.տ., 231), «Վեր առնոնք մեր զենքը» (ն.տ., 133): Թողով բողով քաղաքը (ն.տ., 148), հարստություն բողով (ԱՀԿ, 14) և այլն:

Մրանց ավելանում են բազմաթիվ ոճական անհարթություններ, որոնք առաջանում են կամ օտար լեզվի այս կամ այն դարձվածքը բառացի թարգմանելու, կամ նման դեպքերում անհաջող հայկական բառ ու կապակցություն ստեղծելու և կամ ուրիշ այլ պատճառներով, որոնց մեջ քեզ դեր չի կատարում լեզվի ժողովրդական ակունքներին մոտ կանգնած զինելլը: Օրինակ՝ «Կարոտություն ստացավ վերադառնալ յուր հոր բարեկամի մոտ» (ՀՆՀ, 1, 232), «Մի հատ արտասույ բորելոց հետո» (ն.տ., 233), «Հարձակվել մարդերի մեջ» (ն.տ., 230—231), «Կապից դուս պրծած գաղաններին» (ն.տ., 231), «Քո հայրը անհուսալի մեռած է» (ն.տ., 232), «Նա հաստացեց միայն կողքը այս մյուս դամբանական արձանի վերա» (ն.տ.), «Այս ծառաստանը շինել էր տված յուր կյանքի տիսուր օրերի մեջ» (ն.տ., 229), «Ճրի երեսումը մի եռացողական շարժողություն հառաջացնելով» (ն.տ., 373), «Սպանողական հետեանք» (ն.տ., 230) և այլն, և այլն, որոնք բոլորը ի մի հավաքվելով կազմում են այն, ինչ սովորաբար կոչվում է նազարյանական ոն:

Նալբանդյանի նախանյուսիսափայլյան շրջանի լեզուն.— Մ. Նալբանդյանից մեզ հասած աշխարհաբար¹ առաջին փաստաթղթերը խիստ բարբառային բնույթ ունեն. խոսքը վերաբերում է ինչպես «Հիմարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը» բանաստեղծությանը, որը տպագրվել է Գ. Պատկանյանի՝ Նալբանդյանի դպրոցական ուսուցչի, «Արարատ» թերթի 1851 թ. ապրիլի 21-ի համարում և իր լեզվով ոչնչով չի տարբերվում թերթի ընդհանուր ուղղությունից, այնպես էլ 1849 թ. հունվարի 7-ին իր եղբայրներին՝ Գրիգոր և Ղազարոս Նալբանդյաններին գրած նամակին: Ե՛վ բանաստեղծությունը, և՛ նամակը՝ լինելով այդ շրջանի նալբանդյանի լեզվի բնորոշ արտահայտություններ, իրենցից ներկայացնում են բարբառի, գրաբարի ու աշխարհաբարյան ձևերի մի խառնուրդ: Եթե նամակում բարբառը, անշուշտ, պայմանավորված է եղբայրներին հասկանալի լեզվով գրելու ցանկությամբ, ապա բանաստեղծության մեջ գրաբարյան, աշխարհաբարյան և բարբառային տարրերի փոխհարա-

1 Ամենաընդհանուր իմաստով:

բերությունը, անկասկած, բխում է Գ. Պատկանյանի և նրա հրատարակած թերթի աշխարհաբարի մշակման ընդհանուր ուղղությունից: Այդ փաստաթղթերում բարբառային են, ա) Սահմանականի ներկան (որոշ դեպքերում), օրինակ՝ «ինչ քո անձդ մանուկ մատաղ կշարշարես նաֆիլե» (Ելժ, 1, 18), կուգես ըլլալ (ն.տ.), «Աղատ աստված մեզ ստեղծեց, կասեն կելլան ման կուգան» (ն.տ.): բ) Հոլովման որոշ ձեւեր (սեռական, տրական և բացառական). «ինչուդ է պետք» (ն.տ., 18), «Ընկերներուդ պակաս կանչել» (ն.տ.), կանոնքներուն, հորերուս, ամենուն, մեղմեն (ն.տ.), «Հոսեն, կտանիմ... հոնեն» (Ելժ 4, 11), «մեզի կօգնե» (Ելժ, 1, 18), «նարա ասիք» (Ելժ, 4, 11), «ասոր հնարը» (ն.տ., 10): գ) Այլ քերականական ձեւեր ու բառեր. «Թոշ պան է» (Ելժ, 1, 18), լլլալ, չի արժեր, նիպումս, ատերով, կը լլմըննա, փորերնիս (ն.տ.), չի գնացածին համար, «զերե դիճար պան է», բալել, ըլլամ, ետ չիմ գալ (Ելժ, 4, 10—11):

Գրաբարյան ձեռվ են օգտագործվում ինչպես առանձին գերանուններ, օրինակ՝ նոցա (ն.տ., 12), մեթ (ն.տ., 11), բայց և մենի (ն.տ.), այնպես էլ պատճառական բայերի հիմքը: Օրինակ՝ շառողշացուցած (ն.տ., 11) գարձուցին, շանցուցած (ն.տ.):

Հմմտ. Նաև եկեղեցվոն (Ելժ, 1, 18), կամիք հարցանել (Ելժ, 4, 10, 11), գալու եմք (ն.տ., 11), ինչպես և նամակի ժանրի հետ կապված առանձին կապակցություններ՝ «Ստացա ի 5 հունվարի», «Սիրեցյալ եղբարց իմոց Գրիգորի և Ղազարոսի հազարյանց նվիրեմ եղբայրական ողջույն» (ն.տ., 10):

Մակայն այն, ինչ «Մ. Նալբանդյանի լեզու» ենք կոչում, նոր նախիջևանի շրջապատում չձևավորվեց: Ինչպես հայտնի է, խուսափելով Հայածանքներից, 1853 թ. Մ. Նալբանդյանը մեկնեց Մոսկվա: Այդտեղ էլ՝ նախ Լազարյան ճեմարանի, մոսկովյան և պետերբուրգյան հայ և ուսանողական շրջանների, և ապա Հայկական և ռուսական առաջավոր մտավորականության ազգեցության տակ ու նրանց շրջապատում՝ աստիճանաբար ձևավորվում է Նալբանդյանի աշխարհայացքը: Այդ շրջապատը մեծ ազգեցություն է թողնում Նալբանդյանի վրա նաև նրա լեզվի մշակման գործում: Կասկածից վել է, որ Մ. Նալբանդյանը, անմիջական կապեր պահպանելով Մոսկայի և Պետերբուրգի հայկական, առանձնապես ուսանողական շրջանների հետ, պետք է աշխատեր հղկել, մշակել, կոկել իր լեզուն, առաջին հերթին բեռնաթափվելով բարբառային ձևերից, որոնք, բնականաբար, քիչ մատչելի էին այլ բարբառների ներկայացուցիչներին:

Պահպանվել են Ճեմարանում Մ. Նալբանդյանի 1853 թ. աշխերտներից մեկի հուշերը, որտեղ նա վկայում է, որ Նալբանդյանը

այդ ժամանակ, «արդեն խոսում էր ազատ այն ժամանակվա մաքուր աշխարհաբարով»¹:

1851—1855 թթ. մեղ Հասած բանաստեղծություններն ու նամակները վկայում են, որ Նալբանդյանը Մոսկվայում առմիջա հրաժարվում է բարբառային-գրական լեզվի իր նախորդ փորձերից² և սկսում է չնշին շեղումներով օգտագործել այն լեզուն, որը գործածական էր Մոսկվայի և Պետերբուրգի հայկական ուսանողական-կուլտուրական շրջաններում: Դա աշխարհաբարի մշակման, նրա տեսության ու պրակտիկայի բախտը վճռող խոշոր առաջադիմական քայլ էր: Նալբանդյանի լեզուն, սակայն, միանգամից չձևավորվեց:

1853—1856 թթ. աշխարհաբարի մշակման Նալբանդյանի փորձերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ շրջանը նրա համար եղել է պրատումների, որոնումների մի ժամանակամիջոց՝ առանձնապես գրական աշխարհաբարի համակարգի, նրա հարստացման հիմնական աղբյուրների հարցի շուրջը: Այս թե ինչու Նալբանդյանն այդ շրջանի իր բանաստեղծությունները կոչում է «նոր լեզվի տղայության հասակի հիշատակարանք»:

Ի՞նչ հիմնական հատկանիշներ ունի այդ՝ անցման շրջանի Նալբանդյանի մշակած գրական աշխարհաբարը:

ա) Հոլովներից սեռականը և տրականը, որոշ գեղքերում՝ բանաստեղծությունների մեջ և առավել շատ՝ նամակներում, կազմվում են մայրենի բարբառի ձևերով՝ բառերը ենթարկվում են ու հոլովման: Օրինակ՝ «Աստղերուն կը բարձայիմ» (Ելժ, 1,50), «Ամենուն կտամ» (ն.տ., 29) արևու երես (ն.տ., 33), հմմտ. օտարներու (Ելժ, 4,32), «Հասունացել քրոջներուս» (ն.տ., 34), «Չատ բարեկ աղջիկներուն» (ն.տ., 35), «Կուտա ուրիշներուն» (ն.տ., 41), Նախիջևանու մեջ (ն.տ., 40): Նամակներում կան նաև վրա, համար կապերի հետ որոշ շիշ ունեցող խնդրի օգտագործման գեղքեր, օրինակ՝ «Ավտուշին համար» (ն.տ., 35) «Վլխուն վերա» (ն.տ., 33) և այլն: Բացառական հոլովի են նամակներում: Օրինակ՝ գահեն (Ելժ, 1,33), հմմտ.՝ աղային (Ելժ, 4,24), համբավներեն (ն.տ.) և այլն:

բ) Սահմանականի ներկայի բարբառային ձևերը պահպանվել են միայն նամակներում: Օրինակ՝ «...Զարմանալի է, որ դուն ինքու՝

1 Ար. Խնճիկյան, Միքայիլ Նալբանդյանի կյանքի ու գործունեության տարեգրությունը, Երևան, 1954, էջ 48:

2 Ուշագրավ է, որ բանաստեղծությունների տեսքի առաջաբանում խոսելով տեսրում ամփոփված իր բանաստեղծությունների, որպես «նոր լեզվի տղայության հասակի հիշատակարանների» մասին, Նալբանդյանը ցի հիշատակում իր տպագրված «Հիմնարաց՝ ուսման վրա ունեցած կարծիքը» բանաստեղծությունը:

ինձի ձեզի մոռացող համարելով՝ քեզի միշտ սիրով ցույց կուտաս և կասես» (ն.տ., 32):

գ) Բարբառային գերանուններ օգտագործվում են ինչպես բանաստեղծություններում, այնպես էլ նամակներում: Օրինակ՝ Էն կողմը (Ելժ, 1,24), քու ձայնից... քու ձայնով (ն.տ., 27), բեզի (ն.տ., 36, 37), ինձի (ն.տ., 51), մեզի (ն.տ., 60), հմմտ՝ դուն, ինձի, ձեզի, քեզի (Ելժ, 4,32) բայց և՝ ինձ (ն.տ., 32), ք (ն.տ.):

դ) Առանձնապես նամակներում մեծ թիվ են կազմում բարբառային բառաձևերը: Օրինակ՝ «Ինեն միամիտ չեք» (ն.տ., 24), հարկադրեցիք նե (ն.տ., 34), քանի մը (ն.տ., 39), սովորենում է (ն.տ., 33), սորվելու (ն.տ.), սովորցենում է (ն.տ., 60), կատղած, ուոցել (ն.տ., 36), քանի մի (ն.տ., 23) և այլն:

Այլ բարբառային ձևերից, որոնք ժամանակի աշխարհաբարի համար ընդհանուր են, նշելի են.

1. Որոշիչ հոդի գործածությունը բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ: Այս երկութիւնը Մ. Նալբանդյանի լեզվի համար նորություն է և նախորդ շրջանում չկար: Նախահյուսիսափայլան 1853—55 թթ. հոդի գործածությունը նշված հոլովների հետ սովորական երկութիւն է: Օրինակ՝ բաց. շատիցը, քշիցը (Ելժ, 1,21), մի քանիսիցը, սերմիցը (ն.տ., 23), առաջիցը (ն.տ., 59): գործ. միջնորդութենովը (ն.տ., 21), օրինակներովը (ն.տ., 22), որդովը (ն.տ., 26), ձեռքովը (ն.տ., 37), հմմտ՝ հոգովը (Ելժ, 4,40): Ներգ. մասնավորումը (Ելժ, 1,21), դարումը, տակերումը (ն.տ., 23), ամպումը (ն.տ., 44), հմմտ, աշքումը, միջումը, համալսարանումը (Ելժ, 4,32), վերջումը, սրտումը (ն.տ., 40):

2. Ընդհանուր սիստեմ է դառնում նալբանդյանի լեզվում մին բառի օգտագործումը: Օրինակ՝ մին-մինի հետքից (Ելժ, 1,59), ուրացողներից մինը (ն.տ., 26), ամեն մինը (ն.տ.) Մին էլ կտրեց (ն.տ., 33), հմմտ՝ Մինն ալ բավական է (Ելժ, 4,17), մին մինի (ն.տ., 33), մին մինից հեռանալով (ն.տ., 41):

Նկարագրվող շրջանում, նախորդ 1845—50 թթ. համեմատությամբ, անհամեմատ շատանում են սա, դա, նա գերանունների գրաբարյան հիմքով թեքման ձևերը՝ աստիճանաբար միակ օրինաշափությունը դառնալու տենդինց ունենալով: Օրինակ՝ սորվանից (Ելժ, 1, 21), նորա, հարկադրում է նորան (ն.տ., 22), նորանից (ն.տ., 27), հմմտ՝ սորվանից (Ելժ, 4,35), նոցա, սոցա (ն.տ., 32), բայց և՝ նորա բերնով (Ելժ, 1,35), նորա պես (ն.տ., 31):

1 Ունենք միայն մի օրինակ, որը ամենայն հավանականությամբ հանգի համար է՝ «Մեր գիտցածը մեղի կօննե, թե հավատքի զորությունը, եկեղեցի ավետարան ամուր պահնիք մեր մտքումը» (Ելժ, 1, 18):

Մյուս գերանուններից գրաբարյան են՝ ինքը գերանվան թեք-
ված ձևերը¹. օրինակ՝ յուրյանց (Ելժ, 1, 35):

Հմմտ. նաև՝ յուրյան կամքը (Ելժ, 4, 32), այսու համառուտ
գրությանց (Ն.տ., 17), մեք պետք է (Ն.տ., 35), մեք ամենեքյան
(Ն.տ., 41): Ուշագրության արժանի է այն հանգամանքը, որ մենք
գերանվան գրաբարյան մեք ձևը՝ առկա շլինելով բանաստեղծու-
թյուններում, գործածվում է նաև ակներում:

Բանաստեղծություններում աշխարհաբարյան անել, վերցնել,
քողնել բայերի փոխարեն, ինչպես ժամանակի աշխարհաբարի
մշակման այլ ուղղություններում, օգտագործվում են այդ բառերի
գրաբարյան ձևերը՝ առնել, առնով, քողով: Օրինակ՝ Կարող էի առ-
նել (Ելժ, 1, 48), Տոն են առնում (Ն.տ.), Գիր կառնում (Ն.տ., 33),
Հեմ առնով (Ն.տ.), առնունք (Ն.տ., 22), քողով (Ն.տ.), քողոս
(Ն.տ., 23), Հմմտ. շենք քողում (Ելժ, 4, 17), Միտք առնելով կար-
դա (Ն.տ., 42) և այլն:

Գրաբարյան այլ իրողություններից նշելի են՝

ա) Հոգնակի սեռականի գրաբարյան բազմաթիվ կազմություն-
ները. օրինակ՝ ժողովրդոց բազմությունը (Ելժ, 1, 57), Հովկաց պար
(Ն.տ., 27), կարծյաց տերը (Ն.տ., 31), մարդոց աշքում (Ն.տ., 35),
ուսանողաց (Ն.տ., 31), Հմմտ.՝ լնտանյաց և աղդականաց (Ելժ,
4, 24):

բ) Առանձին նախդիրների և բայաձևերի գործածությունը. օրի-
նակ՝ մինչև ցայսօր (Ն.տ., 17)² Հմմտ.՝ մինչև այսօր (Ելժ, 1, 31).
Անունը շուտեմ տալ (Ն.տ., 25), բնկալա (Ելժ, 4, 24), Գալիս են
զինչ հուզյալ հեղեղ (Ելժ, 1, 46), մինչ ի ոտա (Ն.տ., 25) և այլն:

«Ներքին ահողակապը» նշված շրջանի որոշ բառերում օգտա-
գործվում է, իսկ բառերի մի այլ խմբում՝ ոչ. շատ հաճախ էլ նույն
բառում մի տեղ օգտագործվում է, իսկ մի այլ տեղ այդ բառը գրվում
է աշխարհաբարյան ձևով՝ սղելով-ան-բայածանցի ձայնավորը:
Օրինակ՝ սկսանում է (Ն.տ., 24), հասանել, կը հասանի, մեռանելու
է (Ն.տ., 22), գտանել (Ն.տ., 34), Հմմտ.՝ «Օտարից են հարցանում»
(Ելժ, 4, 33), ուսանում է, տեսանենք (Ն.տ., 34), տեսանում ենք
(Ն.տ., 35), բայց և տեսնում է (Ելժ, 1, 51), անցնում եմ (Ն.տ., 35):

Նույն ձևով պատճառականի հիմքը մերթ աշխարհաբարյան
ձևով է կազմվում և մերթ գրաբարյան: Օրինակ՝ անցուց (Ն.տ., 44),
կորուց (Ն.տ., 28), դարձուց (Ն.տ., 46), Հմմտ.՝ շղարձուցանեն
(Ելժ, 4, 39), բայց և կանցնեն (Ելժ, 1, 22), հեռացնե (Ն.տ., 28),
«Շատ ես ուսցել» (Ն.տ., 36), «Աշք է ցոլացնում» (Ն.տ., 39):

¹ Ինչպես և սրա սեռականից կազմված ստացականի ձևերը:

Զեղոք բայերի (առաջին խոնարհում) անցյալ կատարյալը մեծ մասամբ ունի կրավորակերպ վերջավորություններ: Օրինակ՝ ծիծաղաց (Ելժ, 1, 26), «Ուր բռնար կամ ուր ծաղկեցար» (ն.տ., 37), թառամեցավ (ն.տ.), փոխվեցավ (ն.տ., 36), Հմմտ՝ համարեցաց (Ելժ, 4, 17) և այլն:

Բազմաթիվ են -յալ (-եալ) ածանցով կազմված բառերը. օրինակ՝ հուզյալ հեղեղ (Ելժ, 1, 46), երեկոյացյալ օրերը (ն.տ., 47), մշակյալ (երկիր), (ն.տ., 48), ալեկոծյալ (ն.տ., 48), զվարթուն կերպարանյալ (ն.տ., 57), ալեսորյալ (մարդ) (ն.տ.) և այլն:

-Քյուն ածանցով կազմված բառերը և՛ բանաստեղծություններում, և՛ նամակներում թեքվելիս օգտագործվում են որոշ գեղքերում հնչունափոխված հիմքով (-քեն), իսկ այլ՝ թվապես գերակշռող դեպքերում՝ աշխարհաբարյան (-յուն): Օրինակ՝ միշնորդութենով (ն.տ., 21), բռնութենովը (ն.տ., 22), անհոգութենովը (ն.տ., 23), հմմտ՝ շարութենովը (Ելժ, 4, 33), ծանոթութենից (ն.տ., 38). բայց և՛ տիբությունով (ն.տ., 33), բարձրությունից (ն.տ., 44), պատճուրյուններից (ն.տ., 21), ներգործությունից (ն.տ., 22), առանց... քաղաքավարությունների (ն.տ., 38) և այլն:

Ժխտական խոնարհման ժամանակ օգտագործվում է ինչպես գրաբարյան-գրական-աշխարհաբարյան, այնպես էլ բարբառային ձևեր: Օրինակ՝ չէ կարելի, չի ունեցել (Ելժ, 1, 22), չէ կարող (ն.տ., 23), չի ճանաշիլ (ն.տ., 25), հմմտ՝ Պատճառն է... չի գտնվելն (Ելժ, 4, 17): Արգելականի կազմությունը միօրինակ է. առաջին խոնարհման բայերի համար՝ մի՛ քնիլ (Ելժ, 1, 24), մի՛ խոսիլ (ն.տ., 26): Երկրորդ (ալ) խոնարհման ժամանակ -լ վերջատառը փոխվում է ր-ի: օրինակ՝ մի՛ մոռանար (ն.տ., 27):

Որպես հարկադրականի եղանակիշ հանդես է զալիս ինչպես պիտի, այնպես էլ պիտոն է ձևը: Օրինակ՝ պիտոն է... ունենայինք (ն.տ., 21), պիտոն է մեկնեխնք, պիտոն է մնա (ն.տ., 22), հմմտ՝ պիտոն է... բռնե, պիտոն է տպիլի (Ելժ, 4, 39). բայց և՛ շպիտի... լինիմ (ն.տ., 32), պիտի թվի (ն.տ., 39): Պետք է նալբանդյանի մոտ հաղվագուտ դեպքերում է օգտագործվում:

Նախահյուսիսիափայլյան շրջանում Մ. Նալբանդյանը միևնույն իմաստով օգտագործում է ինչպես էլ, այնպես էլ ևս շաղկապը. օրինակ՝ «Հայկական լեզուն ևս բացառված չէ, հայոց հին գպրությունը ևս ունեցել է» (Ելժ, 1, 21), «Ուրախի էլ կոտրած է սիրտը» (ն.տ., 33), հմմտ՝ «Թե այսու ևս շընդունին» (Ելժ, 4, 17) և այլն:

Զպետք է կարծել, թե նկարագրված հատկանիշները միակերպ հատուկ են ինչպես 40-ական թթ., այնպես էլ 50-ական թթ. կեսերին: Մ. Նալբանդյանի 1855—56 թթ. լեզուն՝ մեզ հասած միայն

նամակների միջոցով, զգալիորեն տարբերվում է ոչ միայն 40-ական թթ. կեսերի, այլև 1855 թ. ի մի հավաքված բանաստեղծությունների տետրի լեզվից, առանձնապես նրանով, որ եթե, ասենք, Մ. Նալբանդյանի 1849 թ. հունվարի 7-ի նամակը հիմնականում բարբառային է, ապա 1856 թ. մարտի 2-ի Անանիա Սովորանշահին ուղղված՝ «Հյուսիսափայլի» հրատարակման իր և Ստ. Նաղարյանի ծրագրերի մասին հաղորդող նամակում միակ շեղումը 1857 թ. լուս տեսած «Թափառական Հրեա»-ի առաջին մասի լեզվի համեմատությամբ, որի հյուսիսափայլյան լինելը ոչ ոք չի վիճարկել, վեներու և բանի մը ձևերն են (Ելժ, 4, 39), որոնք ավելի շուտ ձեռքի սովորության, քան գիտակցական օգտագործման արդյունք են: «Թափառական Հրեա»-ի առաջարանը Մ. Նալբանդյանի լեզվի հյուսիսափայլյան էտապի առաջին բնորոշ արտահայտություններից է: Որպես այդպիսին առաջարանի լեզուն ինչ-ինչ հատկանիշներով տարբերվում է նախահյուսիսափայլյան շրջանի լեզվից: Այդ տարբերությունը ցայտուն կերպով արտահայտվում է, ինչպես ձիշտ կերպով նշվել է լեզվաբանական գրականության մեջ, որոշ զույգ ձևերի լուծումով, հօգուտ մի կամ մյուս ձեի: Դրանցից նշելի են՝

1. Գրական լեզվից զուրս են մղվում մայրենի բարբառի հետ կապված բայցածերը, ոճերը, հոլովական առանձին ձևերը և դրանց փոխարեն օգտագործվում են միայն արևելյան աշխարհաբարի իրողությունները:

Պահպանվում են դեռևս բանի մի (Ելժ, 2, 61), կես մի (ն.տ., 67) կապակցությունները, որոնք առանձին դեպքերում օգտագործվում են նաև հետագայում՝ «Հյուսիսափայլում»:

2. Դերանունների՝ նախորդ էտապում օգտագործվող գրաբարյան, բարբառային և աշխարհաբարյան ձևերից հաղթանակող են հանդիսանում գրաբարածերը: Օրինակ՝ սոխ (ն.տ., 63), մե՛ք (ն.տ., 67), սորան-ով (ն.տ., 66), նոցա, սորա, նորա (ն.տ., 61):

3. Նալբանդյանն անհրաժեշտ է գտնում հրաժարվել ժմիտական խոնարհման կազմության նախորդ էտապում իր օգտագործած բարբառային և ժողովրդական-աշխարհաբարյան որոշ ձևերից և ժմիտականի կազմության համար օգտագործել միայն շե-ն:

4. Գրաբարյան ձեի օգտին է վճռվում -ըցուն ածանցով կազմված բառերի թեքման ժամանակ կատարվող հնչյունափոխությունը: Օրինակ՝ հատկութեններով (ԹՀ, 5), զուշակութեններով (ն.տ., 7), շաբադութենների (ն.տ., 3) և այլն:

5. Գրաբարյան բառածերի օգտին է վճռվում նախահյուսիսափայլյան շրջանում որպես զույգ ձևեր օգտագործվող՝

ա) և կ էլ շաղկապների «պայքարը». օրինակ, այդ ևս հայտնի կը լինի (Ելժ, 2, 61), լեզուն ևս հասկանար (ն.տ., 63):

բ) Անել իմաստով Նալբանդյանն սկսում է օգտագործել միայն առնել գրաբարյան ձեր: Օրինակ՝ անտես առնել (ԹՀ, 7), ոչինչ չեն կարող առնել (ն.տ., 9), հոգս շառնե (ն.տ.), ինչ առնես (ն.տ., 14):

գ) Միայն գրաբարյան վերա ձեռվ է դրվում վրա կապը: Օրինակ՝ խնդիրների վերա (Ելժ, 2, 61), այս խոսքի վերա (նույնը), ավերակների վերա (ն.տ., 65), մատենագրության վերա (ն.տ., 65):

դ) Նույն ձեռվ սկսում է օգտագործվել միայն առաջև կապը՝ նախորդ շրջանում դրա հետ միասին առկա առջևի փոխարեն:

ե) Բոլոր գեղքերում ամեն բառի փոխարեն դրվում է ամենայն: Օրինակ՝ ամենայն բան, ամենայն մարդու (ԹՀ, 8), ամենայն ինչ (ն.տ., 11): Նշված երկձևությունների լուծումը հօգուտ գրաբարյան ձեւերի միանգամից չի կատարվել: Այսպես՝ մինչև 1855—56 թթ., որպես կանոն, գերակշռում են 1857 թ. դուրս մղված ձեւերը, 1855—56 թթ. հավասարաշափ կերպով օգտագործվում են երկուսն էլ (բացի սա, դա, նա գերանուններից, և վրա կապից, որոնց գրաբարյան ձեւերն այդ շրջանում գերակշռում են), իսկ 1857 թ.՝ հյուսիսափայլյան լեզվի առաջին արտահայտության՝ «Թափառական Հրեա»-ի մեջ բացարձակ գերակշռություն են ձեռք բերում նշված երկձևությունների գրաբարյան ձեւերը:

Այսպիսով, անցյալ դարի 40-ական թթ. բարբառային-գրական լեզու գործածելով և համոզվելով, որ այն պիտանի չի կարող լինել «համազգային լուսավորության» գործին, որի հիմնական լժակներից մեկը այդ լեզվով գրված աղքային մատենագրությունը պետք է լիներ, նալբանդյանը 50-ական թթ. սկզբներին հիմնականում հրաժարվում է իր լեզվի բարբառային հատկանիշներից և ձեռնարկում մշակելու մի լեզու, որը մինչև 50-ական թթ. կեսերը աստիճանաբար մոտենում էր, իսկ 1856—57 թթ. իր հիմնական հատկանիշներով հանգեց Ստ. նազարյանի մշակած աշխարհաբարին:

Լեզվական պրակտիկայի, ինչպես և աշխարհաբարի մշակման հիմնական սկզբունքների մինչ «Հյուսիսափայլյի» հիմնադրումը ի հայտ եկած ընդհանրությունը գարձավ «Հյուսիսափայլյում» Մ. Նալբանդյանի և Ստ. նազարյանի համագործակցության հիմքերից մեկը:

ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼՅԱՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ ԵՎ. Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ

Մ. Նալբանդյանը Ստ. նազարյանի լեզվի մասին.— Մ. Նալբանդյանի լեզվի դարձացումը և անցումը հյուսիսափայլյան էտա-

պին ոմանք փորձել են բացատրել Ստ. Նազարյանի ազգեցությամբ, իսկ Մ. Նալբանդյանի լեզվի ետհյուսիսափայլյան շրջանի էվոլյուցիայի հիմքը փնտրել են այսպես կոչված «լեզվի մշակման նազարյանական ոչ գրականապես գործադրելի սկզբունքից» հրաժարվելու մեջ: Այսինքն, Մ. Նալբանդյանի լեզվի աստիճանական զարգացումը, շահեկան կողմերն ու վրիպումները բացատրվել են ոչ թե հենց իր՝ Մ. Նալբանդյանի գրական լեզվի մշակման սկզբունքներով, այդ սկզբունքների մեջ եղած փոփոխություններով, այլ Ստ. Նազարյանի ազգեցության տակ գտնվելու և նրանից ազատվելու «փաստված»: Այստեղից էլ, բնականաբար, անհրաժեշտություն է առաջանում շննարկելու Ստ. Նազարյանի լեզվագիտական հայացքների և լեզվական պրակտիկայի նկատմամբ Նալբանդյանի ունեցած վերաբերմունքի հարցը ինչպես մինչև «Հյուսիսափայլի» հիմնադրումը ընկած շրջանում, այնպես էլ հետագայում: Պահպանվել են ինչպես Մ. Նալբանդյանի գործունեության ամենավաղ շրջանի, այնպես էլ հասուն, ուսուցիչուն-դեմոկրատ Մ. Նալբանդյանի՝ Ստ. Նազարյանի լեզվի, լեզվի մշակման նազարյանական սկզբունքների նկատմամբ արտահայտած վերաբերմունքի մասին վկայող բազմաթիվ փաստեր: Մ. Նալբանդյանից մեզ հասած առաջին հոդվածը, որը նվիրված է աշխարհաբարի դատի պաշտպանությանը, գրաբար գրված «Հաղպահ հայկական մատենագրության» հրապարակախոսական աշխատությունն է, որը միաժամանակ ուսանող Ս. Նալբանդյանի՝ Ստ. Նազարյանի գրական գործունեության, նրա «Վարդապետարան կրոնի» և «Առաջին հոգեղնն կերակուր» աշխատությունների, նրա աշխարհաբարի նկատմամբ հիացական վերաբերմունքի լավագույն արտահայտությունն է: «Նշանաւոր յառաջխաղացութեան գարուս իննուտասներորդի ապացոյց տամբ,— գրում է նա,— մանաւանդ զնոր հայախոսութեան հեղինակիս (Ստ. Նազարյանի— Ս. Գ.), մշակեալ և մաքրեալ լեկամուս խառնակութեանց ըստ բանից և հնչմանց, և ընդ նմին հասկանալի՝ որոց մտառութեամբն ընթեռնուցուն»¹: Անդրադառնալով Ստ. Նազարյանի նշված աշխատությունների լեզվի ընդհանուր արժեքավորմանը՝ Մ. Նալբանդյանը գրում է: «Թողցի մեզ աստանոր պարզապէս խոստովանիլ զնշմարտութիւնն, թե այս առաջին անգամն է, զի Ազգ հայոց ի լեզու հասկանալի ընթեռնու և տեղեկանայ իւրոցն պատկանութեանց առանձն իւր...»²:

Շատ ավելի հիացական ոգով է գրված Ստ. Նազարյանի «Հանդես նոր հայախոսության» առաջին հատորի մասին «Հյուսիսա-

¹ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 40:

² Նույն տեղում, էջ 22:

փալի» առաջին ամսատետրակում տպագրված Մ. Նալբանդյանի գրախոսականը: «Հանդեսի» առաջին հատորի լեզուն նա համարում է շատ ավելի ճոխ, հարուստ ու մոտ «ժողովրդի բարբառին», քան Ստ. Նազարյանի նախորդ գրվածքներինը, որը և, ըստ Մ. Նալբանդյանի, մեր գրական աշխարհաբարի զարգացման լավագույն արտահայտությունն է: Միաժամանակ Մ. Նալբանդյանը նկատում է, որ Ստ. Նազարյանի լեզուն «տեղ-տեղ՝ ավելի մոտ է հին լեզվին, քան թե ժողովրդական բարբառին» և ցանկանում է «առավել ժողովրդացած տեսանել նորա լեզուն»²: Ինչո՞վ է բացատրում Մ. Նալբանդյանը Ստ. Նազարյանի լեզվի անհարթությունները.

«...Այստեղ բառերը չեն միայն զժվարացուցիչքը, — գրում է Մ. Նալբանդյանը այլևս զիտական-մասնագիտական, հասարակական-քաղաքական համակացությունների համար նոր բառեր ստեղծելու Ստ. Նազարյանի աշխատանքը նկատի ունենալով, — այս մտքերը և հեղինակի անձնավորությունը. շէ կարելի պահանջել, որ ամենայն մարդ մի կերպ խոսի, կամ թե վերին կամ գեղեցիկ մտքեր բացահայտվին խաժամուժ ամրութի անկապ և կցկուր լեզվի ձևերովը»³: Մ. Նալբանդյանը հաշվի է առնում, որ «...Հայոց ազգի ժողովրդական լեզուն մի անմշակ և անմարդացած լեզու լինելով, չունի գեռւս այն բոլոր ձևերը, այն լոգիկաբար կապակից պարբերությունքը, որոնցով հարազատորեն կարելի էր ամենայն եկրոպական գաղափար թափել հայերենի մեջ»⁴: Այսպիսին է 1858 թ. Նալբանդյանի վերաբերմունքը Նազարյանի լեզվի նկատմամբ:

Որոշ նալբանդյանագետներ 1858 թվականից Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի միջև սկսած հակասությունները որոնելու ձգտմամբ տարված՝ ամեն կերպ «արդարացնում» են Ստ. Նազարյանի և «Հյուսիսափայլի» լեզվի 1858—1860 թթ. մեղվական քննադատաներին, այսպիսով հակասությունները որոնելով նաև 1858—1860 թթ. Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի լեզվական պրակտիկայում: Այդ կատարվում է մի կողմից շխորանալով «Մեղվում» այնքան հաճախ գործածվող «աշխարհաբառ», «կենդանի լեզու», «խոսակցական լեզու», «ժողովրդական լեզու», «կենդանի բառա-

1 Մենք բնդկեռ ենք, որովհետեւ հաճախ այս տեղ-տեղ կրկնավորին «ամեն տեղ»-ի իմաստ է վերագրվում:

2 «Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 79: Անհետաքրքիր չի լինի նշել, որ Նազարյանը ինքը նույն կարծիքն ունի «Հանդեսի» լեզվի մասին. «Էեզուն («Հանդեսի» 1 հ.—Ս. Գ.) նույնպես աշխարհաբար է և ավելի մշակված ու գեղեցկացած, քա՛, թե մինչև այժմ տպած գործերին մեջ» (Հանդես գրական և պատմական, 6-րդ դիր, 1895, էջ 114, 1857 թ. փետրվարի 9-ի նամակը Հ. Սայաթնյանցին):

3 «Հյուսիսափայլ», 1858, № 1, էջ 79:

4 Նույն տեղում:

բան» տերմինների էության մեջ, իսկ մյուս կողմից հաշվի շառնելով, թե մեղվագան քննադատները ի՞նչ տեսանկյունից էին մոտենում «Հյուսիսափայլին», ո՞րն էր նրանց գիրքորոշումը: Առավել ևս տարօրինակ է այն, որ Ստ. Նազարյանի և «Հյուսիսափայլի» անվամբ կատարված բոլոր քննադատական դիտողությունները վերագրվում են միայն Ստ. Նազարյանին, այն գեպօւմ, երբ «Հյուսիսափայլի» հակառակորդները ուղղակի նշում էին, որ «եթե ցանկանան ընթերցողները իմանալ, թե վասն է՞ր շարափայլ օրագրի մեջ տպագրած բոլոր հատվածները վերաբերում ենք պ. Նազարյանցին, երբ մի. քանի հատվածները հիշվում են նորա գործակիցների երևութական անունով, հարկ ենք համարում ասել, թե որովհետեւ օրագրի տպագրողը պ. Նազարյանցն է, առանց նորա կամքի և խորհրդակցության ոչինչ բան չէր կարող այնտեղ տպագրվել, նորա գործակիցները համարում են յուրյանց միայն սպասավոր Հայոց «լուսավորության կամուրջի» շինության գործումը, իսկ պ. Նազարյանցը տպագնորդ, այդ պատճառով պ. Նազարյանցին ենք հարաբերում օրագրի ամենայն գրվածները»¹: Եվ իսկապես, չվ կարելի ցույց տալ միայն Մ. Նալբանդյանի լեզվին վերաբերող քննադատական որևէ հոդված. բոլոր գեպօրում «Հյուսիսափայլի» մշակած աշխարհաբարի թշնամիները հարձակվում էին Ստ. Նազարյանի լեզվի վրա, նախ՝ վերոհիշյալ, և ապա այն պատճառով, որ նրա մոտ ավելի շատ խոտորումներ կային (առանձնապես ոճի, շարադասության), որոնք ցույց տալով, ըստ մեղվականների, կարելի էր «ջրել» «Հյուսիսափայլի» ուղղությունը:

Կարծեք թե նախագալուվ նման քննադատության երևան գալու հնարավորությունը Մ. Նալբանդյանը 1868 թ. գրել է.

«Սուտ ազգասերների սրտի մեծ ցավի համար հարկավոր եմ համարում ներս բերել հիշատակարանիս մեջ այն գրյանքը, որ տպվեցան և որ տպվում են ժողովրդական ընտիր լեզվով.

1. Հոգեղեն կերակուր հայոց երեխաների համար:
2. Վարդապետարան կրոնի:
3. Հանդես նոր հայախոսության, երկու մեծ հատոր:
4. Թափառական երեա (առաջին մեծ հատոր):
5. Գիտութիւն նոր ներգրանք:
6. Պատվոս և Վիրգինիա:
7. Մինին խոսք, մյուսին հարսն:
8. Այրբենարան հայկական լեզվի»²:

1. «Մեղու Հայաստանի», 1860, № 13, էջ 103:

2. Մ. Նալբանդյան, նրանքի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 367—368:

Անջատո՞ւմ է (Հակադրո՞ւմ) իր աշխատությունները՝ «Թափառական հրեա», «Գրուէի զը Շեվրեող», «Մինին խոսք, մյուսին հարսն» Մ. Նալբանդյանը Ստ. Նաղարյանի աշխատություններից:

Եվ ապա. «Նախատինք համարելու էինք մեզ Մեղովի և նորա համախոհների գովեստը, երե դրեա մի օր սխալվելով տալու լինեին մեզ. նախատինք համարում ենք ներկայումս և պիտի համարենք առաջայում, բայ որում չենք կարող մեր անձը շանարգել, բույլ տալով մեզ ընդունել այդպիսի գովեստները: Մեծ ուշախուրյուն է, որ այդպիսի մարդիկ հայինոյում են մեզ...»¹:

Այսպես էր մտածում և գործում Մ. Նալբանդյանը 1858 թ. վերցերին:

«Հյուսիսափայլի» լեզվին Մ. Նալբանդյանը անդրագառում է նաև իր կյանքի ու գործունեության վերջին շրջանում՝ բանտում: Այստեղ ևս Մ. Նալբանդյանը գտնում է, որ Ստ. Նաղարյանի լեզվում առկա նոր բառակազմությունները և գրաբարյան փոխառությունները օգտագործվել են այն պատճառով, որ «նոր լեզուն չուներ այնպիսի բառեր, որ կարողանային հայտարար լինել այն մտքերին, ինչ որ հեղինակը կամենում էր ասել ու գրել»²:

Մ. Նալբանդյանը գնահատում է նաև «Հյուսիսափայլի» լեզվաշինարարությունը: Հիշեցնելով «Հյուսիսափայլի» լեզվի և ոճի, ինչպես և նրա բովանդակության մասին իր մղած վեճերը՝ Մ. Նալբանդյանը նշում է, որ «... Հյուսիսափայլի իրավունքները... էական հիմքերի վրա էին ամրացած», որ «... Հյուսիսափայլի բամբասված լեզուն, նորա նրատարակովի և գործակցի բամբասված ձև ու ոճերը սկսում էին... աղղել նաև ընդդիմախոսների լեզվի վրա...»³. նա «Հյուսիսափայլի» լեզվի թերությունները համարում է ոչ թե այդ լեզվով գրողների անձնական պակասությունները, այլ «նոր լեզվի մանկության պակասությունը»⁴:

Ո՞րն է, բայ Մ. Նալբանդյանի, «Հյուսիսափայլի» սխալը:

«Հյուսիսափայլի» միակ հանցանքը, եթե հանցանք էր այդ, այն էր, որ նա կամենալով ուժ և զորություն գնել մայրենի նորախոս լեզվի մեջ, դրել էր այդ լեզուն մի ճիշտ համակարգության տակ. այլև մանավանդ 1862 թվականում ժողովրդական լեզվի բաղդասությունը տարել դրել էր բուն հին լեզվի բաղդասության տակ: Ահա այն միակ և, կրկին ասում ենք, միակ սխալը «Հյուսիսափայլի»

¹ Մ. Նալբանդյան, Երկերի իրակատար ժողովածու, հ. 1, էջ 471 (ընդգծումը մերն է—Մ. Գ.):

² Նույն տեղում, էջ 397:

³ Նույն տեղում, էջ 397 (ընդգծումները մերն են—Մ. Գ.):

⁴ Նույն տեղում, էջ 398:

լեզվախոսության»¹: էլ ավելի կոնկրետացնելով իր միտքը, նա գրում է. «...Հյուսիսափայլի 1862 թ. նոր համակարգությունը (նոր ասում ենք տարբերելու համար 1858—1861 թվականների հրատարակվածից) զիսավորապես պատերազմում է նոր լեզվի այն ոճերի և ձևերի հետ, որ ընդհանրապես նայվում են որպես տաճիկ լեզվի աղդեցություն»². և այս բոլորը կատարվել է համաձայն որոշակի ժրագրի, «Զկա մեկ տող, չկա մեկ խոսք, որ Հյուսիսափայլի գրիչը գրած լինելին առանց շափելու և կշռելու»³:

Ինչպես տեսնում ենք, բոլոր գեղքերում Մ. Նալբանդյանը խոսում է «Հյուսիսափայլի», որպես միասնական լեզվական մի ուղղության մասին, առանց ակնարկ անգամ անելու այդ համակարգը Ստ. Նազարյանի կողմից իրեն պարտադրված լինելու մասին:

Գեղ ավելին. Մ. Նալբանդյանը իրեն պատասխանառու է համարում նաև Ստ. Նազարյանի նախահյուսափայլյան շրջանի աշխատուրյունների լեզվի համար, իրեն ևս համարելով այդ լեզվին քաղաքացիություն տվող հեղինակներից մեկը:

Գտնելով, որ «Հյուսիսափայլի» լեզվի համակարգը պահպանելով կարելի է սահուն գրել, սակայն, այն «խորթ կլինի ժողովրդին, որը նրան երբեք և ոչ մի գնով չի մարսի»⁴, Մ. Նալբանդյանը շարունակում է. «Ակներեւ է, որ այս խոսքերով ես ինձ էլ եմ մեղադրում և ոչ թե միայն ուրիշներին, և այս գիտակցությունը ես դասում եմ ամեն սիսալից բարձր և ամեն հանդիմանությունից գուրս: Քաղաքացիական լեզուն մենք առաջինը ընդհանուր գործածության մեջ մատցրինք գրականության մեջ: Ահա արդեն տասը տարի է անցել այն օրից, երբ այդ լեզվով լուս տեսավ առաջին գիրքը և մենք միշտ մամուլում արտահայտել ենք մեր սիսալներն ուղղելու պատրաստակամությունը, եթե բարեխաղճորեն մեզ ցուց կտան այդ սիսալները»:

Առանձնակի ուշագրություն ենք հրավիրում մեր կողմից ընդգծված մենք դերանվան բովանդակության վրա:

Աշխարհաբար առաջին գրքի լուս ընծայման թվականը նալբանդյանը համարում է 1853 թ. («տասը տարի է անցել...», — գրում է նա 1863 թ.), այսինքն նազարյանի «Վարդապետարան կրոնի» աշխատության լուս ընծայման թվականը: Այդ նշանակում է, որ, ինչպես նշեցինք վերևում, «քաղաքացիական լեզուն մենք առաջինը ընդհանուր գործածության մեջ մատցրինք գրականության մեջ» ասե-

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 399:

2 Նույն տեղում, էջ 400:

3 Նույն տեղում, էջ 401:

4 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 195—196:

լով Մ. Նալբանդյանը նկատի ունի իրեն և Ստ. Նազարյանին, այսինքն, նա իր վրա պատասխանագություն է վերցնում նաև Ստ. Նազարյանի նախահյուսիսափայլյան լեզվի համար, մի բան, որը նա երբեք չէր անի, եթե աշխարհաբարի մշակման հյուսիսափայլյան սիստեմը պարտադրված լիներ նրան, եթե նա «ոչ դրականապես գործադրելի սկզբունքը» ստիպված ընդունած լիներ:

Այսպիսով Մ. Նալբանդյանը ոչ միայն աշխարհաբարի մշակման «ոչ դրականապես գործադրելի» սկզբունքը Ստ. Նազարյանինը չի համարում, այլև չի անջատում իրեն Ստ. Նազարյանից գրական աշխարհաբարի մշակման և ոչ մի հարցում, լեզվի մշակման իրենց ուղղությունը համարելով «Հյուսիսափայլի» ընդհանուր ուղղություն, որի մասնակի մոլորդությունները նրանք միշտ պատրաստ են եղել ուղղելու, եթե հակառակորդները ցուց տային նրանց սխալականությունը, մի գաղափար, սակայն, որին նրանք հանգեցին ինքնուրուցնաբար՝ «առանց դպիրների, հնության երկրպագուների, ինչպես և գավառական աղճատումների ամենափոքր օգնության»:

Երկու շրջան, պայքարի երկու հիմնական ուղղություն.— Գրապայքարը, ինչպես ճիշտ կերպով նշվել է¹, որոշակիորեն երկու շրջանի է բաժանվում: Գրապայքարի սկզբնավորման շրջանում հիմնականը պայքարն է աշխարհաբարը գրականության մեջ ամրապնդելու, նրան գրական լեզվի քաղաքացիական իրավունքներ տալու համար: Եթե այդ խնդիրը իր հիմնական մասով կատարված էր, և քանի որ գրականության մեջ օգտագործվող աշխարհաբարի համակարգը միասեռ չէր, բնականաբար, առաջնակարգ խնդիր դարձավ պայքարը աշխարհաբարի համակարգի շուրջ: Անցյալ դարի 40—60-ական թթ. աշխարհաբարի համակարգը խիստ տարասեռ էր: Հայտնի է, որ Խ. Աբովյանը աշխարհաբար էր համարում և՝ «Վերքի», և՝ «Նախաշավիդի», և՝ այն լեզուն, որով թարգմանված է «Նոր Էլոիդայի» մի պատառիկը, աշխարհաբար էին կոչում իրենց լեզուն միսիոներական գրականության հրատարակիչներն ու հշուղները, Գաբրիել Պատկանյանը և Ռաֆայել Պատկանյանը, «Հյուսիսափայլը», «Մեղու Հայաստանին» և... և նույնիսկ «Ճռաքաղը»: Յուրաքանչյուրի կարծիքով իր լեզուն աշխարհաբար էր: Սակայն ոմանք մշակում էին ժամանակի աշխարհաբարը ինքնուրուցնաբար, նպատակ ունենալով նրա հարստացումն ու հետագա զարգացումը, ուրիշները՝ այն ինչքան հնարավոր է գրաբարին մոտեցնելու

1 ՏԵ՛՛ Գ. Բ. ՋԿԱՍԿՅԱՆ, «Армянская лингвистическая мысль и вопросы новоармянского языка в XVIII—XIX веках», автореферат, Ереван, 1955, էջ 9:

ձգումամբ՝ այդ գործում բարբառից զնալով գեպի գրաբառը կամ էլ գրաբարի մեջ բարբառային տարրեր մտցնելով, երրորդները՝ մշակելով առավել տարածված բարբառը (Արարատյան) կամ որևէ այլ բարբառ և ստեղծելով բարբառային գրական մի լեզու:

«Հյուսիսափայլը» հայ իրականության մեջ առաջին պարեւականն էր, որ իր էջերը ամբողջովին նվիրեց աշխարհաբարի պաշտպանության և մշակման գործին:

Ո՞ր աշխարհաբարն էր մշակում «Հյուսիսափայլը»: Գրական աշխարհաբարի մշակման հյուսիսափայլյան ուղղության ղեկավարները (Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան) որոշակիորեն տարբերակում էին աշխարհաբարը բարբառից: Դիռևս «Հյուսիսափայլի» հիմնադրությունը, որ լսվում է ազգի մեջ հարյուրավոր և հազարավոր լավ խոսողների բերանից՝ ուր և գտանվեին նորա»¹: Նալբանդյանը ևս աշխարհաբար ասելով հասկանում է ոչ թե «մի քաղաքի մասնավոր կամ մի երկրի հատկացյալ բարբառ», այլ «այն հստակ հայախոսությունը, որ կարելի էր հասկացվել և ամենայն տեղ գտանված հայերից»²: Այդ լեզվի հիմքում նազարյանի և նալբանդյանի կարծիքով ընկած էր արարատյան բարբառը «...որի կատարյալ և գեղեցիկ գաղափարը տալիս է մեր «Հյուսիսափայլը»³, — գրում էր նալբանդյանը բանտում: Այստեղից չի կարելի եզրակացնել, թե «Հյուսիսափայլի» «գրիշքը» նույնացնում էին իրենց մշակած լեզուն և արարատյան բարբառը: Ո՞ւ Նրանք ամենայն խստությամբ սահմանագատում էին իրենց մշակած լեզուն ամեն մի բարբառից: «... ոչ մտածել ենք երբեք և ոչ մտածում ենք, թե այդ նորախոս լեզուն պետք է լիներ այն գոհհկական ռամկախոսությունը (տեղական բարբառները—Ս. Գ.) խանգարված ամենայն տեսակ այլազդի բառերով, ամեններն ոչ. այդ աղավաղյալ և վայրենացյալ լեզվովը չէ կարելի ոչինչ գործ հառաջ տանելը»⁴: Նալբանդյանը ևս «գավառական լեզուները» իրենց նպատակի համար անպետք է համարում, «պատճառ որ այն կոշտ ու կոպիտ լեզվովը ոչինչ մարդավայել ազնիվ միտք, մանավանդ ուսումնական խնդիրների վերա, չէ կարելի բացահայտել»⁵, «... Զէ կարելի պահանջել, — գրում նա, — որ... վե-

1 Ստ. Նազարյան, Վարդապետարան կրոնի, էջ 5—6:

2 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 410—411:

3 «Ղաղար Փարպեցու գրած թուղթը», թարգմ. և բաց. Մ. Նալբանդյան, 1868,

էջ 66 (Ժանոթ. 69):

4 Ստ. Նազարյան, Վարդապետարան կրոնի, էջ 6:

5 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 411:

րին կամ գեղեցիկ մտքերը բացատրվեն խաժամուժ ամբոխի անկապ և կցկտուր լեզվի ձևերովը»¹: Իր ամբողջ սրությամբ այս գաղափարը ուղղված էր բարբառների համար ավտոնոմ իրավունքներ պահանջող մեղվական ուղղության դեմ: Եվ «Մեղոն», նրա գաղափարախոսները այդ պարզ կերպով տեսնում էին ու ձգտում հասարակական-քաղաքական, գիտական-մասնագիտական գիտականորեն մշակված տերմինաբանությամբ հազեցած, կուռ ու հայերենի մեջ «ամենայն և բրոպական գաղափար թափելու» հնարավորություն տվող «լոգիկաբար կապակից պարբերություններով» հարուստ մի լեզու մշակելու «Հյուսիսափայլի» ձգտումը աղավաղել, գուհկացնել...: «Պարոն Նազարյանցը էնպիսի մարդկանց է պատկանում,— գրում է ոչ անհայտ Ղազար Մարգարյանը,— որն որ ասում են, թե աշխարհաբար լեզուն գիտնական շարադրությունների համար ուրիշ է, վիստասանությունների համար ուրիշ: Ամեն ժամանակ նրանց մտքով գիտնական շարադրութենում պետք է դեպի գրաբարը ժոել»²:

Աշխարհաբարը Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի կարծիքով զարգացման բարձր աստիճանի կարող էր հասնել միայն գրական լեզվի անբաժանելի իրավունքներ ձեռք բերելով: «Մատենագրութենով կը մշակվի լեզուն, կը ճոխանա և կհաստատվի նա»³, — գրում էր Ստ. Նազարյանը: Աշխարհաբար լեզվի զարգացումը «հառաջադիմությունը» նրանք դիտում էին որպես «ազգային հարազատ լուսավորության» նախապայման և հիմնական միջոցներից մեկը. «...մինչև նոր լեզուն շինի առհասարակ մատենագրական լեզու, մինչև գրվածների իմաստը ըմբռնելի և հասկանալի շինի ժողովրդին, սուս է ամենայն լուսավորություն»⁴: Դրա համար «ազգային հեղինակները» պետք է մշակեն լեզուն, հարկավոր է «բանաստեղծի պես հնարել և ճարտարապետել»: Նոր լեզվի «ճարտարապետման» այդ գժվարին աշխատանքին էլ ձեռնամուխ եղան Ստ. Նազարյանն ու Մ. Նալբանդյանը, «Հյուսիսափայլը» ամբողջապես:

Գրաբարի, որպես գրական լեզվի ժխտումը Ստ. Նազարյանին և Մ. Նալբանդյանին հանգեցրեց՝ այն ընդհանրապես որպես կուտուրական արժեքի ժխտելուն: «Հին լեզվի ճոխ գանձարանը» հյուսիսափայլյան շրջանում հանձինս Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի գտավ իր արժանավոր գնահատողներին և արժեքավորողներին: Այն «Հյուսիսափայլի» «գրիչների» կողմից դիտվում էր

1 «Հյուսիսափայլը», 1858, № 1, էջ 79:

2 «Մեղոն Հայաստանի», 1858, էջ 286, համառոտագրությունները բացել ենք:

3 Ստ. Նազարյան, Վարդապետարան կրոնի, էջ 6:

4 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 66:

որպես նոր գրական լեզվի՝ աշխարհաբարի հարստացման աղբյուր-ներից մեկը՝ Հյուսիսափալլյան շրջանում հիմնական:

Գրական աշխարհաբարի հարստացման մյուս աղբյուրը օտար լեզուներն էին, որոնք Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանի կողմից դիտվում էին որպես նորագույն գիտական տերմինների փոխառության լավագույն շտեմարան: «Հյուսիսափալլյում» գիտական լեզվի մշակումը կատարվում էր ոչ միայն բառերի, այլև գաղափարների փոխառության միջոցով՝ դրանց համար աշխարհաբարի օրենքներով նորանոր բառեր կազմելով:

1858—62 թթ. երրորդական պլանի վրա էր կանգնած բարբառներից օգտվելու հարցը. խոսքը, հասկանալի է, գրական աշխարհաբարը բարբառային տարրերով հարստացնելու մասին է: Նազարյանը և Նալբանդյանը բարբառայնությունը համարում էին հյուսիսափալլյան շրջանի գրական աշխարհաբարի համար հիմնական վտանգը և, այդ իսկ պատճառով, պայքարի հիմնական ուղղությունը համարում էին պայքարը բարբառայնության դեմ, գրական աշխարհաբարը բարբառայնությունից զերծ պահելու համար: Այս տեսակերպից էլ պետք է զնահատել Հյուսիսափալլյան շրջանում Ստ. Նալբանդյանի և Մ. Նալբանդյանի անվերապահորեն բացասական վերաբերմունքը տեղական բարբառների նկատմամբ: Պայքարը բարբառայնության դեմ առաջին պլան է մղվում, որոշ իմաստով մոռացության մատնելով «Հյուսիսափալլյում» 1858 թ. առաջին համարում շարադրված այն սկզբունքը, որ «նոր լեզուն կամավ և գիտությամբ ձգձգել և մոտեցնել Հին գրոց լեզվին և այսպես մեռուցանել կենդանի աշխարհաբարի ինքնաշարժ հոգին, անպատշաճ է ամենևին...»¹: Արդյունքը լինում է այն, որ այնուհետև, բացի «Հյուսիսափալլյում» 1858 թ. 5-րդ ամսատետրակում Մ. Նալբանդյանի՝ Գամառ Քաթիւպայի «Ռորինզոն Կրուզո»-ի թարգմանության առիթով որոշ բառերի գրաբարյան հոգնակի սեռականների կազմության դեմ արած նկատողությունից (մանուկ-մանկանց)՝ գրաբարյան տարրերի ներհոսի դեմ պայքարի այլ արտահայտություն «Հյուսիսափալլյում» չենք գտնում, ընդհուպ մինչեւ Մ. Նալբանդյանի բանտարկությունը, երբ մշակվում է նոր վերաբերմունք գրական աշխարհաբարի հարստացման հիմնական աղբյուրի մասին:

Բանտում Մ. Նալբանդյանը ձեռակերպում է իր այն եղբակացությունը, որ կարելի է թերևս սահուն գրել նաև Հյուսիսափալլյան աշխարհաբարով, բայց այն «խորթ կլինի ժողովրդին, որովհետև այդ ուսունագրության տարրերը կենդանի լեզվից չեն վերցված. այլ՝

¹ «Հյուսիսափալլյում», 1858, № 1,էջ 34:

Հնի, մեռածի դարավոր ավերակներից, կպցրած են ապրած անցած սիստեմի ազգեցությամբ...»¹:

Ի՞նչը բերեց Մ. Նալբանդյանին նման եղրակացության: Ոմանք հակված են գտնելու, որ Նալբանդյանն այդ եղրակացությանը հանգեց բանտում աշխարհաբարի մշակման տարրեր նմուշներն ուսումնասիրելու շնորհիվ: Առանձնապես շեշտվում է այն, որ նա պահանջել ու ուսումնասիրել է Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» և Պ. Պողյանի «Սոս և Վարդիթեր» վեպերը: Տվյալ գեպքում մոռացության է արվում այն հանգամանքը, որ Մ. Նալբանդյանը «Սոս և Վարդիթերի» լեզուն համարում է «... Աշտարակի բարբառը, որով գրված է գործի բնագիրը...», ըստ որում, նա այդ կատարված է համարում հատուկ խորհրդով «... Եվ հեղինակը ուզելով (է) իր գործը այդ բարբառով գրել, որ կարդացողը... նորա լեզվի վրա էլ տեղեկություն ստանա...»²: «Վերք Հայաստանի» վեպի լեզուն նա նույնպես բարբառ է համարում, արարատյան բարբառի Աշտարակի խոսվածքից բավականին տարրելող խոսվածքներից մեկը: Հասկանալի է, որ այդ աշխատությունները գրական լեզվի մշակման նալբանդյանական սկզբունքներին բնավ համապատասխան վիճելով («որքան կարելի է առավել շատ և առավել մեծ բազմության հասկանալի կերպով խոսել»)³ չէին կարող որեէ գեր խաղալ նշված շրջադարձում: Բոլորովին այլ բան է ասում Մ. Նալբանդյանը:

«... Տասնամյա փորձը այս ասպարեզում (աշխարհաբարի մշակման—Մ. Պ.), շփումը ժողովրդի հետ՝ բոլորովին տարրեր կողմերում, մեզ բերին վերոհիշյալ փրկարար գիտակցությանը» («Հյուսիսաֆայլի» մշակած գրական աշխարհաբարում գրաբարյան տարրերի առատության և «կենդանի լեզվի» իրողությունների պակաս լինելու մասին): Իսկ այդ նշանակում է, որ Մ. Նալբանդյանի նման եղրակացության համար հիմք են ծառայել ոչ թե նրա բանտարկին շրջանի ուսումնասիրությունները, այլ գրական աշխարհաբարի մշակման Ստ. Նալբարյանի և իր 1853—1863 թթ. միջև ընկած տասնամյա փորձը և շփումը ժողովրդի հետ, իսկ բանտում նա «Ժամանակ գտավ» ձևակերպելու իր արդեն ձևավորված տեսակետը: Իսկ «Վերք Հայաստանի»-ի, Սայաթ-Նովայի երգարանի, մասսամբ նաև Պ. Պողյանի «Սոս և Վարդիթերի» ուսումնասիրությունը⁴ այլ նպատակով էր կատարվում, որին կծանոթանանք ստորև:

1 Մ. Նալբանդյան, երկների լիակատար ժողովածու, հ. 4, էջ 194 (թարգմ.):

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում, էջ 197:

4 Ասում ենք մասսամբ, որովհետև Նալբանդյանի հիմնական նպատակը վեպի սկրիտիկան» գրելն էր, որը և նա իրազրծեց փայլուն կերպով:

Բանն այն է, որ շփոխելով բնավլիքը իր վերաբերմունքը բարբառների նկատմամբ, որպես գրական աշխարհաբարին փոխարինելու անընդունակ լեզվական որակների, Նալբանդյանը, ի հակադրություն հյուսիսափայլյան շրջանի իր սկզբունքների, գտնում է, որ անհրաժեշտ է գրական աշխարհաբարի մշակման գործում օգտագործել «բոլոր գավառական բարբառների էական տարերքը»: Եթե հյուսիսափայլյան շրջանում նա կարծում էր, որ կարելի է պահպանել լեզվի ժողովրդայնությունը առանց բարբառային տարրերի էլ, ապա 1863—66 թթ. հայտարարում է, որ «... մինչև բոլոր գավառական բարբառներից ճամփաներ չբացվին դեպի գրական լեզվի կենտրոնը, սա... չէ կարող ծաղկել և ուժ առնելով հանրական խորհուրդ ունենալ ազգի համար»¹: Սրանով Նալբանդյանը բարբառային գրական լեզվի շէր ձգտում: Նրա կարծիքով գրական աշխարհաբարի մեջ պետք է մտցնել այն տարրերը, որոնք «իրենց ձեռվ ու կազմությամբ ավելի ընդունակ են կենդանի ընդհանրության լեզվի վրա պատվաստվելու»: Այդ, ըստ Մ. Նալբանդյանի, կարող է կատարվել միայն մի ճանապարհով. «պատվաստվելու ընդունակ» բարբառացին տարրերը «պիտի ընկնեն ճարտարապետ հեղինակների բուրայի մեջ և այնտեղ հալվելով և քիմիաբար (ֆիզիկաբար ոչ) միանալով պիտի գուրս գան ոչ որպես թլպատություն կամ անթլպատություն, այլ որպես նոր արարած»²: Իսկ այդ նշանակում է, որ բարբառները, որպես գրական լեզվի հարստացման աղբյուր, առաջին պլան են մոլում, դառնում են գրական աշխարհաբարի հարստացման հիմնական աղբյուրը: Դա չհանգեցրեց գրաբարից և օտար լեզուներից կատարելիք փոխառությունների ժխտմանը, որոնք միատեսակ գնահատականի են արժանանում Նալբանդյանի կողմից. գրաբարին պետք է դիմել, ըստ Նալբանդյանի, ինչպես Հայ ժողովրդի նախաշահին աշխարհաբարյան շրջանի յուրահատկություններն արտահայտող բառերի փոխառության համար, որոնք, բնականաբար, բացակայում են աշխարհաբարում, այնպես էլ նոր հասկացողությունների, իսկ օտար լեզուներին՝ «այնպես գաղափարների համար, որ նոր քաղաքակրթության արդյունք են և բնավլ նոցա բռն բառը հին լեզվում էլ չունինք...»³: Անհրաժեշտ է այստեղ մատնանշել, որ Նալբանդյանը որևէ օտար լեզու, որպես գերադասելի, չի հանձնարարում. այդ հարցը ըստ էության վճռված էր XIX դարի սկզբում, երբ Հայ ժողովրդի պատմական բախտը ընդմիշտ կապվեց ոուս մեծ

¹ Մ. Նալբանդյան, նրկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 213—214:

² Նույն տեղում, էջ 197—198:

³ Նույն տեղում, հ. 3, էջ 212:

ժողովրդի բախտի հետ, և ոռւսաց լեզուն աստիճանաբար գարձավ հայոց լեզվի նախ՝ հիմնական և ապա՝ միակ փոխառու լեզուն:

Այսպիսով Նալբանդյանի 1858—66 թթ. լեզվական պրակտիկայում և գրական աշխարհաբարի մշակման տեսության մեջ առկա է երկու շրջան¹. — առաջին՝ 1858—1862 թթ. և երկրորդ՝ 1863—1866 թթ.՝ Ընդհանուրը այս երկու շրջանների համար Նալբանդյանի նպատակն է՝ ինքնուրույնաբար մշակել գրական աշխարհաբարը: Մակայն նշված շրջանները ունեն նաև տարբերիչ գծեր:

Առաջին շրջանում (1858—1862 թթ.) լեզվի մշակման գործում հիմնական պայքարը մղվում է գրական լեզուն բարբառայնությունից զերծ պահելու համար: Որպես գրական լեզվի հիմնական հարստացուցիչ աղբյուր օգտագործվում է գրաբարը, այդ իսկ պատճառով, առանձնապես 1862 թ. սկսած, «Հյուսիսափայլում» անտեսվում է պայքարը գրաբարյան աղղեցությունների ղեմ: Որպես աշխարհաբարի հարստացման օժանդակ աղբյուր ծառայում են օտար լեզուները, բարբառային փոխառությունների օգտագործման հարցն անգամ չի դրվում:

Երկրորդ շրջանում (1863—1866 թթ.) լեզվի մշակման գործում հիմնական պայքարը մղվում է Հյուսիսափայլան գրական աշխարհաբարը գրաբարյան բազմաթիվ տարերից մաքրելու համար, և դրվում է աշխարհաբարը «բարբառների էական տարերի» հաշվին հարստացնելու խնդիրը: Բարբառները, ըստ նոր հարցագրման, դառնում են գրական աշխարհաբարի հարստացման հիմնական աղբյուրը: Որպես օժանդակ աղբյուրներ են ծառայում գրաբարն ու օտար լեզուները հավասարապես: Այսպիսով՝ երկու էտապ, պայքարի հիմնական երկու ուղղություն:

«Խմբագրում» էր արդյունք Ստ. Նազարյանը Մ. Նալբանդյանի լեզուն.— Այս հարցը նալբանդյանագիտության խճճված խնդիրներից մեկն է: Պարզ է, որ եթե Ստ. Նազարյանը սրբագրում էր Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլում» տպագրվող աշխատությունների լեզուն, ապա Մ. Նալբանդյանի/նամակներում և այն աշխատություններում, որոնք Ստ. Նազարյանի ձեռքը չեին անցնում (Մվաճյանի «Մեղվում» տպագրված հոդվածները) պետք է բացակայեին «Հյուսիսափայլում» Մ. Նալբանդյանին «պարտադրված» հատկանիշները: Բնական կլիներ համեմատել Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլում» տպագրված աշխատությունների լեզուն նույն

1 Հմմ. Խ. Սարկիսյան, Միքայել Նալբանդյան և вопросы языка, Ереван, 1955, էջ 97—154:

շրջանում գրած նամակների և այլ տեղերում տպագրված, այսինքն Ստ. Նազարյանի ձեռքը շանցած աշխատությունների լեզվի հետ:

Անդրագառնանը ամենից առաջ Մ. Նալբանդյանի 1858—1859 թթ. նամակների լեզվի արժեքավորմանը, որպես համեմատության մյուս եղր զնելով նրա «Հյուսիսափալլում» տպագրված աշխատությունների լեզվուն: Երբ անդրագաղառնում ենք Մ. Նալբանդյանի 1858—1859 թթ. նամակների լեզվին, առաջին հերթին աշքի է զարնում այն փաստը, որ նամակներում առկա են «Հյուսիսափալլին» և ժամանակի գրական աշխարհաբարի այլեւալ ուղղություններին հատուկ լեզվական այնպիսի հատկանիշներ, ինչպես՝ -եղեն (-եղէն), -յալ (-եալ), -ուրյուն (-ուրիւն) ածանցներով կազմված բառերի մեծաքանակությունը (մարդկեղեն աշխարհի մեջ—Ելժ, 4,49, ապահովյալ նամակ—ն.տ., 51, վերագրաձյալ... Այվազովսկին—ն.տ., 57, շարժողուրյուն—ն.տ., 148, աշխատուրյուն—ն.տ., 55, մերժողուրյուն—ն.տ., 61), ինեվի և ոչինչ բառերի գործածությունը նեռու և ոչ մի բառերի փոխարեն (ների փախչելով—ն.տ., 50, «Ոչինչ մասնակցություն չունիմ»—ն.տ., 64, «Ոչինչ գործ չենք կարող հառաջտանել»—ն.տ., 49), հնչունափոխության և հոլովման «անկանոնությունները» (անունի—ն.տ., 57, արյունի—ն.տ., 64, մարդերից—ն.տ., 66), «Հյուսիսափալլին» այնքան հատուկ «լավ ասել» ոճը («Ամեններին անծանոթ եմ ձեր գործերի կամ լավ ասել ազգային գործերի ընթացքին»—ն.տ., 48), պատճառի պարագա երկրորդական նախադասությունները գլխավորի հետ պատճառ բառի միջոցով կապակցելը («Այժմ պիտի մի մարդուց առնուլ և տալ նորան, պատճառ, շուտով գնալու է»—ն.տ., 59):

Սակայն մեզ ամենից առաջ հետաքրքրում է այն հարցը, թե կա՞ն արդյոք նրա նամակներում լեզվական այնպիսի հատկանիշներ, որոնք հատուկ են «Հյուսիսափալլին», բայց ոչ մինչև 1856—1857 թթ. նրա ստեղծագործություններին, այսինքն այնպիսիները, որոնցից Նալբանդյանը կարող էր հրաժարված լինել «Հյուսիսափալլին» համագործակցելիս:

Ուսումնասիրությունը ցուց է տալիս, որ այս՝ կան:

1. 1858—1859 թթ. նամակներում՝ չնշին բացառություններով, չի օգտագործում էլ շաղկապը, այլ միայն՝ ևս («Հյուսիսափալլ»)՝ «ձայն ևս լւսելով» (Ելժ, 4,50), «Ուրիշներին ևս հասկացնես» (ն.տ., 51), «Նորա հասցեն ևս» (ն.տ., 53), «Ինքներդ ևս լավ գիտեք» (ն.տ., 56), «Նա ևս աշխատի» (ն.տ., 54), «Գրածս ևս բոլորը չեք» (ն.տ., 65), «Դուն ևս կգրես» (ն.տ., 66), և միայն՝ «Քալիաբիներն էլ ընկած են կեցած տեղը» (ն.տ., 60):

2. Վրա, առանց, ինտ կապերը 1858—1859 թթ. օգտագործվո՞վ

են սեռական հոլովի հետ: Վրա կապը միշտ գրվում է վերա գրաբարյան ձևով («Հյուսիսափայլ»). օրինակ՝ առանց ձեր... առանց մեր (Եկ., 4,50), մեր հետ (Ն.տ., 52), իմ վերա (Ն.տ., 53), հմտուայնի վերա (Ն.տ., 52), գալու վերա (Ն.տ., 48), և միայն, որպես բացառություն՝ «ինչո՞ւ եք բարկանում ինձ վերա» (Ն.տ., 65):

3. Որպես ընդհանուր կանոն, Նալբանդյանը 1858—1859 թթ. նամակներում՝ «Հյուսիսափայլում» գրաբարյան ձևով օգտագործող գերանունները պահպանում են, բացառությամբ մենք-ի, որի գործածությունը խառն է: Օրինակ՝ մենք (Եկ., 4,48), յուր մեզ (Ն.տ., 48), նորանով (Ն.տ., 48), դուա (Ն.տ., 48), յուրյանց անձը... նորա օգուտը... օգնել նորան (Ն.տ., 49), դորանով (Ն.տ., 50), մեք (Ն.տ., 52), սուխ... մենք (Ն.տ., 55), սորանից և նորանից (Ն.տ.), մեք (Ն.տ., 55, 56, 57, 60, 61, 66) և այլն: Այսպես ևս առկա է բացառությունը («Խայտառակում է նրան»—Ն.տ., 62):

4. Ել—խոնարհման ներգործական բայերի համար որպես լծորդ օգտագործվում է ե-ն, իսկ կրավորականների համար՝ ի-ն: Օրինակ՝ Հրապարակե (Ն.տ., 52), զրե (Ն.տ., 62), շխնայե (Ն.տ., 49), բարգորվիլը (Ն.տ., 63), շարունակվի (Ն.տ., 55), տարածվի (Ն.տ., 60), կհավասարվինք (Ն.տ., 48), կտպվի (Ն.տ., 49), կխափանվի (Ն.տ., 50), պիտի խառնվի (Ն.տ.), բայց և՝ խայտառակվել (Ն.տ.)¹:

Եմ բայի եղակի երրորդ դեմքի ժխտական ձեզ Մ. Նալբանդյանը միշտ դնում է չէ՝ զրել չէ՝ կարելի (Եկ., 4,50), ուշ չէ (Ն.տ., 51), չէ ուզում (Ն.տ., 57), աշքիս չէ երեսում (Ն.տ., 63):

5. Ինչպես «Հյուսիսափայլում», այնպես էլ նամակներում հավասարաշափ գործածվում են.

ա) մին ըառք՝ համարներից մինի (Եկ., 4,48), մին նամակ (Ն.տ., 55), ոչ մինին (Ն.տ., 56), մինը (Ն.տ., 59), մին փոքր (Ն.տ.), մին... զիր (Ն.տ.):

բ) Պատճառական կերպի բայերի շնչունափոխված (-ուցան ածանցով) ձևերը՝ հասցուցինք (Եկ., 4, 48), հասուցանել (Ն.տ., 49), առանց թաքուցանելու (Ն.տ., 53), մատուցանելուց (Ն.տ.), հասուցանում (Ն.տ., 57), հարցուցի (Ն.տ., 66):

գ) Որոշիչ հողը՝ բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ՝ զնալովը (Եկ., 4,48), նստելովը (Ն.տ., 52), տարումը (Ն.տ., 48), վերջումը (Ն.տ., 50), աշքումը (Ն.տ., 51), ներքեւումը... ձակատումը (Ն.տ., 53):

դ) Առնել, առնով, քողով բայերը՝ անտես շառնել իմ խնդիրը

¹ Կարող է շփոթեցնել նման ձևով կազմված ցրվել բայր («որբան տոմս սկ կարողանանք ցրվել»—Եկ., 4, 53), որը արկմտահալ կազմություն է և, ինչպես ցույց է տալիս բերված օրինակը, ներդործական սեփ:

(Ելժ, 4, 49), բաժին առնելով այդ գումարը (ն.տ., 54), հարցմունք է առնում (ն.տ., 57), տնօրինություն կառնեմ (ն.տ., 59), հանձն առում (ն.տ., 53), պիտի առնով (ն.տ., 59), քողով (ն.տ., 49), եթե քողով (ն.տ., 62):

և) Անցյալ կատարյալի ներզործակերպ (-ի, -իր, -, -ինք, -իք, -ին) վերջավորությունների կողքին նաև կրավորակերպ (-ա, -ար, -աւ, -անք, -աք, -ան) երկրորդ ձեր՝ դրվեցավ (Ելժ, 4, 50), տպվեցավ (ն.տ., 53), խռոցավ (ն.տ., 56), պառկեցա (ն.տ., 59), գտնվեցավ (ն.տ., 63):

զ) Հարկադրականի պիտի, պետք է, պիտոն է եղանակիչները և միադիմի բայերը՝ պիտոն է լինինք (Ելժ, 4, 48), պիտոն էր մի հոգաբարձություն (ն.տ., 49), պիտի օգնե (ն.տ., 49), պիտի մնա (ն.տ., 50), չէ պիտոն թույլ տալ (ն.տ.), պետք է... իմանան (ն.տ., 56), պիտոն է լինեի (ն.տ., 63, 64):

6. 1858—1859 թթ. նամակներում «Հյուսիսափալի»-ից տարբեր համամասնությամբ է հանդիս գալիս:

ա) Ամեն և ամենայն բառերի օգտագործումը՝ ամեն աշխատություն (Ելժ, 4, 5), ամենայն չափով (ն.տ., 53), ամեն բան (ն.տ., 56), ամենայն բոպե (ն.տ., 57), ամեն տարի (ն.տ., 55), ամեն օր (ն.տ., 64):

բ) Որոշ բայերի մեջ «ներքին ա հոգակապի» գործածությունը: Օրինակ՝ սկսանել (Ելժ, 4, 49) տեսանելով (ն.տ., 51), պիտի հասաներ (ն.տ., 53), «Գործակատար հմ գտանված» (ն.տ.), գործ սկսաներ (ն.տ.), բայց և չգտնելով (ն.տ., 55), մեջ է մտնում (ն.տ., 57), գտնվեցա (ն.տ., 63):

Այստեղից, բնականաբար, հարց է ծագում: Ինչո՞ւ է Մ. Նալբանդյանը օգտագործում իր նամակներում «Հյուսիսափալի» լեզվի նշված հատկանիշները, եթե դրանք Ստ. Նավարյանն էր պարտագրել նրան «Հյուսիսափալում» և ոչ թե Մ. Նալբանդյանի համոզմունքներից էին բիում: Եթե Մ. Նալբանդյանը դեմ էր Ստ. Նավարյանի «ոչ դրականապես գործադրելի սկզբունքին», ինչո՞ւ չէր ձգտում թեկուզ իր նամակներում ստեղծել «իր սեփական համակարգը», առընթե և հակադիր «Նավարյանի «Հյուսիսափալի» համակարգին: Կարող են առարկել. չէ՞ որ Մ. Նալբանդյանի նամակների լեզուն միայն նկարագրված հատկանիշներով չի սպառվում, գո՞ւցե նամակներում առկա մյուս հատկանիշների մեջ պետք է փնտրել այն, ինչ «հատուկ էր միայն Մ. Նալբանդյանին», Մ. Նալբանդյանի լեզվի համակարգը:

Բանն այն է, որ «Հյուսիսափալում», բացակայող և Մ. Նալբանդյանի 1858—1859 թթ. նամակներում առկա աշխարհաբարյան

մի-երկու տարրերի կողքին (գրանցից ամենակարևորը մենք գերանումն է, որը սակայն, հանդես է գալիս որպես մեք-ի զուգդ ձեւ) կան նաև բազմաթիվ բարբառային բառեր և քերականական ձևեր: Կ. Հայրապետյանին, Գ. Սալթիկյանին, Մ. Վեհապետյանին գրած նամակներում, որոնք երեքն էլ ժամանակի առաջավոր ու կրթված անձնավորություններ են եղել, բարբառային բառերի ու քերականական ձևերի գործածությունը հասցեատերերով չի կարելի բացատրել: Իսկ գրանք փոքրաթիվ չեն՝ զինուղը (Ելժ, 4, 50), չի հասկացողներուն (ն.ա., 52), տվիլ իմ (ն.ա., 59), դում (ն.ա., 61, 65), ցավածներուտ (ն.ա., 65), կիրակոսներու (ն.ա., 61), Սահակին վերա (ն.ա.) և այլն, որոնք շկան «Հյուսիսափայլում»:

Ինչո՞վ բացատրել սրանց առկայությունը Մ. Նալբանդյանի նամակներում: Ակնհայտ է, որ Նալբանդյանն իր նամակներին վերաբերվել է սոսկ որպես նամակների, առանց մտածելու անգամ, որ գրանք կտպագրվեն երեք և նույնիսկ կհակագրվեն «Հյուսիսափայլում» հրապարակված իր աշխատություններին՝ լեզվի տեսակետից: Սա է եղել նամակների լեզվի նկատմամբ ազատ վարդելու պատճառը: Եթե այդ այդպես է, նշանակում է չի կարելի նրա լեզվական պրակտիկան ուսումնասիրելիս որպես առավել վստահելի հիմք՝ լեզվի մշակման նրա սկզբունքները արտացոլելու տեսակետից, ընդունել նրա նամակները: Առավել ևս չի կարելի «Հյուսիսափայլի» համակարգում եղած գրաբարյան ձևերը հակագրել նամակների աշխարհաբարյան որոշ ձևերի, միայն վերջիններս դիտելով որպես Նալբանդյանի լեզվի համակարգի արտահայտություններ: Սրանք են նամակների ուսումնասիրությունից անհրաժեշտաբար բխող եղբակացությունները:

Այժմ տեսնենք, թե լեզվական որեք տարբերություն կա՝ 1860—1861 թթ. «Հյուսիսափայլում» և «Մեղվում» տպագրված Մ. Նալբանդյանի աշխատությունների լեզվի միջև: Այստեղ բնականաբար վերանում է վերեւում կատարված վերապահումը նամակների լեզվի վերաբերյալ, քանի որ գործ ունենք հրապարակման համար նախատեսված և, ամենայն վստահությամբ կարող ենք ասել, Մ. Նալբանդյանի անմիջական վերահսկողության տակ տպագրված հոդվածների հետ: Խոսքը «Նամակ «Մեղվի» խմբագրին», «Հրաշափառ խայտառակություն», «Ազգային թատրոնը Պոլսի մեջ» հոդվածների մասին է:

Եթե «Հյուսիսափայլում» ինչ-ինչ հատկանիշներ պարտադրել են Նալբանդյանին, բնական կիֆներ սպասել, որ «Մեղվում» «Հյուսիսափայլից» և Նաղարյանից անկախ տպագրված հոդվածներում

դրանք փոխարինվեին «նալբանդյանական» լեզվի հատկանիշ-ներով¹:

Ի՞նչ է ցուց տալիս «Հյուսիսափալլում» և «Մեղվում» տպագրված հոդվածների լեզվի համեմատությունը:

1. «Ներքին-առողակապր» շարունակվում է օգտագործել միենուն շափով Սվաճյանի «Մեղվում» և «Հյուսիսափալլում» 1860—1862 թթ. տպագրված հոդվածներում: Օրինակ՝ մտանելով (Ելժ, 2, 294), գտանելիք (ն.ա., 295), տեսանում եմ (ն.ա., 302), չհասանելով (ն.ա., 304), հարցանում (ն.ա., 305), չէ լուծանում (ն.ա., 306), չենք սկսանում (ն.ա., 307), անցանելու (ն.ա., 310). Հմմտ՝ լուծանել (Հ, 60, 5, 379), իշանում եմ (ն.ա., 391): Այն ամբողջությամբ պահպանվում է նաև Ստ. Նալբայանի և 1860 թ. «Հյուսիսափալլան» այլ հեղինակների մոտ: Օրինակ՝ գտանելու չեն (Հ, 60, 1, 3ն), ծնանում է (ն.ա., 8ն), հասանելով (Հ, 60, 4, 265ա), մտանում էր (Հ, 60, 4, 401ա), սկսանվում է (Հ, 60, 10, 280ա):

2. «Մեղվում» տպագրված իր հոդվածներում, չնայած Ստ. Նալբայանի վերահսկողության խսպառ բացակայությանը, Մ. Նալբանդյանը շարունակում է օգտագործել մենք գերանվան գրաբարյան մեք ձեզ: Օրինակ՝ մեք չունեինք (Ելժ, 2, 295), մխիթարյանք մեք (ն.ա., 311), մեք... տեսանում ենք (ն.ա., 302), մեք... (ն.ա., 304) և այլն:

3. Հարկադրական եղանակի պիտի և պիտոն է եղանակիշները շարունակվում են գործածիք երկու տեղերում էլ՝ պիտի ձևի գերակշռությամբ: Օրինակ՝ պիտի գտանեք (Ելժ, 2, 295), պիտի հասանալ (ն.ա., 303), պիտի իրագործի (ն.ա., 303), պիտի մերժենք (ն.ա., 304), պիտի երեխ (Հ, 60, 5, 378), պիտի լսվեր... պիտի ներս մտանեին (ն.ա., 379), պիտի լինի... պիտի մնա (Հ, 60, 7, 484);

Պիտոն է միադիմի բայը, ի տարբերություն «Մեղվի», «Հյուսիսափալլում» օգտագործվում է անորոշ գերբայի հետ: Օրինակ՝ պիտոն է զարթեցնել (Հ, 60, 5, 384), պիտոն է շատանալ (ն.ա., 389), պիտոն է մտածել (ն.ա., 392): «Մեղվում» չէ պիտոն ժխտականի հետ գործածվում է ոչ միայն անորոշ գերբայ, որը նալբանդյանի լեզվի այլ շրջանի բնորոշ գծերից մեկն է, այլև բայի եղանակային ձև: Օրինակ՝ չէ պիտոն... լինեին (Ելժ, 2, 307), չէ պիտոն մոռանա (ն.ա., 309):

Նույն շրջանի «Հյուսիսափալլում» պիտոն է և պիտի եղանակիշների գործածությունը խառն է, առանց որևէ տեղայնացման: Օրինակ՝ պիտոն է ոտք կոխին (Հ, 60, 1, 1ն), պիտոն է կատարե (ն.ա.,

¹ Որպես համեմատության երրորդ եղբ առնում ենք «Հյուսիսափալլի» մյուս հեղինակներին:

Հմմտ՝ պիտու է... բազուցանել (ն.տ., 4ն), պիտու է օրհնել (ն.տ., 78ա), բայց և շպիտի լինի (ն.տ., 15ն), պետք է լինի (ն.տ., 12, 430ն), պիտի գտանեին (Հ, 60, 12, 293ա) և այլն:

4. Վրա կապը և՝ «Մեղվում» և՝, «Հյուսիսափալլում» շարունակվում է օգտագործվել գրաբարյան հիմքով: Օրինակ՝ գիտության վերա (Ելժ, 2, 293), հավատալիքի վերա (ն.տ., 293), երևութիւն վերա (ն.տ., 307), ձեր վերա (Հ, 60, 5, 384), հմմտ՝ իմ վերա (Հ, 60, 6, 412ա):

5. «Հյուսիսափալլին» գործակցելիս դուրս մնացած բարբառային տարրերը Մ. Նալբանդյանը չի վերականգնում «Մեղվում» տպագրված իր հոդվածներում: Այստեղ ևս նա շարունակում է գործածել «Հյուսիսափալլում» առկա մին բառը: Օրինակ՝ մինի վերա (Ելժ, 2, 302), անդամներից մինը (ն.տ., 303), ընդունել մինը և մերձել մյուսը (ն.տ., 308), հմմտ՝ բարեկամներից մինի նամակը (Հ, 60, 5, 387), պայմաններից մինը (Հ, 60, 1ն), ոչ մինի (Հ, 60, 12, 434ն), իմաստակներից մինը (ն.տ., 490ա):

6. Ստ. Նազարյանի «վերահսկողության ազգեցությունից» դուրս տպագրված իր աշխատություններում Մ. Նալբանդյանը շարունակում է «Հյուսիսափալլում» սեռական հոլովով կապի խնդիր պահանջող կապերը նույն ձևով գործածել: Օրինակ՝ մեր վերա (Ելժ, 2, 294), հմմտ՝ ձեր պես (Հ, 60, 5, 381), մեր համար (Հ, 60, 12, 426ն), ձեր մոտ (Հ, 60, 6, 407ա), ու հետ (Հ, 60, 4, 267ա):

7. «Մեղվում» շարունակվում է անձ ցույց տվող բառերի ուղղականաձև հայցականի գործածությունը, ինչպես որ «Հյուսիսափալլում» է: Օրինակ՝ «Դատապարտում են հանցանքի գործողը և գործողության կցորդը կամ սորան արդարության աշքից վարագուրղը, բայց ոչ երբեք մի ամբողջ ազգ» (Ելժ, 2, 303), «Տեսանելով հայկական դերասանն և... դերասանութիւն» (ն.տ., 309). հմմտ՝ «Արհամարիում է այնպիսի հակառակորդներ» (Հ, 60—1, 4ն):

8. -Ուրյուն ածանցով կազմված բառերի թեթման ժամանակ և՝ «Մեղվում», և՝ «Հյուսիսափալլում» շարունակվում է (առանձին բացառություններով) օգտագործվել նրանց հնչյունափոխված հիմքը: Օրինակ՝ արբեցութենից, կարեկցութենից (Ելժ, 2, 294), հաղորդութենից (ն.տ., 302), դրութենից (ն.տ., 304), դժվարութեների (ն.տ., 307), կարողութեներին (ն.տ., 308), հայութենից (Հ, 60, 5, 380), ծովութենից, անհոգութենից և չհայութենից (ն.տ., 384), բայց և արտոնությունների (Ելժ, 2, 304), ոճրագործությունների (ն.տ., 305):

9. Ներգործական սեռի (պատճառական կերպ) բայերի կիրառությունը «Մեղվում» նույնն է, ինչ որ «Հյուսիսափալլում»: Օրինակ՝

մատուցանենք, հավելացուց (Ելժ, 2, 393), ապացուցանում են (ն.տ., 303), պատկերացուցին (ն.տ., 304), ուսուցանում է (ն.տ., 308), հմմտ՝ ապացուցանել (Հ, 60, 5, 382), դարձուցած շեր...աճեցուցած (ն.տ., 385), կացուցանել (Հ, 60, 1, 6ն), հառաջացուցանել... դարձուցանել (ն.տ. 77ա), անցուցանել (Հ, 60, 12, 280ա):

Ինչպես «Մեղվում», այնպես էլ «Հյուսիսափայլում» առանձին դեպքերում օգտագործվում են այս բայերի աշխարհաբարյան ձևերը: Օրինակ՝ փոթացնեն (Ելժ, 2, 295), չէ... ազնվացնում (ն.տ., 308), զգուշացնում էր (Հ, 60, 1ն), ուսեցնում է (Հ, 60, 4, 264ա), ցամաքցնել (Հ, 60, 5, 401ա), հասկացնել (Հ, 60, 12, 492ա):

10. Օժանդակ բայի եզակի երրորդ գեմքի ժիտականի կազմության համար «Մեղվում» ևս Մ. Նալբանդյանը շարունակում է օգտագործել որպես միակ ձև չէ-ն: Օրինակ՝ խնդիր չէ ընկնում (Ելժ, 2, 294), չէ կարելի... չէ կարող (ն.տ., 303), չէ միայն ազնվացնում (ն.տ., 308), չէ ցանկանում (ն.տ., 309), հմմտ՝ կարող չէ (Հ, 60, 1, 6ն), մոռանալու չէ (Հ, 60, 4, 264ա), ոչինչ չէ մնում (Հ, 60, 10, 283ա):

11. Զի շեղվում Մ. Նալբանդյանը նաև ներգործական և կրավորական բայերի կազմման հյուսիսափայլան սիստեմից: Ներգործական սեռի (առաջին խոնարհման) բայերի համար նա շարունակում է գործածել և լծորդը, իսկ կրավորականների համար՝ Ե-ն: Օրինակ, կրավ՝ պապանձինն... ընդունվիր... խայտառակվին (Ելժ, 2, 293), համոզվիր (ն.տ., 305), կատարելագործվին (ն.տ., 310). ներգ՝ պիտի խայտառակեն... ապացուցել (ն.տ., 293), շնորհել (ն.տ., 295), կանչել... խոստովանել... ընդունել... մերժել (ն.տ., 309):

Զի կարելի չնկատել, որ «Մեղվում»՝ համեմատած 1860 թ. «Հյուսիսափայլում» տպագրված աշխատությունների հետ, մեծ շափով ավելանում է այն բայերի թիվը, որոնց կրավորականը կազմվում է գրաբարյան ձևով (ի լծորդությամբ, բայց առանց Վ-ի): Այս շաբթի որոշ ներգործական բայեր կոնտեքստում գրաբարյան կրավորածել լինելով կրավորական սեռի բայեր չեն (օրինակ՝ «Թող ընդունենք... մի այդպիսի մարդ»— Ելժ, 2, 306), իսկ մյուսները չեզոք սեռի բայեր են, հետեւարար նրանցից կրավորական չի կարելի կազմել: Օրինակ՝ երեխի... (երեալ)... ապրել (ապրել) «բնակվել» (Ելժ, 2, 310): Սրանք, իհարկե, որպես «Հյուսիսափայլի» լեզվի համակարգից հրաժարվելու փաստեր չեն կարող ծառայել: «Մեղվում», որպես բացառություն, առաջին խոնարհման միայն մեկ ներգործական սեռի բայի կրավորականը Մ. Նալբանդյանը կազմել է առանց Ե-ի լծորդ ձայնավորը -ի-ով փոխարինելու՝ ուղղվել է (Ելժ, 2, 294):

12. «Մեղվում» ևս Մ. Նալբանդյանը որոշ դեպքերում, խախտե-

լով ժամանակների աշխարհաբարյան համաձայնության համակարգը, սահմանական եղանակի ներկայի փոխարքն անցյալի անկատար է օգտագործում: Օրինակ՝ «Կարծենք (կարծում ենք—Մ. Գ.), թե ժամանակն էր արդեն սրափելու միջին դարերի արքեցութենից» (Ելժ, 2, 294): «Ոչ երբեք պիտի հասկանա ազգը, հետևելով մի տեսակ մարդերի վարդապետության, որ թեև զգում էին անցածի և հնի ամլուրյունը, բայց... վախենում են միանգամայն կտրել բաժանել յուրյանց անձը տիսուր անցածից» (Ելժ, 2, 303):

Մեր կողմից ընդգծված նախադասություններում անցյալի անկատար ժամանակները, ինչպես երեսում է նախադասությունների ընդհանուր իմաստից, օգտագործված են ներկայի փոխարեն:

Բացի սրանցից «Մեղվում» Մ. Նալբանդյանի տպագրված հոդվածներին հատուկ են «Հյուսիսափայլին» և ժամանակի մյուս պարբերականներին այս կամ այն շափով հատուկ այնպիսի լեզվական հատկանիշներ, ինչպես.

ա) -էն, -ից, -եալ, -ուրին; ածանցներով կազմված բազմաթիվ բառերի առկայությունը. զրանցից՝ -ուրյուն-ը գոյականներ է կազմում. օրինակ՝ մամոթի հրապարակություն (Ելժ, 2, 303), «Այս շատ սխալ դրույթյուն է» («գրուզի»— ն.տ., 305), ձգտողություն («ձրգուում»— ն.տ., 310), աշխատություն գործ գնել (ն.տ.), հմմտ.՝ արհամարհություն («արհամարհանք»— Հ, 60, 7, 467), ...այն հարգությանը, որ ունի զեպի... (Հ, 60, 5, 396). -էն և եալ-ը՝ ածականներ¹. Օրինակ՝ մարդեղեն զիտություն («մարդկային»— Ելժ, 2, 294), ոսկեղեն տառերով (ն.տ., 307), հմմտ.՝ ոսկեղեն և արծարեղեն զարդեր (Հ, 60, 5, 393), նախապաշտյալ հայացք (Ելժ, 2, 307). -իշ-ը՝ գոյականներ և ածականներ. օրինակ՝ հաջողեցուցիչ որպիսությունը (ն.տ., 311), հմմտ.՝ բանագետ վարիչ (վարողներ) (Հ, 60, 6, 442ն):

բ) «Մեղվում» գործուն է «Հյուսիսափայլի» համար բնորոշ հատկանիշ հանդիսացող -կից երկրորդ բազմագրիչի միջոցով բարդ բառերի կազմության եղանակը (որոնց սուսիրենում համապատասխանում են Ը. ՅՕ—նախածանցով կազմված բառերը): Օրինակ՝ «Հանցավորի հետ պատճակից լինելով» (ն.տ., 308), խոսակից և հանդիսակից լինել (ն.տ., 309), հմմտ.՝ շարշարակից գտանկեցան (Հ, 60, 5, 382):

գ) «Մեղվում» և «Հյուսիսափայլում» տպագրված Մ. Նալբանդյանից առաջ առաջ բառերը օգտագործվում են նաև որպես փոխանուններ, օրինակ՝ նվիրյալ (Ելժ, 2, 305)—(սեռականը՝ նվիրելու—Ելժ, 2, 305): Նույն ձևով գեղամանցին նվիրված մահախոսականում ունենք՝ հանգուցյալ և հանգուցելու (Հ, 58, 2):

բանդյանի աշխատությունների համար ընդհանուր են լեզվական այնպիսի հատկանիշներ, ինչպիս:

1. ևս շաղկապի օգտագործումը, աշխարհաբարյան ել շաղկապի փոխարեն: Օրինակ՝ «Այս պատճառով ևս չենք կարծում» (Ելժ, 2, 294), «Մինչև այժմ ևս արգելը են եղած» (ն.տ., 304), հմմտ.¹ «Խոստովանությունը ևս կատարում են» (Հ, 60, 5, 283), «Նորա մտքով ևս չէ անցել» (Հ, 60, 5, 386), «Այս պատճառով ևս ավելորդ համարեցինք» (Հ, 60, 7, 484), «Արժանի ևս չէ» (Հ, 60, 6, 442ն), «Մեր ևս պարտական ենք» (Հ, 60, 12, 490) և այլն:

2. Առաջին խոնարհման բայերի սահմանականի անցյալ կատարյալ ժամանակի սովորական -ի, -իր, -ինք, -իք, -ին վերջավորությունների փոխարեն կրավորակերպ (-այ, -ար, -աւ, -անք, -աք, -ան) վերջավորությունների օգտագործումը: Օրինակ՝ բացահայտվեցավ (Ելժ, 2, 293), ընդհատվեցավ (ն.տ., 294), համոզվեցանք (ն.տ., 295), երկեցաք (ն.տ.), պատերազմեցան... հաջողեցան (ն.տ., 309), հմմտ.¹ գտանվեցան... չպաշտվեցան... կերակրվեցան (Հ, 60, 5, 382), լցվեցավ (Հ, 60, 1, 2ն), հնազանդեցավ... զոհվեցավ (Հ, 60, 10, 291):

3. Ամեն և ամենայն բառերի խառն օգտագործումը: Օրինակ՝ ամենայն քրիստոնյա (Ելժ, 2, 293), ամենայն իրավունք (ն.տ., 303), ամենայն...վկայությունը (ն.տ., 305), ամենայն ջանք (Հ, 60, 5, 384), բայց և ամեն աշխարհ (ն.տ., 388), ամեն արգելը (Հ, 60, 10, 280ա), ամեն տեղ (ն.տ., 283ա):

4. Հնչյունափոխություն և հողովման որոշ ավանդական կանոնների «խախատումները», որոշ բառերի մեջ ձայնավորների հնչյունափոխության անհետևողականությունն ու աշխարհաբարում սովորաբար չհնչյունափոխվող բառերում գրաբարի նմանությամբ հնչյունափոխություն կատարելը: Օրինակ՝ հնչյունափոխություն¹—տնօրէնութիւնքը, բայց և տնօրինութիւնքը, տնօրինութենից (Ելժ, 2, 293), հմմտ.¹ նաև անօրէնութիւնը (ն.տ., 303), հանդիսի (ն.տ., 294), ասպարիզի մէջ (ն.տ., 295), բայց և ասպարէզի (ն.տ., 311), հմմտ. նաև՝ ասպարէզի մէջ (Հ, 60, 7, 484, Հ, 60, 1, 1ն), չիդերի (Ելժ, 2, 308), գուռի մոտ (ն.տ.), սերունդին (ն.տ., 307), խումբին (ն.տ., 310), հմմտ.¹ գունդերը (Հ, 60, 7, 466), գուռները (Հ, 60, 1, 2ն), տուները (Հ, 60, 1, 9ն), սիրտեր (Հ, 60, 1, 78ա):

Հոլովման մեջ՝ մարդերի (Ելժ, 2, 303), մարդերից (ն.տ., 309), հատուցումի (ն.տ., 304), օրից (ն.տ., 303), հմմտ.¹ մարդերի (Հ, 60, 1, 7ն), մանուկի (Հ, 60, 6, 404ա), ցերեկի (Հ, 60, 4, 264ա), օրին (Հ, 60, 10, 278) և այլն:

¹ Վերականգնում ենք որոշ բառերի հին ուղղագրությունը:

Քննարկման համար մենք հիմնականում վերցրինք Մ. Նալբանդյանի լեզվի այն հատկանիշները, որոնք նախահյուսիսափայլյանից հյուսիսափայլյան էտապին անցնելու ժամանակ որոշ փոփոխության են ենթարկվել և այդ իսկ պատճառով կարող էին կասկածվել որպես խմբագրված ձևեր: Սակայն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 1860—1861 թթ. «Մեղվում» տպագրված ու մեր կողմից քննարկված հոդվածներում չկա լեզվական որևէ հատկանիշ, որը աշխարհաբարի մշակման սկզբունքների տեսակետից հակադրվի նույն շրջանի «Հյուսիսափայլում» հրապարակված աշխատությունների լեզվին, կամ փոխարինի հյուսիսափայլյան լեզվի հատկանիշներին: Իսկ սա անժխտելի ապացուց է այն բանի, որ Մ. Նալբանդյանի աշխատությունները «Հյուսիսափայլում» Ստ. Նալբարյանի կողմից լեզվական հարկադրական սրբագրության չէին ենթարկվում և «Հյուսիսափայլի» լեզվի համակարգի ընդունումը, ինչպես տեսանք նաև իր՝ Մ. Նալբանդյանի խոստովանությունից, եղել է նրա գիտակցական լեզվաշինարարական աշխատանքի արդյունքը: Այսինքն:

1. Գրական աշխարհաբարի մշակման պրակտիկ հարցերում Մ. Նալբանդյանը միշտ էլ կանգնած է եղել սկզբունքային դիրքերում, խստիվ համապատասխան լեզվի մշակման իր տեսության և այդ գործում որևէ մեկին զիջում չի կատարել:

2. Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլում» տպագրված աշխատությունների լեզուն Ստ. Նալբարյանի կողմից հարկադրական խմբագրման չի ենթարկվել:

Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլում» տպագրված աշխատությունների լեզվական ձևերի հեղինակային հարազատությունը որևէ կասկած չի հարուցում և այդ աշխատությունների լեզուն կարող է վատահելի հիմք ծառայել ուսումնասիրության համար:

* * *

*

Վերևում մենք ցույց տվեցինք, որ անցումը նախահյուսիսափայլյանից հյուսիսափայլյան շրջանին Մ. Նալբանդյանի մոտ կատարվել է աստիճանաբար՝ որոշ լեզվական հիմնական տարբերիչ հատկությունների դուրս մղման և ալլոց ծավալման միջոցով: Այդ պրոցեսը հիմնականում ավարտվել էր 1857 թ., այնպես որ Մ. Նալբանդյանի գործակցությունը «Հյուսիսափայլին» նրա լեզվում որևէ քիչ թե շատ կարմոր փոփոխություն չառաջացրեց:

Այժմ փորձենք ցույց տալ, թե ի՞նչ էր ներկայացնում իրենից

այսպես կոչված Հյուսիսափալլյան աշխարհաբարը՝ ի՞նչ տեսք ստացավ Մ. Նալբանդյանի լեզուն Հյուսիսափալլյան շրջանում, ի՞նչ հիմնական հատկանիշներով էր այն առբերվում նախահյուսիսափալլյանից: Այդ հնարավորություն կտա մեղ պարզելու Մ. Նալբանդյանի և Ստ. Նավարյանի ու «Հյուսիսափալլի» հեղինակային կոլեկտիվի այլ անդամների, ինչպես և Մ. Նալբանդյանի ու ժամանակի պարբերականների լեզվի փոխարարերության հարցերը և միաժամանակ հիմք կհանդիսանա Մ. Նալբանդյանի լեզվի հետագա էվոլյուցիայի պատկերը տալու համար:

Հայտնի է, որ լեզվի քերականական ու բառապաշարային էական հատկանիշները փոփոխության են ենթարկվում միայն պատմական երկարատև ժամանակամիջոցում: Այդ իսկ պատճառով համեմատաբար այնպիսի կարճ ժամանակահատվածների լեզվական էվոլյուցիայի ուսումնասիրության ու պատկերման համար, ինչպես, ասենք, աշխարհաբարի մշակման հյուսիսափալլյան ուղղության շրջանը, հարկ է լինում վերցնել ոչ թե լեզվական հիմնական, էական, այլ տարբերիչ հատկանիշները, այսինքն պատկերել լեզվի այն կողմերը, որոնցով զարգացման տվյալ փուլը տարբերվում է նախորդից կամ հաջորդից. նման գեպքերում, հասկանալի է, շատ էական և տարբերիչ հատկանիշներ կարող են համընկնել: Այս տեսանկյունով էլ մենք մոտենում ենք Հյուսիսափալլյան աշխարհաբարին:

Մեր նպատակը տվյալ գեպքում ոչ թե Մ. Նալբանդյանի լեզվի բառապաշարի կամ քերականական կառուցվածքի ուսումնասիրումն ու նկարագրությունն է, այլ այն հիմնական տարբերիչ հատկանիշների վերլուծությունը, որոնք կապում են Մ. Նալբանդյանի լեզուն գրական աշխարհաբարի մշակման հյուսիսափալլյան ուղղության հետ: Բառապաշարի մեջ այդ հատկանիշները արտահայտվում են՝ ա) որոշ բառային զույգ ձևերի և բ) բառակազմական առանձին ածանցների օգտագործման յուրօրինակությունների մեջ: Կանգ կառնենք նաև՝ մեկ և ապա՝ մյուս խնդրի վրա:

Բառապաշարային առանձնահատկություններ

1) Մ. Նալբանդյանի՝ «Հյուսիսափալլի» սկզբնավորման շրջանի լեզվում, սակավ բացառություններով, հօգուտ ամենայն բառի է լուծված նախահյուսիսափալլյան շրջանում առկա աշխարհաբարյան ամեն և գրաբարյան ամենայն զույգ ձևերի պայքարը: Օրինակ՝ ամենայն կերպ (Հ, 2, 153), ամենայն դատողությունը (ն.տ., 147), ամենայն տեսակցության (Հ, 5, 377), ամենայն տեղ (ն.տ., 400), «Ոչնչացնում է... ամենայն ապատ կամք, ամենայն գործունեություն և ամենայն կյանք» (Հ, 6, 461). Հմմտ՝ ամենայն բառի սովորությունը և ամենայն կյանքը» (Հ, 6, 461).

վորական կիրառության հետ՝ ամենայն արդարությամբ պիտո է գրեր (Հ, 5, 384). բայց և՝ ամեն մարդ (Հ, 1, 77):

Ստ. Նազարյանի մոտ ևս նույն համակարգը հիմնականում պահպանվում է՝ ամենայն աշխարհաշինություն (Հ, 1, 5), ամենայն հայ (ն.տ., 6). բայց և՝ ամեն մարդու (Հ, 6, 486):

1858—1860 թթ. ամենայն գրաբարյան ձեր բացարձակապես գերակշռում է: Օրինակ՝ ամենայն մարդ (Հ, 7, 75), ամենայն ապահովությամբ պահանջում էր... առանց ամենայն տարակուսի (Հ, 9, 244), աշխարհի ամենայն մասներում (Հ, 59, 5, 380), ամենայն օդ (Հ, 59, 8, 654), ամենայն բռպի (Հ, 59, 11, 917), ամենայն օր (ն.տ., 309)¹. Հմմտ.¹ ամենայն քայլափոխի մեջ (Հ, 10, 312ն), ամենայն բան (Հ, 59, 12, 980ն), ամենայն սատիճանափորք (ՄՀ, 59, 3), ամենայն տուն (ն.տ., 167), ամենայն զորությամբ (Ճ, 59, 182), ամենայն տեսակ գրվածներ (ՄՀ, 60, 247):

1860 թվականին՝ 1858—59 թթ. մասնակի կիրառությունների փոխարեն, ամեն բառը ավելի հաճախ է գործածվում. ամենայնը շատ դեպքերում փոխարինվում է ամեն մի բառակապակցությամբ: Օրինակ՝ ամեն աշխարհ (Հ, 60, 5, 388), ամեն մի երեսովիթ, ամեն մի իրողություն (ԵկԺ, 2, 302). Հմմտ.¹ ամեն արգելիքի հաղթեցինք (Հ, 60, 10, 280ա), ամեն տեղ (ն.տ., 283ա), ամեն տեղ հետևում է (ՄՀ, 60, 36), ամեն... հայ (Կո, 60, 832):

1861—62 թթ. շարունակվում է ամեն և ամենայն բառերի, որպես զույգ ձևերի գործածությունը, ամեն-ի սատիճանական տարածումով և ամենայն-ի գործածության հետագա սահմանափակմամբ:

Օրինակ՝ ամենայն օր (ԵԲ, 373), ամենայն տեսակ (ն.տ., 368), ամենայն... իրավադատության մեջ (ն.տ., 370), ամենայն անօրենություն գործել (ն.տ., 372), ամենայն բանի ընդունակ (ն.տ., 381), ամենայն լրջությամբ (ն.տ.). բայց և՝ ամեն տեսակ մարդերից (ն.տ., 362), ամեն ազգից ազգատ է (ն.տ., 407), ամեն կողմից (ն.տ., 413), ամեն մարդու մոտ (ն.տ., 424). Հմմտ.¹ ամենայն շնչավորի (Հ, 61, 6, 476ն), ամենայն բան (Հ, 61, 7, 55ն), ամենայն ազգի մեջ (Հ, 61, 4, 323ա), բայց և՝ ամեն բանի մեջ (Հ, 61, 6, 477ն), ամեն բան կարելի էր (Հ, 61, 9, 240ն), ամեն մարդ (Հ, 61, 4, 325ա) և այլն:

Զգացվում է, որ Մ. Նալբանդյանը փորձում է ամենայն բառը գործածել միայն որոշակի գեպքերում, նրա գործածությունը, այսպես ասած, տեղայնացվում է: Հիմնականում ամենայն է դրվում. այդուհետև կապական բառն է: Օրինակ՝ ամենայն խստությամբ (ԵԲ, 481), ամենայն խնամով (ն.տ., 523), ամենայն կերպով (Հ, 64, 3,

¹ Հմմտ.¹ ամենայն բան (ԵկԺ, 4, 70):

167), ամենայն իրավունքով (ՆԾԵ, 582), ամենայն նախանձահռուդությամբ (Թ, 28): բ) -Արյուն ածանցով կազմված բառերի վրա, ամենայն ընդունելության արժանի (ՆԾԵ, 526), Ամենայն նվաստություն հանձն առնուլ (Հ, 64, 3, 173), Ամենայն պղծության... անունն էլ թող վինի (Թ, 9): գ) ժամանակ ցույց տվող բառերի վրա՝ ամենայն բոպե (ԵկԺ, 2, 405), ամենայն օր (Ն.Մ., 407) և այլն:

Ընդհանրապես նկատվում է, որ բազմաթիվ այնպիսի դեպքերում, երբ 1858—62 թթ. համարյա առանց բացառության ամենայն է գործածվում, 1863—66 թթ. Մ. Նալբանդյանը սկսում է ամեն աշխարհաբարյան ձեր դնել:

Օրինակ՝ ամեն այսպիսի դիպվածներում (ԵկԺ, 2, 397), ամեն փիլիսոփայության (ՆԾԵ, 552), «Բաց է ամեն մարդու առջև» (Ն.Մ., 560), ամեն նորա արժանավորությունը խոստովանելով (Ն.Մ., 481), ամեն տողի մեջ (Ն.Մ., 482), «Ամեն բան ցույց է տալիս» (Ն.Մ., 483), ամեն օր (Ն.Մ., 486), ամեն բոպե, ամեն ժամ (Ն.Մ., 511), ամեն հնար (Հ, 64, 3, 160), ամեն... բռնակալներից շարչարվելով (ՆՓ, 248), թողնելով... ամեն վկայությունք (ՆՓ, 252), ամեն անգամ կրկնել (Թ, 25) և այլն:

2. Աշխարհաբարյան ոչ մի և գրաբարյան ոչինչ զույց ձևերից 1858—62 թթ. առանց որևէ շեղման գրաբարյան ձեն է օգտագործվում. օրինակ՝ «Չունի ոչինչ ժամանակ» (Հ, 5, 381), «Ոչինչ կերպով չէ կարող ցույց տալ» (Ն.Մ., 419), «Նորա համար չը կա ոչինչ քննություն, ոչինչ դատաստան... չէ ընդունում ոչինչ պատճառաբանություն» (Հ, 6, 460), ոչինչ բան ավելի ճիշտ չէ (Հ, 59, 9, 817), «Նա շունի ոչինչ ճանապարհ, ոչինչ հաղորդակցությունք» (ՆԾԵ, 432), «Ոչինչ բռնություն, ոչինչ պահպանողական համակարգություն, ոչինչ ընդգիմադրություն... չէ պիտո կարողանա...» (Ն.Մ., 442):

Նույն ոչինչ բառի հետ են կապվում ժխտման արևմտահայ ձևերի որոշ բացառիկ օրինակները Մ. Նալբանդյանի քննարկվող շրջանի լեզվում. օրինակ՝ մեռածների վերա կամ լավ կամ ոչինչ խոսել (Հ, 2, 117): Ոչինչ և ոչ մի բառերի նշված սիստեմն ընդհանուր է «Հյուսիսափայլի» համար ընդհանրապես: Հմմտ.՝ օրինակ՝ «Ոչինչ կենդանության նշով չերկեր» (Հ, 1, 46), «Չէին կարող հաստապել ոչինչ խելացի բաղաքական կարգեր» (Ն.Մ., 5ն), «Ոչինչ բանից չոնք այնքան երկյուղ» (Հ, 4, 286ն): Որպես բացառություններ նազարյանի և «Հյուսիսափայլի» այլ հեղինակների լեզվում հանդիպում են ոչինչ-ի փոխարեն ոչ մի ձեր առանձին դեպքեր՝ «Ոչ մի խելացի մարդ զարմանում չէ» (Հ, 60, 1, 77ա), ոչ մի հառաջադիմություն (Ն.Մ., 12, 492ա), «Ոչ մի բանական անձ ոչինչ կարող չէ հասկանալ» (Հ, 61, 9, 234ն): Մտ. Նազարյանի լեզվում ոչ մի ձեր բեր-

ված օրինակում, թերևս, ոճական նպատակներով է դրված՝ նույն նախադասության մեջ երկու ոչինչ զգացագործելու համար:

3. Հեռու—հեռի: ինչպես «Հյուսիսափայլի» մյուս թղթակիցները, այսպես էլ Մ, Նալբանդյանը 1858—62 թթ. գերադասում են օգտագործել հեռու բառի գրաբարյան հեռի ձևը:

Օրինակ՝ ոչ շատ հեռի գետի ափից (Հ, 8, 150), այս իրողությունը հեռի չէ (Հ, 9, 247), հեռի մնալ (Հ, 59, 5, 383), հեռի յուր ընտանիքից, հեռի յուր հայրենիքից (ն.տ., 10, 810), ապրում է շատ հեռի (ՆԾԵ, 375), հեռի մնալով (ն.տ., 376), հեռի են ծովից (ն.տ., 432): Հմմտ.՝ հեռի են (Հ, 59, 11, 895ն), հեռի լինելով ճշմարտութենից (Հ, 60, 12, 492ա), հեռի են մնում (ՄՀ, 59, 165), բայց և հեռու է (ՄՀ, 60, 36):

1863—66 թթ. գրաբարյան հեռի բառի կողքին սկսվում է օգտագործվել նաև հեռու ձևը:

Օրինակ՝ հեռի չէ (ԵկԺ, 4, 304), հեռի հարդից (ԵկԺ, 2, 402), հեռի պահել (ՆԾԵ, 595), հեռի մնալով, հեռի մեղանից (ՆՓ, 249), բայց և հեռու է (ՆԾԵ, 490), հեռու ենք մենք (ն.տ., 584), որը, սակայն, գերիշխող չի դառնում:

4. Կապային զույգ ձևեր (Վրա-վերա, առջև-առաջև):

Վրա կապի գրաբարյան հիմքի գործածության հարցը լուծված էր արգեն մինչև 1857 թ.: 1858—62 թթ. իր ստեղծագործություններում Մ. Նալբանդյանը շարունակում է այն օգտագործել գրաբարյան վերա ձևով: Օրինակ՝ մեր վերա (Հ, 1, 77), անուսումնասիրության վերա (Հ, 5, 378), բաների վերա (ն.տ., 379), գետնի վերա (Հ, 10, 335), լուսավորության վերա (ԵկԺ, 4, 55), կյանքի վերա (Հ, 59, 8, 653), գիտության վերա (ԵկԺ, 2, 243), մեր վերա (ՆԾԵ, 368), մեծագույն մասին վերա (ն.տ., 368), հարձակվողների վերա (ն.տ., 367):

Նախահյուսիսափայլյան շրջանում առկա առջև և առաջև կապական բառերից Նալբանդյանը 1858—60 թթ. օգտագործում է միայն առաջև ձևը: Օրինակ՝ նորա հոգու առաջև (Հ, 2, 150), մարդու առաջև (Հ, 5, 380), աշխարհի առաջև (ԵկԺ, 2, 293), ազգի առաջև (ն.տ., 307), խղճմտանքի առաջև (Հ, 60, 5, 383)¹, կրոնական ատենի առաջև (ն.տ., 371) և այլն:

Վրա կապի և առջև կապական բառի գոյականաբար գործածության գեպքում ևս նրանց գրաբարյան ձևերն են օգտագործվում «Հյուսիսափայլյում»: Օրինակ՝ մեր վերայից (Հ, 6, 463), ճակատի առաջևից (Հ, 1, 60ն): Նկարագրված կապերի օգտագործման հատակադրը «Հյուսիսափայլի» բոլոր հեղինակների համար ընդհանուր

¹ Հմմտ.՝ քաղաքի առաջև (ԵկԺ, 4, 71):

է: «Մեղու Հայաստանին» նշված կապերը օգտագործում է խառը ձեռվ: Օրինակ՝ աշխարհի վրա (ՄՀ, 58, 4), «Մեղու Հայաստանի» վրա (ն.ա., 26), բայց և՝ վճռով վերա (ն.ա., 89), կղզվով վերա, անապատի վերա (ն.ա., 93): «Ճռաքաղում» գրաբարյան ձերին գերադասություն է տրվում: Օրինակ՝ կտավի վերա (ՃՌ, 58, 39), անցից վերա (ն.ա., 40). Հմմտ:՝ սրտի վերա (ՆՔՀԴ, 19):

«Երկրագործության» (1862 թ.) մեջ առաջեւի հետ միասին օգտագործվում է նաև առջև աշխարհաբարյան ձեր: Օրինակ՝ «Աշքիդ առջև ունիս» (ԵԾԵ, 415), բայց և՝ «Տնտեսական խնդրի առաջեւ կանգնած է» (ն.ա., 418), աղքի առջև (ն.ա., 439), Բացվում է մեր առջև (ն.ա., 437), նոցա առջև (Ե, 2, 386), նորա առջև, մեր առջև (ն.ա., 383) և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 1863—66 թթ.՝ նախքան վրա կապի գրաբարյան վերա ձերից վերջնականապես հրաժարվելը, Մ. Նալբանդյանը վերա և վրա ձերը օգտագործում է խառը կերպով, հավասարաշափ: Այդ տեսակետից արժանի են ուշադրության «Հեղեկելը և նորա ժամանակը», «Երկու խոսք» աշխատություններն ու «Բերդի հիշատակարանը», որոնց մեջ ունենք՝ «... Քերականության վերա սկսեցի աշխատել ապրիլի մեկից» (ԵԾ, 4, 285), բայց և՝ «1863 թիվը վերջացնելու վրա եմ» (ն.ա., 291), ժամանակի վրա, գրքի վրա (ԵԾԵ, 552), բայց և՝ բոլորի վերա (ն.ա., 564), ուղեղի վերա (ն.ա., 568), շատերի վրա, նոցա վրա. բայց և՝ պարոնի վերա (ԵԾ, 2, 396), լեզվի վերա (ն.ա., 401) և այլն: «Կրիտիկայում», լեզվաբանական աշխատության մեջ հասած պատափիկներում և «Թղթի» թարգմանության մեջ ու ծանոթագրություններում այս կապի աշխարհաբարյան ձեր հիմնական է: Առանձին դեպքերում, ավելի շատ ձեռքի սովորության հետևանքով, քան գիտակցական մոտեցմամբ, հանդիպում են նաև գրաբարյան ձեր: Օրինակ՝ բանաստեղծության վրա (ԵԾԵ, 479), նորա վրա (ն.ա., 482), հաշպարակի վրա (ն.ա., 494), բայց և՝ մարմնի վերա (ն.ա.). արմատի վրա (ԵԾԵ, 579), այլ բանի վրա (ն.ա., 581), բայց և՝ բարկանալով այդ բանի վերա (ն.ա.). սոցա վրա (Թ, 8) և այլն:

Այլ է գրությունը «Ազգային թշվառություն» հոդվածում: Ոմանք այդտեղ՝ նշված կապի գրաբարյան ընդհանուր համակարգի կողքին աշխարհաբարյան ձեր գտնելով այն եղբակացության են հանգել, որ գրանք, իբր թե Մ. Նալբանդյանի տեքստը Ստ. Նազարյանի կողմից սրբագրելու ժամանակ անուշադրությամբ բաց թողնված վրիպակներ են: Ուսումնասիրողների ուշադրությունից փաստորեն վրիպել է այն հանգամանքը, որ «Ազգային թշվառություն» հոդվածում

վրա ձեզ օգտագործվում է միայն այն դեպքում, եթե այդ կապը որպես ուղարկի խոսք դրված արևմտահայ բառակապակցության մեջ է գործածվում: ինչպես «... աշք են ձգում... անապատացած աշխարհի վերա» (Ելժ, 3, 103), «... միջոց չունի այն արյունաշաղախ տեսարանների վերա մի բոպի յուր աշքը ձգելու...» (ն.տ., 108), «Մեղուի վերա» (ն.տ., 113), «... երեսի վերա մնային» (ն.տ., 114): Բայց և՝ «Միայն թե... մեր կամքը իբրև Մովսիսի պատգամ ընդունեն, մեր արածին կամ ընելիքին վրա չխռուին...», իսկ ձեր «չը րածին և չը նելիքին վրա» կարելի՞ է խոսել:» (ն.տ., 108), «... Ազգային վարչության «ը րածին կամ ընելիքին վրա» (ն.տ., 110) (ընդծումները մերն են—Ս. Գ.): Հեղինակային խոսքում այս կապը միշտ վերա ձևով է դրված:

Անցման որոշ շրջանից հետո Մ. Նալբանդյանի լեզվում, առանց որևէ բացառության, իր աշխարհաբարյան ձևով է օգտագործվում նաև առաջև կապական բառը: Օրինակ՝ Աշխարհի առաջև (Ելժ, 404), մարդկության առաջև (ն.տ., 305), Բայրընի դագաղի առաջև (ն.տ., 307), աշխարհի առաջև (ՆՓ, 249), բայց և՝ մեր առաջև (ՆԲԵ, 483), երեակայության առաջև (ն.տ., 497), նրա առաջև (ն.տ., 588), մարդերի առաջև (Թ, 20):

5. Էլես. Որևէ զիջում չի կատարում Մ. Նալբանդյանը նաև էլես շաղկապների ու էլեսանակավորող բառի գործածության իր դաշտանած հյուսիսափայլան համակարգում: 1858—1862 թթ. առանց որևէ բացառության նա ևս-ն է գործածում: «Օրինակ՝ ևս լիներ» (Հ, 8, 52), «Ուրեմն իրավունք ևս ունեինք» (Հ, 10, 299), «Ավելորդ է մի խոսք ևս ասել» (Հ, 59, 8, 651), «...որի անունը ևս լսած չէին» (ն.տ., 10, 810), «Այս պատճառով ևս չենք կարծում» (Ելժ, 2, 294), «Մինչև այժմ ևս արգելք են եղած» (ն.տ., 304), «Խոստովանությունը ևս կատարում են օտարի լեզվով» (Հ, 60, 383), «Մեհք ևս ծնելու (ծնվելու—Ս. Գ.) չէինք որպես հայ» (ՆԲԵ, 378), «Ուրիշ տեղ ևս չէ պիտո գտանեմ» (ն.տ., 425), «Գերձակը ևս նույն երգն է երգում» (ն.տ.) և այլն: Հմմտ: «Այն ևս կրուանի» (Հ, 7, 10ա), «Ինչ վիճակի մեջ ևս դրած լիներ» (Հ, 59, 11ն), «Արժանի ևս չէ համեմատել» (Հ, 60, 6, 442ն), «Ինքը ևս պատրաստ էր» (ն.տ., 10, 279ա), «Այլոց ևս հորդորել» (ՄՀ, 59, 165), «Գովելի բանը ևս պետք է պախարակել» (ՄՀ, 60, 245), «Պ. Նազարյանցը պարկեշտ լուսությունը ևս արհամարհում է» (ն.տ., 99), «Նղովք ևս պետք է հանձն առնի» (ԿԲ, 60, 832), բայց և՝ «Քալիմաքիներն էլ ընկած են կեցած տեղը» (Ելժ, 4, 60)¹, «Շատերն էլ կան» (ՄՀ, 59, 165):

1 Մեր նկատած միակ բացառությունն է:

«Գրաբար լեզուն էլ ունեցել է յուր խանգարիչները» (ՄՀ, 60, 36): Նշենք, որ «Մեղվում» էլ շաղկապը առավելապես օգտագործվում է բարբառախառն աշխարհաբարով գրված տեքստերում:

1863—66 թթ. իր գիրքերը զիշում է նաև ևս շաղկապը: Այս անգամ դա կատարվում է Հօգուտ Էլ ժողովրդական ձեփի: Այս շրջանից մեզ հասած բոլոր աշխատություններում էլ շաղկապը հավասարաշափ չի գործածվում: «Նկատողություն» (Ելժ, 4) հոդվածում մննք ունենք Էլ շաղկապի օգտագործման միայն մասնակի դեպքեր տիրապետող ևս-ի կողքին («Խարուցկ Էլ չկա»—ն.ա., 306):

«Երկու խոսք» և «Հեղեղն ու նորա ժամանակը» աշխատություններում ևս-ն է արդեն բացառություն կազմում ու կիրառվում մասնավոր գեպքերում և զրա փոխարեն համապատասխանաբար ավելանում են Էլ-ի գործածության դեպքերը: Օրինակ՝ «Այս կերպով ևս օգուտ է բերում» (Ելժ, 2, 402), «Ինչ լեզվով ևս լինի գրված» (ն.ա., 403), «Անհնարին է խոսք ևս մեջ բերել» (ՆԲԵ, 554), այնպես ևս (ն.ա., 568), բայց և առաջ Էլ նայել էինք, շատերն Էլ (Ելժ, 2, 396), պարոններն Էլ (ն.ա.), «Գերմաններն Էլ չգիտեն... նոքա Էլ օգուտ քաղելով ...իրենք Էլ բան հասկացող երկին» (ն.ա.), «Մարկոսն Էլ իր կարգով... երկու մարդ Էլ չոկ սպանեց» (ՆԲԵ, 554), «Աշքն Էլ հանեցին» (ն.ա., 555), «Այն Էլ բռնաբարվեցավ» (ն.ա., 560) և այլն:

«Կրիտիկայում», լեզվաբանական աշխատության պատառիկներում և մի քիչ աժելի պակաս Փարավեցու «Թղթի» թարգմանության մեջ ու ծանոթագրություններում Հիմնականում Էլ շաղկապն է օգտագործվում: Օրինակ՝ «Մի ուրիշ աշխատություն Էլ գիտենք» (ՆԲԵ, 480), «Խորհուրդն Էլ այս է» (ն.ա., 483), «Դարեր Էլ անցան» (ն.ա., 500), «Մեզ Էլ պիտի հասներ» (ն.ա., 514), Սառն Էլ որ տնկն (ն.ա., 539), ինչքան Էլ տպեղ լինի (ն.ա., 582), թուղթն Էլ կարգան (թ., 3), այս պատճենով Էլ (ն.ա., 5), ձեզ Էլ պիտի պատահի (ն.ա., 7), «Ես Էլ նոցա նման եմ» (ն.ա., 11): Հմմտ.՝ «Ինչ շպարի տակ ևս ծածկվի» (Ելժ, 3, 330), «Մի խոսք ևս մոռնալու չէ» (ՆԲԵ, 491), «Ընթերցողքը ևս իրավունք կունենալին» (ն.ա., 584), «Նա ևս միանա» (թ., 39), «Օրինակ ևս շենք ուզում բերել» (ն.ա., 69) և այլն:

Էլ բառի օգտագործումը 1863—66 թթ. հնարավորություն է տաւալիս Մ. նալբանդյանին, նախ՝ ոճավորման նպատակներով կրկնության գեպքում մե՛րթ Էլ, մե՛րթ ևս դնելով խուսափելու լեզվական միօրինակությունից, ապա՝ օգտագործելու ժողովրդական լեզվին հատուկ մի ոճ, որը ևս-ով կառուցել հնարավոր չէր, քանի որ ևս-ը նախագասության սկզբում չի կարող դրվել: Օրինակ՝ «Էլ ուր ենք խոսում» (ՆԲԵ, 499), «... որ Էլ ուժ շմնա պարը շարունակելու»

(ն.ա., 522), «Ել լսել չգիտե»¹, (թ, 18). (Հեր կարելի ասել՝ ևս ուր
ենք խոնում. որ ևս ուժ շմնա):

6. Անել—առնել 1858—60 թթ. «Հյուսիսափալում» տպագրված
իր աշխատություններում Մ. Նալբանդյանը շարունակում է առնել
գրաբարյան բառի գործածությունը անելի փոխարեն: Օրինակ՝
գիմացավություն առնեմ (Հ, 7, 72), սալահատակ առնելու մասին
(Հ, 8, 150), ինչ պիտու է առնել (Հ, 10, 338), զողս առնե (ն.ա., 301),
մայրություն առնել (Հ, 60, 5, 384)²: 1861—62 թթ., առանձնապես
«Երկրագործությունում» առնել բայց՝ գրաբարյան անել նշանակու-
թյան հետ միասին օգտագործվում է նաև վերցնել (նաև փիլր. զնել)
իմաստով, օրինակ՝ ուոքի տակ առնելու համար (ՆԲ, 374), ով ինչ
կարող է առնել (ն.ա., 406), վաճառականություն առնել (ն.ա., 429),
բայց և՛ Հյուսիսափալյի խնդրած ուժքորմը հետ շառնելով (ն.ա.,
377), բոլոր վաճառված վարդապետարանքը ետ առնելու... համար
(ն.ա., 380), ես ձրի չեմ առել (ն.ա., 415) և այլն:

Մ. Նալբանդյանի 1863—66 թթ. բանառում գրված աշխատու-
թյուններում զգալի կերպով նվազում են առնել (անել) գրաբարյան
բայց գործածության դեպքերը. բացասություն է կազմում «Մեր լեզ-
վի արմատական բարեփոխության մի փորձը», որի մեջ այն դեռևս
լայն գործածություն ունի: Նշված շրջանում առնել բայց հանդս
է գալիս և՛ առնել, և՛ վերցնել³ իմաստներով: Օրինակ՝ «Զգուշություն
է առնում» (ն.ա., 555), շրջան առնող... ուժերի (ՆԲ, 566), «Երջան
շնն կարող առնել» (Ելֆ, 2, 408), մատաղ առնել (Հ, 64, 3, 160),
«Նույն առաջարկությունը կարելի է առնել» (ՆԲ, 583), ընտրություն
առնել (ն.ա., 253): «Եվրոպական լեզուներից (է) առնված» (Ելֆ,
2, 396):

Առնել (անել)՝ բայաձեր հիմնականում փոխարինվում է աշխար-
շաբարյան կենսունակ անել ձևով: Օրինակ՝ «Տպավորություն է
առնում ընթերցողի վրա» (ՆԲ, 485), ծաղր անելով (թ, 13), «Աղոթ
էլ չեն առնում» (ն.ա., 18) և այլն:

¹ 1858—60 թթ. ևս Մ. Նալբանդյանը փորձում էր նման ոճ ստեղծել և՛ ժողո-
վրդական ձևի նախորդ այլ գրաբար ձևի միջոցով: Դիշենք՝ «...այլ շեր դառնա-
լու», «...այլ ինչ սև քնար» («Մանկության օրեր»):

² Հմմտ. պարս առնեմ (Ելֆ, 4, 64), հիացմունք կանեմ (ն. ա., 57) և այլն:
Առնել բայի նման՝ գրաբարիմաստ գործածությունը հատուկ է ժամանակի գրական
աշխարհաբարի մշակման բոլոր ուղղություններին: Օրինակ՝ փոփոխություն առ-
նելու համար (Հ, 10, 314ն), մատնացույց առնելով (ն. ա., 320ն), բնաշինչ առ-
նելի, արմատախիլ առնել (Հ, 7, 10ա), ուսնակոփ առնել (Հ, 60, 1, 3ն), կար առ-
նելով և մանելով (ն. ա., 6, 403ա) տնտեսություն առնել (ՄՀ, 59, 134), ...որպես
առնում է Հյուսիսափալյիր (ՄՀ, 60, 341), ինչ պետք է առնել (ԿԲ, 60, 832) և այլն:

³ Այս իմաստով գործածվող առնուլ բային կանգրադառնանք ստորեւ:

7. 1858—60 թթ. շարունակվում է գրաբարյան ու(1) լծորդության որոշ բայերի օգտագործումը: Գրանցից ամենից շատ տառածված է առնուլ-ը, ապա՝ բողով բայր. բացառությունների կարգով հանդիպում են նաև զրունուլ, զարբնով բայերի առանձին ձևեր: Օրինակ՝ փոխ առնուլ (Հ, 59, 10, 809), ևս առնում (ն.տ., 11, 910), պիտի առնունք (Ելժ, 2, 304), հետ առնուլ (ն.տ., 308), բողովներ (Հ, 60, 5, 385), կիսատ բողով (Հ, 7, 75), զրունուլ (Ելժ, 2, 294):

Առնուլ և բողով բայերի գործածությունը 1861—62 թթ. սահմանափակվում է, սակայն սրանք գեռս լրիվ կերպով չեն փոխարինվում համապատասխան աշխարհաբարբարյան ձևերով: Օրինակ՝ հանձն առնուլ (ՆԸԵ, 375), զենք առնուլ (ն.տ.), ուր բողովներ (ն.տ., 376), բողուց (ն.տ., 388), առնուլ (ն.տ., 415), կառնու (ն.տ., 419)¹:

1863—66 թթ. նշված բայերից ամենից շատ առնուլ-ն է օգտագործվում. այն գործածական է նաև «Բերդի Հիշատակարանում»: Օրինակ՝ կառնու այսօր (Ելժ, 4, 287), վազը կառնու (ն.տ., 288), Հմմտ.՝ հանձն առնուլ (ն.տ., 305, Թ, 14), ինչ կառնու (ՆԸԵ, 558), շառնու (ն.տ., 482), վրհծ առնուլ (ն.տ., 487), կապոց առնում (ն.տ., 493), աշքի տակ առնութին (ն.տ., 506), Հասակ առնուին (ն.տ., 527) և այլն: Այսուհետեւ զալիս են բողով-ն ու երդնուլ-ը: Օրինակ՝ պիտի բողովին (ն.տ., 484), բողովներ (ն.տ., 486), բողուր (ն.տ., 583), բողովներ (ԵՓ, 253), երդնում էր (ՆԸԵ, 487), երդնում եմ (ն.տ., 515) և այլն:

8. Հյուսիսափայլյան ուղղության հեղինակների լեզվում առկա են նաև բառային այնպիսի երկձևություններ, կամ իմաստային օգտագործումներ, երբ զույգ ձևերից որևէ մեկին զերակշռություն չի տրվում, կամ նրանցից որևէ մեկն իր գործածությամբ չի տեղայնացվում: Գրանցից են՝ փոխարեն—փոխանակ:

Մ. նալբանդյանի, ինչպես և 1858—60 թթ. այլ հեղինակների լեզվում որպես հոմանիշներ են հանդես գալիս փոխարեն—փոխանակ բառերը. դրանց գործածության մեջ որևէ համակարգ չի նկատվում և այդ բառերն ազատ կերպով իրար փոխարինում են: Օրինակ՝ «Ներս է մտանում Սիփիթարյան միաբանության մեջ, կեղծավորյալ ուսապականության փոխանակ» (Հ, 11, 418), «Բայց մեր համար դարմանք չէ դորա փոխանակ մի շատ բնական գործ» (Հ, 9, 419), «Փորա փոխանակ... դորա փոխարեն տվել է նա» (Հ, 59, 10, 808). Հմմտ.՝ «Նախ և առաջ Հարկավոր էր փոխանակ անբան արարածների... ձայներ հնչեցուցանելու...» (Հ, 10, 312ն):

¹ Հմմտ.՝ կառնու (Հ, 10, 315ն), հանձն առնու, քննության տակ առնուլ (ն. տ., 316ն), վեր առնում (Հ, 7, 10ա), օրինակ առնուր (Հ, 59, 11, 895ն), ձեռք առնուլ (ԿԲ, 60, 832):

Քննարկվող շրջանի գրական լեզվի տարբերիչ առանձնահատկություններից մեկը պետք է համարել առանձին բառակազմական ածանցներով կազմված բառերի մեծաքանակությունը. 1850—1860 թթ. աշխարհաբարում կենդանի ածանցներից առավել կենսունակ են հետևյալ ածանցները՝ եալ (-յալ), -ուրիմ (ուրյուն), -իշելն (եղեն), ան-և այլն¹:

1. -եալ ածանցը հիմնականում ածականներ է կազմում. օրինակ՝ լուսավորյալ ազգերի մեջ (Հ, 1, 75), թորժով ասացյալ տեղը, հիշյալ հիվանդանոցը (Հ, 2, 151), լրացյալ արհամարհությանը (Հ, 4, 337), ապականյալ հյութերը (ն.տ., 340), ուխտյալ խորհուրդի (ն.տ., 377), վկայեալ կրոնագրուժ (Հ, 5, 406), մեռյալ դիակի (Հ, 6, 477): Հմմտ.՝ ապականյալ օրերումը (Հ, 4, 282ն), հառաջուց պատրաստյալ հողի մեջ (ն.տ., 266ն), մեռյալ հայկաբանության մասին (Հ, 2, 144ն):

-եալ ածանցը շափականց տարածված է նաև «Եմեղու Հայաստանի» թերթում: Օրինակ՝ բաժանյալ երկիրը (ՄՀ, 58, 4), կատարելագործյալ երկրագործության (ն.տ., 52), կառուցյալ մենաստանի (ն.տ., 92), խաթարյալ ձայնիցն (ն.տ., 110), տառապյալ ազգիս, կորյալ գլուխներ (ն.տ., 111). Հմմտ.՝ քարացյալ սրտի վերա (ՆՔՀԴ, 19), կարգավորյալ խոսակցության... վերա (ՆՔՀԴ, 21):

Մ. Նալբանդյանի լեզվում 1858—60 թթ. լայնորեն գործածվում են ինչպես այս ածանցով կազմված՝ այժմ էլ սովորական, այնպես էլ այլ՝ ներկա շրջանում մեծ մասամբ հարակատար գերբայի ձեռվ փոխարինված բազմաթիվ բառեր: Օրինակ՝ հավատացյալ հասարակության (Հ, 7, 75), ճշմարտությամբ ողերոյալ (Հ, 8, 162), լրացյալ արհամարհանքով (ն.տ., 160), նախասացյալ փոսի վերա (Հ, 10, 345), կեղծավորյալ ապականության փոխանակ (Հ, 11, 418), խարխալյալ կառավարությունը (Հ, 59, 9, 748), պայմանյալ արծաթը (ն.տ., 9, 13), մոլախոտյալ անդաստանը (ն.տ., 9, 16), նախապաշտյալ հայացք (Ելժ, 2, 307)², հմմտ.՝ ուսյալ աշխարհական (Կմի, 60, 527), որբացյալ ծերունին (ն.տ., 3), վախճանյալ անձ (ն.տ., 5), քայլայալ անդամներն (ն.տ., 23):

1861—62 թթ. ևս բազմաթիվ են -եալ (-յալ) ածանցով կազմված բառերը: Սա առանձնապես վերաբերվում է «Երկրագործությանը», որի մեջ այս ածանցով կազմված մեծաքանակ բառեր են օգտագործվում: Օրինակ՝ ուխտյալ ճանապարհիցն (ՆԲԵ, 367).

¹ Հիմնականում կանգ կառնենք ածանցների այժմ անսովոր կիրառությունների վրա:

² Հմմտ.՝ ապահովյալ նամակ (Ելժ, 4, 68):

վերոգրյալ¹ տետրակը (ն.տ., 368, 407), առևանգյալ կնոջ (ն.տ., 370), ճնշյալ ժողովրդի (ն.տ., 374), պսակյալ գլուխը (ն.տ., 405), հարուստ և ապահովյալ (ն.տ., 407), չերմախտական և լարյալ վիճակը (ն.տ., 421), նշխարյալ ոսկին (ն.տ., 427), լրյալ բազուկները (ն.տ., 435), մի շփոթյալ և ազմկյալ տեղում (ն.տ., 437), առաջարկյալ ծառայությունը (ն.տ., 439), Կմնա անշարժ և անդամալուծյալ (ն.տ., 440), Մարդն ապահովյալ է (ն.տ.) և այն և այն: Հմմտ.² ծաղկյալ դրությանը (Հ, 61, 7, 54ն), լուսավորյալ և քաղաքականապես հասունացած ազգերի մեջ (ն.տ., 70ա): Ինչպես տեսնում ենք, «Հյուսիսափայլում» իրար կողքի լինելու դեպքում հարակատարի իմաստով գործածված դերբայներից մեկը -եալ (-յալ) և մյուսը -ած վերջավորությամբ է դրվում, որով և լեզվական միօրինակությունը խախտվում է:

Մ. Նալբանդյանը, որպես սկզբունք, խուսափում է նման գեղաքերում աշխարհաբարյան հարակատար գերբարի օգտագործումից:

Քանակական տեսակեաից 1863—66 թթ.³ Մ. Նալբանդյանի լեզվի ետքյուսիսափայլցան շրջանում, որոշ շափով նվազում է -եալ ածանցով քաղադրված բառերի թիվը, բայց այն սահմանափակ կիրառության չի համում. -եալ ածանցով կազմված ձեերը 1863—1866 թթ. շարունակում են մնալ Մ. Նալբանդյանի լեզվի տարբերիչ առանձնահատկություններից մեկը: Այս մի քանի օրինակներ. ժամ հառաջ սովորական խոստովանյալ լեզու (Ելժ, 2, 404), ... Թագավորյալ մատենագրությունը վիպագրությունն է (ն.տ., 403), Մասիսի և Արագածի երևացյալ պատկերները (ՆԾԵ, 503), առասպելյալ բնական երևութը (ն.տ., 505), գերածացրյալ անպիտանությունը (Հ, 64, 4, 159), լուսավորյալ և գովյալ գեղեցկությունը (ՆԾԵ, 579), քաղաքակրթյալ աշխարհին (ն.տ., 581), ապացուցյալ ճշմարտություն և այլն: Հմմտ.⁴ Միացած նահանգներին (Ելժ, 4, 306):

2. -ուրիմ (-ություն) ածանցը նշված առավել կենսունակ ածանցներից ամենատարածվածն է: Այս ածանցով կազմված բառերի զգալի մասի հիմքը ենթակայական (ներկա) դերբայի ձև ունի, որին ավելանալով՝ -ուրիմ (-ություն) ածանցը կազմում է գործողության անունը՝ որպես գոյական: Օրինակ՝ պահանջողուրենների մեջ (Հ, 1, 79), ազատ ձգողուրյան հետեւով (Հ, 6, 458—459), «Բնությունը... գտանվում է անդադար շարժողուրյան մեջ» (Հ, 8, 162), ձեռնտու էին հալողուրյան (Հ, 9, 228), «Այսպիսի ճնշողուրյունից լավապես շեն պարզում պատճառը» (ն.տ., 232), բարե-

¹ «Որի մասին վերեւում գրված է». Հմմտ. վեասաց տեղերում (ՆԾԵ, 432), վեասաց պարագաներով (ն.տ., 410):

լիդ Հերքողություն (ն.ա., 308), այն մերժողությունը (Հ, 59, 10, 808), արժանի նմանողության (ն.ա., 819), պահանջողություն (ՆԾՅ, 368), ձգողությունը (ն.ա., 416), ճնշողություն (ն.ա., 442), հմմտ՝ ճարտարապետական ձգողությունը (Հ, 1, 61ն), «Պահանջողությունքը առավել մեծացան» (Հ, 4, 270ն), «Եթե ընտրողության մեջ չկա սխալմունք» (Հ, 6, 494ա): Նշված բառերի մեծամասնությունը մեր լեզվի պատմության հետագա շրջանում փոխարինվել է արմատից, և -ում (ն) ածանցից կազմված ձևերով (շարժում, հալում, ճնշում, ձգում, հերքում, մերժում և այլն): Նույն կազմության բառերի մի այլ խումբ աշխատագործվում է առանց որևէ ածանցի: Օրինակ՝ պահանջողություն (Հ, 10, 308) -պահանջ, կայծակի զարկողությունը (Հ, 59, 1, 16ա) -զարկ: Գրական լեզվում նույն ձևով շպահանվեց նաև արմատի (կամ չիմքի) վրա -ություն ածանցի հավելմամբ կազմված բառերի մեծամասնությունը: Օր՝ դիտավորության իրազործությունը (Հ, 2, 150), Կատարվեցավ միաբանության հիմնարկությունը (Հ, 5, 407), լուսավորության բարզությունը (Հ, 6, 475), հայենություն (ն.ա., 368); ձեռնարկությանց (ն.ա., 441) «ձեռնարկումների» և այլն:

Նման բառերի որոշ խմբի առանց ուրիշն ածանցի ձևերը գործածական էին 1858—60 թթ. և գործածական են կամ գործածելի են այժմ: Օրինակ՝ կամեցածի պիս ուրակություն տալու համար մի բույսի (Հ, 6, 497) -որակ, երկրաշարժության ժամանակ (Հ, 9, 229) -երկրաշարժ, տերեարափությունը (Հ, 10, 335) -տերեարափ, «Սկսանում եմ... հառաջարանությամբ» (Հ, 59, 1, 69) -առաջարան¹, հանդիսավոր հացիկեռություն (ն.ա., 11, 903) -հացկեռույք (Ճաշկերույթ). ձեր նամակի դրությունը (ԵկԺ, 4, 68) -դրույթներ և այլն:

Որոշ բառերի -անք ածանցով կազմված ձևերը հաղթող հանդիսացան՝ «Աղաշում ենք աշխատություն հանձն առնուկ և կարդալ» (ն.ա., 305), «Հանդիպում ենք Հեղեղի հարգության» (ՆԾՅ, 567), հայենություն չկա (ՆՓ, 25), վիրավորությունը (Հ, 10, 343)—վիրավորանք. վերջին հարգության պարտքը (Հ, 59, 16, 815)—հարգանք, արհամարհություն (Հ, 60, 7, 467)—արհամաւ հանք. հմմտ՝ արհամարհությամբ (ն.ա., 1, 82ա), հարգություն պահանջել (Հ, 59, 11, 900ն), ծանր աշխատություն էր (Հ, 10, 315ն) և այլն:

Շատ ավելի փոքրաթիվ են այն բառերը, որոնց ում (ն) ածանցով կազմված ձևերն են գործածվում: Օրինակ՝ վանքերի կործանությունը (Հ, 59, 8, 657)—կործանում. կինում է շատ ար-

¹ Հմմտ՝ «Թարգմանիչը սկսանում է յուր գործը մի շատ գեղեցիկ հառաջարանով» (Հ, 10, 319ն):

տաշնչուրյուն (ն.ա., 656) — արտաշեցում. ամոթի հրապարակուրյունը (Ելֆ, 2, 303) — Հրապարակումը:

Մ. Նալբանդյանը գտնում էր (տե՛ս Ելֆ, 3, 214), որ գրաբարում —ումն ածանցով կազմված բառերը («բայանուններ») ժողովրդական լեզվում փոխարինվել են անորոշ գերբայի ձևերով («աներևույթ հղանակ») և —ում (ն) ածանցով կազմված ձևերը ժողովրդի համար ոչ-սովորական, օտարութի էր համարում։ Հստ Մ. Նալբանդյանի, դրանք պետք էր օգտագործել շատ մեծ զգուշությամբ։ Թիրես սա այն պատճառներից մեկն էր, որի հետեանքով նա՝ առանձնապես 1863—65 թթ., աշխարհաբարի մշակման այլ ուղղություններում —ում (ն) ածանցով գործածվող բազմաթիվ բառեր —ուրյուն ածանցով կազմված ձևերով էր փոխարինում։ Օրինակ՝ «Արգո Հեղինակը թույլ ըմբռնուրյուն ունի» (Ելֆ, 4, 304), «Մարդկային գիտության շրջանը ավելի տարածուրյուն է ստանում» (Ելի, 560), «Օրագիրների տարածուրյան սահմանափակությունը» (Ելֆ, 2, 395), «Որքան տարածուրյուն ունի հայ ընկերության մեջ» (Ելի, 489) և այլն։

—ուրյունը «հյուսիսափայլյան» կենսունակ միակ ածանցն է, որը 1863—65 թթ. և շարունակում է գործուն մնալ։ Սյա շրջանում էլ —ուրյուն ածանցը կարող է դրվել ինչպես արմատի, այնպես էլ ներկա (ենթակալական) դերայի ձևի վրա։ Օրինակ՝ կարուսուրյուն (ն.ա., 553), երաշնուրյան բնդեմ (ն.ա., 500), ապացուցուրյան (ն.ա., 505), խոսելով երկրաշարժուրյուն վրա (ն.ա., 514), բարություններից (Եփ, 251). բայց հ՝ ներդողուրյուն¹ (Ելի, 555) — «ներում», ձգուղուրյուն (ն.ա., 586), «Հիմնված է Արշավրի դրուդուրյան վրա» (ն.ա., 487), մերժուրյունը (ն.ա., 498), ննջողուրյունը (ն.ա.), էկեկտրական լարողուրյունը (ն.ա., 508) և այլն։

3. -իշ ածանցը նույնիքան տարածված է. օրինակ՝ զգուշացուցիչ առաջնորդ (2, 1, 74), «Դաստիարակիշ կը լինի» (ն.ա., 76), գրավիշ և գաստիարակիշ նյութեր (ն.ա., 78), զգուշացուցիչ... ակնարկություններ (ն.ա., 79), «Բառերը շն միայն դժվարացուցիչը» (ն.ա.), ամոթի մերկացուցիչ (2, 2, 147), գործի... հառաջացուցիչը (2, 4, 265), զրուեցուցիչ (2, 5, 417), թագուցիշ վարագուրը (2, 6, 466), գայթակղեցուցիշ անդամը (ն.ա., 465), հատկացուցիշ բնափորությունը (ն.ա., 459), «Դորա խանգարիշը են» (ն.ա., 503):

—Իշ-ը նույնիքան կենսունակ կերպով գործածվում է նաև «Հյու-

¹ Հմտա. «Հավասարության ոգին բռնաբարվում է, երբ հանցանքը ներփում է, բայց եթե այդ ներդողուրյունը բնդհանորդի համար է...», (Ելի, 555), «...Ու թե վնաս կրկնու չէ միջնադարյան ուղղությունը մերժելոց, ալ դորա հակառակ այդ մերժուրյունը միակ պայմանն է նոցա առաջադիմության» (ն. ա., 498):

սիսամայլի» մյուս Հեղինակների, ինչպես և գրական աշխարհաբարի մշակման այլ ուղղությունների ներկայացուցիչների մոտ. օր՝ ցավեցուցիչ խալթոցներ (Հ, 1, 2ն), դաստիարակիչ մատենագրությունք (ն.տ., 3ն), խոցուղիչ փշեր (ն.տ., 4ն), սնուցիչ հողին (ն.տ., 6ն), մոլորեցուցիչ իմաստակությամբ (Հ, 4, 285ն), աշխարհառողիչ մարդերի (ն.տ., 284ն), խտեղեցուցիչ քայլ (ն.տ., 277ն), խափանիչը (ՆՔՀԴ, 6), բացավորիչն (ՆՔՀԴ, 6):

Այս ածանցով կազմված ու Մ. Նալբանդյանի 1858—60 թթ. լեզվում գործածական բառերի մի խոշոր մասը գալիս է գրաբարից (պատարագիչ—Հ, 7, 73, բարողիչ—Հ, 9, 246 և այլն) և այժմ էլ գործածական է:

Նկատվում է, որ -իշով ածանցված բառերի գործածությունը 1860 թ., համեմատած 1858—50 թթ. հետ, որոշ շափով սահմանափակվում է, սակայն դա չի հանգեցնում այդ ածանցով կազմված բառերի գուրս մղմանը: Այսպես 1858—60 թթ. ունենք՝ սատակիշշանթ (Հ, 7, 77), թուլացուցիչ քնից (Հ, 10, 294), ուրախացուցիչ նյութեր (Հ, 59, 1, 66), թմրեցուցիչ թույն (ն.տ., 68), սատակիշկլիմայի մեջ (ն.տ., 10, 809), զմալիցուցիչ գարուն (ն.տ., 817), հացողեցուցիչ որպիսությունը (Ելժ, 2, 311): Հմմտ՝ ուղղիչ և խրատիչ և գաստիարակիշ գավազան (Հ, 59, 11, 897ն), զարթուցանող և զգաստացուցիչ հնարների (ն.տ., 899ն), հիացուցիչ զմալլումն (Հ, 60, 12, 425ն), «Յս խայտառակիշ եմ» (ն.տ., 4, 264ա) և այլն:

Իշ ածանցով կազմված բառերը նշանակալի տեղ են գրավում «Երկրագործության» (1862 թ.) բառապաշտրում: Օրինակ՝ շահեցուցիչ (ՆԼԵ, 367), երևեցուցիչը (ն.տ., 404), ծնուցիչ պատճառքը (ն.տ., 407), բարփորեցուցիչ հորդորներ (ն.տ., 409), «Քաղաքակրթիշ հոգաբարձվից շըրկվի» (ն.տ., 451). Հմմտ՝ բավականացուցիչ լեզու (Հ, 61, 6, 476ն), խոռվեցուցիչ կասկածանքով:

Աշքի է ընկնում այն հանգամանքը, որ -իշ ածանցը հիմնականում պատճառականի հիմքի վրա է գրվում:

1863—66 թթ. -իշ ածանցով կազմված բառերի թիվը որոշ շափով սահմանափակվում է:

4. Մ. Նալբանդյանի լեզվում առանձնապես շատ գործածական են, «Հյուսիսամայլի» 1858 թ. 4—6 ամսատետրերից սկսած, -եղին (-եղին) ածանցով կազմված բառերը. օրինակ՝ մարդկեղին աշխարհի մեջ (Հ, 4, 334), մարմնեղին կատարելությունք (Հ, 6, 474), հոգեղին մարդ (ն.տ., 469), օղեղին շրջապատ (ն.տ., 457), աստվածեղին մաս (ն.տ., 460): Հմմտ՝ մաշկեղին պարկ (Հ, 1, 68ն), մաղեղին հյուսավածք (ն.տ., 69ն), արյունեղին երակների մեջ (ն.տ., 69ն), աստվածեղին օրինքով (Հ, 4, 284ն), մետալեղին նշան (ն.տ.,

275): Ալս ածանցը Հյուսիսափալլան աշխարհաբարում հանդես է դալիս հետևյալ իմաստներով.

ա) Ցուցը է տալիս, թե ինչ նյութից է լրացյալը. օրինակ՝ մսեղեն պաշարներ (Հ, 8, 150), ոսկեղեն կամ արծարեղեն ժապավենով շրջակարած... ֆես (ն.տ., 154), խեցեղեն նետեր (Հ, 9, 246), մսեղեն մարմնին (Հ, 59, 10, 820), ոսկեղեն և արծարեղեն զարդեր (Հ, 60, 5, 393): Հմմտ.¹ փոխարերական իմաստով—ոսկեղեն ապրիներից մինն էր (Հ, 11, 432), «Ոսկեղեն տառերով պիտի ալանդի» (Ելժ, 2, 307), ոսկեղեն սերմը (Հ, 59, 12, 980ն), առաջին սիրու... արծարեղեն հնչյունքը (ն.տ., 973ա) և այլն:

բ) -Ային, -ական ածականակերտ ածանցների իսաստով: Օրինակ՝ մարդկեղեն իմացականություն (Հ, 59, 10, 811)—մարդկային, մարդկեղեն գիտության (ն.տ., 818), հոգեղեն հատկություններով (Հ, 8, 110), զագեղեն բոցեր (Հ, 59, 11, 904):

-Եղեն ածանցը «Հյուսիսափալլում» ամենից շատ (առանձին դեպքերում նաև ամենից անհաջող) օգտագործում է Ստ. Նալբարյանը՝ առավելապես իր թարգմանական աշխատություններում: Օրինակ՝ օդեղեն ծովի մեջ (Հ, 59, 5, 361ն), մարմնեղեն աշխարհի մեջ (Հ, 60, 12, 434ն), աստվածեղեն արարշի (Հ, 59, 11, 900ն) և այլն:

«Հյուսիսափալլից» հեռանալով՝ Մ. Նալբանդյանը հիմնականում հրաժարվում է նաև այդ ածանցի Հյուսիսափալլան կիրառությունից, և եղեն ածանցը 1863—66 թթ. օգտագործված ենք գտնում միայն առանձին դեպքերում, բացառությունների կարգով, ինչպես՝ օգուտ բաղելով իրենց մարմնեղեն լեզվի ճկունությունից (Ելժ, 2, 396), օդեղեն բարձրության մեջ (ՆԸԵ, 509), եկեղեցու փայտեղեն շինվածք (Թ, 2), հմմտ.¹ գրաք.՝ փայտակերտն եկեղեցվոյն (Թէ, 37):

5. 1858—62 թթ. բառակազմությանն ակտիվ կերպով մասնակցում է ան-ժխտական նախածանցը, որոշ դեպքերում նույնիսկ փոխարինելով տիմ:

«Հյուսիսափալլը» (հատկապես Մ. Նալբանդյանը և Ստ. Նալբարյանը) համառորեն չի օգտագործում մատչելի բառը՝ ան-նախածանցով կազմված կապակցություններում: Նման դեպքերում գերադասությունը տրվում է մոտենալ, մերձենալ բառերին: Օրինակ՝ անմոտենալի են քեզ (Հ, 4, 343), մի անմերձենալի վարագույրի տակ (Հ, 6, 465) և այլն:

Նույն ձևով ունենք՝ անմերժելի ապացույց (Ելժ, 2, 304)—անժխտելի¹, անհակառակելի (ՆԸԵ, 481)—անառարկելի, անժխտելի, անզործ (ն.տ., 520),—անմշակ, անկողոպտակելի սեփականություն

¹ Խաշածի հասկացություններ են:

(Հ, 10, 307)¹, անփախչելի (Հ, 64, 3, 168)—անխուսափելի², անսխալելի և անմեղանչական երսփոխան (Հ, 6, 467), անդառողական երեխա (Հ, 9, 243). Հմմտ. անփախչելի մտավորական ինկվիզիցիոն (ԹՀ, 8), անմարդի բնավորությունը (Հ, 10, 304) և այլն:

6. Բազմաթիվ են -ական ածանցով կազմված բառերը: Դրանք արտահայտում են ամենաբազմազան իմաստներ: Քննարկվող շրջանում -ական ածանցը հանդես է գալիս հետեւյալ ածանցների այժմյան համապատասխան իմաստներով. -ի՝ ախորժելի և բերկրական կիրքեր (Հ, 7, 11ա), ընդունական դաստիարակություն (Հ, 60, 5, 384). -ային՝ համաշխարհական պատմության (Հ, 5, 401), հանքական դաստիարակերի մասին (Հ, 1, 78), վուլկանական արտահոսությունը (Հ, 9, 232), երազական թագավորություն (Հ, 59, 12, 980ն), անտառական շնչավորների (ն.տ., 5, 361ն), գազանական անդիտության ընդդեմ (ն.տ., 11, 915). -ի՝ երրեմնական կրոնավորը (Ելժ, 2, 306), մայրենական եկեղեցուց (Հ, 5, 401). -առա՞ լինելով կատարելապես շնչական (Հ, 8, 113ա), երկրի բերքերի... շնչական և հանքական դաստիարակերի մասին (Հ, 1, 78) և այլն: Մ. Նալբանդյանը այս ածանցով կազմված բազմաթիվ բառեր է օգտագործում նաև 1863—66 թթ., օրինակ՝ անցողական նկղություն (ՆԾԵ, 408)—«անցողիկ», կորստական (խորհուրդ) (Ելժ, 2, 407), «կորստի հանգեցնող», «կորստարեր», ազատական գիտություններ (ն.տ., 409)—«ազատ», մոլորական (ձանապարհ) «սխալ», գազանական գործ (ՆԾԵ, 486) «գազանային», սիրական գործ (ն.տ., 519)—«սիրելիի» (ն.տ.), բառական թարգմանություն (Թ, 59-րդ ծնթ.)—«բառացի» և այլն: -Ական ածանցով բաղադրված հյուսիսափալլյան կազմություններից բոլորը չեն, որ մնացին: Մեր գրական լիեվում այդ ածանցով կազմված որոշ ածականների և գոյականների փոխարեն հետագայում օգտագործվեցին կամ առանց -ական ածանցի, կամ այլ ածանցներով բաղադրված ձևերը:

Բերենք նաև -ական ածանցով մի շարք հնացած կազմությունների օրինակներ՝ ինչպես բուսականը³ կամ կենդանին (Հ, 6, 504), «Հարստականի պակասավորությունը... երկում է որպես մի կատարելություն» (Հ, 11, 428), դարրու... հատկական բնավորությունը (Հ, 10, 300), մերժողական նամակներ (Հ, 59, 10, 808), ուրախական

¹ Հմմտ.⁴ սովորական⁵ անբակտերի կապակցելու (Հ, 59, 9, 748), ինչպես և անխալելի իրավունքը (Հ, 60, 1, 3ն):

² Հմմտ.⁴ նման հոլովումից փախչելու համար (ՆԾԵ, 485), արտարերելու դըմքարութենից փախչելու համար (ն. տ., 595):

³ Բույս բառը քննարկված շրջանում Ստ. Նազարյանը գործածում էր բոլորովին այլ իմաստով՝ բուսելը, աճը՝ մազերի բույսը (Հ, 1ն):

բացագանցությունը (ն.տ., 1, 68): Հմմտ.՝ ավելորդական շահախնդրությունը (ԵթշԴ 6), «Հարստականները ևս առավել ճոխացան» (Հ, 4, 275ն) և այլն:

7. Մակրայակերտ ածանցներից առավել շատ Մ. Նալբանդյանի լեզվում գործածվում է -պէս-ը, ապա -օրէն-ն ու -արար-ը: Օրինակ՝ «Վատիկանը արթնապես հսկում է» (Հ, 5, 407), «Համառոտապես խոսելով» (ն.տ., 416), «...որի մեջ իրողապես գտանվում էին» (Հ, 10, 298), «Պատակուեն խոնարհելը» (Հ, 7, 77), «Հայտնված լինի... մարդկուեն» (Հ, 59, 10, 816), «Դուրս է թափվում հեղեղաբար» (Հ, 5, 399) և այլն:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ ածանցակերտ մակրայները Մ. Նալբանդյանի լեզվում առհասարակ քիչ են օգտագործվում: Մակրայի իմաստ արտահայտելու համար նա շատ հաճախ դիմում է կերպով բառի օգնությանը: Օրինակ՝ «Յուց է տալիս բացերկ կերպով» (Հ, 1, 71), արտաքին կերպով (կեղծավորաբար) պապական ձևացած լինելով (ն.տ., 472), ժամանակավոր կերպով լուցնելու (ԵկԺ, 2, 304, 305) և այլն¹:

8. 1858—60 թթ. «Հյուսիսափալում»՝ բառակազմության մեջ առանձնահատուկ գեր են կատարում կից երկրորդ բաղադրիչով կազմված բառերը (սրանք համապատասխանում են ոռուելունի շուրջ, շուրջ նախածանցներով կազմված բառերին): Առավել շատ այս բառերը գործածվում են Ստ. Նազարյանի լեզվում, սակայն, աստիճանաբար Մ. Նալբանդյանի համար ևս դրանք սովորական են դառնում: Օրինակ՝ երայերակիցներին (Հ, 7, 72), նամակակիցորյունը (Հ, 10, 336), «Գոխապարձ նամակագրություն», նիզակակից (ն.տ., 344)—«Համախոռ», «Հանդիսակից ենք գտանվել որոշ թշվառությունների» (Հ, 59, 5, 380), աշխատակից և պատերազմակից մարդ (ն.տ., 10, 817), պատճակից լինելու (ԵկԺ, 2, 304), աշխատակից լինելով անցրին (ն.տ., 308), խոսակից և հանդիսակից լինել մի ուրիշին (ն.տ., 309), շարշարակից (Հ, 60, 5, 382). Հմմտ.՝ բարեկամությունը ընթացակից է ճանապարհորդին (Հ, 59, 12, 980ն), մանկության խալակիցը և նորա կյանքի ճանապարհակիցը (ն.տ., 977ա) և այլն:

1861—62 թթ. Մ. Նալբանդյանը, առանձնապես «Երկրագործու-

¹ Այժմ սովորական՝ մի կերպ, այս կերպ (մի բան անել) և նման մի բանի այլ հարարություններ Մ. Նալբանդյանի մոտ կերպով բառի միջոցով են բաղադրվում: Օրինակ՝ մի կերպով օգտակար լիներ (Հ, 5, 479), այս կերպով ուսուցանել (ԵկԺ, 2, 302), «Ուրիշ կերպով չէ կարող տալ» (ն. տ., 305), «Ովել կերպով չէ կարող ցույց տալ» (Հ, 5, 419), «Քեզ կերպով կատարվում է այս» (Հ, 6, 460), «Քեզ կերպով ստանում է» (Հ, 59, 11, 917) և այլն:

թյունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մէջ, շարունակում է -կից երկրորդ բաղադրիչով կազմված նոր բառեր գործածել: Օրինակ՝ «նա գող է և գողակից» (ն.ա., 415), պանդխակիցքը (ն.ա., 430), բնակակից լինելով մի կաթվածահար ժողովրդի (ն.ա., 435), ընթացակից (ն.ա.) և այլն: Հմմտ:՝ ամուսնակից կնոջ (Հ, 61, 11, 360ն), նանապարհակից (ն.ա., 9, 235ն), ամուսնակցի ընտրության (ն.ա., 7, 64ն):

Թէ որքան գործուն է եղել -կից երկրորդ բաղադրիչը, երևում է նաև այն բանից, որ 1863—66 թթ. և՛ Մ. Նալբանդյանը գործածում կամ կազմում է նորանոր բաղադրություններ: Օրինակ՝ «Սա այն մատենագրությունը չէ, որ թեակից էր կրոնի... տարածվելուն» (Ելժ, 2, 406), գործակցի (ն.ա.; 397), քո արենստավկիցքը (ՆԸԵ, 550), գործակցի էր եղել (ն.ա., 566), եղբայրակիցքը (ն.ա., 481), «Դավանանակից են լինում» (ն.ա., 489), կապակից (ն.ա., 500), «Բնակակից հմ եղած» (ն.ա., 506), ազգակցաց (ն.ա., 536), «Կամակից էր այս բանին» (Հ, 64, 3, 162), «Բնակակից է եղել Վահանին» (Թ, 44) և այլն. Հմմտ:՝ «Փարպեցու (և) Վահանի սննդակցությունը և խաղակցությունը» (ն.ա.), որոնք առկա են գրաբար բնագրում:

9. Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլին» Համագործակցելու առաջին շրջանի լեզվի համար բնորոշ է նաև -ավոր ածանցի գործածությունը՝ պայմանավոր ուրախություն (Հ, 59, 1, 66), ասօրինավոր գործեր (Հ, 10, 334), պատմության պատկանավոր մարդ (Հ, 5, 401), երկրավոր թագավորությունը (Հ, 59, 12, 980ն):

Ինչպես տեսնում ենք -ավոր-ը դրվում է այժմյան -ական, -ի, -ող, -ային ածանցների համապատասխան իմաստներով:

10. «Հյուսիսափայլի» 1858 թ. լեզվի մյուս բնորոշ գիծը -անբայածնցով կազմված բայերի գործածությունն է: Օրինակ՝ անցանելու (Հ, 1, 71), հարցանում ենք (ն.ա., 72), գտանե (ն.ա., 74), տեսանում էր (Հ, 5, 378), մտանում է (ն.ա., 378), դաշտումը չեն բուսանում (ն.ա., 466), պիտի լուծաներ (ն.ա., 483):

Անձնաբրդիր չի լինի նշել, որ եթե «Հյուսիսափայլի» բննարկվող շրջանի առաջին համարներում Մ. Նալբանդյանը որևէ շեղում չի կատարում հօգուտ այդ բառերի աշխարհաբարյան ձևերի (անցնել, հարցնել, գտնել...), ապա Ստ. Նալբարյանի մոտ, ընդհակառակը, որոշ դեպքերում օգտագործվում են նաև այդ բառերի աշխարհաբարյան ձևերը: Այսպես, նրա մոտ մի կողմից ունենք՝ սկսանելով (Հ, 1, 1), գտանվին (ն.ա., 3), մեռանելուն (Հ, 4, 269), սկսանել, տեսանվում են (ն.ա., 266), «ներս են մտանում» (Հ, 6,

66), իսկ մյուս կողմից՝ «Հարցնում է նոցանից... Հայրենիքը լեզու առած, հարցնում է» (Հ, 1, 3), հմմտ.՝ սկսում է¹ (Հ, 6, 49ա):

«Մեղու Հայաստանին» այս հարցում ևս խիստ անհետողական է, սակայն այնուհեղ գերազառում են նման բառերի աշխարհաբարյան ձևերը: Օրինակ՝ տեսնում ենք, գտնում ենք (ՄՀ, 58, 4), մտնել (ն.ա., 93), չի հասնիլ (ն.ա., 111), բայց և գտանին (ն.ա., 54), ցուցանել (ն.ա., 111), գտանվին- (ն.ա., 190):

«Ծովարագր», բնդշակառակն, գերազասությունը տալիս է գրաբարյան ձևերին, ինչպես՝ շմտաներ (ՃՌ, 58, 39), գտանեն (ն.ա., 40), հմմտ.² նաև՝ հասանին (ԵՔՀԴ, 5), գտանել (ն.ա., 6), տեսնում ենք (ն.ա., 107): «Եներբին -ա- Հողակապով» գործածվող բառերը բանակական տեսակեաից շատ չեն, սակայն Մ. Նալբանդյանի լիզվում շատ գործածական բառերի թվին պատկանելով՝ որոշակի որակ են կազմում:

1858 թ. «Եներբին -ա- Հողակապով» օգտագործվող բառերը նույն շափով ու ձևով կիրառվում են նաև 1859 և 1860 թթ.: Դրանք հիմնականում գտանել, մտանել, լուծանել, հասանել, անցանել, հարցանել, տեսանել, սկսանել, իջանել, սերմանել, բուանել բայիրն են: Ամենից շատ գործածականը այս շարբում գտանել-ն է: Օրինակ՝ տարբեր եղանակներով ու ժամանակներով գտանել ունենք Հ, 7, 72, Հ, 7, 77, Հ, 8, 148, Հ, 10, 298, Հ, 10, 344, Հ, 59, 5, 380, Ելժ, 2, 295 և այլ էջերում³: Այնուհետև գալիս են մտանել, լուծանել, տեսանել և ապա՝ մյուս բայիրը: Օրինակ՝ 1859 թ. իջանելով (Հ, 7, 72), հասանում է (Հ, 59, 5, 381), սկսանում եմ (Հ, 59, 8, 650), լուծանվում է (ն.ա., 654), կը հասանի (Հ, 59, 11, 907), հարցանում է (ն.ա., 917, 918), մեռանում է (ն.ա., 918)⁴: 1860 թ. ներս մտանելով (Ելժ, 2, 294), տեսանում եմ (ն.ա., 302), Հասանելով (ն.ա., 304), հարցանում ենք (ն.ա., 305, 306), չէ լուծանում (ն.ա., 306), չենք սկսանում (ն.ա., 307), անցանելու (ն.ա., 310), իջանում եմ (Հ, 60, 5, 391)⁵:

Սրանց կողքին առանձին բացառությունների կարգով հանդիպում են՝ սկսում եմ (Հ, 7, 77), կը սկսեմ բանալ (Ելժ, 1, 483—484), լցնում եք (Հ, 59, 8, 647)⁵:

¹ Հմմտ. Սկսանում է գոյանալ (Հ, 4, 266):

² Հմմտ.՝ նաև՝ Ելժ, 4, 56, 62, 64, 70 և այլն:

³ Հմմտ.՝ սկսանել (Ելժ, 4, 49), տեսանելով (ն. ա., 5), պիտի հասաներ (ն. ա., 53), մտանել (ն. ա., 68), իջանեն (ն. ա., 69) և այլն:

⁴ Հմմտ.՝ հասանելով (Ելժ, 4, 68), մտանել (ն. ա.), իջանեն (ն. ա., 69):

⁵ Հմմտ.՝ գործակատար եմ գտնված (Ելժ, 4, 53), մեջ է մտնում (ն. ա., 57), պիտի հասնի (ն. ա., 60) և այլն:

Անհրաժեշտ է նշել, որ «Հեղումների» մեծ մասը կատարվում է նամակներում:

Նկարագրվող շրջանում «ներքին -ա- հոդակապը» նույն շափով օգտագործվում է նաև «Հյուսիսափայլի» այլ թղթակիցների մոտ: Օրինակ՝ տեսանելով, լուծանելուց (*Հ*, 10, 312ս), մտանելով (*ն.ա.*, 313), հարցանել (*ն.ա.*), կանցանե (*Հ*, 7, 10ա), վերլուծաներ (*Հ*, 8, 111ա), գտանելու (*Հ*, 59, 12, 971ա), հասանելով (*Հ*, 60, 4, 265ա), սկսանվում է (*ն.ա.*, 10, 280):

Զպետք է կարծել իհարկե, որ այդ ձևերը հատուկ են միայն «Հյուսիսափայլին»: «Մեղուն» և «Ճռաքաղը» ևս օգտագործում են նշված բոլոր բառաձևերը, սակայն խառը կերպով, առաջինը՝ գերակշռություն տալով աշխարհաբարյան ձևերին, երկրորդը՝ նախընտրելով գրաբարյանները, ինչպես՝ տեսանելով (*ՄՀ*, 59, 8), ներս մտանել (*ՃՌ*, 59, 185), սկսանում է (*ն.ա.*, 143), սկսանելը (*ՄՀ*, 60, 98), հարցանել (*ն.ա.*, 243), բայց և չեն մտնում (*ՄՀ*, 59, 9), գտնել (*ն.ա.*, 10), փոքր ենք տեսնում (*ՃՌ*, 59, 185), տեսնելով (*ՄՀ*, 60, 36) և այլն:

1861—62 թթ. «ներքին -ա- հոդակապ» ունեցող բառերի աշխարհաբարյան ձևերը որոշ շափով ավելանում են: Օրինակ՝ գտնված (*ՆԲ*, 368), տեսնում է (*ն.ա.*, 407), չէ հասնում (*ն.ա.*), հարցնում ենք (*ն.ա.*, 411), տեսնում էինք (*ն.ա.*, 418), «Գտանելով, որ հարցուրերեսուն տարուց հետո Անգլիան շպիտի ածուխ գտնե...» (*ն.ա.*, 442), կհասնի (*ն.ա.*, 447) և այլն: Սակայն նման բառերի գրաբարհիմք ձևերը շարունակում է գերակշռող մնալ: Օրինակ՝ իշանելուց հետո (*ՆԲ*, 367), հանդեպ է ելանում (*ն.ա.*), տեսանում ենք (*ն.ա.*, 372), հարցանողը (*ն.ա.*, 387), սկսանում է (*ն.ա.*, 417), գտանել (*ն.ա.*, 426), պիտի հպանեն (*ն.ա.*, 427), կմեռանին (*ն.ա.*, 428), պիտի իշանե (*ն.ա.*, 442), տեսանելով (*Հ*, 62, 5, 236) և այլն:

1863—66 թթ. Մ.-Նալբանդյանը միանգամից շբաժարվեց և չէր էլ կարող հրաժարվել «ներքին -ա- հոդակապ» ունեցող բառերի հյուսիսափայլան օգտագործումից:

Նա իր որոշ աշխատություններում («Երկու խոսք», «Ազգային թշվառություն», «Նկատողություն») գործածում է նշված բառերի ինչպես գրաբարյան, այնպես էլ աշխարհաբարյան ձևերը: Օրինակ՝ գտնված, հարցանելով (*ԵԼԺ*, 304), տեսանելով (*ն.ա.*, 306), հարցանում (*ն.ա.*), տեսնելով (*ն.ա.*, 307), պատահում էր հարցանել (*ԵԼԺ*, 2, 404), տեսանել (*Հ*, 64, 3, 159), անցանելուց (*ն.ա.*, 160), մտանելու (*ն.ա.*), շտեսնեն (*ն.ա.*, 163) և այլն:

1863—66 թթ. մյուս աշխատություններում նման բայերի գրաբարյան ձևերը հանդիպում են բացառությունների կարգով, ինչպիս՝ իշենելով (ՆԾԵ, 552), բայց և՝ զիջանող (Ն.ա., 554). տեսնել (Ն.ա., 482), անցնում է (Ն.ա.), բայց և՝ հասանել (Ն.ա., 492). գտնվում է պիտի հասներ (Ն.ա., 509, 514), բայց և՝ մեռանում է (ՆՓ, 249), տեսանում ենք (Ն.ա., 253), գտանվել (Ն.ա., 255), ելանելով (Ն.ա., 259). հասնիլ (ՆԾԵ, 579), տեսնելով (թ, 2), գտնելով (Ն.ա., 5). բայց և՝ բռնաներ (Ն.ա., 11), թող հարցանվի (Ն.ա., 15) և այլն:

Սրանից բիում է, որ Մ. Նալբանդյանը 1863—66 թթ. միայն առանձին դեպքերում էր անհրաժեշտ գտնում «ներքին -ա- հոդակապ» ունեցող բառերի օգտագործումը և ծրագրային աշխատություններում առավելությունը տալիս է աշխարհաբարյան ձևերին:

Հոլովման և խնդրառության առանձնահատկուրյունները.— 1. «Հյուսիսափայլի» 1858 թ. առաջին ամսատետրակներում -քին (-ություն) ածանցով կազմված բառերի մեծ մասը (եթե համարանությամբ -ի հոլովման է ենթարկվում), որպես կանոն, հոգնակի ուղղականը կազմում է -ք վերջավորությամբ, իսկ եղակի սեռական, բացառական, գործիական, ներգոյական և հոգնակի սեռական, տրական, բացառական, գործիական ու ներգոյական հոլովներում ենթարկվում է եաւ > և հնչունափոխության: Օրինակ՝ սովորութեններից (Հ, 1, 70), թերութենների վերա (Ն.ա., 74), աշխատութեններից (Հ, 2, 149), իրողութենների մեջ (Ն.ա., 147), ընկերութենների և հակասութենների (Հ, 4, 334), ծառայութեններից (Հ, 6, 463) և այլն:

1858 թ. կեսերից սկսած -քյուն-ով (-թին) վերջացող բառերի հոգնակի կազմության և թեքման համակարգում որոշ փոփոխություններ են նկատվում: Դա արտահայտվում է նրանով, որ նշված բառերի գրաբարածել -ք ածանցով կազմված հոգնակիների կողքին սկսվում են օգտագործվել նաև շհնչունափոխված և -ներ վերջավորությամբ ձևերը (օրինակ՝ ընկերություններ—Հ, 6, 458, 463), իսկ ապա՝ դրա համարանությամբ, որպես առանձին բացառություններ, թեք հոլովներում ևս հնչունափոխություն չի կատարվում: Օրինակ՝ առանձնություններով (Ն.ա., 482): Թեքման ժամանակ շհնչունափոխվելու նման օրինակները, սակայն, Մ. Նալբանդյանի այդ շքաւնի լեզվում ընդհանուր օրինաշափություն չեն գտնում և գրաբարյան (հնչունափոխված) ժիմքով հոլովումը շարունակում է բացարձակ գերակշռող մնալ: Օրինակ՝ «... Կախված է նորա դաստիարակութեններից և կրթութեններից, նորա ընկերութեններից...» (Ն.ա., 499): Նույնը և Ստ. Նալբարյանի լեզվում՝ խորհրդածութեններով (Հ, 1, 1),

գարկողութենից (ն.տ., 2), դաստիարակութենից (Հ, 2, 144), գերազանցութեններին (Հ, 1, 61), բայց և՝ տիրապետութեններից և տեղակալություններից (Հ, 4, 266): Նույն շրջանի «Մեղվում» և հանդիպում են այդ բառերի ինչպիս հնչյունափոխված, այնպես էլ չհնչյունափոխված ձևերը: Օրինակ՝ աստվածապաշտութենք (ՄՀ, 58, 6), սաստկութենիցն (ն.տ., 93), բայց և՝ դրություններով (ն.տ., 4), թմրությունից (ն.տ., 111): Հմմտ՝ նաև՝ ծովութեննե (ԵՔՀԻ 18), դիտությաններից (ն.տ., 5):

Մ. Նալբանդյանի լեզվում սպասելի էր աշխարհաբարյան օրինաշափության էլ ավելի տարածում, սակայն՝ ուրիշ-ով վերջացող բառերի թերման հիմքի և հոգնակի կազմության աշխարհաբարյան ձևերը ոչ միայն չեն ծավալվում, այլև աստիճանաբար նվազում են:

Այսպես, եթե 1858—60 թթ. Ստ. Նալբարյանի և «Հյուսիսափայլի» թղթակիցների մոտ նկատվում է նշված օրինաշափության աշխարհաբարյան ձևերի աստիճանական ավելացում, ասպա Մ. Նալբանդյանի լեզվում, նրա՝ «Հյուսիսափայլում» տպագրված այդ շրջանի աշխատություններում դրանք համարյա ամբողջությամբ դուրս են մղվել և օգտագործվում են միայն հնչյունափոխված ձևերը, ինչպես՝ նեղութենների (Հ, 7, 74), մոտավորութենից (Հ, 8, 148), արտահոսութենների (Հ, 9, 232), լուսավորութենից, պակասութեններին, կատարելութեններով (Հ, 10, 298), եղբակացութենների, իրողութենների (Հ, 59, 10, 812), հատկությունքը, որակությունքը (ն.տ., 8, 656), հայութենից (Հ, 60, 5, 380), ծովութենից, անհոգութենից (ն.տ., 384), պատմութենից (Հ, 60, 5, 391). Հմմտ՝ հատկութեններով, տրամադրություններով, ընդունակություններով (ն.տ., 110ա): իրողություններ (Հ, 59, 11, 894ն)¹, ուրախությունների (ն.տ., 12, 979ն):

Մ. Նալբանդյանի լեզվում, որոշ դեպքերում, թիքված գրաբարյան հիմքով է կազմվում նաև հոգնակի հայցականը, որը «Հյուսիսափայլի» համար օտարոտի կազմություն է: Օրինակ՝ անտես առնել այդպիսի ժառանգութեններ (ն.տ., 5, 381):

1860 թ. Հ. Սվաճյանի «Մեղվում» տպագրված հողվածներում, պահպանելով «Հյուսիսափայլի» համակարգը (օրինակ՝ արքեցութենից, կարեկցութենից (Ելֆ, 2, 294), դժվարութենների (ն.տ., 307)), կարողութեններին (ն.տ., 308 և այլն), Մ. Նալբանդյանն առանձին դեպքերում որոշ շեղումներ է կատարում:

ա) ուրիշն վերջացող բառերի որոշ մասը աշխարհաբարյան՝ չհնչյունափոխված հիմքով է թեքվում: Նկատված դեպքերը հոգնակի

¹ Հմմտ՝ օգնութեններ (Հ, 59, 5, 379):

սեռականին են վերաբերվում¹: Օրինակ՝ արտօնությանների (ն.տ., 304), անախորդությունների (ն.տ.), ոճքագործությունների (ն.տ., 305), կարտությունների (ն.տ., 307):

բ) Դրա հետ միասին հոգնակի սեռականն առանձին դեպքերում գրաբարչան ձևով է կազմվում: Օրինակ՝ թատրերգությանց (ն.տ., 309), շարժողությանց (ն.տ., 310):

Այսպիսով «Հյուսիսափայլի» 1858 թ. կեսերին նկատվող՝ ուրին ածանցով կազմված բառերի հոգնակի ուղղականի (-ուրիններ) ու թեր հոլովներում այդ բառերի հիմքի շնչյունափոխված (ուրին) աշխարհաբարյան առանձին ձևերը չեն ծավալվում և արդեն 1860 թ., հիմնականում, «Հյուսիսափայլում» տպագրված աշխատություններում դուրս են մզգվում՝ փոխարինվելով համապատասխան -ք և -ուրեն-ձևերով: Նույն՝ 1860 թ. վերջերին «Մեղվում» տպագրված աշխատություններում սկսվում է մի կողմից հոգնակի սեռականի կազմության համար օգտագործվել գրաբարյան ձևը (-ուրեանց), իսկ մյուս կողմից աշխարհաբարյան հիմքով աշխարհաբարյան հոլովումը (-ուրինների):

Քննարկվող շրջանում «Ճռաքաղը», «Կոռուկն» ու «Մեղուն» շարունակում են նշված բառերի հոգնակի գրաբարյան և աշխարհաբարյան ձևերի, հնչյունափոխված ու շնչյունափոխված հիմքերով գրաբարյան ու աշխարհաբարյան հոլովումների խառը օգտագործումը, ինչպես՝ մեղագրութենից (ՄՀ, 59, 11), անգործություններից (ն.տ., 12), ավանդությունից (ն.տ., 99), թուլութենից (ն.տ., 134), ձեռնարկությանց (ՃՌ, 59, 182), էսպեսությունով (ՄՀ, 60, 36), հասկացողությունից (ն.տ., 36), խանգարությունները, փոփոխությունները (ն.տ., 42), պակասությանց վերա (ն.տ., 101), ճանապարհորդութենից (ԿՌ, 60, 2, 3), հայհոյություններն, վիճաբանություններն (ն.տ., 832), հալածութենից (ն.տ., 836), արարողությանց մասին (ն.տ., 837), ազգությունով (ն.տ., 841) և այլն: Ընդհանրապես նկատվում է, որ «Մեղվի» և «Ճռաքաղի» «Հյուսիսափայլի» դեմ ուղղված բանավիճային հոգվածներում գերակշռում է նշված բառերի հնչյունափոխված՝ գրաբարյան հիմքով հոլովումը (-թեն-): «Ճռաքաղն» իր հերթին մեծ տեղ է տալիս հոգնակի սեռականի գրաբարյան՝ թեանց ձևին:

1861 թ., «Երկու տողում», մեծ շափով ավելանում են -ուրին ածանցով կազմված բառերի հոգնակի սեռականի աշխարհաբարյան (շնչյունափոխված) հիմքով կազմության դեպքերը, որը աշխար-

¹ Այս բառերի հոգնակի ուղղականը հաստատում կերպով -ք -ով է կազմվում: Օրինակ՝ օրենսդրությունն (ԵԼԺ, 2, 303): պակասություննը (ն. տ., 304), տնօրինություննը (ն. տ., 293), ցնորաբանությունն (ն. տ.) և այլն:

Հարարյան իրողության հետագա ծավալման հիմքն է հանդիսանում: Օրինակ՝ ավանդությունների, շարագործությունների (ՆԾԵ, 370), անօրենությունների (Ն.ա., 371), թշվառությունների (Ն.ա., 376), Հարտարակությունների (Ն.ա., 388) և այլն:

Տրական, բացառական ու գործիական հոլովներում «Հյուսիսափայլի» համակարգն անփոփոխ պահպանվում է: Օրինակ՝ «Օգտակար է... կացութեններին» (Ն.ա., 373), կատարելութեններով, թերութեններով (Ն.ա., 372), հյուրասիրութենից, պարտականութենից (Ն.ա., 368), հմմտ՝ գործածութենից (Ն.ա., 411), աշխարհագրութենից, հանապարհորդութենից, տեղագրութեններից (Հ, 62, 5, 236):

Նման բառերի հոգնակի ուղղականը, առանձին բացառություններով, գրաբարաձև է: Օրինակ՝ վաճառականությունն, ձեռագործությունն, գաղթականությունն (ՆԾԵ, 409), բայց և՛ ընկերություններ (Ն.ա., 436):

«Երկրագործությունը որպես ուղիղ հանապարհ» ո շիատության մեջ այս բառերի հոգնակի սեռական ու տրական հոլովները աստիճանաբար ենթարկվում են գրաբարաձև հոլովման՝ յանց (եանց): Օրինակ՝ օրենսդրությանց (Ն.ա., 409), հարաբերությանց մեջ (Ն.ա., 418), տերությանց գանձարանների մեջ (Ն.ա., 421), տեղեկությանց նայելով (Ն.ա., 426), հասկացողությանց և... կատարելությանց հասնելու ձգողությունները, թշվառությանց պատկերները (Ն.ա., 431), առաջարկությանց քամակից (Ն.ա., 450):

1863—66 թթ., որոշ անցման շրջանից հետո, երբ բառերի թեքման ժամանակ օգտագործվում են և չնշունափոխված, և՝ չհնչունափոխված ձեւերը, Մ. Նալբանդյանի մոտ հիմնականում սկսվում են գործածվել աշխարհաբարյան՝ չհնչունափոխված ձեւերը: Օրինակ՝ համակարգութենում (Ն.ա., 556), կառավարութինից (Հ, 64, 3, 158), ապշութենից (Ն.ա., 160), իսկութենից (ՆՓ, 252), դժարութենից (Ելժ, 3, 340), բայց և՛ մտածությաններով (ԲՀ, 63, Ելժ, 4, 291), հատկություններից (Ելժ, 4, 304), աշխատություններից (ՆԾԵ, 533), կառավարություններով (Ն.ա., 563), հեկունություններից (Ելժ, 2, 396), նկարագրություննում (ՆԾԵ, 483), նկարագրություններից (Ն.ա.), հայտնագործություններով (Ն.ա., 515), տեղեկություններովն (Ելժ, 4, 255) և այլն:

1863—66 թթ. ի հայտ է գալիս -ութիւն ածանցով կազմված բառերի եզակի գործիական, հոգնակի ուղղական ու սեռական հոլովների գրաբարաձև կազմության նալբանդյանական համակարգը, որի առաջին նշանները, ինչպես ցույց տվինք, առկա էին գիուս 1961—1962 թթ.: Այս շրջանում, գործնականում Մ. Նալբանդյանը նշված Հոլովների գրաբարյան ավելի կարճ վերջագործությունները նախ-

ընտրելի է համարում աշխարհաբարյաններից, չնայած այն բանին, որ տեսուրյան մեջ գտնում է, թե (-ուրիմ) ք-(-ուրեան) ց-(-ուրեամ) ք վերջավորություններով կազմված հոլովածեերը ժողովրդի համար մարսելի չեն, և պետք է օգտագործել-(-ուրիմ) ներ, -(-ուրիմ) ների, -(-ուրիմ)-ով վերջավորություններով բաղադրված եղակի գործիական և հոգնակի ուղղական, սեռական հոլովածեերը: Եղակի սեռականում և տրականում այս բառերը, ի հակագրություն «Հյուսիսափայլ» որոշ շրջաններում առկա-(-ութեն)ի ձեկի, 1863—1865 թթ. և նիթարկվում են ներքին ա հոլովածան՝ -ուրեան, որի պատճառով էլ գործիականը հիմնականում - (եամ) ք վերջավորություն է ունենում, ինչպես՝ կերպարանագործությամբ (ՆԸԵ, 482), աղատությամբ (ԵԼԺ, 2, 307), հասկացողությամբ (ՆԸԵ, 553), կամեցողությամբ (Թ, 14), հարությամբ (Ն.ա., 16), հմմտ՝ բացառիկ գեպքերում հանդիպող՝ միջնորդությունով (ԵԼԺ, 2, 404). հոգն. ուղղական. անառակություններ, շուայություններ (ՆԸԵ, 563), թերություններ, հատկություններ (ԵԼԺ, 2, 397), ուշագրություններ (ՆԸԵ, 481), ավանդություններ, անձնավորություններ (Ն.ա., 483), ստորագրություններ (ԵԼԺ, 4, 254), վկայություններ (Թ, 23), ակնարկություններ (Ն.ա., 24): Միայն բացառիկ գեպքերում, և այն էլ այն աշխատություններում, որոնց լեզվում հյուսիսափայլան հատկանիշները մեծ տեղ են գրավում, -ուրիմ ածանցով կազմված բառերի հոգնակին աշխարհաբարարածն է: Օրինակ՝ կապակցություններ (ԵԼԺ, 2, 402), թոնություններ են հնարում (Հ, 64, 3, 172), ճռովություններ (ՆՓ): Հոգնակի սեռականում, ինչպես նշեցինք, ունենք -եա (-յա-), ինչպես՝ դրությանց մասին (ԵԼԺ, 4, 304), դիտությանց վրա (ԵԼԺ, 2, 397), խոսակցությանց, գրությանց (Ն.ա., 399), համակարգությանց (ՆԸԵ, 557), ավանդությանց (Ն.ա., 553), նկարագրությանց, բնավորությանց (Ն.ա., 482), նկատողությանց, մեկնությանց, վկայությանց (Ն.ա., 495), իրողությանց մեջ (Հ, 64, 3, 159), աղղեցությանց տակ (ՆԸԵ, 577), ուղղությանց (ՆՓ, 250), վկայությանց (Ն.ա., 255), խոռվությանց (Թ, 4) և այլն:

2. Մ. Նալբանդյանի աշխատություններում շարունակվում է ուղղականածն հայցականի գերակշիռ գործածությունը այն գեպքում, եթե ուղիղ խնդիրը անձի անուն է և պետք է ունենա անձի առում: Օրինակ՝ շենք դատապարտում այն մարդը (Հ, 1, 73), այդպարունները... անվանել եմ սխոլաստիկ (Հ, 4, 335), անարեկ էին առում ժողովուրդը (Հ, 6, 462), բայց և հասկացնում էին ժողովրդին (Ն.ա., 463):

Այդ երեսով մեր Մ. Նալբանդյանի հյուսիսափայլան շրջանի լեզվում ոչ միայն սահմանափակ կիրառություն չի ստանում, այլև էլ

ավելի տարածվում է: Բերենք մի քանի օրինակներ 1858—60 թվականներից. «Ճանաշել այդ մարդը» (ն.ա., 77), «Թիտի բամբաս մի մարդ» (Հ, 9, 242), «Խաբել մեր ազգը» (ն.ա.), «Հասարակությունը ընտրեց... պ. Հայրաբայանցը, ... Քարահաջը, ... Սալտիկյանցը» (Հ, 11, 435), «Դատապարտում ենք Հանցանիքի գործողը. զործողության կցորդը, կամ սորանց արդարության աչքից վարագուրովը, բայց ոչ երբեք մի ամբողջ ազգ» (Ելժ, 2, 303), «Տեսանելով Հայկական դերասանն և... դերասանութիւն» (ն.ա., 2, 309), «Գիտենք հարգել ոչ միայն Օուենը, Պրուդոնը... այլև Շիլերը, Գյորեն, Ճշշկած մարդկության այդ անմաշ բարեկամըր...» (ՆԸԵ, 369), «մմտ.՝ կարեկցել աղային» (Հ, 59, 11, 915): Հմմտ.՝ «Ես զփախմ ձեր բազութին» (ն.ա., 1, 19ա), «Ռւտում էին յուրանց զավակները և կանայքը» (ն.ա., 29ա), «Պատվում էին յուրյանց սիրելի բանաստեղծը» (Հ, 60, 6, 402ա), «Զանձրացուցել էին աղջկը» (ն.ա., 407ա), «Հեղինակի... խոսքերը վիրավորել էին... քո ընկերքը» (ն.ա., 12, 497ա), «Խորակեր իր ատելի քշնամին, նազարյանցը» (Հ, 61, 9, 240ն) և այլն:

Ծննդդժված բոլոր ուղղականաձև հայցականով դրված ուղիղ խնդիրները անձերի անուններ են, ունեն անձի առում և պետք է դրվեին տրականաձև հայցականով:

1863—65 թթ. որոշ շափով նվազում է անձի անուն անձի առման ժամանակ ուղղականաձև հայցականի օգտագործումը, սակայն այն դեռևս շարունակում է մնալ Մ. Նալբանդյանի լեզվի առանձնահատկությունը: Օրինակ՝ «Մարկոս Կիրակոսի որդին սպանե» (ՆԸԵ, 554), «Սպանել է նորա որդին» (ն.ա., 555), «Չմեղադրել մեր... եղբայրակիցքը» (ն.ա., 481), «Խայտառակե իր դուստրը» (ն.ա., 488), «անպատվել յուր ընկերը» (Հ, 64, 3, 170) և այլն:

Ավելի հաճախ են հանդիպում տրականաձև հայցականի օրինակներ, մանավանդ երբ ուղիղ խնդիրը հատուկ անուն է. օրինակ՝ «Մարկոսին մահի մատնե» (ն.ա., 554), «Մարկոսը թող ներե կիրակոսին» (ն.ա., 555):

Նման դեպքերում յուրօրինակ կերպով են կիւառվում որոշ դերանուններ: Երբ գերանունը հանդես է զալիս որպես անձի անուն հանդիսացող ուղղականաձև հայցականով դրված ուղիղ խնդիրի փոխարինող, օգտագործվում է ոչ թի ուղղական հոլովի ձևով, որը նման դեպքում բնական կլիներ (...հմմտ.՝ նրանք, որոնք..., աշակերտներին, որոնց նրանցից, որոնցից... և այլն), այլ տրականի: Օրինակ՝ «Հոգեռականությունը... նղակուր հանեց ա զ ը, անդարձ կորուց ն ո ա ն» (ՆԸԵ, 378): Այս առանձնահատկությունը Մ. Նալբանդյանի լեզվում լայն կիրառում ունի: Այն տարածվում է բոլոր այն

դեպքերի վրա, երբ անձի անուն ուղղականաձև հայցականով գրված ուղիղ խնդրի ընդհանուր իմաստը գերանունով է արտահայտվում, այսինքն՝ նույն կամ հաջորդ նախադասության մեջ գերանունով է փոխարինվում: Համարանության միջոցով բոլոր, նույնիսկ իրի անուն, ուղիղ խնդիրներին փոխարինող զերանունները սկսվում են նման ձևով կիրառվել: Օրինակ՝ «Ոչինչ մարդու ծառա չէ իմ հիշատակարանը, ևս նորան չեմ տպում...» (Հ, 7, 78) — նախադասություններից առաջինի հիշատակարանը ենթական երկրորդում գերանունով է փոխարինված, որը այդտեղ հանդես է գալիս որպես ուղիղ խնդիր ու զրվում տրականաձև հայցականով: Աշա մի քանի այլ օրինակներ. «Քննե ներկան... և... հոգարարձու լինի սորան բարվոքելու համար» (Հ, 9, 243), «Պիտի նայի այս... սեղանին, առանց վայելելու նորան» (Հ, 8, 162), «Սիրեցին նշմարտությունը և ըլունեցին նորան» (Հ, 9, 246), «Ոչ ոչ սիրա չունի միտ զնել նշմարտությանը, փոքր ի շատե պատվել դորան» (Ն.ա., 428), «Ազգի վիճակը առնում ենք իրեւ իրողություն, և նորան դարձյալ իրեւ վկա զնում ենք ազգի առջե» (ՆԸԵ, 439), «Կոտրեցեք այդ հայելին, փշրեցեք նորան» (Հ, 64, 3, 164). Հմմտ.՝ «Թարգմանիշը... դրել է մի... պատմություն Հիսուսյան կարգի, բաժանելով դորան երկու...» (Հ, 10, 334ն), «Գետինը այրվում է նորա ոտերի տակ. նա համբերությամբ տանում է և սորան» (Հ, 59, 1, 17ա), «Գտավ մի գատարկ սենյակ, վարձեց նորան» (Հ, 60, 6, 403ա): Հմմտ.՝ «Սիրո մաքուր երկնային բոցը, եթե առնունք դորան...» (Հ, 61, 7, 65ն), «Սոցա նման մտածությունք... շատարել է... հրատարակողը: Այսօր դարձյալ կրկնելով դորանց...» (Ն.ա., 1, 6ն):

Ինչպես տեսնում ենք բերված օրինակներից, նշված ձևով կիրառվում է ինչպես որը հարաբերական գերանունը, այնպես էլ սա, դա, նա ցուցականները: Նշելի է, որ նալբանդյանի մոտ առավել գործածական է նաև:

3. Գործողության կատարվելու վայրը ցուց տվող տեղի պարագա հատուկ անունները Մ. Նալբանդյանը, աննշան բացառություններով, զնում է հայցական հոլովով: Օրինակ՝ «... Այդ մեհյանները, որ գտանվում էին Աշտիշատ, Արտաշատ, Տարոն և այլ տեղեր. Պոլիս կարդացինք այդ փրկարար կանոնադրությունը» (ՆԸԵ, 371), «Վենետիկ... տպված բարտը, որպես նաև Վիեննա տպվածք...» (Հ, 62, 5, 236), «1860-ին էջմիածին էի» (ՆԸԵ, 507), «Ինքն Դվին նստելով ժողովը չեր կարող ուրիշ մտքով գումարել Վաղարշապատ» (Թ, 32): Առանձին գեպքերում այդպես են զրվում նաև հասարակ դոյական տեղի պարագաները՝ «Ամեն նշանավոր քաղաք բացում ենք կանխիկ

ստորագրությունք» (Հ, 62, 5, 237)¹: Միայն որպես բացառություն հրեմն գործողության կատարման վայրը ցույց տվող հատուկ գոյական տեղանուն տեղի պարագան ներդոյական հոլովով է գրվում «Քրիստոնեությունը բաղաժացու իրավունք չուներ Հայաստանում» (ՆԲԵ, 498):

Կապային խնդրառության առանձնահատկությունները.— «Հյուսիսափայլի» հիմնադրման առաջին իսկ տարուց (1858) սկսած համար, մոտ, վրա, հետ, պես կապերի, ինչպես և նման կապական բառի անձնական դերանուն կապի խնդիրները գրվում են սեռական հոլովով: Օրինակ՝ համար՝ fn համար (Հ, 59, 86, 47, ՆԲԵ, 408, Հ, 4, 339), իմ համար (ՆԲԵ, 369, Հ, 10, 343), ձեր համար (Հ, 59, 5, 380), մեր համար (ՆԲԵ, 375, 498, 543, Հ, 59, 11, 908), մոտ՝ fn մոտ (Ելժ, 4, 65), իմ մոտ (Հ, 7, 77, Թ, 7). Վրա (վերա)՝ մեր վերա (Ելժ, 2, 297, Ելժ, 2, 404, ՆԲԵ, 480, 498, Հ, 1, 77). Իմ վերա (Հ, 59, 8, 645), ձեր վերա (Հ, 60, 5, 384), իմ վրա (ՆԲԵ, 515, Թ, 12), մեր վրա (ՆԲԵ, 532, 536). հետ՝ ձեր հետ (Հ, 5, 380), մեր հետ (ՆԲԵ, 388, Հ, 5, 381), fn հետ (ՆԲԵ, 415, Հ, 59, 1, 66), իմ հետ (Թ, 17). պես՝ ձեր պես (Թ, 5, Հ, 60, 5, 381), fn պես (ՆԲԵ, 458). նման fn նման (Հ, 4, 343), իմ նման (Հ, 10, 345) և այլն²:

Ը հոդի գործածության յուրօրինակությունները 1. Ը հոդի գործածությունը բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ.— Ը («Մեզվում» և «Ճուաքաղում» թիւ և ան) հոդի գործածությունը բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ հատուկ է ոչ միայն նալբանդյանին, այլև այդ շրջանի գրական աշխարհաբարին առհասարակ, սակայն աշխարհաբարի մշակման հյուսիսափայլան ուղղության ներկայացուցիչների՝ տվյալ դեպքում նալբանդյանի լեզվում, այն յուրահատուկ է վոլոյուցիա է ապրում: «Հյուսիսափայլի» հեղինակներից ամսագրի հիմնադրման շրջանում բացառականի հետ ամենից քիչ թիւ որոշիչ հոդ է օգտագործում Մ. Նալբանդյանը, ինչպես հեղինակիցը (Հ, 1, 79), ազգիցը, դարեան-

¹ Նման հարաբերության մեջ ներդոյականի իմաստը երբեմն, բացառության կարգով, արտահայտվում է մեջ կապի օգնությամբ. «Ամերիկայի մեջ կամ Անգլիա. ստանալով... կրություն» (Ելժ, 4, 306):

² Մեր նկատած երկու բացառիկ դեպքերը ձեզ իրն-դիրն ունեն (Հ, 4, 336, ՆԲԵ, 404): Նալբանդյանի նույն շրջանի նամակներում ևս հաղվագույն բացառիկ դեպքերում օգտագործվում է նաև տրական կապի խնդիր՝ ինձ վերա (Ելժ, 4, 65): Հմմտ՝ մեր վերա (Հ, 59, 11, 901ն), ձեր մոտ (Հ, 59, 6, 407ա), մեր համար (Ա. տ., 12, 426ն), fn հետ (Ա. տ., 4, 267ա), իմ մոտ (Ա. տ., 5, 411ա), իմ վերա (Ա. տ., 6, 412ա), ձեր համար (ՄՀ, 59, 8) և այլն:

գիցը (Հ, 5, 380), հմմտ.¹ հնիցը (Հ, 1, 34ն), մեծից (ն.տ., 19ն), մինիցը (ն.տ., 67ն), ժամանակիցը, հանգամանքներիցը, բաղդիցը, այդինքներիցը, հողերիցը (ՄՀ, 58, 52):

Անհամեմատ ավելի շատ են գործիականի հետ հոդի օգտագործման դեպքերը, ըստ որում, -ուրյուն ածանցով կազմված համարյա բոլոր բառերը, որպես կանոն, -ը հոդով են դրվում, իսկ դրանց քանակը «Հյուսիսափայլում» առանձնապես շատ է (տգիտությամբը —Հ, 1, 73, ազգասիրությամբը —Հ, 2, 153, դրությամբը —Հ, 5, 378, գործադրությամբը —Հ, 5, 400, ինչպես և՝ լեզվովը —Հ, 5, 269, հմմտ.¹ գոյությամբը և հառաջ գնալովը —Ելժ, 4, 48, փորձովը —Հ, 1, 5ն, ատամներովը, բամակովը, ձորերովը —Հ, 6, 478ն, տողերովը —ՃՌ, 58, 40, զիխովն, վրալովն —ՄՀ, 58, 93 և այլն):

Ներգոյական հոլովի հետ որոշիչ հոդի գործածությունն ունի այն առանձնահատկությունը, որ ընդգրկում է բոլոր համապատասխան դեպքերը (Թիֆլիզումը —Հ, 1, 72, մաքումը —Հ, 2, 149, սենեկումը —Հ, 4, 344, առաջեւումը —Հ, 5, 377, ապագայումը, —Հ, 6, 505, հմմտ.¹ ձեռքումը, դոգումը —Հ, 1, 5ն, տեղերումը, մյուսերումը, տեղումը —Հ, 1, 65ն, Ամերիկայումը, տպարանումը, բաղաքումը, լրագրումը —ՃՌ, 58, 39, բանտումը —ՄՀ, 58, 89, պողոտայումը —ն.տ., 90 և այլն):

Արդեն 1858 թ. կեսերին հոդի գործածությունը բացառականի հետ նալբանդյանի լեզվում նվազագույնի է հասցված. ի տարրերություն «Հյուսիսափայլի» մյուս հեղինակների 1858 թ. վերջերին (ամսատետրակ 10) Մ. նալբանդյանը բացառականի վրա որոշիչ հոդ դնում է մասնակի դեպքերում, այն էլ՝ նմանակությամբ: Այսպես՝ բանափիճելով Մ. իսահակյանի հետ, որը գործածում է «Մասյաց դարեանդիցը» Մ. նալբանդյանը, որպես անուղղակի խոսք, օգտագործում է այդ կապակցությունը մերթ հոդով, մերթ առանց հոդի: 1859—60 թթ. բացառականի հետ որոշիչ հոդ չի գործածվում:

Գործիականի հետ -ը որոշիչ հոդ դրվում է մինչև 1859 թ. վերջերը. օր՝՝ կամքովը (Ելժ, 10, 342), բացվելովը (ն.տ., 337), հատուցմամբը (Հ, 59, 10, 808), հմմտ.¹ նստելովը (Ելժ, 4, 52). 1860 թվականից այս հոլովի հետ ևս որոշիչ հոդ չի դրվում:

Այլ է ներգոյականի վիճակը: ԲնդՌանրապես նկատվում է, որ 1859—60 թթ. այդ հոլովի հետ ավելի քիչ դեպքերում է որոշիչ հոդ օգտագործվում, բայ 1858 թ., սակայն այդ չի հանգեցնում Մ. նալբանդյանի լեզվից այդ ձևի դուրս մղմանը, և 1860 թ. էլ նա առանձին դեպքերում ներգոյականը ը հոդով է դնում (վերջումը —Հ, 59, 5, 379,

սկզբումը — ն.ա., 8, 659, հատակումը — ն.ա., 10, 812, դաշտումը — Հ, 60, 5, 382, ձեռներումը, փողոցումը — Հ, 59, 10, 814)¹⁾:

Քննարկվող որք շրջանում «Հյուսիսափայլի» խմբագիրն ու մյուս թղթակիցները, ինչպեսև «Մեղուն», «Ճնաքաղն» ու «Կոռնկը» շարունակում են խառը կերպով որոշիլ հոդի գործածությունը, բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ: Օրինակ՝ բաց, սալի քամակիցը (ՄՀ, 59, 8), գետնի տակիցը (ն.ա., 10), մարդիցը (ն.ա., 11), աստիճանիցը (ՃՌ, 59, 14), զավակիցը (Հ, 60, 12, 490ա), բենիցն (ԿՌ, 60, 834), գործիցն (ՄՀ, 60, 36). զործ՝ տալովը (Հ, 7, 11ա), երկրովը (Հ, 59, 5, 263ն), ժայիտովը (ն.ա., 12, 975ա), գրելովը (Հ, 60, 12ա), առաջնորդությամբն (ՄՀ, 59, 9), զորությամբն (ՃՌ, 59, 18ն), բաժանելովն (ԿՌ, 60, 837). ներգ. հնումը (Հ, 10, 311ն), աշբումը (ն.ա., 317ն), սկզբումը, տեղումը (Հ, 8, 11ա), դարսումը (Հ, 59, 11, 894ն), եվրոպայումը (ն.ա., 900ն), սրտումը (ն.ա., 12, 970ա), փողոցումը (Հ, 60, 1, 77), տաճարումը (ն.ա., 4, 264ա), պենեկումը (ն.ա., 6, 402ա), դաշին-ձումն (գալումն) (ՄՀ, 59, 9), նյու-Յորքումը, քաղաքումը (ն.ա., 10), ափերումն (ն.ա., 99), ասպարիզումը (ՃՌ, 59, 182), աստիճա-նումը (ն.ա., 190), ժամանակումը (ՄՀ, 60, 36), վարժատումը (ն.ա., 98), աշքերումը, հոգումը (ԿՌ, 60, 3), համարումը (ն.ա., 833) և այլն:

1861—62 թթ. («Երկու տող», «Երկրագործուրյունը որպես ուսիղ հանապարհ») բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ Ը հոդ չի գործածվում:

1863—66 թթ. զգալիորեն վերականգնվում է -ը (Ը) որոշիլ հոդի գործածությունը բացառական, գործիական ու ներգոյական հոլով-ների հետ: Ի տարբերություն 1858—60 թթ., երբ ամենից շատ որո-շիլ հոդ էր դրվում ներգոյական, ապա՝ գործիական հոլովածերի հետ, իսկ բացառականի վրա արդեն 1858 թ. վերջերին թ (Ը) էր դրվում հազվագյուտ դեպքերում, այս շրջանում առավել շատ որոշիլ հոդ է օգտագործվում բացառական հոլովի հետ, ապա՝ գործիականի և ամենից թիւ ներգոյականի հետ: Օրինակ՝ բացառական, աշխարհ-քիցը, դարուցը (ն.ա., 408), բամակիցը (ն.ա., 397), սենիցն (ՆԲՇ,

¹⁾ Մեր նկարագրած էվոլյուցիայի տեսանկյունից երբ անդրադառնում ենք «Հյուսիսափայլի» 1859 թ. № 10 և 11 ամսատեսարակներում տպված և նալբանդանին վերագրվող նամակներին, տեսնում ենք, որ դրանց լեզուն նշված էվոլյուցիայից շեղվում է: Բանն այն է, որ եթե մինչև «Հյուսիսափայլի» 1859 թ. 8-րդ ամսա-տեսությանը, օրինակ, ներգոյականի հոլովի հետ հոդի գործածությունը աստիճանաբար նվազում է, ապա 10-րդ և 11-րդ ամսատեսարակներում այն մեծ տոկոս է կազմում: Անմիջապես դրանից հետո՝ 1860 թ., նորից հոդի գործածության դեպքերը նվազա-գույնի են հասնում:

486), մեկիցն, զիսիցը (ն.ա., 531), ինչիցն (ն.ա., 251), գրածիցը (թ., 16), գրիցն (ն.ա., 23), չափիցն (ՆԸԵ, 534), եղածիցն (ն.ա., 539), սաղմոսիցն (թ., 71) և այլն: Գործիական կարծելովը (ԵԼԺ, 2, 505), գրեկութը (ն.ա., 500), տուշնովը, երկրորդովը (ն.ա., 537), վանրովը (թ., 2) և այլն: Ենթադրություններում պատկան է այդ երեսումը (Հ, 64, 3, 168), չնումը (ՆԸԵ, 579):

Ինչպես ցույց են տալիս բերված օրինակները, ը (6) հոդի գործածության դեպքերը առկա են ինչպես այն աշխատություններում, որոնք որպես սեազրություն են մնալ հասել, այնպիս էլ տպագրության համար հեղինակի կողմից վերջնականացնելու պատրաստ համարվածներում («Կրիտիկա»), որը վկայում է այդ երեսումի գիտակցական օգտագործման մասին: Այդ էլ մեզ չիմք է տալիս պնդելու, որ 1863—66 թթ. ը հոդի գործածությունը բացառական, գործիական և ներգոյական հոլովների հետ Մ. Նալբանդյանի կողմից գիտվում էր որպես գրական լիդուն բարբառների էական տարիբի հաշվին հարստացնելու բազմաթիվ ու բազմապիսի միջոցներից մեկը, այն վտակներից մեկը, որոնք միավորվելով ժողովրդայնություն պիտի տային լեզվին¹:

2.—Ը-ի գործածությունը՝ ուրյուն ածանցով կազմված բառերի տրական և հայցական հոլովների հետ 1858 թ. «Հյուսիսափայլում», առանձնապես առաջին ամսատերակներում, հիմնականում աշխարհաբարյան է: Օրինակ՝ «Մասնակից լինել այն լուսավորությանը, որ...» (Հ, 1, 21ն), «Ճետելով այն առավել աշխարհաբառ հայախոսությանը» (ն.ա., 31ա), «Սանոթացուցել այդ պատվական աշխատությանը» (ն.ա., 31ն), բայց և՝ «Հասանելու էինք այն քաղցր ու գեղեցիկ և հոյակապ լատինաբանուրյան» (Հ, 1, 33ն): Ենդումներն առանձնապես շատ են Ստ. Նալբարյանի՝ «Հյուսիսափայլու» 1858 թ. վերջին ամսատերակներում տեղավորված աշխատություններում:

1860 թ., առանձնապես «Մեղվում» տպագրված հոդվածներում, բավական շատանում են այն դեպքերը, երբ որոշյալ առման դեպքում տրական և հայցական հոլովների հետ որոշիչ հոդ չի գործածվում: Օրինակ՝ «Կես կտուր հնարները միշտ վնասեցին մարդկության» (ԵԼԺ, 2, 304), «Հասարակության մնում է ընդունել մինը» (ն.ա., 308), «Արգելը և խափան պակաս չէին եղած այդ անխոր-

¹ Մ. Նալբանդյանի լեզվում առկա բարբառային իրողությունների գնահատմանն է նվիրված մեր «Մարքառային իրողությունները Մ. Նալբանդյանի լեզվում» հոդվածը («Եղանձի և ոնի հարցեր», 1, Երևան, 1960): Զերկնելու համար՝ այդ խնդրին անդրագառնում ենք միայն այն շափով, որշափով այն առնշվում է հյուսիսափայլան աշխարհաբարին:

Հուրդ գործի սկզբնավորության» (ն.ա., 307) և այլն: 1861—65 թթ. էլ ավելի են ավելանում յան հոլովման որոշյալ առման գեպքում տրականի հետ հոդ չգործածելու դեպքերը: Օրինակ՝ «Հեղինակը նվիրում է հայկական երիտասարդության» (ՆԾԵ, 403), «Զէ օգնում արմատի շորության» (ն.ա., 406). «Հյուսիսափալլի» լեզուն գերմանական բաղդասության և գերմանիկ տրամարանության ստրկացած էին քարոզում» (Եկֆ., 2, 396), «Օգուտ կլիներ... լեզվի մշակության» (ն.ա., 402), «...Ագապին զո՞ւ է զնում գիշերագեմ մարդոց գժխային կրոնամոլության և դավանանության» (ն.ա., 480), «Զպիտի հասնեին իրենց ցանկության» (ն.ա., 491), «Հավացած լինելով կախարդության և կախարդների գործակցության շար ողիների հետ» (ն.ա., 492), «Պիտի... ներկայացնեին տերության» (Հ, 64, 3, 161). Հմմտ.՝ «Վարձ է վճարում հոդի տիրոջ» (ՆԾԵ, 408):

Նույնիսկ այն դեպքերում, երբ առարկայի կամ երևույթի որոշյալ լինելը խիստ կերպով շեշտվում է տվյալ առարկայի կամ երևույթի մասին խոսվում է անմիջապես նախորդ նախադասության մեջ և մատնացուց է արվում այդ, Մ. Նալբանդյանն անորոշ առում է կիրառում: Օրինակ՝ «... Շատ ուրիշ բանաստեղծք բնականի պակասությունը աշխատում են երեկակայության օգնությամբ... ծածկել: Պ. Պոռշյանցը երբեք կարոտ չէ այդ օգնության, եթե հավատարիմ մնա իր քանքարի բնավորության» (ՆԾԵ, 484): Բազմաթիվ դեպքերում նույն հոլովով դրված՝ նախադասության բազմակի անդամներից այն, որ -ուրյուն ածանցով չի կազմված հոդ է առնում, իսկ -ուրյուն ածանցով կազմվածը՝ ոչ: Օրինակ՝ «Հայ լեզվի ոգուն և տրամաբանության բնավ իսկ տեղեկություն շունեին» (Եկֆ., 2, 396), «Մասնակից եմ ձեր ուրախության, ցավին» (ն.ա., 398), «Այնչափ հարազատ են նոքա նորա հասկացողության, մտերին և տրամաբանության» (ՆԾԵ, 530), «Ստրկանալով հին լեզվի ոգուն կամ ազդեցության» (ն.ա., 577):

3. Գրաբարի ազգեցությամբ այժմ, աշխարհաբարում, ինչպիս հայտնի է, մարդ է կին բառերը հոգնակիում -ը հոդ չեն ստանում: Անցյալ դարի 50—60 թթ. այդ կանոնը, բայց երևույթին, կայտն չի եղել: Բանն այն է, որ ելնելով աշխարհաբարի բնդհանուր օրինաշափությունից, Մ. Նալբանդյանը («Հյուսիսափալլ») օգտագործում է որպես զույգ որոշյալ ձևեր մարդիկ, կանայք և միաժամանակ՝ մարդիկը, կանայքը, որտեղ հոգը համարանությամբ է դրված: Օրինակ՝ «Այդպիսի մարդիկ... ցանկանում են...» (Հ, 10, 298), «Թող... Բեգաղեկի նման մարդիկ շուրախանան» (Հ, 59, 11, 907), բայց և՝ «Այդպիսի մարդիկը ծառայեցնում են» (Հ, 10, 298), «Ուր գտանվում են կասկածավոր բնավորության տեր մարդիկը» (ն.ա., 344), «Թող

շսրտնեղին տղայաբար այն մարդիկը» (Հ, 59, 11, 906), «Այն մարդիկը, որ...» (Ելժ, 2, 303, ՆԸԵ, 438), այն մի քանի մարդիկը (Հ, 60, 5, 378), բռ կանացքը (ն.տ., 382), «Զեղխության ընդունակ են դարձել մեր կանացքը» (ն.տ., 383):

1863—66 թթ. մարդիկ բառի հետ —ը հոդի գործածության դեպքերը համեմատաբար նվազում են: Օրինակ՝ այդ մարդիկը (Ելժ, 2, 409), «Ասում է կին մարդոցը» (ՆԸԵ, 487), բոլոր մարդիկը (ն.տ., 504), այդ տեսակ մարդիկը (ՆՓ, 248), այս մարդիկը (Թ, 2), բայց և՝ այս մարդիկը (ՆԸԵ, 508), թշնամացած մարդիկ, շրջանկատ մարդիկ, անխորհուրդ մարդիկ (ՆՓ, 250) և այլն:

4. —Ը հոդի գործածության 1858—1866 թթ. յուրահատուկ պատկերը ամբողջացնելու համար նշենք նաև, որ «Կրիտիկայում», առանձին գեպքերում՝ բարբառի ազդեցությամբ, հոդ են առնում որպես կապական բառ օգտագործված մեջ, առաջ, առաջև և դուս բառերը: Օրինակ՝ ազգի կյանքի մեջը մտնել (ՆԸԵ, 542)— խորամուխ լինել, ներկա լինելով դատարանի առաջեր, ծունկ չոքած ձեր առօճը (ն.տ., 515), պարսպի մեջ կամ պարսպից գործը և այլն:

«Զարտուղություններ» Մ. Նալբանդյանի նշված շրջանի ստեղծագործություններին, ինչպես և 1850—60 թթ. գրական աշխարհաբարին բնդհանրապես, հատուկ են հոլովման և հնչունափոխության «անսովոր» ձևեր: Այդ «շեղումները», որոնք համար կատարվում էին ի հակադրություն արգելն օրինական ուժ ստացած կանոնների, կապված էին գրական լեզուն մի համակարգի տակ դնելու ձգուման հետ ու պայմանավորված դրանով: Այդ իսկ պատճառով, եթե այլ պարբերականներում դրանց առկայությունը որոշ իմաստով պատահականություն էր՝ կապված ենդինակների անձնական հակումների և ոչ աշխարհաբարի մշակման նրանց ընդհանուր ուղղության հետ, ապա «Հյուսիսափալլում» նշված շեղումները հանդիս էին գալիս որպես օրինաշափություններ: Այդ նկատել են գեռես 1860 թ.: «Մենք աշխարհաբար լեզվում «դուռ» խոսքը սեռականում բանեցնում ենք դռան, ինչպես հին գրական լեզուն պահանջում է: Պարոն նազարյանցը «դուռ» խոսքը սեռականում հոլովում է դրանից: Մենք «մարդ» խոսքը հոգնակի ուղղականում ասում ենք մարդիկ, ինչպես որ հին գրաբառն էլ պահանջում է, բայց նա չէ կամենում էս ձեզ բանեցնել ու ասում է մարդեր»¹: Ինչպես տեսնում ենք, ճիշտ են կոնկրետ բառաձերի մասին կատարված դիտողությունները: Անշուշտ, նկատի պետք է ունենալ, նաև այն հանգամանքը, որ «շեղումները» կատարվել են հօգուտ աշխարհաբարի, այսինքն եթե Մ. Նալբանդյանը, Ստ. Նազարյանն ու «Հյուսիսափալլի» մյուս հեղինակ-

¹ «Մեղմ Հայաստանի», 1860, էջ 44:

ները գրում էին դոտի, մահի, մարդերի, ոսումի, ապա այդ կատարվում էր ոչ թե Համակարգ ստեղծելու ինչ-որ քմահամ ցանկությամբ, այլ աշխարհաբարյան -ի Հոլովման՝ մյուս Հոլովումներին պատկանող բաները իրեն ենթարկելու տեսնդինցը նկատի ունենալով, հենց այդ է, որ Հաշվի չէին առնում «Հյուսիսափայլի» Համառակորդները:

Կանգ առնենք նախ հնչյունափոխության և ապա Հոլովման վերոհիշյալ «Պարտուղավթյունների» վրա:

1. ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽԵԹՅՅՈՒՆ

ա) 1858—62 թթ. միավանկ՝ ու և ի արմատահնչում ունեցող բառերի թերման (և հոգնակի կազմման) ժամանակ՝ ու ը և իւ ը հնչյունափոխություն մեծ մասամբ չի կատարվում: Օրինակ՝ դուռը (Հ, 5, 399), բուրդի (Հ, 6, 497), սուրերը (Հ, 7, 74), տուները (Հ, 8, 148), միտքերը (Հ, 59, 1, 69), ծովսի մեջ (ն.ա., 5, 380), լիճերը (ն.ա., 8, 56), կիրքերը (Ելժ, 2, 294), խումբին (ն.ա., 310), ջիղերը (ն.ա., 308), գիրքերը (ՆԸԵ, 379), դուրսից (ն.ա., 422), խումբից (ն.ա., 431)¹:

Այս օրինաչափությունը որոշ դեպքերում գործուն է նաև բաղմավանկ բառերի մեջ: Օրինակ՝ սերունդի (Ելժ, 2, 307)², երկիրները (ՆԸԵ, 408), խորհուրդով (ն.ա., 404), երկուազնդի (ն.ա., 374), հմմա՝ 1861—62 թթ.³ ծովովրդի (ն.ա., 425), օգսի (ն.ա., 457):

1863—66 թթ. նշված ձևերը արդեն հանդես են զալիս որպես զույգ ձևեր, և մե՛րթ կատարվում է, մե՛րթ չի կատարվում բառավերքի փակ վանկի ի -ի և ու -ի շեշտի կորուստի պատճառով առաջ եկող հնչյունափոխությունը: Օրինակ՝ Վեճեակում (Ելժ, 2, 407), Գարեգնի (ՆԸԵ, 482), Արշավրի (ն.ա., 487), դատակնեով (ն.ա., 515), արագի (Հ, 64, 3, 165), միամատին (Ելժ, 4, 305), բայց և կապիկի (Ելժ, 2, 409), քիթերը (ՆԸԵ, 591), կիրքերը (ն.ա., 556):

բ) Բառավերքի փակ վանկի է-ն միշտ չէ, որ թերման ու բաղմավան դեպքում ի-ի է փոխվում: Այդ պատճառով ստեղծվում են որոշ բառերի հնչյունափոխված ու հնչյունափոխված զույգ ձևեր: Օրինակ՝ ասպարիզում (Հ, 5, 420, Հ, 10, 338, ՆԸԵ, 448), ազգամիրի (ն.ա., 346), լիճի (Հ, 11, 433), հանդիսի (Ելժ, 2, 294), հանդիսի (Հ, 59, 10, 821), տնօրինությունքը, տնօրինութենից, տնօրինութեց (Հ, 59, 10, 821), տնօրինությունքը, տնօրինութենից, տնօրինութեց

¹ Հմմա՝ բիթերը (Հ, 59, 5, 364ն), դուրսից (ն. ա., 12, 974ա), դուռները (Հ, 60, 1, 2ն), սիրտեր (ն. ա., 78ն), միտքերը (ն. ա., 12, 488ա, ձթ, 59, 145)

և այլն:

² Այժմ էլ սովորական է:

թյունքը (Ելժ, 2, 293), ասպարիզի մեջ (ն.տ., 295), ասպարէզի մեջ (ն.տ., 311), կիսից (Հ, 64, 3, 161), կէսում (ՆՓ, 254), միջում (Ելժ, 405), պարտէզում (Թ, 70), պարտիզումն է (ն.տ., 69). Հմմտ.՝ հանդիսի (Հ, 4, 268ն), ասպարիզի (Հ, 58, 110):

գ) Ուշ երկնչլունը հետևողականորեն վերածվում է ու-ի՝ քարակուսի (Հ, 5, 383), վարագուրի (Հ, 6, 465), առուգությամբ (Ելժ, 2, 303), առանց տարակուսի (Հ, 9, 244), լուսով (ՆԲԵ, 373, 559), օրացուցի (ն.տ., 388), վարագուրով (ն.տ., 458), գունով (Հ, 62, 5, 237, ՆԲԵ, 559), սառացից (Ելժ, 2, 406), ապացուցի (Թ, 28) և այլն:

դ) Ոչ հետևողականորեն է կատարվում եա> և հնչունափոխությունը՝ ատենի (ՆԲԵ, 371, 554), մատենի (Ելժ, 4, 125, ՆԲԵ, 514), սենեկիս (ն.տ., 380), որդեկին (Հ, 64, 3, 165), սենեկում (Թ, 13): վայրկենից, մեհնենից (ՆԲԵ, 529), բայց և՝ ատյանների առաջն (ն.տ., 371), սենյակից (ՆՓ, 259):

2. ՀՈԼՈՎԼՈՒՄ

ա) Արդեն անցյալ դարի 60-ական թվականներին ժամանակ յուլյ տվող բառերը հիմնականում ենթարկվում էին -վա հոլովման: «Հյուսիսափայլը» այդ օրինաշափությունը չէր ընդունում և այդ բառերը ենթարկվում էին մե՛րթ ի, մե՛րթ ու հոլովման: Օրինակ՝ օրից (Հ, 2, 148, ՆԲԵ, 381, Ելժ, 4, 287), գիշերի դավակները (Հ, 9, 246), «Որ օրիդ ես սպասում» (Հ, 10, 340), օրից (Հ, 11, 418), գիշերի (Հ, 59, 9, 727, ՆԲԵ, 38), առավոտու 11 ժամուն² (Հ, 59, 11, 902), ցերեկի (ն.տ., 904), օրի (ՆԲԵ, 440), դարու (ն.տ., 442, 494, Ելժ, 2, 406, Թ, 67), տարու (ՆԲԵ, 528, Ելժ, 4, 254). Հմմտ.՝ օրվա մեջ (ՆԲԵ, 429): Հմմտ.՝ ցերեկի մեջ (Հ, 59, 5, 362ն), ամեն օրի համար (Հ, 59, 11, 896ն), գիշերին (Հ, 59, 1, 16ա), ցերեկի թագուհին (Հ, 60, 12, 427ն), երեկ երեկոյին (Հ, 60, 4, 270ա), նույն ժամուն (Հ, 60, 5, 401ա), ամսու վարձ (Հ, 60, 6, 404ա), առավոտուն (Հ, 60, 5, 407ա), երեկից (Հ, 60, 12, 493ա):

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ 1863—66 թթ., նախորդ 2րշանի հետ համեմատած, զգալի կերպով ավելանում էն օր բարի -վա հոլովման դեպքերը, ինչպիս՝ այսօրվա (Ելժ, 2, 403, Ելժ, 4, 237), մի օրվա (ՆԲԵ, 558), ամեն օրվա (ն.տ., 542) և այլն:

բ) Ուշ գերանունը սեռական, տրական և հայցական հոլովմեռում ենթարկվում է ի հոլովման. օրինակ՝ «Ովին... տրվելու է» (Հ,

¹ Տալիս ենք «Հյուսիսափայլը» համար բնորոշ ու այժմ մերժված տարբերի հատկանիշների նկարագրությունը:

² Տալիս ենք նաև տրական և մի քանի այլ հոլովաձևեր:

59, 8, 652), «Ովին են խաբում» (Հ, 8, 166). Հմմտ.¹ ովին աշքում (Ելժ, 69), ովին ձեռքում (ն.տ., 70):

գ) Համաբանությամբ -ի հոլովման են ենթարկվում նաև.

1) Ներքին ա հոլովման պատկանող որոշ բառեր (ժողովդական ձևեր): Օրինակ՝ ընկերի (Հ, 2, 154), արյունի (Հ, 4, 343, Հ, 8, 152), դրւունից (Հ, 7, 73), դուռիս (ն.տ., 78), անունին (Հ, 59, 9, 813), հատուցումի մեջ (Ելժ, 2, 304, ՆԲԵ, 372), մանուկի (Ելժ, 330), տունի վրա (ՆԲԵ, 558)—նույն էջում տան: Հմմտ.² արյունին (Հ, 59, 11, 901ն), խոնարհումի (ՄՀ, 60, 36):

Տեսականորեն Մ. Նալբանդյանը -ումն ածանցով կազմված բառերի գրաբարյան հոլովման գեմ է արտահայտվում, սակայն 1863—66 թթ. լեզվական պրակտիկայում առկա են նշված բառերի և գրաբարյան, և՝ -ի հոլովման ենթարկված ձևեր: Օրինակ՝ հատուցումի, բայց և՝ հատուցման (ՆԲԵ, 555), հոլովումի, բայց և (էլի նույն էջում) հոլովման (Ելժ, 3, 344):

2) Ընկեր բառը. օրինակ՝ ընկերի (Հ, 2, 154), ընկերին հայտնելու (Ելժ, 2, 410), չի նայում ընկերի վրա (ՆԲԵ, 556), ընկերին էր ասում (Թ, 20):

3) Մահ բառը, որը 1858—62 թթ. ենթարկվում էր և՝ ի, և ու հոլովման¹, 1863—66 թթ. հիմնականում ի հոլովման է ենթարկվում: Օրինակ՝ մահի մասնե (ՆԲԵ, 554), մահի է տալիս (ն.տ., 555), մահի մեջ (ն.տ., 556), մահի արժանի (ն.տ., 562), «Մահասում եմ մահին» (Ելժ, 2, 407), «Մահին... պատճառ եղած վինինք» (ՆԲԵ, 514):

4) Որոշ դեպքերում նաև սեր բառը. օր՝ մաշվում է սերի ախտով (ՆԲԵ, 579):²

5) Առանձին դեպքերում՝ նաև ամուսին բառը՝ ամուսինի... տեր (Հ, 59, 11, 917):

դ) կառը կերպով ի և ու հոլովման է ենթարկվում մարդ բառը, որի հոլովման համակարգը այսպիսին է՝

հեղակի	հոգնակի
ուղղ. մարդ	մարդեր (մարդիկ)
սեռ. մարդի, մարդու	մարդոց (մարդերի)
տրակ. մարդի(ն), մարդու(ն)	մարդերի(ն), մարդոց(ը)
հայց. մարդ, (մարդու) ³	մարդոց
բաց. մարդից (մարդուց)	մարդերից ⁴

1 Հմմտ.¹ մահու (Հ, 5, 476), մահի (ՆԲԵ, 379), մահու (ն. տ., 416):

2 Հմմտ.² սիրու (Հ, 6, 464):

3 Փակագծերում նշված հոլովաձևերը 1863—66 թթ. փոքր թիվ են կազմում:

4 Հմմտ.³ մարդիկներից (ՃՌ, 1859 թ., 142, 143, 145):

գործ. մարդով

(ներգ.) մարդի մեջ (մարդու մեջ)

մարդերով

մարդոց մեջ

Օր՝ մարդերի (թՀ, 9, 24, 343, Հ, 8, 149), մարդկանց (Հ, 10, 344), մարդոց ներկայությամբ (նԲԵ, 485), մարդոց համար (ն.տ., 557), մարդերից (ԵլԺ, 2, 404), մարդի մեջ (ն.տ., 406), մարդերը (ն.տ.), տային այն մարդերին (ն.տ., 408), «Ասում է... մարդոցը», մարդուն (նԲԵ, 487), մարդիկ (ն.տ., 500), մարդից են պահանջում (Հ, 64, 3, 162), մարդերի կողմից (ն.տ., 170), «Հալածեցին... մարդոցը» (թ, 3), մարդու (ն.տ., 7), մարդուց (ն.տ., 3), մարդերի (ն.տ., 53) և այլն:

Ե) Հիմնականում ու հոլովման են ենթարկվում.

1) Սեր բառը. օրինակ՝ սիրու ախտով (Հ, 59, 9, 727). Հմմտ.՝ սիրու... հայրը (Հ, 59, 11, 893ն), սիրու օրեր (Հ, 59, 12, 970ա), սիրու մեջ (Հ, 60, 6, 443ն):

2) Այդպիսի գերանուն՝ որպես փոխանուն գործածվելիս: Օրինակ՝ այդպիսու անարժանությունը (ԵլԺ, 2, 302), այդպիսու գործերից (ն.տ.):

3) Մ. Նալբանդյանը, որոշ գեպքերում, բառի հոգնակին գրաբարյան ք վերջավորությամբ կազմելով՝ սեռականում ենթարկում է աշխարհաբարյան ի հոլովման, պահպանելով հոգնակերտ վերջավորությունը, որը ինքնին աշխարհաբարյան երեւյթ է (բարբառային, ժողովրդական ձևեր): Օրինակ՝ ծնողքի համար (Հ, 8, 162), գինիքի մեջ (Հ, 10, 309):

Անհրաժեշտ է մի բանի խոսք ասել նաև որոշ բառերի հնչունակազմի, ինչպես և հոգնակիի կազմության հյուսիսափայլյան առանձնահատկությունների մասին:

Որոշ բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է եր՝ վերջավորությամբ՝ պատերազմերը (Հ, 4, 334, Հ, 6, 406), հմմտ.՝ պատերազմներ (Հ, 60, 12, 489ա). նախագահերին (Հ, 9, 248):¹

Գրաբարում և վերջնահնչյուն ունեցող բառերի (մասն, դուռն և այլն) ն-ն մե՛րթ պահպանվում է, մե՛րթ՝ ոչ: Բոլոր գեպքերում ունենք մյուսերի² (Հ, 4, 336), մյուսերը (Հ, 9, 245), մյուսերին (Հ, 10, 343), հմմտ.՝ մյուսերումը (Հ, 1, 65ն), մյուսերին (Հ, 4, 268ն), որոշ գեպքերում՝ դուռները (Հ, 5, 399), բայց և՝ դուռները (Հ, 5, 478). Հմմտ. նաև՝ մասնից (ԵլԺ, 4, 88), մասների (ն.տ., 306), նաևնով (նԲԵ, 557), մասները (ԵլԺ, 2, 407), բայց և՝ մասի, որը գործածվում է «Աղգային թշվառություն» հոդվածում (Հ, 64, 3, 169):

¹ Հմմտ. արկղերից մինը (Հ, 60, 4, 269ա):

² Հմմտ. ոսերի տակ (Հ, 59, 1, 17ա), ոսերից (Հ, 59, 11, 895ն):

Գրաբարյան - մ հոգնակերտ վերջավորությունը շատ բառերում, արդեն իսկ 60-ական թվականներին, աշխարհաբարում հիմնականում որպես այդպիսին չէր գիտակցվում և արմատի կամ հիմքի հետ միասին որպես արմատահնչյուն էր գիտվում (օրինակ՝ գործիք, խնամք, ամենք): Մ. Նալբանդյանը, դրան հակառակ, գրում է. «Պիտո է... ցանելու զարձի դառնար» (Ելժ, 2, 404), «ինամով թաքուցած էին» (Հ, 10, 300), անպիտ է (ն.ա., 305), ինամով արմատախիլ անել (ՆԲԵ, 523), մերժել ինամով (Թ, 51):

Ամեն բառը 1858—62 թթ. միշտ օգտագործվում է ամեն, ամենի (ամենքը, ամենքի) ձևերով՝ ամենների համար (Հ, 10, 309), ամեններիս (Հ, 59, 3, 726), հմմտ. ամենների (ն.ա., 12, 981ն), ամեններից (Հ, 60, 12, 490): 1863—66 թթ. նա սկսում է սրանց մոտ միաժամանակ օգտագործել և ամենի ձևը: Օրինակ՝ ...ամեննս առաջացցել ենք... (ՆԲԵ, 562), ամենքը հրաժարվեցան (ն.ա., 492), ամենին էլ ողջ հէ (Թ, 13), հմմտ.՝ ամենի սրտի մեջ (ՆԲԵ, 556), ամենին հայտնի է (Հ, 64, 3, 158), մեզ ամեններիս համար (ՆԲԵ, 586), ամեններին լսելու համար (Ելժ, 4, 258), «Ամեններն ևս քրիստոնյաց էին» (ՆՓ, 251), չէ հրամայում ամեններին (Թ, 11) և այլն:

Թերանուններ: Սա, դա, նա ցուցական, հոգնակի առաջին գեմքի անձնական, ինչպես և ինքն դերանունը ու այս դերանվան թեք հոլովաձևերը «Հյուսիսափայլի» առաջին իսկ տետրակիներից սկսած գրաբարյան հիմքով են օգտագործվում: Օրինակ՝ դորա իրավունքը (Հ, 1, 71), սորան ցուց տալով (Հ, 1, 73), «Ազատ է թողնում նորանց» (ն.ա., 73), նոցա նման, նոցա սիրար (ն.ա., 74), դորանից, դորա... բառերը (ն.ա., 79), նորա առողջության (Հ, 2, 150), հեռացնում էինք նորան (ն.ա., 150), «Մեք... արժանի ենք» (Հ, 1, 76), «մեք... ուրախ ենք» (ն.ա., 80), մեք տեսանելով (Հ, 2, 150), հրապարակել նորանց (Հ, 5, 381), նորա (ն.ա., 378), յուրյանց ծնած օրից (ն.ա., 383), ինքյանք լցվելով (ն.ա., 380)¹:

«Հյուսիսափայլում», որպես խախտում ընդհանուր համակարգի, Մ. Նալբանդյանն սկսում է առանձին մասնավոր դեպքերում օգտագործել նաև դու անձնական դերանվան սեռականի քու բարրառացին ձեր՝ քո-ի փոխարեն, ինչպես՝ քու տեսությանը (Հ, 4, 342):

Սա. Նաղարյանը ևս պահպանում է նշված դերանունների թեքման գրաբարահիմք համակարգը: Օրինակ՝ «Մեք... վճարենք,

¹ Նույն շրջանի նամակներում որոշ տատանումներ է տալիս միայն մենք դեմք դերանունը՝ մերթ գրաբարյան և մերթ աշխարհաբարյան ձևով օգտագործելով: Մյուս դերանունների գրաբարյան («Հյուսիսափայլյան») համակարգը պահպանվում է՝ օրինակ՝ նորա օգուտը, յուրյանց ազգը (Ելժ, 4, 49), նորանով (ն. ա. 48), մենք (ն. ա., 48, 49):

...ստացել ենք մե՞ք, ...Հանձնելով նոցա» (Հ, 1, 1), նորա կյանքը, «Հարցնում է նոցանից» (ն.տ., 3), «Նորան պիտանի եք կացուցել, ...դոցանից, ...ինչ էին դո՞ւ» (ն.տ.) «Թուվլ տվեց դոցա» (Հ, 4, 279) և այլն:

Ի հակադրություն «Հյուսիսափալլի», «Մեղու Հայաստանին» և «Ճռաքաղը» դերանուններն օգտագործում են առանց որևէ համակարգի, այնպես որ, հաճախ, նույնիսկ միեննույն նախադասության մեջ հանդիպում են նշված գերանունների, ինչպես և այս, այդ, այն ցուցականների, և' բարբառային, և' գրաբարյան, և' աշխարհաբարյան ձևերը: Օրինակ՝ էս տեղի, էն տանը (ՄՀ, 58, 3), նրա (ն.տ., 4), իրանց (ն.տ.), էնպես (ն.տ., 6), նորա կինը, ...նորա ճաշը, ...նրա... հեռացած ժամանակ (ն.տ., 95), «Մե՞ն նրան խարել ենք» (ն.տ. 96), իրան մարի (ն.տ.), յուր (ն.տ., 95), նորա, մենք (ն.տ., 111), մե՞ն (ն.տ., 190), այսպես, այսին (ն.տ., 200), էնին, էնպես (ն.տ., 238):

Քիչ ավելի կայուն է «Մեղվի» համեմատությամբ «Ճռաքաղը»՝ գրաբարյան ձևերին գերակշռություն տալու իմաստով: Օրինակ՝ նորա (ՃՌ, 58, 39), յուրյանց, նորա, մե՞ն (ՃՌ, 58, 40): Այստեղ, սակայն, մեծ շափերով օգտագործվում են նաև սա, դա, նա գերանունների արևմտահայ ասոր, աղոր, անոր (հաճախ նաև այսոր, այդոր, այնոր)՝ ձևերը:

Մ. Նալբանդյանի նույն շրջանի ստեղծագործություններում, որպես բացառություններ, հանդես են գալիս դույն, ոմն, ոչ ով (ոչ ոք) գերանունների՝ Ստ. Նաղարյանի լեզվին բնորոշ գործածության որոշ դեպքեր:

Դույն (դոյն) գերանունը օգտագործվում է այժմյան նույն դերանվան փոխարեն: Օրինակ՝ «Այն շարժառիթը... է դոյն այդ օբսկուրանտների անձնապահությունը, փառասիրությունը և շահասիրությունը» (Հ, 9, 243):

Ոմն գերանվան հոգնակիի յուրօրինակ՝ որոշյալի հետ համաձայննեցված կիրառությունը գրաբարյան ազդեցություն է: Օրինակ՝ «Նմանի մարմինն զրվելով այդ հալած պղնձի վերա...» (Հ, 9, 236): Ընդգծված ոմանք գերանունը, ինչպես տեսնում ենք, թվով համաձայնվում է մարմին (հոգնակի) ենթակային: Հմմտ՝ ոմանց ընկերասիրաց (ԿԲ, 60, 832):

Ոչ ով գերանունը հանդես է գալիս ոչ ով ձևով՝ ոչ ով սիրտ չունի (Հ, 11, 428): Ով գերանվան սեռականը, տրականն ու հայցականը նշված շրջանում Մ. Նալբանդյանը կազմում է նույնպես բարբառա-

¹ Սրանք, ըստ երեսվթին, այս, այդ, այն և արևմտահայ ասոր, աղոր, անոր ձևերի «խաչավորման» արդյունք են:

յին ձեռով՝ ովին, ովին: Օրինակ՝ ովին են խարում (Հ, 8, 166) —ում են խարում: Երբ իրար մոտ ով գերանվան սեռական և տրական անորոշ առման ձեեր են ընկնում, Մ. Նալբանդյանը երկրորդ ձեր սովորաբար ում է դարձնում: Օրինակ՝ «Ովին ում հետ խոսելու վերա է իմ կասկածը» (Հ, 10, 343):

Այս շրջանում գեռևս լինելով բացառություններ՝ նկարագրված իրողությունները մինչև 1860 թ. աստիճանաբար շատանում են:

1859—62 թթ. գերանունների օգտագործման ընդհանուր համակարգում մեծ փոփոխություններ չեն կատարվում: Ինչպես «Հյուսիսափալում», այնպես էլ 1860 թ. Սվաճյանի «Մեղվում» տպագրված աշխատություններում, 1859—60 թթ. նամակներում և 1861—62 թթ. աշխատություններում Մ. Նալբանդյանը (չնչին բացառություններով):

Գրաբարյան ձեռով է օգտագործում առաջին դեմքի անձնական գերանվան հոգնակի ուղղականը: Օրինակ՝ մեք... չենք (Հ, 59, 5, 380), մեք չունեինք (Ելժ, 2, 295)², մեք (ՆԸԵ, 367, 447, Հ, 62, 5, 235) և այլն³: 2. Պահպանում է ինքն, սա, դա, նա գերանունների թեքման նախորդ շրջանի՝ վերևում նկարագրված կանոնները: Օրինակ՝ նորանից, դորա, նորա (Հ, 59, 8, 650), սորանից (ն.ա., 653, ՆԸԵ, 405), սոցա (ն.ա., 655), յուրյանց (Ելժ, 2, 293, ՆԸԵ, 375), պահել յուրյան (ն.ա.), նոցա (ՆԸԵ, 367, Հ, 60, 5, 381), յուրյանց (ՆԸԵ, 375, Հ, 60, 5, 381), սոքա (ն.ա.) և այլն⁴: 3. Համապատասխան դեպքերում շարունակում է օգտագործել նաև դոյն գերանունը: Օրինակ՝ «... Հայերը բաժանվեցան հույներից Քաղկեդոնյան ժողովի ժամանակ և դոյն այդ ժողովի պատճառով» (Ելժ, 1, 479), դոյն այդպարձանքի առարկան (Հ, 59, 9, 726) և այլն:

Ոչնչով չի փոխվում որ, ով, ոմանք գերանունների թեքումն ու կիրառությունը, օրինակ՝ որի ընդդեմ (ՆԸԵ, 406) —«ում դեմ», «Ովին բան ու զործի կտրվել է» (ն.ա., 442). «Ումանք մարդիկ... ավելի հարուստ լինելով... աղքատ են» (ն.ա., 411), հմմտ. ոմանք անբարեսեր անձինք (Հ, 61, 1, 4ն), ոմանց հայերի գանգատը (ն.ա., 6ն) և այլն:

1 Հմմտ. ովին ձեռքում (ն. ա., 71) —«ում ձեռքում»:

2 Հմմտ.՝ մեք (Ելժ, 4, 66, 69):

3 1860 թ. նամակներում Մ. Նալբանդյանն սկսում է հաճախակի անձնական գերանվան եզակի երրորդ դեմքի դու աշխարհաբարյան ձեր փոխարեն դուն բարբառայինը դործածել: Օր՝ «Փուն լավ գիտես» (Ելժ, 4, 61), «Փուն ինձ օգնել եա» (ն. ա., 65) և այլն:

4 Հմմտ.՝ նորան (Ելժ, 4, 62), դորանից (ն. ա., 65), դորանով (ն. ա., 66) և այլն:

1859 թ., առանձին դեպքերում, ով-ի սեռականի ում կամ ովի ձևերի փոխարեն որը հարաբերականի սեռականն է դրվում: Օրինակ՝ «Ուր և որի ձեռքում գտանվում են» (Հ, 59, 5, 382). Հմմտ՝ «Որի համար կացուցած են» (Հ, 59, 1, 15ա):

Ի հակադրություն Մ. Նալբանդյանի և ընդհանրապես «Հյուսիսափայլի» դերանունների օգտագործման համեմատաբար կուռ համակարգի (Հմմտ՝ օրինակ՝ մեք—Հ, 10, 334ն, Հ, 8, 113ա, նոքա, դորան, յուր Հ, 60, 12, 492ա և այլն) ժամանակի պարբերականները խառը կերպով գործածում էին նշված դերանունների և գրաբարյան, և՛ բարբառային, և՛ աշխարհաբարյան ձևերը: Օրինակ՝ նորա (ՄՀ, 59, 8), սորա (ն.առ., 9), նոքա (ն.առ., 11), նոցա (ն.առ., 99), յուրյանց (ն.առ., 134), նորա (զիթ, 59, 185), նոքա (ն.առ., 183), նոցա (ն.առ., 184), յուր (ՄՀ, 60, 36), դորան (ն.առ., 98), նորան դիմել (ն.առ.), յուրյանց (ն.առ., 243). բայց և՛ նրան, նրա (ՄՀ, 59, 10), սորա (ՄՀ, 60, 36), մենք (ն.առ.), իր միտքը (ն.առ., 42), նրանցից (ն.առ., 43), իրան եղբայրների (Կիթ, 60, 832), մենք (ն.առ.), նրա, նրան (ն.առ., 836), սորանց, իրանց (ն.առ., 837) և այլն:

1863—66 թթ. Մ. Նալբանդյանն օգտագործում է եղակի առաջին դեմքի անձնական գերանվան և՛ գրաբարյան, և՛ աշխարհաբարյան ձևերը, վերջիններիս գերակառությամբ: Օրինակ՝ մենք (Ելժ, 4, 304), մեք (Ելժ, 2, 404), մենք (ն.առ., 395), մենք (ՆԸԵ, 556), մենք (ն.առ., 479), մեք (Հ, 64, 3, 160), մենք (ՆԸԵ, 577), մենք (ՆՓ, 247), մենք (Թ, 20) և այլն:

Անհրաժեշտ է ընդգծել, որ այնպիսի աշխատություններում, ինչպես «Կրիտիկան» և լեզվաբանական-ծրագրային «Մեր լեզվի արմատական բարեփոխության մի փորձ»-ը, Մ. Նալբանդյանը բացառապես մենք գերանունն է օգտագործում, որը և այդ ժողովրդական ձևին վերջնականապես գերազանցություն տալու նալբանդյանի համոզման մասին է խոսում: Մյուս կողմից չի կարելի անուշադրության մատնել այն հանդամանքը, որ նույն շրջանում «Հյուսիսափայլի» տպագրելու համար պատրաստած իր հոդվածում («Ազգային թշվառություն») Մ. Նալբանդյանն օգտագործում է այս գերանվան գրաբարյան մեք ձևը: Օրինակ՝ մեք սարսափում ենք... (Ելժ, 3, 103), մեք... ցալում ենք (ն.առ., 106), մեք հիշում ենք (ն.առ., 110), մեք... դատապարտել ենք (ն.առ., 112), մեք կարծում ենք (ն.առ., 114) և այլն:

Մ. Նալբանդյանի 1863—65 թթ. աշխատություններում հանդես են գալիս իր, իր գերանվան եղակի բոլոր թեք հոլովների, ինչպես և հոգնակի թվի բոլոր հոլովների հիմքի աշխարհաբարյան ձևեր

գրաբարյանների կողքին, որոնք աստիճանաբար տեղի են տալիս աշխարհաբարյան, իսկ առանձին դեպքերում, նաև բարբառային ձևերին: Օրինակ՝ յուրյանց որսի (Ելժ, 4, 306), յուրյանց փողը (Ելժ, 2, 404), իրենք, իրենց (ն.ա., 396), իր մեջ (ն.ա., 397), իրեն չասնի (ՆԾՅ, 555), իրենց անձը (ն.ա., 559), իր... ներգործողներին (ն.ա., 482), իրենք (ն.ա., 500), յուրյանց (Հ, 64, 3, 158), յուր արձաթը (Ելժ, 4, 254), յուրյանց բերանը (ՆՓ, 248), իրենց անձերին (Թ, 1), իրենցից (ն.ա.), իրենք (ն.ա., 6), իրենց (ն.ա., 19) և այլն:

«Երկու խոսք» հոգվածի ինքնազդիրը ցուց է տալիս, որ այս դերանվան գրաբարյան ձեռքը աշխարհաբարյանով փոխարինելը Մ. Նալբանդյանի մոտ կատարվել է խորապես գիտակցաբար: Այսպես. մի տեղ ձեռքի սովորությամբ Մ. Նալբանդյանի մոտ յուրյանց է ստացվել, որը նա ջնջել է ու իրենց դարձրել «նվիրված շեն իմենջ (ջնջված է յուրյանց) գործունեությունը» (Ելժ, 2, 395): Սակայն այս գերանվան իր, իրենք, իրենց աշխարհաբարյան ձեռքի կողքին նշված շրջանում առկա են նաև բարբառային առանձին իրողություններ: Օրինակ՝ «Սորանով իրանք իրանց ապացուցում են» (ն.ա., 404), իրեն անառակությունները (ՆԾՅ, 563), «Իրեն... խորհուրդն էլ այս է» (ն.ա., 483), իրանց... վերջավորությունը (ն.ա., 596):

Նույնքան տարածված է նշված շրջանում նաև եղակի երկրորդ դեմքի անձնական դերանվան (դու) սեռականի բու հողվածեր գերիշխող բու-ի կողքին: Օրինակ՝ բու խոր գիտության վրա (ՆԾՅ, 558), քու ազգի (ն.ա., 555) և այլն:

Որպես բացառություններ հանդիպում են նաև որ գերանվանով իմաստով կիրառության առանձին դեպքեր: Օրինակ՝ «Եսկ որ վախենում է, նա մաքուր չէ» (Հ, 64, 3, 169), «որի տունն ես հարցնում» (ՆԾՅ, 558), «որի համար... պարզեւում է» (Թ, 17), «որի գործն է կատարյալ» (ՆԾՅ, 527) և այլն: Միաժամանակ Մ. Նալբանդյանն օգտագործում է նաև ով գերանվան սեռականի ովի ձեր ում իմաստով:

Փարպեցու «Թղթի» թարգմանության ձեռագրում եղած մի փաստ ցուց է տալիս, որ այս օրինակները բացառություններ լինելով՝ Մ. Նալբանդյանի համար պատահականություններ շեն: Բանն այն է, որ մի տեղ նա գրել է ում, ապա ջնջել և դարձրել ովի՝ «Թե ովի որդի էր» (Թ, 51. Ելժ, 3, 271), որը այդ ձեի գիտակցական օգտագործման լավագույն վկայությունն է:

Նշված բարբառային բոլոր իրողություններն էլ¹ արդյունք էին

1 «Թերդի հիշատակարանում ունենք նաև ինձի՝ «... Հայտնեցին, թե գինին ինձի չէ» (Ելժ, 4, 285):

գրական լեզուն բարբառների էական տարերքի հաշվին հարստացնելու Մ. Նալբանդյանի նպատակադրման:

Նշված շրջանում որոշ փոփոխությունների է ենթարկվում նաև սա, դա, նա գերանունների հոլովման համակարգը: Այդ արտահայտվում է նրանում, որ, որպես շեղում Հյուսիսափայլյան ընդհանուր համակարգից, սա գերանունը առանձին դեպքերում արա հիմքով է հոլովվում: Օրինակ՝ «Մրանով կարող էին նոքա ճանաչել» (Ելժ, 2, 405), «Մրանով կարելի էր տեսանել» (ն.ա., 406) և այլն¹:

Նման իրողությունները, սակայն Մ. Նալբանդյանի լեզվում չեն ծավալվում և նշված գերանունների գրաբարյան հիմքով հոլովվումը («Հյուսիսափայլ») շարունակում է մնալ Մ. Նալբանդյանի լեզվի բնորոշ հատկանիշը նաև 1863—66 թթ., ինչպես սուրա թվականը (Ելժ, 4, 287), սոցա հատկություններից, դուրան ներհակ (ն.ա., 304), դոմա, նոցա ասածների (ն.ա.), նոցանից (ն.ա.), սոխա (ն.ա., 306), սուրանով (Ելժ, 2, 404), նորա անունով (ն.ա.), հարցանել դոցա (ն.ա.), դօմա, դոցա (ն.ա., 396), տալ նորան (ն.ա., 402), առանց դորան (ն.ա., 484), լուսավորել նորանց, հիմք տալ նոցա (ն.ա., 515), սոցա վերա (Ելժ, 4, 260), նորանով (թ, 2), նորանում (ն.ա., 4), դոցանով (ն.ա., 19), սոցանից (ն.ա., 24) և այլն:

Բայական համակարգի առանձնահատկություններ.— 1. Մ. Նալբանդյանի լեզվում «Հյուսիսափայլի» առաջին տարիներին շափաղանց տարածվում ու բնորոշ է դառնում ներկա ժամանակի փոխարեն անցյալ անկատար ժամանակի կիրառությունը: Անցյալ անկատար ժամանակի նման կիրառությունը մեր գրական լեզվի պատմության մեջ կապվում է Ստ. Նազարյանի անվան հետ, որի աղջեցության տակ էլ Մ. Նալբանդյանը, ինչպես և «Հյուսիսափայլի» մյուս թղթակիցները, սկսում են օգտագործել այն: Բանավեճերի ընթացքում ժամանակների նման համաձայնությունն անցնում է նաև հակառակորդներին:

«Ամեն մարդ գիտե, — գրում է Մ. Նալբանդյանը, — որ Լուդովիկոս տասն և չորսերորդի օրերում գործածական զգեստները և հագուստները այժմ ու ոք չեն կրում, ըստ որում հնացած և անպատշան էր երեսում» (Հ, 1, 77): Վերջին, ընդգծված նախագասության մեջ ստորոգյալը, ինչպես տեսնում ենք, դրված է անցյալ անկատար ժամանակով, չնայած որ համապատասխան աշխարհաբարի 1858 թ. արդեն գործուն օրենքների՝ սկսված և խոսքի մոմենտում

1 Հմմտ.՝ սրանից (Ելժ, 4, 254):

խանակ սահմ. ներկայի գործածելը նշանակում է քաղաքավարական կամ մեղմական բացատրություն»¹:

Շահագիզը Ստ. Նազարյանի աշակերտն ու մոտիկ բարեկամն էր: Այդ իսկ պատճառով հնարավոր է, որ մեջբերված պատճառաբանությունը հենց իրենը՝ Ստ. Նազարյանինը լինի, որը նա տվել է անցյալ անկատարի յուրօրինակ կիրառությունը ներկայի փոխարքեն, մի երևույթ, որի հեղինակն էր նա, որից ամենից առաջ նրա աշակերտները պետք է լսեին աշխարհաբարի համար բոլորովին նոր այդ օրինաշափության նշանակության, շարահյուսական կիրառության կանոնների մասին: Շահագիզի բերած օրինակը այդ տեսակետից համոզիչ է: «Հյուսիսափալիք» հեղինակները, հնարավոր է, որ մտածում էին, թե «Մեք կամենք ասել այդ պարոնին, որ գա սխալված էր» ասելով «Մեք կամենք ասել...»-ի փոխարեն՝ մեղմում են սխալվել բայի իմաստը (սխալվելու գործողությունը ներկայից անցյալ է փոխադրվում): Սակայն, երևույթը միայն նման օրինակներով չի սպառվում: Դժվար է «քաղաքավարական կամ մեղմական բացատրություն» փնտել, օրինակ, այսպիսի մի նախադասության մեջ, որտեղ, ընդհակառակը, հեղինակը կցանկանար «անքաղաքավարվարի» ու խարազանող լինել: Օր.՝ խոսելով պապի մասին, Մ. Նալբանդյանը գրում է. «... ինչպես կարելի է, որ մի պապական արելահակառակի այնպիսի մի մարդու, որ աստուծո փոխանորդ էր, արքայության դուռը բացող և փակող... (մի՞թե)» (ԹՀ, 9):

Շահագիզի բացատրությունն ընդունելու դեպքում կմնա ենթադրել, որ այս և նման բազմաթիվ բոլոր դեպքերը համարանության արդյունք են: Համարանությունը, իսկապես, նշված երևույթի տարածման, ընդհանրացման գործում մեծ դեր է կատարել: Բանն այն է, որ սկսվելով անցյալ անկատարից՝ երևույթը, հիմնականում 1858 թ., որոշ գեղագիրում տարածվում է նաև ըղձականի և հարկադրական եղանակի անցյալ ապառնիների վրա, որոնք սկսվում են օգտագործվել ապառնիների փոխարեն: Օրինակ՝ «... Մինչեւ նոր լեզուն վինի առասարակ մատենագրական լեզու... մինչև մեր պատվելի հեղինակները դպրոցական փառքը ետ դնելով Ազգի համար շաշխատեին առողջամիտ կերպով, և մյուս կողմից Ազգի կարողքը օգնություն շառնեին նորանց, սուս է ամենայն լուսավորություն» (ԹՀ, 9, 10): Այս նախադասության մեջ մեր կողմից ընդգծված շաշխատեին և օգնություն շառնեին (շառնեին) ստորոգյալները ըղձական ապառնիի փոխարեն անցյալ ապառնիով են դրված: Կամ՝ «Այժմյան դրության մեջ Հայոց աղջր կարող է հասանել բարձր կամ

¹ Ամբատ Շահագիզ, «Հրապարակախոս ձայն», էջ 154:

իսանակ սահմ. ներկայի գործածելը նշանակում է քաղաքավարական կամ մեղմական բացատրություն»¹:

Շահագիզը Ստ. Նազարյանի աշակերտն ու մոտիկ բարեկամն էր: Այդ իսկ պատճառով Հնարավոր է, որ մեջբերված պատճառաբանությունը հենց իրենը՝ Ստ. Նազարյանինը լինի, որը նա տվել է անցյալ անկատարի յուրօրինակ կիրառությունը ներկայի փոխարքեն, մի երկույթ, որի հեղինակն էր նա, որից ամենից առաջ նրա աշակերտները պետք է լսեին աշխարհաբարի համար բոլորովին նոր այդ օրինաշափության նշանակության, շարահյուսական կիրառության կանոնների մասին: Շահագիզի բերած օրինակը այդ տեսակետից համոզիլ է: «Հյուսիսափայլի» հեղինակները, Հնարավոր է, որ մտածում էին, թե «Մեր կամենք ասել այդ պարոնին, որ դա սխալված էր» ասելով «Մեր կամենք ասել...»-ի փոխարքն՝ մեղմում են սխալվել բայի իմաստը (սխալվելու գործողությունը ներկայից անցյալ է փոխադրվում): Սակայն, երևույթը միայն նման օրինակներով չի սպառվում: Դժվար է «քաղաքավարական կամ մեղմական բացատրություն» փնտել, օրինակ, այսպիսի մի նախադասության մեջ, որտեղ, ընդհակառակը, հեղինակը կցանկանար «անքաղաքավարի» ու խարազանող լինել: Օր.՝ խոսելով պապի մասին, Մ. Նալբանդյանը գրում է. «... ինչպես կարելի է, որ մի պապական աբեղա հակառակի այնպիսի մի մարդու, որ աստուծո փոխանորդ էր, արքայության դուռը բացող և փակող... (մի՞թե)» (ԹՀ, 9):

Շահագիզի բացատրությունն ընդունելու դեպքում կմնա հնաթագրել, որ այս և նման բազմաթիվ բոլոր դեպքերը համարանության արդյունք են: Համարանությունը, իսկապես, նշված երկույթի տարածման, ընդհանրացման գործում մեծ դեր է կատարել: Բանն այն է, որ սկսվելով անցյալ անկատարից՝ երկույթը, հիմնականում 1858 թ., որոշ դեպքերում տարածվում է նաև ըղձականի և հարկադրական եղանակի անցյալ ապառնիների վրա, որոնք սկսվում են օգտագործվել ապառնիների փոխարքն: Օրինակ՝ «... Մինչև նոր լեզուն լինի առհասարակ մատենագրական լեզու... մինչև մեր պատվելի հեղինակները դպրոցական փառք ետ դնելով Ազգի համար շաշխատեին առողջամիտ կերպով, և մյուս կողմից Ազգի կարողքը օգնություն շառնեին նորանց, սուս է ամենայն լուսավորություն» (ԹՀ, 9, 10): Այս նախադասության մեջ մեր կողմից ընդգծված շաշխատեին և օգնություն շառնեին (շանեին) ստորոգալները ըղձական ապառնիի փոխարքն անցյալ ապառնիով են դրված: Կամ՝ «Այժմյան դրության մեջ Հայոց աղքը կարող է հասանել բարձր կամ

¹ Ամբատ Շահագիզ, «Հրապարակախոս ձայն», էջ 154:

վերին կրթության մասնավոր առարկայի մեջ..., եթե այդ առարկան, այդ ուսման ճյուղը, հնար էր նորա նյութական բարեկենդանությանը: Այս պատճառների հիման վերա, հեղինակի գրելիքը առաջինը պիտո է լինելին նոր հայախոսությունով, երկրորդ, հեղինակությունը պիտո է վերաբերվեր բնդհանուր կրթության, և այնպես, որ...հասկանալի լիներ ընթերցողներին» (թ2, 3): Մեշքերված հատվածում առաջին ընդգծված ստորոգյալը (հնար էր) գրված է անցյալ անկատարով՝ ներկայի փոխարեն, երկրորդը և երրորդը՝ հարկադրական եղանակի անցյալ ապառնիվ՝ ապառնիի փոխարեն, իսկ չորրորդը (հասկանալի լիներ)՝ բղձական եղանակի անցյալ սպառնիով՝ ապառնիի փոխարեն: Համարանությունն այս դեպքում, սակայն, համընդհանուր օրինաշափություն չի դառնում: Հաճախ միենալուն հարաբերության մեջ գտնվող նախադասություններից մեկի ստորոգյալի ժամանակը գրվում է նշված օրինաշափությանը համապատասխան, իսկ մյուսը՝ աշխարհաբարի սովորական օրենքներով: Օրինակ՝ «Մեր պատվելի հայրենակիցքը շատ անգամ լսելով ազնվամիտ հեղինակների առ ի սրտե ճշմարտասեր ու ցավակցական խոսքերը... վիրավորվում են, ցուց տալով յուրյանց... արդարացի պատճառները. առաջին, թե նոցա գրածները հին և մեյսյալ լեզվով լինելով, անմոտենալի են ազգին. երկրորդ, թե մեծ մասով գրվածքը լինում են փիլիսոփայական կամ հնասիրական խնդիրների վերա, որ ժամանակի որպիսությանը անհարմար լինելով, չեն զարքեցնում ազգի հոգու մեջ եռանդ դեսպի գրասիրուրյունը» (Ելժ, 2, 61): Մեր կողմից ընդգծված երկու նախադասություններն էլ նույն հարաբերության մեջ են գտնվում, սակայն նրանցից առաջինում աշխարհաբարի համար նման դեպքերում սովորական ներկա ժամանակի փոխարեն անցյալ անկատար է գործածված:

Մ. Նալբանդյանի մոտ անցյալ անկատար ժամանակի նման կիրառության առաջին աղոտ արտահայտություններից մեկը կերպոնտովի «Մարգարե»-ի թարգմանության մեջ է: Բանաստեղծությունը մտնում է բանաստեղծությունների հայտնի տեսրակի մեջ. այդ նշանակում է, որ այն գրված է մինչև 1855 թ. մայիսի 12-ը, քանի որ այդպես է թվագրված առաջարանը:

Ահա այն՝

«Մերերը անձնասիրությամբ
Յուրյանց տղերքին ասում են:
«Նայեցեք, սա օրինակ ձեզ,
«Չապրեց մեղ հետ, նա հպարտ էք,
«Կուրը ուզեց հավաստել մեզ

«Թե նրա բերնով աստված խոսում էր»¹ (Ելժ, 1, 35):
Հմմտ. բնագիրը՝

„Глупец, хотел уверить нас,
Что Бог гласит его устами!“

Այսուհետև նման կիրառության ենք հանդիպում հիշած «Բանաստեղծությունների տետրակի» առաջաբանում՝ «Վերոգրյալ հայախոսության այս հասակի վերաբերած քանի մի հիշատակարանք ունելով ես իմ մոտ... կամենում էի նորանց շմատնել հավերժական կորուստի... վասն որո ինչքան որ այժմ ձեռում ունիմ այս տետրակիս մեջ գրած ավանդում եմ ձեզ...» (Ելժ, 1, 29):

Զենք կարող ասել պատահականորեն, թե որևէ պատճառով նամակներում ես անցյալ անկատարի կիրառության առաջին դեպքը՝ ներկայի փոխարեն, 1855 թվականից է. «Եղբայր, եթե բանը սերի գա, ես քեզ պարզ ասում եմ ահա, երանի և հազար երանի կլիներ, եթե ամեն մարդ ունենար այնքան մաքուր սեր, ինչ որ կա իմ սրտիս մեջ ոչ միայն իմ ծնողաց և եղբարց և աղգականաց վերա, այլև օտարներու, որոնք բարի սիրա ունեին» (Ելժ, 4, 32):

1855 թ. փետրվարի 10-ի նամակում առկա այս օրինակը ցուց է տալիս, որ նշված օրինաշափությունը նալբանդյանի համար ընդունելի էր դարձել արդեն հիսնական թվականների կեսերին և ոչ «Հյուսիսափայլին» գործակցելու պատճառով: Ընդհակառակը, «Հյուսիսափայլին» համագործակցելու հետագա շրջանում (1859—1864) այս երեսությը նալբանդյանի լեզվում աստիճանաբար սահմանափակ կիրառություն է ստանում:

«Հյուսիսափայլում», առանձնապես 1858 թ., անցյալ անկատար ժամանակի կիրառությունը ներկայի փոխարեն մեծ տեղ է գրավում: Բերենք մի քանի օրինակներ. «... Պատշաճ ենք համարում փոքր ինչ խոսել մեր ազգի հետ, թե ինչ է կրիտիկա ասած բանը ընդհանուրապես, թե ինչ ծանր պարտականություն կար մի մարդու վերա, որ կամեր կատարել կրիտիկոսի (ուսումնական դատավորի) պարտականություն...» (Հ, 1, 71): «... Այս է պատճառը, որ առավել զգալի է անկեղծ սրտերին, եթե փոքրանում էր և այդ սակավ եղած ընկերների թիվը» (Հ, 2, 144): «—Դու ի՞նչ անձնասեր մարդ ես, ինչ բան որ համաձայն չէ քո տեսությանը, միք եիմար էր» (Հ, 4, 342): «Մի մարդ, որ այժմ առաքինի էր...» (Հ, 6, 496):

¹ Հմմտ.՝ Ալ. Շատուրյանը, որը, բնականաբար, նշված օրինաշափությունը չեղ ընդունում, թարգմանել է. «Անմիտն ուզում էր համոզել մարդկանց,

Որ նորա լեզվով խոսում է աստված»:
(Ալ. Շատուրյան, «Ընտիր բանաստեղծություններ», 1937, էջ 155—ընդգծումը մերն է—Ս. Գ.):

1859 և 1860 թթ. անցյալ անկատար ժամանակի կիրառությունը ներկայի փոխարեն համեմատած 1858 թ. հետ զգալիորեն նվազում է, և ամենից շատ՝ Մ. Նալբանդյանի լեզվում: Չնայած դրան՝ այն շարունակում է մնալ նշված շրջանի «Հյուսիսափայլի» լեզվի բնորոշ առանձնահատկություններից մեկը: Օրինակ՝ «... ինչ մի ուրախություն է Հայոց եկեղեցու համար, եթե նորա փտած անդամք... դարձյալ վազում էր դեպ ի Հայոց եկեղեցին» (Հ, 7, 73): «Ավարտում եմ նամակս... ցանկացող լինելով, որ մեր եղբայրակից հայ երիտասարդը, որ ունեին կարողություն նվիրել լուրյանց ուսումնականության, ... օրինակ առնուին...» (Հ, 59, 10, 820): «Կարծենք, թե ժամանակ էր արդեն սրափելու միջին դարերի արքեցութենից» (Ելժ, 2, 294): Հմմտ: «Մի տիրության ամպ տարածվում է մեր հոգու վերա, մինչ ամենայն բայլափոխի մեջ հանդիպում էինք այնպիսի մարդերի, որ...» (Հ, 10, 312ն): «Ուղղորաբար ընդունում են, թե աղջկա բնավորությունը հակառակ էր երիտասարդի բնավորությանը» (Հ, 59, 12, 974ա):

1861—65 թթ. նշված երեսությը հանդիպում է միայն բացառիկ դեպքերում:

2. Օծանդակ բայ. էական բայ. հաստատական և ժխտական խոնարհման կազմության առանձնահատկությունները

ա) Հաշվի շառնելով, թե տրամաբանական շեշտը նախադասության որ անդամի վրա է գրվում, էական կամ օժանդակ բայր, հատկապես 1858 թ., որպես կանոն, հաստատական խոնարհման ժամանակ գրվում է ստորոգյալ կազմող գերբայից կամ ստորոգելիական վերադրից անմիջապես հետո: Նման դեպքերում, երբ տրամաբանական շեշտը, ըստ նախադասության իմաստի, ստորոգյալի վրա չի ընկնում, ստեղծվում է ոճական անհարթություն: Օրինակ՝ «Անցան այն ժամանակները, գեղեցիկ խոսում է պարոն Պիսարեսկին, երբ...» (Ելժ, 2, 65), «Անցան այն ժամանակները..., երբ շափով ու կշռով տալիս էին ազգին իմաստության լույսը» (ն.տ., 65); կամ՝ «Թե ինչ պատճառով տալիս ենք մեր հոգվածին մի այսպիսի հառաջարան, պատվելի ընթերցողը կիմանան...» (Հ, 1, 72) նախադասություններում, հասկանալի է, խոսքն այն մասին է, որ Պիսարեսկին գեղեցիկ է խոսում (և ոչ թե տգեղ), որ «շափով ու կշռով էին տալիս ազգին իմաստության լույսը»: Վերջին նախադասությունում տրամաբանական շեշտը ընկնում է պատճառով բարի վրա և ոչ թե տալիս-ի, քանի որ հեղինակը ոչ թե տալու կամ շտալու հարցն է ցանկանում պարզել, այլ տալու պատճառը, մի միտք, որը կարելի էր արտահայտել օժանդակ բայր պատճառվից հետո դնելով՝ «Թե ինչ պատճառով ենք տալիս...»:

Սակայն Մ. Նալբանդյանի լեզվի էվոլյուցիայի ընթացքում, 1858—63 թթ., Հաստատական խոնարհման ժամանակ օժանդակ բայի (Հանգուցի) շրջուն շարադասության դեպքերը աստիճանաբար պակասում և ապա նվազագույնի են հասնում: Այդ նկատվում է առանձնապես 1860 թ., որից հետո ընկած շրջանում Մ. Նալբանդյանի լեզվում մնացած օժանդակ բայերի (Հանգուցի) շրջուն շարադասության դեպքերը լոկ վերապրուելիքին ձևով են հանգես գալիս: Ժիտական խոնարհման ժամանակ օժանդակ բայի (Հանգուցի) շարադասությունը մեծ մասամբ կանոնավոր է: Օրինակ՝ «Նոցա ձեռքը չեր համարձակվելու այդպիսի գործ կատարել» (Ելժ, 2, 66), «Նա չէ մտածում» (ԹՀ, 7), չէ կարողացել... ծածկել (Ելժ, 2, 67), չէ կարելի զգալ (ՆԲԸ, 404), «Ազգը չէ մեռանում փիզիկապես» (Ն. Ա., 444), հմմտ.՝ «Իմ սերունդը, որ ինձանից հետո ոչինչ ստանալու շեն ինձանից, ապրելու չեն» (Ն. Ա., 416), «Քարարը լինելու չէ մեր սեփականությունը» (Հ, 62, 5, 237):

Սակայն, առանձին դեպքերում, ժիտական խոնարհման ժամանակ ևս պահպանվում է Հաստատական խոնարհման շարադասությունը: Օրինակ՝ «... Զուր տեղը սերմ ցանել չոր ու մացառուտ երկրի վերա... օգուտ ամենակի ունենալու չեր» (Ելժ, 2, 61), «Սոցանով հերիքացել չէ հեղինակը» (Հ, 1, 78) և այլն:

Նման շարադասությունը «Հյուսիսափալլում» ավելի շատ օդատագործվում է այն դեպքում, երբ ստորոգյալ կազմող դերբարը անկատար է: Օրինակ՝ երբեք զարմանում չենք (Հ, 6, 408), հմմտ.՝ կարգում չեն (Հ, 6, 485ն), լուսավորում չեր (Հ, 4, 275ն), խոսում չեր (Ն. Ա., 280ն) և այլն:

Շատ հաճախ Մ. Նալբանդյանը և «Հյուսիսափալլի» մշտա հեղինակները օժանդակ բայի նշված կիրառությունները օգտագործում են լեզվի ձեռքի միօրինակությունից խուսափելու, ոճական բազմազանություն ստեղծելու համար: Օրինակ՝ «... Ես հրատարակում եմ ձեզ, թե կարող չեմ թողություն տալ ձեզ: Ես չեմ ներում ձեզ այն 15,000 մորթածների արյունը... Ես ներում չեմ ձեզ այն ուրացությունը... վերջապես, ներում չեմ ձեզ այն հանցանքը...» (Ելժ, 2, 279): Հմմտ.՝ «... Զգիտենք, թե որպիսի բարեւարույուն ցույց եք տվել ինձ... Ես ձեզ բարեւարույուն եմ ցույց տվել...» (Հ, 59, 1, 22ա):

Բ) «Հյուսիսափալլում», որպես ընդհանուր սկզբունք, օժանդակ բայի ներկայի և անցյալի ձեռքը հաստատական խոնարհման դեպքում անկատար դերբայի հետ (ներկա և անցյալ անկատար ժամանակները) գրվում են միասին:

Նման սկզբունք ընդունելով «Հյուսիսափալլը» գրական աշխար-

Հաբարի պատմության մեջ ինչ-որ նոր բան չմտցրեց: Օժանդակ բայց նման զեպքերում միասին էր գրվում, ճիշտ է, ոչ որպես միասնական համակարգ, նաև աշխարհաբարի մշակման մի բանի նախորդ ուղղությունների կողմից:

Կրոնական աշխարհաբար գրականության մեջ (30-ական թթ.) հանդիպում ենք օժանդակ բայի միասին գրելու բազմաթիվ զեպքերի: Օրինակ՝ զարդարվումնենք (ԱծՀՂ, 2, 468), կամենումնենք (Նույնը, 469), պահումնենք (ՇՀՀ, 27), կարդումէ (ՀՔ, 24) և այլն:

Գամառ-Քաթիպայի տեսրակներում ևս օժանդակ բայց հաճախ միասին է գրվում անկատար գերբայի հետ: Օրինակ՝ ապումնեմ (Դ, 1) և այլն:

Նման զեպքերը շատանում են «նոր քնար Հայաստանի» սերիայով լույս տեսնող աշուղական գրականության մեջ: Օրինակ՝ Դ տեսրակում ունենք՝ տեսնումնենք (107), բնակումէր (102), հավաքումնեն, վառումնեն (108), գրավումնեն, կամենումէին (109) և այլն: Նույնիսկ «Մեղու Հայաստանին» և «Ճռաքաղը» առանձին զեպքերում պահպանում են այդ օրինաշափությունը: Օրինակ՝ տեսնումնենք (ՄՀ, 58, 4), ծախվումէ (ՃԹ, 58, 39):

Հետագայում, բանտում, անդրադառնալով օժանդակ բայի անկատար գերբայի հետ միասին գրելու իրենց (իր և Ստ. Նազարյանի) սկզբունքին, Մ. Նալբանդյանը ոչ միայն չէր հրաժարվում նրանից, այլև ամեն կերպ արդարացնում ու պաշտպանում էր այն՝ եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր... ձեւերը համարելով բայական վերջավորություններ (գրաբարի նման) և գտնում, որ «...ա... Բայերը շպիտի բաժան գրվին իրենց բայական վերջավորություններից, ինչպես փայլում-է, այլ անբաժան, ինչպես փայլումէ: բ) Կարելի է բաժանել, եթե, այս վերջավորությունը նախադաս է դրվում ինչպես է փայլում...»:

Ստ, իհարկե, վրիպում էր:

գ) Եմ բայի եղակի երրորդ զեմքի ժխտական և հաստատական ձեւերը կազմելու համար «Հյուսիսափայլը» ամբողջությամբ, օգտագործում է բոլոր զեպքերում է բայի ձեւերը (երրորդ զեմքում՝ է, չէ): Օրինակ՝ առանց հիմքի չէ (ԵլԺ, 2, 143), այդպես չէ (ն.տ., 144), չէ ցուցանում մեզ (ԵլԺ, 5, 334), չէ կարող երկիլ (ԵլԺ, 2, 304), ձեզ հայտնի չէ (Հ, 5, 379), չէ ճանաշում (Հ, 8, 153), հարկավոր չէ (Հ, 10, 338); խոսում է (Հ, 7, 81), գնացել է, բռնել է (ն.տ., 73), «Զէ շինել նա այր ավագակների» (Հ, 5, 379) և այլն: Նույն շրջանի «Մեղմում» նման զեպքերում, մանավանդ ժխտականի կազմության ժամանակ, գերակշռությունը արվում է չի ժողովրդական ձեխն: Օրինակ՝ լույս չի տա, ծափ չի տա, չի կանաչիլ (ՄՀ, 58, 1), չի իմանալ

(ն.ա., 96), կրթություն չի ստանալ, չի դանիլ (ն.ա., 111): Սա մեծագույն առավելություն կարելի էր համարել, եթե դրա հետ միասին «Մեղուն» բղականի և հարկադրականի ձևերը ևս նույն չփով չկազմեր (բարբառ). օրինակ՝ չի առնենք մեր ձեռք (ն.ա.), չի պետք է բարկանալ (ն.ա., 52) և այլն:

1858—66 թթ. Մ. Նալբանդյանը ժխտական է կազմում նաև արեմտաճայ գրական լեզվին (սրոշ գեղքերում նաև գրաբարին) հատուկ մի քանի եղանակներով, սրոնցից նշելի են՝

1) Ոչինչ ժխտական գերանվան միջոցով (1861—66)¹: Օրինակ՝ «Իսկապես որ ոչինչ ունիմ» (ՆԲԸ, 415), «Թուլրիան իր պարտքերի հանդեպ ոչինչ ունի ցուց տալու» (ն.ա., 428), էլ ոչինչ մնաց (ն.ա., 507), «Մենք թեև ոչինչ զիտենքր...» (ն.ա., 479), «Մենք ոչինչ զիտենք» (ն.ա., 489) և այլն: Հմմտ: Ոչինչ չգտանք, ոչինչ չի հառաջանա (Ելժ, 2, 407):

2) Ոչ բարի միջոցով (ոչ, ոչ մի անգամ): Օրինակ՝ «... եթե ոչ պիտի սպանեին խսկուն...»² (ՆԲԸ, 495), «Բայց և ոչ մի անգամ լսում է այդ ուղիղ ճանփի մասին» (Ելժ, 2, 397):

Նշենք նաև, որ կրկնված ոչ օգտագործելու դեպքում Նալբանդյանը նախադասության ստորոգյալը հաստատական ձևով է կազմում և ոչ թե ժխտական: Օրինակ՝ «Բայց ոչ ձեի մտածությունը և ոչ գեղքերի դասակարգությունը կարող են... համեմատվիլ նորա... բնական նկարագրությանցը» (ՆԲԸ, 482), «... Ոչ մի խոսք ավելցնում է և ոչ մի խոսք պակասեցնում...» (ն.ա., 578) և այլն:

Առանձին գեղքերում Մ. Նալբանդյանը ոչ-ը զնում է բայց հետո, որով և բարբառային ոճ է ստացվում: Օրինակ՝ «Երկար ժամանակ կտրվեց ոչ նորա վնասակար աղղեցությունը» (ն.ա., 493):

3) Ոչ երբեք և ոչ անգամ կապակցությունների միջոցով:

Օրինակ՝

ա) «Ոչ երբեք կարողացան... խոտորեցնել մեզ» (ն.ա., 367), և Այս դատապարտության հետ ոչ երբեք հարակից է» (ն.ա.,

¹ Մ. Նալբանդյանի լեզվում 1858—60 թթ. գերազանցապես կրկնակի ժխտում է օգտագործվում, մեկը՝ ոչինչ բարի միջոցով, մյուսը՝ օժանդակ բարի ժխտական ձևերով, որը և արենեաճայ աշխարհաբարի համար սովորական է: Օրինակ՝ «Ոչինչ հարդ ու արժանակորություն շնոնք» (Հ, 7, 75), «Ոչինչ մարզու ծառա չի» (ն. ա., 78), «Ոչինչ արտաքին ու կոսիտ գորություն հանդիս շնին այս պատերազմի մեջ» (Հ, 10, 307), «Հայաստանը ոչինչ իրավունք շնոնք մեղանից բան պահանջելու» (ն. ա., 341), «Ոչինչ հարակցություն շնոնք» (Հ, 59, 8, 650). Հմմտ: Ոչինչ ունին ընդունած (Հ, 10, 312ն), «Ոչինչ բաժին տալ հասարակաց օգտի համար» (Հ, 60, 436ն):

² «Իսկ մյուս ներքին գործարանների կաթվածահարությունը, եթե ոչ պիտի սպանեին խսկուն, պիտի անշուշտ պատճառ դառնային ուղեղի և չլերի ուղիղ պատունատության խանգարվելու» (ՆԲԸ, 595):

373), «Ոչ երբեք պիտի արժանանանք այս երանության» (ն.ա., 374), «Ոչ երբեք ներած է» (ն.ա., 376), «Ոչ երբեք զանցառու եղանք» (ն.ա., 388):

բ) «Ոչ անգամ վշտացանք և ոչ անգամ վիրավորվեցանք» (ն.ա., 367), «Մեր ամբաստանված նամակի մեջ և ոչ անգամ մի բառ կա ժ. ժ. Ռուսովից» (ն.ա., 369), «Ոչ անգամ կամի մտածել» (ն.ա., 433), «Թյուրքիո մեջ և ոչ անգամ երազելի է այն ապահովությունը» (ն.ա., 439):

4) Առանձին տեղ են գրավում ոչ և բնավ բառերի հարադրության միջոցով ստեղծված ժխտական ձևերը: Օրինակ՝ «Ոչ բնավ հանդիպում են միշտանց» (ն.ա., 374), «Ոչ բնավ պիտի ընդունինք» (ն.ա., 373), «Դու... ոչ բնավ գերմանացի ես» (ն.ա., 557), «Ոչ բնավ կարելի է բույլ տալ» (ն.ա., 508), «Ոչ բնավ որպես մի սխալված մարդ մերժվեցավ» (թ., 4) և այլն:

5) Համեմատաբար փոքրաթիվ են ոչ ոք ժխտական գերանվան միջոցով կազմվածները: Օրինակ՝ «Ոչ ոք իրավունք ունի... բերան բանալ» (թ., 51), «Ոչ ոք կարող է մարդու պատիվը արատավորել» (Հ, 64, 3, 171):

6) Մասնակի դեպքերում ոչ բառը հարկադրվում է իսկ-ի հետ՝ «Ոչ իսկ տեսել է նորանց» (թ., 42):

Նշված եղանակներից ժխտական կազմելու համար ամենից շատ Մ. Նալբանդյանը օգտագործում է ոչինչ-ն ու ոչ բնավ-ը:

Զի կարելի շտեսնել, որ այս ուղղությամբ ես, հատկապես 1861—66 թթ., Մ. Նալբանդյանը երկու գրական լեզուների մերձեցման փորձեր էր կատարում:

3. Քննարկվող շրջանում առաջին խոնարհման բայերի անորոշ գերբայի ներգործական ձևերը հիմնականում ունեն եւ ձայնավորը: Ե վերջատառ ունեն նաև նշված բայերի բղձական, պայմանական ու հարկադրական ապառնի ժամանակների եղակի երրորդ զմբքերը: Օրինակ՝ կանչել, տեսանել (Ելժ, 2, 302), քարոզել (ն.ա., 304), շխնդրել և չվկայել (ն.ա., 305), լուծել (ամուսնությունը), ամուսնացնել, ծեծել, մատոնել (Ելժ, 370), պաշտպանել (ն.ա., 371), պիտի ընդունել (ն.ա., 372) և այլն:

Կրավորական սեռի, ինչպես և կրավորական կերպի բայերի դեպքում՝ նշված բոլոր տեղերում եւն փոխարինվում է ի-ով: Օրինակ՝ շայրպիլ (Հ, 8, 153), բացվիլ, հայտնագործվիլ (Հ, 10, 303), պիտի կատարելազործվին (ն.ա., 310), պապանձվին (Ելժ, 2, 293), կովիլ, բռնվիլ (Ելժ, 369), բամբասվիլ, հայհոյվիլ (ն.ա., 370), բաժանվիլ (ն.ա., 374), չհափշտակվին, չգողացվին, չհալվին (ն.ա., 377), պիտի բնակվիլ (ն.ա., 410):

1861—62 թթ., 1858—60 թթ. համեմատությամբ, մեծ թիվ են կազմում այն բայերը, որոնք, գրաբարի ազդեցությամբ, անկախ իրենց սեռից, կրավորակերպ են խոնարհվում: Այս բայերի թիվը առանձնապես շատ է «Երկրագործությունում»: Օրինակ՝ չունինք¹, ունիմ² (ն.տ., 368), կամին (ն.տ., 406), պիտի պարծի (ն.տ., 379), պիտի պատերազմին (ն.տ., 404), պիտի հարի (ն.տ.), նայինք (ն.տ., 406), պիտի ապրին³ (ն.տ., 415), պիտի երեխ (ն.տ., 428), երջանիկ համարինք մեզ (ն.տ., 369), հետեխ (ն.տ., 379), հանդիպի (ն.տ., 411), աշխատիլ (ն.տ., 380), խոսիլ⁴ (ն.տ., 425), արծեքի ընկնիլը (ն.տ.), հանդիպին (ն.տ., 431) և այլն:

1863—66 թթ. ներգործական բայերի համար որպես լծորդ կամ վերջավորություն առաջին խոնարհման բայերի համար են է օգտագործվում, իսկ կրավորականների համար՝ ին, այսինքն «Հյուսիսափայլի» համակարգը հիմնականում պահպանվում է. օրինակ՝ կրավ՝ փառավորիլը (Ելժ, 2, 407), գրվիլը (ն.տ., 400), պիտի պաշտպանվին (ՆԸԵ, 555), գարկվիլ (ն.տ., 568), կապվիլ (ն.տ., 480), գատապարտվիլը (ն.տ., 492), հավաքվիլը (ն.տ., 529), աղատվիլ (թ, 10), նախատվիլը, հալածվիլը (ն.տ., 21) և այլն: Ներգ. գտնե, ծածկե, ասել (ն.տ., 490), տարագրելը, մատնելը (ն.տ., 514) և այլն:

Սակայն, ի խախտումն այս համակարգի, 1863—66 թթ. առավել շատ, քան 1858—62 թթ., բազմաթիվ ներգործական ու շեղոր սեռի բայեր նշված գեպքերում ի են ունենում, կամ լավագույն գեպքում մերթ՝ և և մերթ էլ՝ ի, իսկ որոշ կրավորական բայեր՝ ե՛: Օրինակ՝ զործի ծերակույտ տրվելը (Ելժ, 4, 285), նամակներիս ստացվելը (ն.տ., 286), երեխ (ՆԸԵ, 505), ծլիլ, ծաղկվիլ, լինին³ (ն.տ., 502), բայց և՝ լինելը (ն.տ., 579), գովիլ (Ելժ, 2, 406), ընկնիլը (ՆԸԵ, 490), վրդովիլ (ն.տ., 519), փախլ (ն.տ., 532), ողորմիլ (Ելժ, 2, 402), թող... ընդունի (ՆԸԵ, 480), չեն երկրացիլ (ն.տ., 491), չի պատահիլ (Ելժ, 4, 306), չի կորչի (Ելժ, 2, 400), չի նայլ (ՆԸԵ, 582) և այլն:

Բերված օրինակները ցույց են տալիս, որ բազմաթիվ բայերը շեղվում են կրավորականի կառուցման Մ. Նալբանդյանի համար ընդունելի համակարգից գրաբարի ազդեցության տակ:

4. Մ. Նալբանդյանի լեզվում 1858 թ. պատճառական բայերը հիմնականում կազմվում են գրաբարյան հիմքով՝ ուց-ան-ել ձևով: Օրինակ՝ ծանոթացուցել էին (Հ, 1, 70), գարձուցանելով (Հ, 1,

¹ Նախորդ շրջանում ևս սրանք սովորական են:

² -վ՝ ածանցի առկայությամբ:

³ Հմմտ.՝ նաև՝ «Ուշագրություն լինվում է լեզվի մշակությանը» (ՆԸԵ, 591):

73), զարթուցանում է (ն.ա., 74), ապացուցանում է (ն.ա., 75), ամրացուց (Հ, 2, 149), թագուցանել, կացուցանելով (ն.ա., 147), զորացուց, շտափեցուց (ն.ա., 151): Հմմտ՝ հավատացրած լինեին (Հ, 1, 73):

Աստիճանաբար պատճառականի կազմության աշխարհաբարյան ձևերը սկսում են շատանալ, սակայն նրանք չնշին տեղ են գրավում գրաբարյան ձևերի կողքին: Օրինակ՝ շդրձուցանելով (Հ, 4, 344), չեիք աղդացուցանելու (Հ, 5, 380), ոչնացուցած է երևում (ն.ա., 384), ծնուցանելու համար (ն.ա., 381), մերկացուցանել ամոթը (Հ, 6, 465), չքացուց (ն.ա., 472), վավերացուց (ն.ա., 463), խեղացուց (ն.ա., 468), և սրանց կողքին՝ հասկացնում էին (ն.ա., 463), հավանեցնում են (ն.ա., 474):¹

Ստ. Նազարյանը ևս առանձին բացառություններով նկարագրվող շրջանում օգտագործում է պատճառական բայերի գրաբարյան ձևերը: Օրինակ՝ դարձուցանելով, լցուցել (Հ, 1, 2), լցուցանելով, մառուցանել (ն.ա., 34), ուսուցանել (Հ, 2, 144), վերացուցանել, ծնուցաներ (Հ, 4, 287), հառաջացուցին, աճեցուցանել (ն.ա., 266), եղրակացուցանել (Հ, 6, 509), բայց և մոռեցնել (Հ, 1, 34):

«Մեղու Հայաստանին» գնում է ինչպես գրաբարյան, այնպես էլ աշխարհաբարյան ձևերը: Սակայն, ինչպես գրաբարյան միուս ձևերը, գրաբարաձև պատճառականները ևս առավել շատ օգտագործում են գրաբարագետ հեղինակների հոդվածներում (օրինակ՝ Խաչակրանի, Առ. Արարատյանի, Մանդինյանի և այլոց):

Օրինակ՝ գերազանցուցանելը (աղնվացնել), աճեցուցանել, երշանկացուցանենք (ՄՀ, 58, 52), մատուցանել, պատշաճեցուցանենք, կառուցանելո (ն.ա., 111), բայց և զմայլացնելով և ուրախացնելով (ն.ա., 4), արձացնում էր (ն.ա., 95), հարմարեցնենք (ն.ա., 111):

Նույն շրջանի «Ճռաքաղը» գերազառում է օգտագործել գրաբարյան ձևերը, ինչպես՝ շպտացուցանել, հավելացուցանել (ՃՌ, 58, 40):

Մ. Նալբանդյանի «Հյուսիսափայլում» ապագրված աշխատություններում նման բայերի աշխարհաբարյան ձևերը ամսատետրակից ամսատետրակ ավելանում են: Այսպիս, եթե «Հյուսիսափայլի» 1958 թ. 7-րդ և 8-րդ ամսատետրակներում ունենք՝ վերջացուցել է (Հ, 7; 73), «Լսելի կը կացուցանե (ն.ա., 72), «Քաղցր լցուցանելու համար... մեռուցանում է խղճմանքը» (Հ, 8, 152), ապա 10-րդ տետրում նկատում ենք պատճառականների հիմքի աշխարհաբարյան կառուցվածքի զգալի ավելացում: Օրինակ՝ ծառայեցնում են

¹ Նամակներում ունենք և գրաբարյան, և աշխարհաբարյան ձևեր (հասցուցինք—Ելք, 4, 48, խավարեցնելով—ն. ա., 49):

(Հ, 10, 298), բարձրացնում են, զարքեցնում են (ն.տ., 299), բայց և ուղղեցուցած է (Հ, 10, 307), մատուցանելով (ն.տ., 341), ապացուցանում է (ն.տ.), դարձուցանել (ն.տ., 338) և այլն¹:

Մ. Նալբանդյանի՝ 1859—62 թթ. աշխատություններում շարունակվում է պատճառականների գրաբարյան հիմքի գերակշիռ գործածությունը աշխարհաբարյան աստիճանաբար ավելացող ձևերի կողքին: Օրինակ՝ օգնություն հասուցանելու (Հ, 59, 5, 379), ապացուցանելու համար (Հ, 59, 8, 650), կառուցանել (Հ, 59, 11, 902), թարգուցանելով (ն.տ., 909), հարցուցին (ն.տ., 917). դարձուցանում ենք (ն.թ, 371), հարուցանող (ն.տ., 374), ապացուցանելու (ն.տ., 378), իջուցանելուց հետո (ն.տ., 380), աճեցուց (ն.տ., 420), նստեցուցիր (ն.տ., 424), անցուցանե (ն.տ., 430), կը կացուցանես (Հ, 62, 5, 240). բայց և զրացնում էր (Հ, 59, 10, 818), բարձրացնում է (ն.թ, 373), դարձնում ենք (ն.տ., 380), տարակուսեցնում է (ն.տ., 385), անեցնում են (ն.տ., 388), կամին հավատացնել (ն.տ., 406), լցնել (ն.տ., 409), մեղքնել (ն.տ., 409), ներս կիսուցնե (ն.տ., 441) և այլն. Հմմտ.² հասկացնել (Ելժ, 4, 63):

1860 թ. հետո գրաբարյան ձևով պատճառական կազմող բառերի թիվը սահմանափակվում է, սակայն, բնդանուր հաշվով, գրաբարածել պատճառական կազմած բառերի թիվը գգալի է, շատ ավելի, քան աշխարհաբարյան ձևերինը: Բանն այն է, որ գրաբարածել պատճառական են կազմում շատ գործածական այնպիսի բառեր, ինչպիս՝ մատուցել, անցնել, դառնալ, անել, լցնել, մեղքնել, ապացուցել և այլն: Օրինակ՝ մատուցանենք (Ելժ, 2, 293), ապացուցանում են (ն.տ., 303), արժանավոր կացուցանել (ն.տ., 309), անցուցանել (Հ, 60, 5, 382), դարձուցած չենք, աճեցուցած (ն.տ., 385) և այլն: Հմմտ.² ապացուցանելու համար (Հ, 10, 311ն), դարձուցանվի Հ, 9, 315), առաջադիմ կացուցանել (Հ, 8, 311ա), մեղքացնել (Հ, 59, 11ն), կը հատուցանե (Հ, 60, 1, 79ա), լցուցանում էին (Հ, 60, 6, 401ա), ապացուցանում էին (ն.տ., 404ա):

Առ. Նազարյանի լեզվում պատճառականների աշխարհաբարյան ձևերի քանակական ավելացում 1858—60 թթ. չի նկատվում: Այդ ձևերը նրա համար շարունակում են մնալ բացառություններ, ինչպիս՝ հնչեցնել (Հ, 10, 312ն), ծանորացնելով (Հ, 10, 334ն), զգուշացնում էր (Հ, 60, 1, 2ն):

Առավել շատ (որոշ հոդվածներում շատ նույնիսկ Մ. Նալ-

¹ Վիճակը նույնն է նաև նամակներում (խաղը գործածություն, գրաբարյան ձևերի մեծ գերակշռությամբ): Օրինակ՝ հատուցանում է (Ելժ, 4, 57) մատուցանելուց, առանց թարուցանելու (ն. տ., 53), կապացուցանենք (ն. տ., 48), բայց և աչք խավարեցնելով (ն. տ., 49):

բանդյանից) աշխարհաբարյան պատճառականներ են կազմում «Հյուսիսափայլի» առանձին թղթակիցներ: Օրինակ՝ խոնարհեցնելով (Հ, 59, 1, 19ա), ուսեցնում է (Հ, 60, 4, 264ա), ցամաքեցնել (Հ, 60, 6, 401ա), հասկացնել (Հ, 60, 12, 492ա) և այլն:

Բերված փաստերը հիմք են տալիս ասելու, որ պատճառական բայերի գրաբարյան և աշխարհաբարյան՝ զույգ ձևերի պայքարը 1858—60 թթ. վճռականաբար որևէ մեկի օգտին չլուծվեց: «Հյուսիսափայլում» աշխարհաբարածե պատճառականների թվի ավելացումը չհանգեցրեց 1858 թ. համակարգի ժիւմանը:

Համեմատության համար նշենք, որ «Մեղուն», «Ճռաբաղը» և «Կոռունկը» խառը կերպով օգտագործում են նշված իրողության և գրաբարյան, և աշխարհաբարյան ձևերը: Օրինակ՝ հառաջադիմ կացուցանեն (ՄՀ, 59, 134), պիտո է լցուցանել (ն.տ., 134), ապացուցանելու համար (ՄՀ, 60, 42), պետք է կորուսանենք (ն.տ., 99), ապահովացուցել էին (ԿՌ, 60, 5). բայց և «Զնա ոշնչ չէ զարմացընում» (ՃՌ, 59, 182), հասցընեն (ն.տ., 184) և այլն:

Մ. Նալբանդյանի նույնիսկ այնպիսի աշխատություններում, ինչպես «Կորիտիկան» ու Փարպեցու «Թղթի» թարգմանությունն է (ժանոթագրություններով հանդերձ), առկա են նշված բայերի գրաբարյան հիմքերով գործածության բաղմաթիվ օրինակներ: Օրինակ՝ կորուցինք (ն.տ., 498), անորոշ գերրայ՝ կորուսանել, նստեցուցած, մերկացուցած (ն.տ., 494)—ան. դ.՝ նստեցուցանել, մերկացուցանել, մոռացուցին (ն.տ., 500), ան. դ.՝ մոռացուցանել, շատ և զգվեցուցել (ն.տ., 502), ան. դ.՝ զգվեցուցանել, հարցուցի (ՆԲԸ, 503)— ան. դ.՝ հարցուցանել, կանգնեցուցին, ոշնչացուց (ՆԲԸ, 516)— ան. դ.՝ կանգնեցուցանել, ոշնչացուցանել, այնտեղ էր հասուցած (ն.տ., 589)— ան. դ.՝ հասուցանել, հող դարձուց նորան (Թ, 6)— ան. դ.՝ դարձուցանել, բեղ մատուցանենք (ն.տ., 17), բորոտեցուց (ԵԼԺ, 2, 234)— ան. դ.՝ բորոտեցուցանել, և այն և այլն:

Նման ձևերն օգտագործվում են նույնիսկ «Բերդի հիշատակարանում»: Օրինակ՝ վերջացուցի, անցուցի (ԵԼԺ, 4, 294)— ան. դ.՝ վերջացուցանել, անցուցանել, դարձուցի (ն.տ., 287) և այլն:

Այս, իշարկե, չի նշանակում, թէ 1863—66 թթ. նշված ձևերին է գերակշռություն տրվել: Ո՞ւ, այս բայերի հիմքի աշխարհաբարյան ձևերը Մ. Նալբանդյանի 1863—66 թթ. կողմից նախընտրելի են համարվում: Սակայն, չի կարելի չնշել միաժամանակ, որ նախորդ էտապի համեմատությամբ մեծ տեղ տալով նշված բայերի աշխարհաբարյան հիմքին՝ Մ. Նալբանդյանը գեն չի նետում գրաբարյանները, լիովին չի համարվում նրանցից, այլ միայն սկսում է գրա-

բարյան և աշխարհաբարյան ձևերի միասին, խառը գործածություն՝ աշխարհաբարյանների դիրակշռությամբ:

Առանձին աշխատություններում («Ազգային թշրիմական պատճենահանություն») պատճառական բայերի գրաբարյան ձևերը համեմատաբար լայն կիրառություն ունեն: Օրինակ՝ ապացուցանելու համար (Եկթ., 2, 404), ապացուցանելու, առաջացուցած (ՆԸԵ, 553), սրբացուցած (ն.տ., 555), հատուցանե (ն.տ., 558), անցուց (ն.տ., 569), հաստուց (ն.տ., 571), մանրացուց-ական (ն.տ., 571), վավերացուցած չէ (Հ, 64, 4, 160), բորոտեցուց (Եկթ., 3, 234) և այլն: Բայց և առանց... բայցնելու (Եկթ., 2, 397), կորցնելու չէին (ն.տ., 402), հասկացնում է, արդարացնում է (ՆԸԵ, 553), ապրեցնել (ն.տ., 554), մեղքնել (ն.տ., 568), կանգնեցնել (Հ, 64, 3, 160), հանդգնեցնելով (Եկթ., 3, 234):

5. Աշխարհաբարում -ել վերջավորությամբ չեղոք և կրավորական բայերը՝ անցյալ կատարյալում, «Հյուսիսափայլի» հիմնագրման շրջանում, փոքր բացառություններով, ունեն հետևյալ վերջավորությունները՝ -այ, -ար, -աւ, -ան, -աք, -ան: Օրինակ՝ չեղոք սեռի՝ պատահեցավ (Հ, 1, 71), հանդիպեցավ (Հ, 2, 145), մրսեցավ (ն.տ., 151), շարժվեցավ (ն.տ., 152), երևեցավ (Հ, 4, 344): Կրավ-սեռի՝ տպիցեցավ (Հ, 1, 70), ուղարկվեցավ (Հ, 2, 148), բաժանվեցանե (ն.տ., 152), վճռվեցան (Հ, 5, 377), տեսվեցան (ն.տ., 408), մեղագրվեցավ (ն.տ., 401), կազմվեցան (Հ, 6, 463)¹ Հմմտ՝ եղրափակվեցավ (Հ, 1, 59ն), հրաժարվեցան, պատժվեցան, սպանվեցան, պարտավորվեցան (Հ, 4, 269ն), նվազեցավ, սառեցավ (ն.տ., 274ն), վրդռվեցավ (Հ, 4, 280ն), սկսեցավ (ՄՀ, 58, 8), դատապարտեցավ (ն.տ., 89), հաջողեցավ (ն.տ., 6), համարձակեցավ (ն.տ., 90), պատահեցավ (ն.տ., 96) և այլն:

Սակայն, պետք է նկատել, որ եթե «Հյուսիսափայլում»՝ բերված օրինակներում նշված վերջավորությունը – օ վերջավորության արժեք ունի, ապա «Մեղվում» դրանք օգտագործվում են որպես կրավորակերտ ածանց: Եթու «Հյուսիսափայլը» գրում էր հանդիպեցավ կամ կազմվեցան, -աւ կամ -ան վերջավորությունների օգնությամբ ինչ-որ նոր բան չէր ավելացնում հանդիպեց (չեղոք սեռ), կամ կազմվեց (կրավորական սեռ) բայերի վրա, որը այդ բայերն առանց նշված վերջավորությունների չկարողանային արտահայտել: -Այ, -ար, -աւ, ան, -աք, -ան վերջավորությունները այս շրջանի «Հյուսիսափայլում» հանդես են զալիս միայն և միայն որպես հին գրական լեզվի՝ գրաբարի ձևական աղդեցություններ: Մինչդեռ «Մեղվում» դրանք, նույնպես գրաբարյան աղդեցություն լինելով՝ մեծավ

1 Հմմտ՝ ընտրվեցավ (Եկթ., 4, 49):

մասամբ դուրս են մղում կրավորական սեռի կազմության աշխարհաբարյան միակ միջոցը՝ վ ածանցը, գրանովի իսկ նրա գերը իրենց վրա վերցնելով, այսինքն, գրաբարից բերում են նաև իրենց իմաստը:

1858—62 թթ. ավելի ընդհանրանում ու նորանոր օրինակներ են ընդգրկում առաջին խոնարհման բայերի անցյալ կատարյալ ժամանակի՝ այ, առ, աւ, անք, աք, ան վերչավորությունները՝ օգտագործելով և կրավորական, և ներգործական, և չեղոք սեռի բայերի հետ:

Օրինակ՝ կրավորական. կատարվեցավ, ստիպվեցա (Հ, 7, 73), գտանվեցան (Հ, 9, 246), ուղարկվեցան (Հ, 10, 342), բամբասվեցավ, վիրավորվեցան (ՆԸԵ, 367), արսորվեցան, հալածվեցան, չշաշտվեցավ (ն.ա., 379), կիսվեցավ, բառորդվեցավ, բաժնվեցավ (ն.ա., 456), հարկադրվեցավ (Հ, 11, 417), խոնարհվեցավ (Հ, 59, 10, 814), բացահայտվեցավ (ԵԼԺ, 2, 293), համոզվեցանք (ն.ա., 295), չպաշտվեցան, կրակրվեցան, գտանվեցան (Հ, 60, 5, 382). չեղոք. տիրեցա (Հ, 7, 73), պատահեցան (Հ, 10, 342), սիսալվեցավ (Հ, 11, 417), երկարեցավ (Հ, 59, 2, 166), դադարեցավ (Հ, 59, 8, 649), պատահեցավ (ն.ա., 651), հրաժարվեցավ (Հ, 59, 10, 813), շրջեցան (ն.ա., 904), պառկեցա (ԵԼԺ, 4, 59), երևեցաք, հաճեցավ (ԵԼԺ, 2, 295), հանդգնեցավ (ն.ա., 303), ճգնեցան, քրտնեցան (ն.ա., 307), հանդիպեցավ (ՆԸԵ, 367), հետեւեցավ (ն.ա.), պատահեցավ (ն.ա., 378), դադարեցավ (ն.ա., 406). ներգործական. խոսեցավ (ԵԼԺ, 56, 4), դիշանք (ՆԸԵ, 368), խոսեցանք (ն.ա., 455, Հ, 62, 5, 236):

Հմմտ.՝ լցվեցավ (Հ, 60, 1, 2ն), չերեւեցավ, փաթաթվեցավ (Հ, 60, 4, 263ա), ուղևորվեցավ (Հ, 60, 6, 403ա), պատահեցավ, ժպտեցավ (ն.ա., 406ա), հնազանդեցավ, զոհվեցավ (Հ, 60, 10, 291ա), գործվեցավ (ՄՀ, 59, 10), սպանվեցավ (ն.ա., 11), բնակվեցավ (ՄՀ, 242) և այլն:

1863—66 թթ. շարունակվում է առաջին խոնարհման կրավորական, չեղոք և որոշ, սահմանափակ քանակի, ներգործական բայերի (խոսեցանք—ՆԸԵ, 486, 580) անցյալ կատարյալում պահպանվել այ, առ, աւ, անք, աք, ան վերչավորությունները:

Նշված վերչավորություններն ընդունող չեղոք բայերը կարելի է բաժանել երկու խմբի: ա) Կրավորակերպ չեղոքներ, օրինակ՝ խելագարվեցավ (ն.ա., 584), փամփուշտներ հայտնվեցան (ԵԼԺ, 4, 297), սիսալվեցավ (ՆՓ, 242): բ) Պարզ չեղոքներ, օրինակ՝ ապրեցավ (ՆԸԵ, 558), թափառեցավ (ն.ա., 563), աշխատեցավ, չպակա-

սեցան (ն.ա. 563), երեսցան (Ելժ, 4, 297), պարապեցան (Թ, 1), բվեցավ (ն.ա., 24):

Առավել մեծ թիվ են կազմում նշված վերջավորությունները բնդունող կրավորական սեռի բայերը, որոնք ևս երկու խմբի կարելի է բաժանել:

ա) Այս խմբի մեջ գնում ենք այն բայերը, որոնք ունեն և՛ նշված՝ գրաբարի կրավորակերտ վերջավորությունները, և՛ աշխարհաբարյան -վ-ն: Օրինակ՝ խառնվեցավ (Ելժ, 4, 287), շարունակեցան (ն.ա., 288), կազմվեցան (ն.ա., 307), հիշվեցան (ն.ա.), տպվեցան (Ելժ, 2, 407), կործանվեցավ (ՆԲԵ, 555), ընդունվեցան (ԿՀ, 323), տրվեցավ (ՆԲԵ, 495), կատարվեցավ (ն.ա., 510), դատապարտվեցավ (ն.ա., 515), գրգռվեցավ (Ելժ, 294), հափշտակվեցան (Հ, 64, 3, 159), դրվեցավ (ն.ա.), ծածկվեցան, սպանվեցան (Թ, 8) և այլն:

Եշված վերջավորություններով անցյալ կատարյալ կազմող բայերի հիմնական մասը այս կարգի է:

բ) 1863—66 թթ. առանձին փոքրաթիվ բայերի կրավորականը անցյալ կատարյալում առանց վ ածանցի՝ միայն -այ, -ար, -աւ, -անի, -աբ, -ան վերջավորություններով է կազմվում: Օրինակ՝ «Երկու ատամը միասին զուրս թափեցան» (ՆԲԵ, 486): Նման բայերի թիվը, համեմատած 1861—62 թթ. հետ, 63—66 թթ. զգալիորեն նվազել է:

6. Հարկադրականի եղանակից. պիտոն է, պետք է միադիմի բայերի օգտագործման առանձնահատկությունները: «Հյուսիսափայլի» հիմնադրման շրջանում որպես Հարկադրականի եղանակից հիմնականում օգտագործվում է պիտոն է բառը և՛ հաստատական, և՛ ժիտական խոնարհման գեպքում (չէ պիտոն, պիտոն չէ): Պիտոն¹ և պետք է բառերը (առանձնապես երկրորդը) «Հյուսիսափայլի» հատկապես առաջին և երկրորդ ամսատետրակներում օգտագործվում են որպես բացառություններ, բացարձակ կերպով գերակշռող պիտոն է ձեկի կողքին: Օրինակ՝ պիտոն է տեսանե (Հ, 1, 71), պիտոն է ձեռնոտութիւնը (ն.ա., 80), պիտոն է դառնանք (Հ, 2, 147), պիտոն է համարվինք (ն.ա., 147), պիտոն է... հավատային (ն.ա., 150). Հմմտ՝ պիտոն էր հասկանալ (Հ, 1, 76), պիտոն է... լինել (Հ, 2, 143):

Այս համակարգը, սակայն, արդեն 1858 թ. վերջում Մ. Նալբանդյանի և թիշտավելի ուշ Ստ. Նազարյանի լեզվում որոշակի փոփոխություններ է կրում: Բանն այն է, որ դեռևս գերակշռող պիտոն է ձեկի կողքին սկսվում է մեծ շափերով օգտագործվել նաև պիտի եղա-

¹ Խոսքը պիտի բայի մասին չէ, որը հաճախ է պատահում: Օրինակ՝ «Որբան աշխատություն պիտի մեր Ազգին հայկական խոսքը վերակենցաղելու» (ԹՀ, 9):

նակիշը (բայց ոչ՝ պետք է): Օրինակ՝ պիտոն է... խոստովանենք (Հ, 5, 381), պիտոն է... անցաներ (Հ, 6, 482). Հմմտ՝ պիտոն է գործ գնել (Ն.տ., 499), չէ պիտոն մոռանալ (Ն.տ., 484), բայց և՝ պիտի լուծաներ (Ն.տ., 483): Օրոշ գեղքերում պիտոն է և պիտի ձևերը հանդես են գալիս միւնուն նախադասության մեջ, որը կատարվում է գեռևս որեւէ մեկին գերակշռություն տալը որոշած վիճելու, կամ էլ, որ ավելի հավանական է, ոճական միօրինակություն շատեղծելու համար: Օրինակ՝ «Պիտոն է լուսավորե և հարստացնե յուր բանականությունը, պիտոն է ուսանի ճանաշել... յուր ընկերը..., նա պիտի սիրե սորանց բոլորին» (Հ, 6, 504):¹

Ստ. Նազարյանի, ինչպես և Հյուսիսափայլյան մյուս. Հեղինակների մոտ, պիտոն է-ն միակն է նկարագրվող շրջանում: Օրինակ՝ պիտոն էր հոգալ, պիտոն է թափվեին (Հ, 1, 2ն), պիտոն է վայրենանա, պիտոն է լիներ (Ն.տ., 5ն), պիտոն է ասել (Հ, 2, 144), պիտոն էր սնուցանել (Ն.տ., 145ն) և այլն:

«Մեղու Հայաստանին» և «Ճռաքաղը» գերադասում են Հիմնականում օգտագործել պիտի ժողովրդական ձեր: Օրինակ՝ պիտի հարմարեցնենք (ՄՀ, 58, 111), պիտի կարողանան, պիտի լինի, պիտի համարիմք (Ն.տ., 40): Հմմտ՝ նաև՝ պիտի... զգենու, պիտի դեն ձգե, պիտի մնան (ՆՔՀԴ, 6), պիտի ցնծա, պիտի իմանան (Ն.տ., 16):

Ինչքան դրական էր հարկադրականի կազմության համար մի ձև օգտագործելու «Հյուսիսափայլի» ձգտումը, ավելորդ է ասել, որ նույնքան էլ սխալ էր հարցի կոնկրետ լուծումը՝ «Հյուսիսափայլի» առաջին տարվա առաջին մի քանի ամսատեսարերում դրա համար պիտոն է գրաբարյան ձերի գերակշիռ գործածությունը: Գրական լեզվի պատմության հետագա ընթացքը ցուցաբերեց, որ այդ շրջանում հարկադրականի կազմության «Մեղու» պրակտիկան շատ ավելի ձիշտ էր:

1858 թ. երկրորդ կեսում (ավելի ճիշտ «Միսիթար Մերաստացի և Միսիթարյանք» հոգվածաշարից սկսած. «Հյուսիսափայլ», 1858 թ. նո. 5, 6 և 11) աստիճանաբար պիտոն է եղանակիչ գործածությունը սահմանափակվում է, և 1858 թ. վերջերին պիտի և պիտոն է եղանակիչները օգտագործվում են հավասարապես, որպես զուգագործ ձևեր: Օրինակ՝ պիտոն է լինի (Հ, 10, 308), պիտոն է կատարվի (Ն.տ., 310), պիտոն է բղիսի (Ն.տ., 311). Հմմտ՝ պիտոն է ասել (Ն.տ., 338), պիտոն է կորուսանել (Ն.տ., 346), պիտոն է... զուրս գալ, պիտոն է

¹ Այս նույն շրջանի նամակներում գերակշռում է պիտի-ն: Օրինակ՝ պիտի խոսներ (ԵկԺ, 4, 48), պիտի ստացվեր (Ն. տ., 53), բայց և՝ պիտոն է լիներ (Ն. տ., 45):

ճանապարհ տալ (Հ, 11, 429), պիտոն է ասել (ն.տ., 435), պիտոն է ընդունել (Հ, 7, 75), չէ պիտոն ցանկանալ (Հ, 8, 148), պիտոն է մտածել (ն.տ., 162), չէ պիտոն գաղաքացնել (Հ, 10, 302). բայց և՛ պիտի ասեն (Հ, 7, 74), պիտի պատմեմ (ն.տ., 82), պիտի զանազանվեր (Հ, 8, 162), պիտի հայտնագործվի (Հ, 9, 238), պիտի կառուցանվի (Հ, 10, 310), պիտի միսիթարեր (ն.տ., 311), պիտի լավ իմանա (ն.տ., 346) և այլն¹:

Պիտոն է և պիտի եղանակիշների հավասարաշափ կիրառությունը տևում է մինչև 1859 թ. կեսերը: Այս շրջանում ունենք՝ պիտի ասեն (Հ, 59, 1, 66), պիտոն է մնանք (ն.տ., 69), պիտի մեռանին (ն.տ., 77), պիտոն է ամրացնեին (Հ, 59, 5, 380), պիտի... կարգան, պիտոն է լիներ (ն.տ., 382). Հմմտ.² պիտի իմանալ (Հ, 59, 1, 70), չէ պիտոն... որոնել (ն.տ., 73):

1858—59 թթ. Մ. Նալբանդյանը սկսում է աստիճանաբար պիտոն (է) ձեզ օգտագործել նախ միայն ժխտական խոնարհման և գերբայի հետ հարադրելու դեպքում, իսկ նկարագրվող շրջանի վերջում (60 թ.), չնշին բացառություններով, ժխտականի կազմության մեջ: Արդեն «Հյուսիսափայլի» 1859 թ. 8-րդ ամսատետրակից սկսած Մ. Նալբանդյանի լինվում պիտի եղանակիշը բացարձակապես գերակշռում է, չնայած որ պիտոն է-ի գործածությունը գենուս միայն վերեւում նշված դեպքերով չի սահմանափակվում: Օրինակ՝ պիտի ընդհատվեր (Հ, 59, 8, 651), պիտի... ունենա (Հ, 59, 8, 654), պիտի հիշե (Հ, 59, 657), պիտի մաշն (Հ, 59, 9, 726), պիտոն է լիներ (Հ, 59, 10, 810), պիտի... երկինք (ն.տ., 908), պիտի նկարագրենը (ն.տ., 909), պիտի դուրս գա (ն.տ., 911), պիտի իմանամ (ն.տ., 912), պիտի համարվեր (ն.տ., 918), պիտոն է ճանապարհ ընկնեին (ն.տ., 915). Հմմտ.³ Պիտի... առնուլ (Հ, 59, 10, 809), պիտոն է որոնել (Հ, 59, 8, 653), չէ պիտոն մոռանալ (Հ, 59, 9, 728), պիտոն էր կատարել (ն.տ., 748):

Պիտոն է եղանակիշի գուրս մղման զուգընթաց, պիտի-ն սկսում է օգտագործվել պիտոն է-ի փոխարեն նաև անորոշ դերբայի հետ:

Այսպես, 1860 թ. ունենք՝ պիտի գտանենք (Ելժ, 2, 295), պիտի հառաջանա (ն.տ., 303), պիտի առնունենք, պիտի մերժենենք, պիտի բնենենք (ն.տ., 304), պիտի հակառակի (ն.տ., 306), պիտի երկի

¹ Նույն շրջանի նամակներում հանդիպում են և՛ պիտոն է, և՛ պիտի և՛, Մ. Նալբանդյանի մոտ ըստ հանրապես բացառիկ դեպքերում օգտագործվող, պեսան (է) եղանակիշները: Օրինակ՝ պիտոն է ներողամիտ լինենք (Ելժ, 4, 48), պիտի օգնե (ն. տ., 49), պիտի մնա (ն. տ., 50), չէ պիտոն գաղարի (ն. տ., 52), պիտի պաշտպանենք (ն. տ.), պիտի կենզանանա (ն. տ., 53), պիտի է... իմանան (ն. տ., 66): Հմմտ.² միադիմի բայերի օգտագործումը՝ չէ պիտոն թույլ տալ (ն. տ., 50), պիտոն էր մակարեւ (ն. տ., 53), պիտի իմանալ (ն. տ., 55), պիտոն է... կպչել գործին (ն. տ., 56) և այլն:

(Հ, 60, 5, 378), պիտի լսվեր (ն.տ., 379), պիտի ծառայեր, պիտի օգնե (ն.տ., 388), պիտի եւեկի, պիտի լիճի (Հ, 60, 7, 484)¹. բայց և՝ պիտի հավատալ (Ելժ, 2, 293), չէ պիտո... լինեին (ն.տ., 307), չէ պիտո մոռանա (ն.տ., 309), պիտո է զարքեցնել (Հ, 60, 384), պիտո է շատանալ (Հ, 60, 5, 389), պիտո է մտածել (ն.տ., 392), որոնք հանդես են զալիս որպես բացառություններ, առաջին ձեր (պիտի հավատալ) հետզետեկ տարածվելու, ընդհանրանալու տեսդենցով, մյուսները՝ ժխտականները՝ նվազելու:

Այսպիսով, 1858—60 թթ. Մ. Նալբանդյանի մոտ որպես Յարկադրականի եղանակիշներ օգտագործվում են պիտի, պիտո (է) և պիտք (է) բառերը՝ վերջինս մասնավոր գեպբերում։ Այդ զույգ ձերի պայքարը վճռվում է պիտի ձեր օգտին։ պիտո (է) եղանակիշը սկսվում է նկարագրվող շրջանի վերջում դրվել միայն ժխտական խոնարհման դեպքում։

Մինույն շրջանում էլ «Հյուսիսափալլում» (Ստ. Նազարյան և մյուսներ) սկսվում է պիտո (է), պիտի և պիտք (է) եղանակիշների խառը գործածությունը, պիտո (է) ձեր գերակշռությամբ։ Օրինակ՝ պիտի վարդապետեին (Հ, 10, 312ն), պիտի... դառնա (ն.տ., 313ն), պիտի գործ դրվին (Հ, 7, 10ա), պիտի հաստատե (Հ, 59, 11, 895ն), պիտի լինինը (Հ, 59, 12, 980ն), պիտի համարվին (Հ, 60, 12, 407ա). բայց և՝ պիտո է լինի (Հ, 10, 315ն), պիտո է մնա (Հ, 59, 11, 895ն), պիտո-է ոտք կոխի (Հ, 60, 1, 1ն), պիտո է հարծակվեին, պիտո է կատարեր (Հ, 60, 1, 2ն), պիտո է լիներ (Հ, 60, 12, 427ն). Հմմտ.² պիտո է որոշել (Հ, 7, 12ա), պիտո էր... տալ (Հ, 59, 5, 362ն), պիտո չէ... թողով (ն.տ., 362ն), պիտո է ասել (Հ, 59, 11, 893ն), չէ պիտո մոռանալ (ն.տ., 897ն), պիտո էր փոխել (Հ, 60, 10, 288ա):

Որպես «Հյուսիսափալլում» Ստ. Նազարյանի և այլ հեղինակների լեզվի բնորոշ առանձնահատկություն աշքի է բնկնում Յարկադրականի պիտք է եղանակիշի առատ գործածությունը դրական ու ժխտական խոնարհումների դեպքում։ Օրինակ՝ պիտք է լինի (Հ, 59, 1, 17ա, Հ, 60, 12, 430ն), պիտք է տիրապետեին (ն.տ., 434ն), չպիտք է մնա (ն.տ., 491ա), պիտք է դադարեր լինել (ն.տ., 434ն), Հմմտ.³ պիտք չէ մտածել (Հ, 7, 10ա), պիտք է իմանալ (Հ, 60, 6, 407ա), պիտք է... հասկացնել (Հ, 60, 12, 490ա):

Այստեղ առանձնահատուկ ուշադրության են արժանի ժխտականի աշխարհաբարյան մի քանի ձերը՝ չպիտի մնա, պիտք չէ, (Հմմտ.) հատկապես Ստ. Նազարյանի մոտ առկա շպիտի լինի—Հ, 60, 1, 15ն), որոնք խսկառ բացակայում են Մ. Նալբանդյանի մոտ Հյուսիսափալլան շրջանում՝ ընդհուպ մինչև 1862 թ.։

¹ Հմմտ.² պիտի ցած իշանին (Ելժ, 4, 69):

Պիտի և պետք (է) եղանակիչները խառը ձեռվ օգտագործվում են նաև «Ճռաբաղում», «Կոռոնկում» և «Մեղու Հայաստանի»-ում: Գրականության մեջ այն կարծիքն է հայտնված, որ պիտո (է) եղանակիչը միայն Ստ. Նազարյանին («Հյուսիսափառլլ») է հատուկ: Համեմատելով «Հյուսիսափառլլ» (Նազարյան) լեզուն մի կողմից և «Ճռաբաղ»-ինը ու «Մեղու Հայաստանի»-ինը մյուս, և ցույց տալով, որ վերջիններիս մեջ գործածական են հայցականի զ նախդիրը և ի նախդրով բացառականը՝ «որոնցից հեռու է նազարյանը», պրոֆ. Աճառյանը գրում է. «Եմակայն նազարյանն ունի իր նշանավոր «պիտո է» ձեր, որի փոխարեն, նույնիսկ գրաբարամոլ «Ճռաբաղ» դնում է «պիտի»¹: Հետաքրքիր է, որ պիտո է բառի կիրառության մի շաբթ օրինակներ գտնվեցին 1859 թ. «Մեղու» համարներից մեկում և մի օրինակ էլ նույն 1859 թ. «Ճռաբաղում»: Աշա դրանք. Պիտո է... կրթություն ունենալ (ՄՀ, 59, 133), չէ պիտո ուսումնական լինել (ն.տ.), պիտո է կացուցանեն (ն.տ., 134), պիտո է լցուցանել (ն.տ.), պիտո է... գրդել (ՃՌ, 59, 184):

Այս ձեերը՝ թերևս, կազմված են «Հյուսիսափառլլ» նմանությամբ և նրա ազգեցությամբ:

1861—62 թթ. պիտո (է) հարկադրականի եղանակիչը Մ. Նալբանդյանի լեզվում բացառապես ժխտական խոնարհման դեպքում է օգտագործվում: Օրինակ՝ չէ պիտո ընկրկինք (ՆԸԵ, 375), չէ պիտո... տատանի (ն.տ., 416), չէ պիտո գտանեմ (ն.տ., 425), չէ պիտո գուրս գանք (ն.տ., 426), հմմտ.՝ չէ պիտո մոռանալ (ն.տ., 427), չէ պիտո... մերժվի (ն.տ.), չէ պիտո կարողանա (ն.տ. 442, Հ, 62, 5, 235), չէ պիտո տիրե (ն.տ., 447):

Դրա հետ միասին Մ. Նալբանդյանի լեզվում որպես նորություն հանդիս է գալիս շպիտի աշխարհաբարյան ժխտականը: Օրինակ՝ իրավունք շպիտի ունենանք (ՆԸԵ, 410), շպիտի ներգործեն (ն.տ., 420), շպիտի կարողանա (ն.տ., 427), շպիտի գտնե (ն.տ., 442), շպիտի հասկանամ (ն.տ., 452): Առանձին բացառությունների կարգով օգտագործվում է նաև պետք (է) եղանակիչը, ինչպես՝ «Պետք է ավելի նեղութեան մեջ լինեին» (ն.տ., 427), հմմտ.՝ «Պետք չէր մի փոքր... մտածել» (ն.տ., 381), պետք է ասել (ն.տ., 404): Բոլոր այլ դեպքերում որպես հարկադրականի եղանակիչ դրվում է պիտի-ն: Օրինակ՝ պիտի կանգնեցներ (ն.տ., 367), պիտի պատերազմին (ն.տ., 404), պիտի կարողանա (Հ, 62, 5, 235), պիտի ծանրանա (ն.տ.), պիտի սթափեր, պիտի զգար (ն.տ.) և այլն: Հմմտ.՝ պիտո է գառնա (Հ, 61, 1, 5ն), պիտի հառաջ գնա (ն.տ., 7ն), պիտի լինեին (Հ, 61, 6, 477ն), պիտո է լինեին (ն.տ., 378ն), հմմտ.՝ պիտո է...

¹ Հր. Անայան, «Հայոց լեզվի պատմություն», 2-րդ մաս, էջ 545:

աշք ածել (*Հ*, 61, 1, 70ա), պիտոն է նա գառնար (*ն.ա.*), պիտոն է մի գործ կատարի (*ն.ա.*, 5ն) և այլն:

«Հյուսիսափայլում» 1861—62 թթ. պիտի եղանակիչը գերակշռող է: Սակայն, պիտոն է, պետք է, պիտի եղանակիչները օգտագործվում են խառը կերպով, առանց որևէ կանոնի: Մյուս կողմից «Հյուսիսափայլը» մեծ տեղ է տալիս պիտք է եղանակիչին, որը ևս 1858—62 թթ. հատուկ չէ Մ. Նալբանդյանի լեզվին:

Փաստերը ցուց են տալիս, որ պիտի, պետք է, և պիտոն է հարկադրականի եղանակիչների, ինչպես և պիտոն է պետք է միադիմիքայիրի գործածության 1861—62 թթ. համակարգը, ըստ որի պիտոն է—ն դրվում էր միայն ժխտական ձևերում, 1863—66 թթ. Մ. Նալբանդյանի լեզվում խախտվում է: Այդ թվականներին ունենք պիտոն է ձեւի հետեւյալ կիրառությունները:

ա) Հարկադրականի ապառնիի և անցյալ ապառնիի հաստատական և ժխտական ձևերի հետ՝ որպես եղանակիչ. օրինակ՝ պիտոն է լիներ (*Ելժ*, 2, 404), պիտոն է գառնար (*ն.ա.*), պիտոն է... ունենալ (*ն.ա.*, 407), պիտոն է... լինեին (*ն.ա.*, 408), պիտոն է... խոսի (*ն.ա.*, 410), չէ պիտոն ունենային (*Հ*, 64, 3, 164):

բ) Անորոշ գերբայի հետ՝ հաստատական ձևերի կազմության ժամանակ. օրինակ՝ պիտոն է... գործ կատարել (*Ելժ*, 2, 405), պիտոն էր... խոսել (*ն.ա.*), պիտոն է կարդալ (*ՆԲԵ*, 505), պիտոն է... գնալ (*Հ*, 64, 3, 171):

գ) Անորոշ գերբայի հետ՝ ժխտականի գեպքում: Օրինակ՝ չէ պիտոն եղանակացնել (*Ելժ*, 3, 331), չէ պիտոն և չի կարող թարգմանել (*ՆԲԵ*, 506), պիտոն չէ մոռանալ (*ն.ա.*, 168), չէ պիտոն հետեւցնել (*ՆՓ*, 252) և այլն:

1861—62 թթ. հետ համեմատած զգալիորեն ավելանում է նաև պետք է ձեւի գործածությունը և՛ որպես հարկադրականի եղանակիչ, և՛ անորոշ գերբայի հետ: Օրինակ՝ չէ պետք մոռանալ (*ՆԲԵ*, 560), պետք չէ... մոռանալ (*ն.ա.*, 485, 507, 527, 577), պետք է կարծել (*ն.ա.*, 506), պետք է գրեմ, պետք է կարդամ (*Ելժ*, 4, 255), պետք է բաղանիս ընդունել (*ն.ա.*, 298), պետք է պատասխան տալ (*ՆՓ*, 248), պետք է ստուգել (*ն.ա.*, 254), պետք չէ մոռանալ (*Թ*, 41) և այլն:

Հարկադրական եղանակի ապառնի և անցյալ ապառնի ձևերի կազմության մեջ 1863—66 թթ. գերազանցապես օգտագործվում է պիտի եղանակիչը, որով կազմվում են այդ ժամանակների և՛ հաստատական, և՛ ժխտական ձևերը: Օրինակ՝

ա) Հաստատական խոնարհում.

պիտի ընդունվի (*Ելժ*, 4, 285), պիտի համարվին (*ն.ա.*, 306),

պիտի ներգործեց (ՆԾԵ, 553), պիտի լիներ, պիտի ձգեր (ԵԼԺ, 2, 395), պիտի լինեին (ՆԾԵ, 479), պիտի... ուղղեց (Ն.Մ., 483), պիտի... քննեին, պիտի սրբազրեին (Հ, 64, 3, 161), պիտի ցոլանային (ՆԾԵ, 577), անհնար պիտի լինի (ԵԼԺ, 4, 254), պիտի ցավինք (ՆՓ, 248), պիտի շքանա (Ն.Մ.), պիտի տեսնե (Թ, 25):

բ) ժխտական խոնարհում:

շպիտի հանցանք գործեց (ՆԾԵ, 555), շպիտի նսեմացնե (Ն.Մ., 481), շպիտի հասնեին (Ն.Մ., 491), շպիտի ասեմ, շպիտի հաստատեմ (Ն.Մ., 515), շպիտի... սրտնեղինք (Ն.Մ., 526), շպիտի մերժի (ԵԼԺ, 4, 254), շպիտի թողում հանգչել (Թ, 14), շպիտի դներ և այլն:

Այսպիսով, էվոլյուցիայի պրոցեսում և դրա հետևանքով հաղթում են առավել կենսունակ աշխարհաբարյան ձևերը, որոնք և գործածական են այժմ:

Սրեմտահայ լեզվական իրողուրյունների օգտագործումը.—Մ. Նալբանդյանի 1861—66 թթ. լեզվի բնորոշ առանձնահատկություններից մեկը արևմտահայ բառային ու քերականական իրողությունների առատ ներհոսն է՝ առանձնապես «Երկրագործության», լեզվաբանական աշխատության պատառիկների և «Կրիտիկայի» մեջ, որը բխում է, անշուշտ, երկու գրական լեզուների միավորման այն սկզբունքից, որ նա ձևակերպեց բանտում:

Այս իրողությունների որոշ մասը առկա էր Մ. Նալբանդյանի մինչյուսիսափայլլան շրջանի լեզվում, սակայն, որպես մայրենի «Կը» ճյուղին պատկանող նոր նախիչեանի բարբառի ազգեցություն և, բնականաբար, «Ճյուսիսափայլլում», բացի առանձին, հազվագյուտ ձևերից, սիստեմատիկաբար շեր օգտագործվում:

1861—66 թթ. Մ. Նալբանդյանի լեզվում հանդես են գալիս.

1. Արևմտահայ ներկայի և անցյալ անկատարի որոշ ձևեր, նույնաձև արևելահայ պայմանական ապառնիի և անցյալ ապառնիի կողքին, ինչպես՝ «... Հյուսիսափայլլը... ոչ երբեք պիտի ներե ուղղել յուր հայացը մի այնպիսի կետի վերա, ուր մի ուրիշի ազգությունը բռնաբարել կամ գեթ սահմանափորել կենքադրվեր» (ՆԾԵ, 376), «Այս առարկությունը առնելուց հետո, կապասենք կրոնական ժողովի շրջաբերական հրամանին...» (Ն.Մ., 380), «Նորա բարձրանալը կամ ցածնալը կապված է այն նյութերի շատության կամ սակավության, որոնց հետ կենքադրվեր փոխանակել դրամը» (Ն.Մ., 425), «Ասել է, թե մոտավորապես ութ միլիոն հոգին բռնացել է 27 միլիոն օտար ժողովրդի վերա և ապրում է ծծելով նոցա արյունը, նոցա կենսական ուժը և զորությունը: Ակամա կենիշես հուշակավոր Ֆոհթի խոսքերը...» (Ն.Մ., 447 ծնթ.), «Կախալի արգո պարոնը... մեզ կրվի թե

արդու պարոնը... «միսթիկի «խոսքը» ճիշվիթականի» տեղ է գործ ածում» (Ելժ, 4, 305):

Անհրաժեշտ է նշել, որ 1863—66 թթ. ծրագրային այնպիսի աշխատություններում, ինչպիս «Կրիտիկա» կամ լեզվաբանական աշխատության մեջ հասած հատվածները, Մ. Նալբանդյանը խուսափում է ներկայի նման կազմություննից:

2. Հոդի կամ որպես այդպիսին գիտակցող՝ ն վերջաշնչունի օգտագործումը սեռական հոլովում: Օրինակ՝ անձին որակությունը (ՆԾԵ, 552), ես-ին ոգին (ն.ա., 555), որպես արդյունք ճիշվիթական գպրցին (ն.ա., 570), ջրին համը, երկաթին ժեծվածը (ԿՀ, 338, ծնթ.), նախագահ ընդհանուր ժողովին (Հ, 64, 3, 161), մէծագույն մասին վճիռը (ն.ա., 168), անձին... շարագործությունը (ն.ա., 171), վիրագառնալուն բուն պատճառը (Թ, 3)¹ և այլն:

Նույնպիսի երկույթ է առանց կապի խնդրի հետ ն-ի գործածությունը: Օրինակ՝ առանց մշուաին (Ելժ, 2, 408), առանց այս լեզվին (ն.ա.), առանց սովորական ծեսերին (Ելժ, 3, 161)²:

Նույնպիսի խնդիր են առնում նաև այլ իսկական, անխսկական կապեր ու կապական բառեր, որոնցից նշելի են.

ա) Պես (պէս): Օրինակ՝ տաճկի ասածին պես (Ելժ, 2, 396): մարգարեի ասածին պէս (Թ, 18):

բ) Մեջ (մէջ): Օրինակ՝ անձին մեջ (ՆԾԵ, 555), մարդուն մեջ (ն.ա., 559), բառարանին մէջ (ՆՓ, 255), զրբին մէջ (Թ, 19):

գ) Վերա: Օրինակ՝ ազգին վերա (Հ, 62, 5, 235), անձին վերա (ՆԾԵ, 367), աստիճանին վերա (ն.ա., 379), օգտին վրա (ՆԾԵ, 513), խաղին վրա (Թ, 20): Հմմատ՝ ժողովրդի վրան (ն.ա., 17):

դ) Համար: Օրինակ՝ Պողոս քեցին համար (ՆԾԵ, 384), մասին համար (ն.ա., 407), մարդուն համար (ն.ա., 418), ազգին համար (ն.ա., 525), մերժելուն համար (ՆՓ, 258):

ե) Հետ՝ մասին հետ (ՆԾԵ, 420):

3. Էլ ավելի մասսայական կիրառություն ունեն խոնարհման համակարգում երկրորդ կամ երրորդ վանկում ե՝ կամ ա արմատաշնչունը սղած արևմտահայ գրականին հատուկ բայերը, ինչպիս՝ մի մոռնաք (ն.ա., 404), հասկնաեք (ն.ա., 407), շես հասկցել (ն.ա., 413), վաստկել (ն.ա., 415), ենչցիր (ն.ա.), վախեալով (ն.ա., 419), շատցենում է (ն.ա., 492), պիտի բաժնվին (ն.ա., 455), վերց-նելու համար (ն.ա., 405), վերցնել սոսկալի աղքատությունը (Ելժ,

¹ Հմմատ՝ զրաբ.՝ «պատճառ... դարձին» (Թէ, 37):

² Հիշեցնենք, որ զերանունների հեպարում, ըստ 1858—66 թթ. ընդհանուր համակարգի, կլիններ՝ առանց քո (և ոչ թէ՝ քեզ):

4, 305) = «զերացնելով երեցած օրից (Ելժ, 2, 401), զիտցել են (ն.տ.), առանց զիտնալու (Նմի, 559), նաևշիր (ն.տ.), ավելցնելով (ն.տ., 568), մոռնալով (ն.տ., 565), չէ հավեռում (ն.տ.), չորցած (ն.տ., 511), բաժնում է (ն.տ., 541), զիտնալ, հասկցնելու (ն.տ., 594), ավելցնելով (Թ, 9), մոռնալով (ն.տ., 46), չհավեռելով (ն.տ., 17), զիտնար (ն.տ., 15), ցածընել (ն.տ., 2) և այլն:

4. Սրանց պետք է ավելացնել արևմտահայ գրականին հատուկ բազմաթիվ բառերի ու բառաձևերի օգտագործումը այն դեպքում, եթե առկա են նրանց ոչնչով չպիջող ու գրական աշխարհաբարերի այլ մշակողների կողմից լայնորեն օգտագործվող ձևեր:

Նշենք զրանցից մի քանիսը. շլար (Նմի, 379), այժմեն (ն.տ., 380, 387), աղտոտ (ն.տ., 417), աղքատներուն (ն.տ., 406), զործավոր (ն.տ., 406). ցրվել (ներգործական մեռ)՝ ցրվել միշնադարյան մառախուղը (ն.տ., 491). կանուխ՝ կանուխ, թե ուշ (ն.տ., 534, ծնթ.). անուշ՝ «... անուշ է գալիս այս բացագանչությունը» (ն.տ., 539). կլլել՝ «... չկարողացավ կլլել» (ն.տ., 562). պաղել⁴ «...շպաղի սատկած ձուկի պես» (ն.տ., 582), փարրվել՝ ամուր փաթթվելով (ն.տ., 578). տղաք (-տղայք)՝ աշտարակցի տղաքը (ն.տ., 495) և այլն:

Մենք զիտավորյալ կերպով օրինակների մեծ մասը ընտրեցինք Մ. Նալբանդյանի այնպիսի աշխատություններից («Երկու տող», «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», «Կրիտիկա», «Մեր լեզվի արժատական բարեփոխության մի փորձ»-ի հատվածներ), որոնց մեջ առկա յուրաքանչյուր ձև անպայման վստահելի է:

Սրանցից մի փոքր առանձնանում է երբալ բայրը: Բանն այն է, որ այս բայրը 1858 թ. սկսած «Հյուսիսափայլի» բոլոր հեղինակների համար սովորական է եղել: Օրինակ՝ «Աներանի համառոտ գնացքով» (2, 10, 334ն), «Դուրս է երբում ինքը յուրյանից» (2, 59, 12, 977ա), «Երբում է նորա բամակից» (ն.տ., 980ն), երբում էին (Ելժ, 2, 308), երբում են⁵ (ն.տ., 307): Նույնը և 1861—62 թթ.⁶ երբալով (Նմի, 422), երբում է (Հ, 61, 1, 2ն):

1863—66 թթ. երբալ-ը շարունակվում է նույնշափ օգտագործվել և՛ Մ. Նալբանդյանի լեզվում, և՛ 1864 թ. «Հյուսիսափայլում»:

1 Հմմտ.՝ սարկությունը վերեա (Նմի, 406), չէր հոգարում վերցնել (ն.տ., 405):

2 Հմմտ.՝ մոռնալով... մողցար... չեմ մողցեր (ն.տ., 414), մոռացել եր (ն.տ., 563), մոռացանել (Թ, 73):

3 Հմմտ.՝ չորցած ծափի ճյուղը (Նմի, 579), նույն էցում ունենք նաև՝ չորցած:

4 Առանձին դեպքերում օգտագործվում է նաև «Հյուսիսափայլում»: Օրինակ՝ «Կը պաղի խողովակի մեջ» (Հ, 10, 305):

5 Հմմտ.՝ երբամ (Ելժ, 4, 65):

որով և տարբերվում է մեր վերևում թվարկած և նրանց նման միքանի այլ բառերից, որոնք Մ. Նալբանդյանը գործածում էր երկու գրական լեզուները աստիճանաբար իրար մոտեցնելու միտումով:

Այս մի քանի օրինակներ. կերպար (Ելֆ, 4, 285, 293), երբալ (ՆԾԵ, 497), երբալու ժամանակ (Ն.ա., 534), երբանք (Ն.ա., 582). Հմմտ.¹ կ'երպար (Հ, 64, 1, 2ն):

1858—66 թթ. արևմտահայից արևելահայ կառուցվածքը յուրօրինակ էվլուցոցիա է ապրում մի քանի-ն: Անցումը արևմտահայ քանի մը ձեին սկսվում է սկզբում (նամակ Հարություն ք. Գեորշիանին, 12 մայիսի, 1855 թ.) որպես բացառություն օգտագործվող և ապա լայն տարածում գտած մի քանի-ի քանի մի շրջուն ձեին գերադասություն տալուց:

1863—66 թթ. մի-ի քանի-ից առանձին գրվելու հետ միասին՝ մի քանի օրինակ (ՆԾԵ, 584), մի քանի խոսք (ՆՓ, 248), մի քանի ժամանակ (Թ, 31), զգալիորեն ավելանում են մի-ի հտադաս գործածության դեպքերը: Օրինակ՝ քանի մի... բառեր (Ելֆ, 2, 405), քանի մի շաբաթվան (Ն.ա., 407), քանի մի անդամ (ՆԾԵ, 581), քանի մի օրինակների համեմատությամբ (ՆՓ, 254—55), քանի մի տարի է (ՆԾԵ, 577): Քանի մի կապակցության մեջ մի-ի և՛ հտադաս, և՛ նախադաս ձևերն էլ ընդունելի համարելով² Ա. Նալբանդյանն սկսում է զրանք օգտագործել ոճավորման նպատակներով: Օրինակ՝ երբ իրար հետ միասին նախադասության մեջ երկու մի քանի-ի կարիք է զգացվում, մեկը նա զնում է մի քանի ձեռվ, մյուսը՝ քանի մի: Օրինակ՝ «Մեզ կարող են ասել, թե պ. Պողոսյանցը հազիվ մի քանի տող է գրած սեփական ձև ու ոճով, կարծե այդ քանի մի տողերի համար ատյան կանչել նորան» (Ելֆ, 3, 330): Այնուհետև քանի մի ձերի կողքին սկսում են հանդես գալ նաև քանի մը-ի գործածոթյան առանձին դեպքեր: Օրինակ՝ քանի մը հին բառեր էլ, քանի մը օտար բառեր (ՆԾԵ, 595) և այլն: Բանն այնտեղ է հասնում, որ Ա. Նալբանդյանը ջնջում է իր արդեն գրած մի քանի-ն և նրա փոխարեն քանի մը գրում, որը և ապացուցում է, որ նա գիտակցաբար էր քանի մը օգտագործում (տե՛ս լեզվաբանական աշխատության առաջին պատառիկը):

Փոխվում է նաև (մի) քանի-ի հոգնակու ձեր: Եթե մինչև 1863 թ. Ա. Նալբանդյանը քանի-ի հոգնակին բացառապես քանիք (մի քանիք) ձեռվ էր կազմում (այդ ձեր որոշ դեպքերում «Կրիտիկայում» էլ պահպանվում է, օրինակ՝ մի քանիքը — ՆԾԵ, 484), ապա 1863—1866 թթ. բազմաթիվ այլ դեպքերում ժողովրդական քանիս ձեն է

¹ Հմմտ.² քանի մի անդամ (ՆԾԵ, 367, 368):

² Հմմտ.³ նաև՝ վայրկյան մի շփոթեցալ, (ՆԾԵ, 414):

օգտագործում (բանիսը հաշվեմ—ն.ա., 592, մի բանիսն էլ—թ, 22, մի բանիսը—նԾԵ, 526 և այլն):

Օտար լեզուներից կատարված փրխառությունների տեսությունն ու պրակտիկան.— Զեռնարկելով գրական աշխարհաբարի մշակման դորձին անցյալ դարի 50—60-ական թթ.՝ Մ. Նալբանդյանը, բնականաբար, պիտք է մշակեր որոշ հիմնական սկզբունքներ նաև օտար լեզուներից կատարելիք փոխառությունների հարցում: Եվ իսկապես, «Հյուսիսափալի» առաջին խել համարներից երեսում է նման՝ «Հյուսիսափալի» համար միասնական մի սկզբունքի առկայությունը:

Նշված շրջանում փոխառությունների տեսության հարցը շափազանց կարեոր էր ամենից առաջ այն պատճառով, որ «Հյուսիսափալի» գրիչը իրենց առաջնահերթ խնդիրն էին համարում առաջավոր գիտության մասսայականացումը, առանձնապես բնագիտության, որը, սակայն, կատարել չէր կարելի առանց գիտական տերմիննարանության: Բնական գիտությունների պրոպագանդան, ինչպես և զարգացած հասարակական հարաբերությունների, այդ նոր հարաբերությունների ծնունդը հանդիսացած բազմաթիվ ու բազմապիսի երևույթների մասին գրելու անհրաժեշտ պահանջը ստիպում էր «Հյուսիսափալի» հեղինակներին օգտագործել ամենատարբեր հասկացություններ, որոնց համապատասխանող բառերի մի մասը չկար, կամ գիտակցվում էր որպես անօգտագործելի, ոչ-հարմար, ոչ-համապատասխան այդ հասկացությունների համար: Աշխարհաբարը, որը դեռևս շմշակված, շճախարակված մի լեզու էր, չուներ, բնականաբար, նաև գրաբարում, ինչպես և զին կուտարական ուժամանակի մշակված օտար լեզուներում (լատիներեն, ֆրանսերեն, ուռուսերեն) առկա բազմաթիվ ոճեր ու դարձվածքներ: Այդ պակասը հարկավոր էր լրացնել, լրացնել թշնամու կրակի տակ, որը «Հյուսիսափալի» յուրաքանչյուր նորամուծության համար նրան «գերմանախոս» էր հոշակում:

Զի կարելի նախապես չնշել, որ «Հյուսիսափալի» (Մ. Նալբանդյան, Ստ. Նազարյան և ուրիշներ) հսկայական աշխատանք կատարեց այդ ուղղությամբ:

Զի՞ն կարող արդյոք նրանց նպատակին ծառայել բանավոր խոսքում արդեն առկա բազմաթիվ թուրք-թաթարական փոխառությունները: Մ. Նալբանդյանն այս հարցին անվերապահորեն բացասաբար էր պատասխանում: Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանը ճիշտ էին ըմբռնել աշխարհաբարի ընդհանուր տենդենցը թուրք-թաթարական փոխառությունների նկատմամբ, որ «հայերեն գրական լեզուն... սկզբունքով մերժում է իր միջից ամեն թուրքական

փոխառություն»¹. և ոչ միայն սա: Թուրքական փոխառությունները չեն կարող կովառուրական որևէ արժեք ներկայացնել «Հյուսիսափայլի» առջև գրվող խնդիրների տեսակետից. նրանք նեղ-կենցաղին կամ փոխառու ժողովուրդների սպեցիֆիկային վերաբերող բառեր էին: Առաջավոր («ելքոպական») գիտության պահանջները կարող էին բավարարել միայն եվրոպական լեզուները (ուստերեն, լատիներեն, ֆրանսերեն և այլն), որոնք ունեին մշակված ու կուռ (ժամանակի համար) գիտական տերմինաբանություն:

Ստ. Նալբարյանը և Մ. Նալբանդյանը, առանց վախի, միշտ իրենց համար սկզբունք ունենալով, որ աշխարհաբարը «... մշակվելով գիտության բազմացուղ հանդեսների մեջ կարող էր ժամանակով դառնալ մի դպրության լեզու այժմյան ազգի համար մի հարմարավոր անոնթ, որը իմացական կյանքի»², «գեղեցիկ և ընտիր գործիք... ժողովրդի դաստիարակության համար»³, դիմում էին փոխառությունների այդ լեզուներից՝ վերցնելով ոչ միայն անհրաժեշտ բառերն ու հասկացությունները, այլև «այն լոգիկաբար կապակից պարբերությունը, որոնցով հարազատորեն («առաջ նույնիսկ ազգային լեզվի աղբյուրից և ոչ թե թուրքից ու թաթարից»)⁴ կարելի էր «ամենայն եվրոպական գաղափարը թափել հայերենի մեջ»⁵:

Բազմաթիվ են այս սկզբունքներով օգտագործված փոխառությունները Մ. Նալբանդյանի աշխատություններում: Աչա դրանցից մի քանիսը. անալոգիա (ՆԸԵ, 521), զատրոնոմիա (Հ, 10, 341), էշաֆոռ (ՆԸԵ, 494, ծնթ.), էլիպսոնիդ (Հ, 9, 239), քարակ (ՆԸԵ, 538), ինկվիզիցիոն (ն.տ., 515), ինկվիզիցիոն (ն.տ., 370), ինկվիզատոր (ԵԼԺ, 4, 307), խառո (Հ, 60, 7, 483), կոմիտեա (Հ, 2, 149), կլասիկ-ական (ՆԸԵ, 503), կնուտ (ն.տ., 450), կրիտիկա (Հ, 1, 73), կորիֆեյ (ն.տ.), կատաստրոֆ (ՆԸԵ, 438), կատեղորի (ն.տ., 553), կոնստիտուցիոն (ն.տ.), մինիստր (ն.տ., 408), մետա (ն.տ., 428), միստիկ (ԵԼԺ, 4, 305), մետաֆիզիկ-ական (ԵԼԺ, 2, 395), միսիոնար (ԵԼԺ, 4, 307), մոնապոլիոն (ՆԸԵ, 411), մուգեռն (Հ, 59, 9), շիլինգ (ՆԸԵ, 406), պեղազոգիա (Հ, 10, 345), պոլիցիա (ն.տ., 341), պըռկուր (ՆԸԵ, 380), պուպիլիցիա (ն.տ., 562), պահլամենտ-ականություն (ն.տ., 566), պրոֆեսուր (Հ, 59, 11, 902), պոլեմիկ-ական (ՆԸԵ, 446), պանալոր (Հ, 10, 340), պեյզած (ՆԸԵ, 483), ուսպիկ

1 Հր. Անայշան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, էջ 282:

2 «Հյուսիսափայլ», 1860 թ.:

3 Մ. Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 149:

4 Նույն տեղում:

5 Նույն տեղում:

(Հ, 59, 5, 383), ուելլուցիա (ՆԸԵ, 570), ուելլուցիոն (ն.ա., 564), ռեալգիտն (ն.ա., 378), ռեմատիսմուս (Հ, 59, 2, 150), ռեֆորմ (ՆԸԵ, 377), սկեպտիցիզմ (Թ, 69), ստեարին (Հ, 8, 159), սիոնատիկ (Հ, 8, 160), սիմբոլ-ական (ՆԸԵ, 519), սիմֆոնի (ն.ա., 541), վոլ-կան-ականություն (ն.ա., 505), տրոպիկ-ական (ն.ա., 518), ցենզոր (Հ, 59, 9, 748), օբյեկտանու (Հ, 8, 165), ուվերայուր (Հ, 10, 337), քարտ (Հ, 62, 5, 235), ֆակտ (ՆԸԵ, 379), ֆրանսական-ների (ն.ա., 563), ֆարալիզմ (Ելժ, 3, 323), ֆանատիկոս (Հ, 10, 304), ֆորտովիանո (ն.ա., 337) և այլն:

1. Բառերի փոխառություն¹:

Ինչպես արդեն նշեցինք, Մ. Նալբանդյանի լեզվում օգտագործվում են բազմաթիվ փոխառյալ բառեր, որոնց գիտականորեն ճիշտ համարժեքները չկային, կամ ընդունելի չեն: Այդ բառերը հիմնականում գիտական, հասարակական-քաղաքական տերմիններ են: Մ. Նալբանդյանի օգտագործած փոխառյալ բառերի մեջ մտնում են:

ա) Բնագիտական, բժշկական տերմիններ (որոնք մեծ մասամբ չիվանգությունների անուններ են): Օրինակ՝ մետալ (ՆԸԵ, 428), վուկան (ն.ա., 505), տրոպիկ-ական աշխարհների... պասարք (ն.ա., 518), էլիպսիդ (Հ, 9, 239), խիռուոգիա (Հ, 10, 341), ռեմատիսմուս (Հ, 59, 2, 150), Հեգելը նմանում է հալլուցինացու մեջ ընկած Բոռքին (ՆԸԵ, 564), չգիտեր ֆիզիոլոգիա (Հ, 59, 8, 656), առմուֆեր-ի մեջ (Ելժ, 2, 308) և այլն:

բ) Կուլտուրալիզմ վերաբերող տերմիններ: Օրինակ՝ ֆորտովիանոն, ուվերայուր (Հ, 10, 337), ... Բեթհովենի սիմֆոնիներին (ՆԸԵ, 541), զլվում էր առանձին լլանու... (ն.ա., 524), պիտի պեյզած տակնք (ն.ա., 483), Բեուլինի մուզեոնը (Հ, 59, 9, 725, հմմտ.՝ ՆԸԵ, 532 ծնթ.):

գ) Հասարակական հիմնարկների, պաշտոնների, կոչումների անուններ: Օրինակ՝ կարգված են ցենզոր... (Հ, 59, 748), բժշկական ֆակուլտետի դեկան (Հ, 2, 149), բժշկական պոլիցիա (Հ, 10, 341), պրոֆեսոր (Հ, 59, 11, 902), հրեական սինետրիոն (ՆԸԵ, 415), պրոլետերին բողոքել (ՆԸԵ, 380) և այլն:

դ) Այլ հասարակական ու քաղաքական գանազան տերմիններ: Օրինակ՝ սիոնատիկ... ուսումնականներից (Հ, 1, 72), սիոնաստիկները (ն.ա., 73), կորիֆեյ ճանաշված սիոնատիկների ձեռքով (ն.ա.), ֆանատիկոս... բնավորությունը (Հ, 10, 304), ֆրանսիական պոլիցիստներ (Հ, 59, 9, 728), ճատուր-ֆիլոսոփների... (ՆԸԵ,

¹ Զենք կարող ասել, թե սրանցից որոնք Մ. Նալբանդյանն ինքն է կատարել, քանի որ նախորդների ու ժամանակակիցների լեզուն այս տեսակետից չի ուսումնասիրված:

512), հալածվեցավ... ինկվիզիցիոնից (ն.տ., 515), ռեֆորմ¹ (ն.տ., 377), ռեակցիոնի (ն.տ., 378), ֆերմեր ասացյալքը (ն.տ., 408), ֆանտիզոս-ությամբ հեռի մնալով (ն.տ., 378), մննպղիոնը (ն.տ., 411), պրլիտիկ-ական ավաղակ (ն.տ., 416), հանդիպեցավ այս կատաստրոֆը (ն.տ., 438), միսիոնարների վարժունքը ինկվիզիցիոնից ինչ տարրերություն ունի (Ելժ, 4, 304), ռեռլուցիայի բոցը (Հ, 59, 9, 726), գրանսիխական ռեռլուցիան (ՆԾԵ, 570), ռեռլուցիոնը... աղդեցություն ունեցավ (ն.տ.):² Մենք ոչ ինկվիզատոր ենք, ոչ միսիոնար (Ելժ, 4, 307), կատեղորիաներ չունի (ՆԾԵ, 553), էշաֆուների վրա (ՆԾԵ, 494), սկեպտիզիզմ (Թ, 69), պեղագոգիա (Հ, 10, 345) և այլն:

Զպիտք է կարծել, թե փոխառյալ բոլոր բառերն ել միատեսակ ու հավասարաշափ էին օգտագործվում: Հենց ինքը՝ հասարակական-քաղաքական պայքարը, ստիլում էր Մ. Նալբանդյանին առաջին պլանի վրա քաշելու նշված այնպիսի փոխառյալ բառեր, ինչպես օրսկուրանա, ինկվիզիցիա, միսիոնար, ռեռլուցիա և այլն:

Մյուս կողմից, եթե փոխառյալ բառերի մի մասը օգտագործվում է լոկ իր ուղիղ ձևով, և այն էլ մեկ կամ երկու անդամ, ապա մյուս մասը ենթարկվում է ածանցման, բարդման:

Մեր կյանքի նոր երկութներին համապատասխան օտար բառեր վերցնելով ու գործածության մեջ գնելով՝ Մ. Նալբանդյանը միաժամանակ ամեն կերպ փորձում էր այդ տերմինների իմաստները հասկանալի դարձնել հայ հասարակությանը: Ստացվում էր այնպիս, որ միենույն ժամանակ մի հասկացության համար օգտագործվում էին ինչպես փոխառյալ տերմինը, այնպես էլ նրա ընդհանուր իմաստն արտահայտող՝ հաճախ գեղարվեստական նրբերանգներով հարուստ հոմանիշ դարձվածքներ:

Այդ տեսակետից բնորոշ է կրիտիկա տերմինի բախտը: Գրա-

¹ Հմմտ.՝ «Հյուսիսափայլին խնդրած վերանորոգությունը վերաբերվում է դավանաբանության» (ՆԾԵ, 376):

² 1858—1862 թթ. Մ. Նալբանդյանը գերադասում է օգտագործել նեղափիոնություն բառը: Օրինակ՝ «... Անցաններ քննելու նորա ընկերությունը, որ շատ նեղափիությունների ենթարկվեցավ միշտ օրերը», «Այդ սասաննեցուցի նեղափիություններ...» (Հ, 5, 416), տնտեսական նեղափիություն (ՆԾԵ, 5, 416), հմմտ.՝ նաև Ստ. Նաղարյանի մոտ՝ «Կերպարըր... նեղափիությունը է աղիքների մեջ» (Հ, 1, 68), «Վատթարքը նեղափիում էին կարգ ու օրենք» (Հ, 4, 275): Նշված բոլոր գեպերում նեղափիությունը բառը նշանակում է ընդհանրապես որևէ փափոխություն կատարել: Այդ նույն շրջանում Մ. Նալբանդյանի մոտ առանձին դեպքերում, իսկ Ստ. Նաղարյանի մոտ հաճախ, փոխ և առնվում ռեռլուցիա բառը՝ հակառակունը բռնի ուժի միջոցով լուծող վճռական, արժատական հեղաշրջման իմաստով: Բանառում Մ. Նալբանդյանը նույն իմաստով օգտագործում է և՛ նեղափիություն, և՛ ռեռլուցիա, և՛ ռեռլուցիոն ձևերը:

կան քննադատությունը անցյալ դարի 50—60-ական թթ. հայ իրականության համար նոր երեսվթ էր և լեզուն չուներ այդ հասկացության իմաստը լիովին արտահայտող, ընդունելի որևէ բառ: Մասնագիտական, գիտական տերմին ունենալու անհրաժեշտությունը ստիպում է Մ. Նալբանդյանին փոխ առնելու կրիտիկա բառը: Օրինակ՝ «Ե՞նչ է կրիտիկա ասած բանը բնդշանրապես» (Հ, 1, 71), «Կրիտիկան վատ բան է» (Ա.ա., 72), «Եյս կրիտիկան է» (Ա.ա., 73), «Ինչ Հարկավոր է կրիտիկա» (Ա.ա., 74):

Քննադատուրյուն բառը չօգտագործելով՝ Մ. Նալբանդյանն այդ ճյուղի մասնագիտի անունը ևս փոխ է առնում («Հյուսիսափայլի» 1858 թ. առաջին ամսատետրակում նրա հայերեն հոմանիշը ստեղծելու մի անհաջող փորձից հետո), ինչպես կրիտիկոսի (ուսումնական դատավորի)… (Ա.ա., 71), բարեխիզմ կրիտիկոս (Ա.ա., 74) և այլն:

Այսպիս էլ հետագայում՝ կրիտիկոսների (Հ, 60, 7, 484), այժմ կրիտիկի ժամանակի է (ՆԲԸ, 553), կրիտիկոսի հետ (Ա.ա., 565): Այս բառից բայ կազմելիս, բնականաբար, խուզ տալու համար կրիտիկ-ել¹ հորջորջումից՝ դիմում էին նկարագրական եղանակի: Մ. Նալբանդյանի (և Ստ. Նազարյանի) մոտ հնեադատելուն հիմնականում փոխարինում է հնենուրյան տակ ձգել հարազրությունը (տե՛ս Հ, 6, 473, Հ, 5, 377, Հ, 10, 338, Ելժ, 523, Հ, 1, 1ն և այլն), որի հետ միասին օգտագործվում են նաև «հնենուրյան դանակի տակ ձգել» (ՆԲԸ, 496), «հայելի դանակ և ցոլացնել հեղինակին նորա սեփական գործը» (Ա.ա., 481), «մերություննքը դրվին անդամնահատական դանակի տակ» (Ա.ա.), դատապարտուրյան տակ ձգել (Ելժ, 2, 396), «Թափ տանք մի փոքր այս կարծիքը» (Թ, 40). Հմմտ՝ հնենողական աշեռվ հայել (Հ, 61, 1, 69ա), հնենուրյան տակ է ընկեռում (Ա.ա., 1, 74):

Վերոհիշյալ կապակցությունների մի մասը, իհարկե, զուտ գեղարվեստական բնույթ ունի և կազմված է ոճավորման նպատակով, սակայն, գերակշռում են այնպիսիները, որոնք գիտական տերմինի բացակայության պատճառով են կազմված: Նման բազմազանությունը ստիպում էր Մ. Նալբանդյանին կրիտիկա տերմինը պահպանելով՝ բայ կազմելու դեպքում նոր որոնումներ կատարել, որի արդյունքը և լինում է հնեադատել բայի օգտագործումը՝ հնեադատելու էին դուրս գալիս (Ելժ, 2, 402), բանտում:

Նոր տերմինների փոխառություններ անցյալ դարի 50—60-ական թթ. միայն «Հյուսիսափայլը» չեր կատարում: Այդ գործին

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, էջ 402:

մասնակցում էին «Մեղուն», «Ճռաքաղը» և ապա՝ նաև «Կոռունկը»:
Օրինակ՝ վերոհիշյալ կրիտիկա տերմինը փոխ էր առնված և օգ-
տագործվում էր նաև սրանց կողմից՝ «կրիտիկան դեռ չէ գրված»
(ՄՀ, 58, 125), «կրիտիկա կա գրված» (ն.ա., 126), «Պահանջում
է... կրիտիկան» (ՃՌ, 60, 186), կրիտիկա անունով (ԿՌ, 60, 339):
«Մեղուն» առանձին գեղքերում կրճատում է վերջին ա-ն՝ «Չէ
կրիտիկ, այլ պոլիմիկ» (ՄՀ, 60, 344):

Քննադար բառի փոխարեն ևս հաճախ նշված ամսագրերում
ու «Մեղվում» հանդիպում են կրիտիկոս, ինչպես և կրիտիկ ձևերը:
Օրինակ՝ կրիտիկի պաշտոնը (ն.ա., 343), կրիտիկոսի արհեստը
(ն.ա.), պարոն կրիտիկն (ն.ա., 199), կրիտիկոսն քննում է (ԿՌ, 61,
353) և նույնիսկ՝ «Պաշտոն կրիտիկի¹ է սուրբ պաշտոն» (ՄՀ, 59,
311):

«Մեղվում» և «Ճռաքաղում» որոնումներ էին կատարվում նաև
այլ ուղղությամբ: Քննադատության իմաստով այդ պարբերական-
ներում գործածվում են նաև բանաբնուրյուն և բննաբանուրյուն
(նախորդը՝ բազագրիչ արմատների հակառակ գասավորությամբ):
բառերը: Օրինակ՝ «Մեր մտքի ուղղության վերա ապահովություն
տալու համար Վարդենյաց պատվական հեղինակին նախ մի քանի
խոսք ասենք բանաբնուրյան վերա» (ՄՀ, 63, 183), «Եվրոպական
բննաբանուրյան՝ կրիտիկայի ժանոթ է» (ՃՌ, 59, 224):

«Մեղուն» վերջին ձևից կազմում է նաև բննաբան (քննադատ)
տերմինը: Օրինակ՝ բննաբաններից ուժանք... բննաբանին պաշտոնը
(ՄՀ, 63, 183):

Այստեղ ևս բազմապիսի են բննադատել իմաստն արտահայ-
տող կապակցությունները՝ «Գյել է... կրիտիկական բննուրյան տակ»
(ՄՀ, 60, 343), «Քննել... երկասիրուրյուններ, ձգել... կրիտիկայի
տակ» (ՃՌ, 60, 186), բննուրյան տակ ընկնելուն (ԿՌ, 61, 351),
«Քննում է գործի երկու կողմն ևս» (Կ.ա., 352) և այլն:

հ) Մ. Նալբանդյանի օգտագործած փոխառյալ բառերի մեջ են
մտում նաև՝ դրամական միավորների անուններ՝ ոռապի (Հ, 59, 5,
383), շիլլինգ (ՆԲԵ, 406), դուրուշ (ն.ա., 427):

դ) Այլը՝ բարբակի ծուխը (ն.ա., 538), ափիոն (ն.ա., 449),
ֆրանկի... բառերը (ԵԼԺ, 2, 398), գերմանիկ արամաբանության
(ն.ա., 396), սիմբոլական (ՆԲԵ, 579), պասպորտ (Հ, 10, 340),
կնուսով (ՆԲԵ, 450), աշխարհագրական բարտը (Հ, 62, 235):

Լեզվի պատմության մեջ կատարած իրենց գերով թվարկած
տերմինները հավասարաժեք չեն: Բանն այն է, որ նրանց մի մասը

1 Գրաբար տեքստում:

Հետագայում շընդհանրացավ, չպործածվեց, որը և պատճառ դարձավ, որ դրանք դուրս մղվեն գործուն բառապաշարից և մնան, լավագույն դեպքում, լիակատար բառաբաններում (ֆորտոպիանո, մուլենոն, ցենզոր, պրոկուրոր, պուրլիցիստ, կրիտիկա, կրիտիկոս, պեղագոգիա և այլն): Նշված փոխառությունների մի այլ խումբ գրական լեզվի հետագա շրջանում օգտագործվեց և այժմ էլ օգտագործվում է այլ հնչյունային տեսքով (սիմֆոնի, ումատիսմուս, հալլուցինացի, կոմիտես, միսիոնար, ինկվիզիցիոն, խառս, ունակցիոն, մոնոպոլիոն, կատեգորի և այլն):

Փոխառյալ բառերի երրորդ խումբը գործածական է նաև այժմ (կորիֆեյ, սխոլաստիկ, ֆանատիկոս, ունուլուցիստ, ոեֆորմ, ինկվիզատոր, մետաֆիզիկ-ական, պառլամենտ-ականություն, ֆատա-լիզմ, կլասիկ-ական, անալոգիա և այլն):

2. Օտար լեզուներից Մ. Նալբանդյանը փոխ է առել ոչ միայն բառեր, այլև հասկացություններ՝ դրանց համար հայերեն բառեր կազմելով: Շատ հաճախ փոխառու լեզվի ձևը և նրա հայերեն թարգմանությունը նա զետեղում է կողք-կողքի, որով և ճշգրտում է հայերեն տերմինի իմաստը:

Հասկացությունների փոխառությունը կատարվել է հիմնականում երկու ուղղություններով. ա) իմաստի պատճենում՝ մասնավոր կշռով, երկարի նաևպարհ և այլն. բ) փոխառելի հասկացության ընդհանուր իմաստի համապատասխան նոր տերմինի կազմում՝ մորմապար, եկամտի և ծախմի ցուցակ և այլն:

Այդ երկու ճանապարհներով կատարված փոխառություններից և իմաստաձառնություններից նշենք.

ա) Բնագիտական-տեխնիկական բաղմաթիվ տերմիններ. շերմաշափ¹, ծանրաշափ², մագնիսյան սլաք³, մանրացուց⁴ (ՆԸԵ, 508), մասնավոր կոռով (удельным весом) — Հ, 59, 8, 654, տեսաբանական խարեւությամբ (оптическим обманом)⁵ — Հ, 8, 160, ճախնային գաղ⁶, ձեռագործ⁷ (ՆԸԵ, 406, 409), երկաթի ճանապարհ⁸ (Հ,

¹ Հուն. termos + metreo: Հունարեն բառերը տալիս ենք լատինական տառապարձությամբ:

² Հուն. Baros + metreo:

³ Մագնիտա ստրալ:

⁴ Հուն. mikros + skopeo:

⁵ Հմմտ. երեակայական խարեւությունը (иллюзии) — Հ. 8, 160:

⁶ Բոլотный газ;

⁷ Լատ. manus + facere.

⁸ Ժելезная дорога (Հմմտ. «Տիրեց երկաթի ճանապարհի կամրջին» — ՄՀ, 60, 372):

10, 340), քարյա ածուխ¹ (Հ, 59, 8, 654), շոգեշարժ կառքով² (ն.տ., 647), տեսարանություն³ (ՆԸԵ, 559), մորմաղար⁴ (ն.տ., 522):

բ) Գյուղատնտեսական տերմիններ.

մեղվաղացմանություն (պчеловодство), շերամաղարմանություն (шелководство) Հ, 8, 158, գյուղական տնտեսություն⁵ (Հ, 8, 167):
գ) Քաղաքատնտեսական տերմիններ.

կենտրոնացությունը (centralisation) (ն.տ., 424), եկամտի և ծախրի ցուցակ (ն.տ., 421), նա անցավ պատմության շատ կերպարանքներ՝ phase⁶ (ն.տ., 442), վաճառափողոց (биржа) (Հ, 59, 11, 911), վաճառականության գաղափար— спекуляция (Հ, 11, 419):

Չոնենալով կամ հարմար չգտնելով օգտագործել ներմուծել և արտահանել տերմինները՝ Մ. Նալբանդյանը ձգտում է միջազգային (անզլ. import, export) տերմինների նմանությամբ հայերենները կազմել: Դրա համար օգտագործվում են ներս և դուրս մակրացները՝ հարազդելով դրանք թերել, ընդունել կամ ուղարկել, առև բայցին:

Մինչև քաղաքատնտեսական նեղ-մասնագիտական գործածությունը այդ կապակցությունները օգտագործել են այլ հոմանիշ իմաստներով:

Նշենք մի քանիսը.

«Ներս թերել դորա մեջ... նոր գաղափարներ» (Հ, 5, 420)—փոխառնել: «Նորարարություն կամիք ներս թերել մեր աղքի մեջ» (Հ, 10, 339)— ներմուծել: «Հայր չունեն ակագեմիաւ, ուսումնական ճանապարհորդք դուրս ուղարկելու համար» (Հ, 60, 5, 388)—գործուղել: «Էակը անդադար շարժում է⁸, ընդունում է նյութեր, դուրս է տալիս նյութեր» (ՆԸԵ, 445)—արտաթորել:

Այդքան զիգզագներից հետո՝ դուրս տված և ներս ընդունած ապրանքի կամ դրամի մեջ զուգակշխոր պահելու ձգտողությունը (ն.տ., 425), որտեղ մենք դորժ ունենք արդեն մասնագիտական տերմինների հետ:

«Հյուսիսափայլի» այլ հեղինակների մոտ ևս այդ ուղղությամբ որոշ որոնումներ էին կատարվում: Հմմտ.՝ «Հին սովորությունը ի դուրս աշխատում էր... ընդդիմանալ օգտակար գյուտերի ներքս ածու-

1 Каменный уголь.

2 Паровоз.

3 Оптика.

4 Խոսական ժողովրդական պար— tarantella.

5 Сельское хозяйство.

6 Անգլիական:

7 Ունենք նաև՝ «Եվրոպական արժաթը և ոսկին ներս կիսուցնե աղքի մեջ» (ՆԸԵ, 441):

8 =շարժվում է. անորոշ դերբայը՝ շարժիլ (կարող է շարժիլ—ՆԸԵ, 445):

բյանը, գրատպության արվեստը... ներս մտավ ամենայն տեղ» (Հ., 61, 1, 71) և այլն:

դ) Բազմաթիվ են նման ձևով կազմված բժշկական տերմինները: Օրինակ՝ ջրավախորյուն ունեին (hydrofobia) ՆԸԵ, 521, աֆրոդիտյան ցավ¹ (ՆԸԵ, 485), լվաղեղ² (պերսկա քուաշա) —Հ, 59, 1, 703, հատաղեղ³ (ρίσιτα) —Հ, 8, 153, քայլին տենդ⁴ (febris nervosa) —Հ, 8, 153, ՆԸԵ, 480, միջողական տենդ (febris intermit-tens) —Հ, 8, 152, «օրիորդական... տկարություն»⁵ (chlorasis) —Ա. առ., 151:

Ինչպես փաստերն են ցուց տալիս, նալբանդյանը ձգտել է ստեղծել այդ տերմինների հայերեն նույնանիշները՝ հիմնվելով մի կողմից ժողովրդական՝ արդեն առկա տերմինների վրա (լվաղեղ, ջրավախորյուն), իսկ մյուս կողմից նորերը ստեղծելով, կոմ օրինականացնելով արդեն ստեղծվածը:

ե) Հասարակական կյանքի ալեկալ երևությների հետ կապված բառեր: Օրինակ՝ մասնավոր (специальный) գպրոց (Հ, 62, 5, 238), կատարելորդյուն — ideal (ՆԸԵ, 439, 459), խուզարկու ատյան (inquisitio) — ելժ, 2, 68, նախատինք (пасквиль) — Հ, 1, 73, հիմնվում է երկվորյան վերա—dualisme (ՆԸԵ, 458), դարավոր ավանդությունների (tradition) — Ա. առ., 370, արքունական նեմարան (գիմնազիա) — Հ, 2, 148, քանաստեղծական (роэтиque) գույնը, ՆԸԵ, 457, դրշմ (клеймо) — Հ, 8, 160, անձնամեր — քրօնի (Հ, 10, 301), նմանողական ձգտովություն (подражательность) — Հ, 10, 306, սեռափ ամրոխմունք (суетливость, фальшивая тревога) — Ա. առ., 307: ելժ, վերջապես, Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանը անձրաժեշտ էին գտնում «Ճշգրտել» նաև վարդապետ բառի իմաստը՝ նրան վերագրելով դրկուր (բարձրագույն գիտական կոչում): Նշանակությունը⁶:

1 Հմմատ.՝ венерические болезни, որի նմանակությամբ էլ, ըստ երևություն կաղմաված է:

2 Գեղարդման էլ ժողովրդի մեջ տարածված է այն սովորությունը, որ լվածողիկը զնում են սենյակում՝ այդ միջատների դեմ պայքարելու համար:

3 Ալժմ՝ զեզա՞ռամիկ, հար,

4 Ալժմ՝ ներվալին տենդ:

5 Բլեճայ և մօռչ, քրոռով:

6 Այս բառի շարք բուն բանավեճ էր մզկում 1850—60 թթ.: Ստ. Նազարյանի հակառակորդները ծավորում էին նրան «անվեղար վարդապետ» կոչելով, իսկ զրադեմ՝ հավատացած լինելով այդ բառին իրենց տված իմաստի գիտական ճշտության մեջ, զորու էին զալիս Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանը և նույնիսկ «տերության գատաստանով» սպառում Ստ. Նազարյանի այդ կոչումը միմարկողներին. բայց զալիս էին զալիս Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանի այդ կոչումը՝ միմարկողներին. բայց զալիս էին զալիս Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանի այդ կոչումը՝ միմարկողներին. բայց զալիս էին զալիս Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանի այդ կոչումը՝ միմարկողներին. բայց զալիս էին զալիս Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանի այդ կոչումը՝ միմարկողներին. բայց զալիս էին զալիս Մ. Նալբանդյանը և Ստ. Նազարյանի այդ կոչումը՝ միմարկողներին.

3. *Փոխառյալ տերմինների մեծամասնությունը վերցված է ոռւսակենից կամ ոռւսակենի միջնորդությամբ:* Բանտում, սակայն, Մ. Նալբանդյանն այդ հիմնական սկզբունքից որոշ շեղում է կատարում՝ լայնորեն տարածված այնպիսի հասարակական-քաղաքական տերմինների ոռւսական ձևերի կողքին, ինչպես կոնստիտուցիա, ուսուլյուցիա, ուսակցիա և այլն, օգտագործելով նաև նրանց լատինական ձևերը՝ կոնստիտուցիոն, ուսուլյուցիոն, ուսակցիոն և այլն: Պատահականորեն է կատարված դա, թե ինչ-ինչ նպատակներով, շենք կարող ասել:

4. *Փոխառությունների տառադարձության խնդիրները*

Չափազանց կարևոր նշանակություն ունի փոխառությունների տառադարձության սկզբունքների հարցը: Մ. Նալբանդյանի օգտագործած փոխառյալ բառերը, ըստ տառադարձության կանոնների, կարելի է բաժանել հետևյալ կարգերի:

ա) Բառեր, որոնց հայերեն ձևերը կազմված են փոխառու լեզվում այդ ձեի գրությունը նկատի ունենալով: Այսպես է կազմված փոխառյալ բառերի մեծամասնությունը: Օրինակ՝ տարանաելլա-tarantella, ինկիֆիցիոն— inquisitio, մուզեոն— музей, խիռոպա- խիրургия, գաստոնոմիա— гастрономия, պոլիցիա— полиция, ֆակտ— факт, պեղագոգիա— педагогия, պեյզաժ— пейзаж:

Որոշ գեպերում այդ կատարվում է ի հակադրություն նույն բառի ավելի հին և ընդունված, լեզվի կանոններին (արտասահմական բաղադրական համապատասխան ձեի: Օրինակ՝ վաղուց ունեինք խոս և մետալ փոխառությունները, սակայն նա հարկ է համարում օգտագործել սրանց ոռւսական ձևերը խառն և մետալ, որը, իհարկե, վրիպում է:

բ) Հարկավոր է նշել, որ առանձին ազգերի անուններ ևս, ինչպես և որոշ հասուկ անուններ, «Հյուսիսափայլում» (նաև Մ. Նալբանդյան) օգտագործվում են 60-ական թթ. արդեն հնացած փոխառյալ ձևերով:

Ա ուսումնական քննություններով և համալսարանական հաստատություններով... եթե... «Մեղու»-ի հրատարակողը համարձակվել է ձեռնամերձ լինել նորա վարդապետությանը, ապա համատացած կաց, որ դորա համար պատասխանատու կլինի նա տերության դատաստանի առաջնորդ» (Նալբանդյան Մ., երկերի լիակատար ժողովածու, հ. 1, էջ 308): Ազելորդ է ասել, որ Մ. Նալբանդյանը և Ստ. Նալբարյանն այս հարցում սխալվում են, և ճիշտ էր Մ. Մսկրյանը, եթք գրում էր, թե գիտական կոչման համար պետք է դոկտոր բառը առանց թարգմանելու փոխ առնել, որովհետեւ այն «...ավելի նիշտ նշանակություն ունի այժմ և վրապական լեզվաց մեջ, քան թե մեր լեզվումը՝ բառ վարդապետ» («Ճողաբաղ», 1859, էջ 174, ծնթ.)։

Օրինակ՝ սկլավոն (ՆԾԵ, 447), ռումեն (Ն. ա., 447), Տրավիզոնաց (Հ, 10, 337), Սերաստիուպոլիս (ՆԾԵ, 419), Հռովմի (ՆԾԵ, 482, եկ՛, 4, 305), բայց և Հռովմի (Հ, 59, 5, 809):

5. Առանձին հետաքրքրության է արժանի հատուկ անունների, առանձնապես երկրների, աշխարհամասերի ու քաղաքների անունների հոլովման հարցը:

«Հյուսիսափայլը», «Ճռաքաղը» և «Մեղոն» միևնույն ժամանակ նշանած օտար հատուկ անունները բոլորովին տարբեր ձևով էին հոլովում, էլ չենք խոսում տառադարձության մասին:

Ստորև բերվող համադրական աղյուսակը դրա լավագույն ապացուցն է.

Առանձին անունների անուններ (ածականներ են. փերջափորությունները բաց թողնում)	«Հյուսիսափայլ» (տե՛ս, Նալբանդյան, «Ընակիր երկը 1953, էջ 173)	«Ճռաքաղ» (1958, էջ 37)	«Մեղոն. Հայուսանի» (1859, Էջ 19)
Москов—ск < аյ ий	Մոսկվայի	Մոսքուա	Մոսկովու
Киев—	Կիեֆ	—	Կիևու
Владимир—	Վլադիմիրու	Վլադիմիրա	Վլադիմիրու
Новгород—	Նովգորոդի	Նովգորոստ	Նովգորոդու
Казан—	Ղազանու	—	Ղազանու
Астрахан—	Հաշտարխանու	—	Աստրախանու
Сибир—	Սիբիրիայի	—	Սիբիրիո
Псков—	Պսկովյան	Փսկովա	Պսկովու
Смоленск—	Սմոլենսկյան	—	Սմոլենու
Эстланд—	Էստլանդիու	—	Էստլանդիո
Лифлянд—	Լիֆլյանդիու	—	Լիֆլյանդիո
Корель—	Կարելիայի	—	Կորելու
Твер—	Տվերի	Թվերսա	Տվերիո
Югор—	Յուգորի	—	Յուգորիո
Перм—	Պերմի	Փերմա	Պերմիո
Болгар—	Բոլգարիայի	Պոլգորիո	Բոլգարիո
Чернигов—	Չերնիգովի	—	Չերնիգովո
Рязан—	Րյազանու	—	Րյազանու
Ростов—	Ռոստովի	—	Ռոստովա
Вят—	Վյատսկի	Վյաթսքա	Վյատա

Բերված օրինակները ցույց են տալիս, որ՝

1. 60-ական թթ. չեն եղել օտար լեզուներից կատարված փոխառությունների տառադարձան հաստատուն, բոլորի կողմից ընդունված կանոններ:

2. Անկանոն է եղել նաև այդ տերմինների հոլովումը. պարբերականներից «Հյուսիսափայլը» դրանք ենթարկում է ի և ու հոլով-

ման, «Ճռաքաղը»՝ հիմնականում ա(լ) և ո(լ), իսկ «Մեղուն»՝ ու, ա(լ) և ո(լ):

1862թ. սկսած Մ. Նալբանդյանի մոտ տեսքները է նկատվում երկրների անունները ենթարկելու ո(լ) հոլովման (արևմտահայ գրական): Օրինակ՝ Ռուսիա (ՆԸԵ, 386), Իտալիա մեջ (ն.տ., 406), Ֆրանսիա, Բրիտանիա, Իռլանդիա, Ակովտիո (ն.տ., 407) Թյուրքիո (ն.տ., 577), Պրուսիա (ն.տ., 447), Գերմանիա (ն.տ., 562), Անգլիա (ն.տ., 486), Սպանիա (ն.տ., 493), Հուլանդիա (ն.տ., 510), Իտալիա (ն.տ., 522), Հմմտ.՝ նաև Ասիրիա (ն.տ., 508):

Մրանց կողքին ի հոլովման է ենթարկվում՝ Ամերիկա բառը՝ Ամերիկայի մեջ (Ելժ, 4, 306, Ելժ, 3, 318), մասնակի դեպքերում նաև՝ Եվրոպա և Խոտալիա բառերը՝ Եվրոպայի (ՆԸԵ, 370, 442), Իտալիայի (ՆՓ, 248), Հմմտ.՝ նաև Ամերիկե-ի (ՆԸԵ, 433):

Յուրահատուկ բացառական է կազմում Ֆրանսիա բառը՝ Ֆրանսիանեց (ն.տ., 571). Հմմտ.՝ նաև սեռ. Գրենլանդիու (ն.տ., 581):

Հոլովման ժամանակ -ա կամ -իա հանգ ունեցող բառերի մի մասը հոլովական վերջավորությունը դնում է գրանց փոխարեն: Օրինակ՝ ուղղ. Վարշավա, սեռ. Վարշավ-ի (ն.տ., 450). Հմմտ.՝ Խալուցինացիա—Հալլուցինաց -ու (ն.տ., 564), ատմոսֆերա—ատմոսֆեր -ի (Ելժ, 2, 30) և այլն:

Ի՞նչ ընթանուր հետեւորյուններ կարելի է հանել Մ. Նալբանդյանի լեզվի եվոլյուցիայի շարադրված փաստերից:

1. Նալբանդյանի 1858—60թթ.՝ «Հյուսիսափայլում» և Սվաճյանի «Մեղուն» տպագրված աշխատությունների լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա այդ շրջանի լեզվի բազմաթիվ հատկանիշներ գրական աշխարհաբարի մշակման հյուսիսափայլան ուղղության համակարգի սահմաններում զարգացել են ու ենթարկվել փոփոխության: Այդ զարգացումն ընթացել է գրական լեզվի կանոնները հղկելու, կոնկրետացնելու, նույն հիմնական հատկանիշներն ունեցող երեւութները մի օրինաշափության տակ գնելու ուղղությամբ: Դա հանգեցրել է. ա) որոշ հատկանիշների գծով գրաբարի, որպես նախորդ գրական լեզվի աղղեցության ուժեղացմանը. բ) որոշ գրաբարյան տարրերի աստիճանական դուրս մղմանը և փոխարինմանը աշխարհաբարյաններով: Այս պրոցեսները, որպես Մ. Նալբանդյանի լեզվի զարգացման ներքին օրինաշափություններ, շարունակել են իրենց ընթացքը նաև 1861—62թթ., եթե Մ. Նալբանդյանն արտասահմանում էր ստեղծագործում: 1861—62թթ., հնարավորու-

1 Խոսքը սեռականի ձևի մասին է:

2 Հմմտ.՝ Ռուսիոյ (Հ, 62, 5, 235):

թյուն չունենալով աշխատակցելու «Հյուսիսափայլին», Մ. Նալբանդյանը չի հրաժարվում և չի էլ մտածում հրաժարվել գրական լեզվի հյուսիսափայլյան մշակումից, հյուսիսափայլյան լեզվական մշակումից: 1858—62 թթ., ինչպես տեսականում, այնպես էլ գործնականում՝ լեզվական պրակտիկայում Մ. Նալբանդյանը պաշտպանում է գրական աշխարհաբարի մշակման հյուսիսափայլյան համակարգը: Սա էլ հիմք է տալիս Մ. Նալբանդյանի այս շրջանի լեզուն և հյուսիսափայլյան կոչելու:

Մ. Նալբանդյանի լեզվի հետագա էվոլյուցիայի ռողությունն ու ընթացքը պարզելու համար մեծ նշանակություն ունի 1863—65 թթ. քանտում գրած նրա աշխատությունների լեզվի ուսումնասիրությունը: Բանն այն է, որ միևնույն շրջանում Մ. Նալբանդյանը ստեղծագործում էր և այնպիսի մի լեզվով, որի մեջ հյուսիսափայլյան տարրերն էին իշխում («Նկատողություն»—Եկֆ, 3), և այնպիսի ոի լեզվով, որի մեջ առկա են բարբառների էական տարրերը «Քիմիաբար» գրական աշխարհաբարի մեջ մուծելու միջոցով հարստացնելու իր նոր հարցադրման առաջին պատուղները («Կրիտիկա», լեզվաբանական աշխատության հատվածներ և այլն), ինչպես և այդ երկու տարրերակների հատկանիշներից որևէ մեկին դեռևս գերակշռություն չտված լեզվով («Հեգելը և նորա ժամանակը»):

Սակայն գրական լեզվի մշակման վերաբերյալ բոլոր որակները Մ. Նալբանդյանի կողմից միևնույն գնահատականին չեն արժանանում: Ամենից առաջ հարկավոր է նշել, որ նրա 1863—65 թթ. լեզվում հյուսիսափայլյան տարրերը անցած շրջանի ազդեցություններ էին միայն և զուրկ ծավալվելու որևէ ունակությունից: Ե՛վ՝ տեսության մեջ, և լեզվական պրակտիկայում Մ. Նալբանդյանը ձգտում էր ազատվել գրանից: Այլ վերաբերմունք ուներ նա այն լեզվի նկատմամբ, որով գրված են «Կրիտիկան», «Մեր լեզվի արմատական բարեփոխության մի փորձ» աշխատությունը, Փարապեցու «Թղթի» թարգմանությունն ու ծանոթագրությունները: Դա հենց այն լեզուն էր, որը այլևայլ բարբառների էական տարրերը իր մեջ ձուլելուց (ու արևմտահայ գրականի հետ աստիճանաբար միացյուսվելուց) հետո կդառնար ընդհանուր հայության համար հարազատ, պիտանի, մատշելի գրական մի լեզու: Մ. Նալբանդյանն, իրեն հատուկ խրստապահանջությամբ, իր այս նոր հիմունքներով մշակած աշխարհաբարը բնավ կատարյալ չէր համարում: Այդ տեսակետից հետաքրքիր է հենց իր՝ Մ. Նալբանդյանի խոստովանությունը այն մասին, թե ինքը հույս ունի, որ իր ձեռնարկած լեզվաբանական աշխատությունների շուրջը բանակոիվ առաջ կգա, «... տարբեր վայրերից

գրված ընդդիմախոսություններում երկան կդան զանազան ձևեր...,»¹,
որոնք և ինքը հօգտագործի:

Մ. Նալբանդյանի լեզվում, 1863—66 թթ., նախորդ շրջանի Հետ
համեմատած Հսկայական տեղաշարժեր են կատարվել, որոնք պայ-
մանավորված էին գրական աշխարհաբարի մշակման, նրա հարս-
տացման աղբյուրների ու միջոցների մասին Մ. Նալբանդյանի ունե-
ցած հայացքների հետագա զարգացմամբ: Այս շրջանում նա գալիս
է այն եղրակացության, որ աշխարհաբարի մշակման հյուսիսա-
փալլյան ուղղության հեղինակները, գրաբարը որպես նոր գրական
լեզվի հարստացման հիմնական աղբյուր ընտրելով՝ գործնականում
ծայրահեղության մեջ էին ընկել՝ «ստրկանալով» նրան առանձնա-
պես 1861—62 թթ. («Հյուսիսափալլյան») շարադասության հարցերում:
Գրաբարի այդշափու օգտագործումը, ըստ Մ. Նալբանդյանի, ժողո-
վարդական լայն մասսաների կողմից մարսվել չէր կարող: Նման
հարցագրումը նրան այն հետեւթյան բերեց, որ անհրաժեշտ է հարս-
տացնել գրական աշխարհաբարը ժողովրդական տարրերով, բար-
բառների էական տարրերը գրական լեզվի մեջ քիմիաբար ձուլելու
միջոցով, դուրս մղելով համապատասխան գրաբարյան («Հյուսիսա-
փալլյան») հատկանիշները:

Համաձայն երկու գրական լեզուների աստիճանական միահյուս-
ման իր տեսության, 1863—66 թթ. Մ. Նալբանդյանը ձեռնամուխ է
լինում նաև արևելյան գրական աշխարհաբարը արևմտահայ գրա-
կանի բազմաթիվ իրողություններով հարստացնելու աշխատանք-
ներին. այդ կատարվում է ինչպես քերականական կառուցվածքի,
այնպես էլ բառապաշտարի մեջ բազմաթիվ արևմտահայ իրողու-
թյուններ մտցնելու ճանապարհով:

Անցումը 1858—1862 թթ. շրջանից 1863—66 թթ., միանգամից
չի կատարվում, այլ աստիճանաբար, երբ հավասարապես գործա-
ծական են ինչպես Հյուսիսափալլյան, այնպես էլ 1863—66 թթ.
լեզվական հատկանիշները: Զարգացման ուղղության տեսակետից՝
անցման շրջանին հաջորդող ժամանակաշրջանում² հիմնականում
գերազանցությունն աշխարհաբարյան ձևերին է տրվում:

¹ Մ. Նալբանդյան, երկերի լիակատար ժողովածու, հ. 4, էջ 194 (թարգմ.):

² Ոչ ժամանակագրորեն:

ՀԱՄԱԲՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՀԿ—Նազարյան Ստ., Առաջին հոգեզին կերակուր:
- ԱՀՀՀՊ—Աճառյան Հր., Հայոց լեզվի պատմություն:
- ԳՔ—Գամար Փաթիպայի արձակ և շափաբերական աշխատությունները:
- Ե—Նալբանդյան Մ., Երկեր, Ռոստով-Դոն, 1903—1906:
- ԵԾ—Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու:
- Թ—Ղազար Փարպեցու թուղթը: Մեղադրություն ստախոս արեղաների: Թարգմ առողջապահ և բացադրությունը Մ. Նալբանդյանց, Մ. Պետերբուրգ, 1868:
- ԹՀ—Թափառական ճրեա, թարգմ. Մ. Նալբանդյան, Մոսկվա, 1857:
- ԹԷ—Ղազար Փարպեցու թուղթը... Մ. էմինի 1853 թ. հրատարակությունը:
- Լ—Լուսա:
- ԿԲ—«Կոռոնկ հայոց աշխարհին»: (ԿԲ—60, 146—«Կոռոնկ հայոց աշխարհին», 1860 թ., էջ 146):
- Հ—«Հյուսիսափալլ»:
- (Հ—1, 73)—«Հյուսիսափալլ», 1858 թ., ամս. 1-ին, էջ 73—(Նալբանդյան): Հ—59,
1, 73—«Հյուսիսափալլ», 1859 թ., ամս. 1-ին, էջ 73 (Նալբանդյան), Հ—60,
1, 73—«Հյուսիսափալլ», 1860, ամս. 1-ին, էջ 73 (Նալբանդյան), Հ—60,
1, 73—«Հյուսիսափալլ», 1860, ամս. 1-ին, էջ 73 (Նալբանդյան), Հ—60,
1, 73—«Հյուսիսափալլ», 1860 թ., ամս. 1-ին, էջ 73, այլ հեղինակներ:
- ՀԵՀ—Նազարյան Ստ., Հանգես նոր Հայախոսության, Մոսկվա, 1857—58:
- ՀՔ—Համառոտ քննություն բրիտանիական համատության կրոնի, Մոսկվա, 1831:
- ՃԲ—«Ճռաքաղ», (ՃԲ—59, 164—«Ճռաքաղ», 1859 թ., էջ 164):
- ՄՃ—«Մորճ»:
- ՄՀ—«Մեղու Հայաստանի»: (ՄՀ—58, 111—«Մեղու Հայաստանի», 1858 թ., էջ 111):
- ՄԼԵ—Նալբանդյան Մ., Ընտիր երկեր, 1953:
- ՄՓ—«Նկատողություն», «Փորձ»-ի տեքստը:
- ՄՔՀԻ—«Նոր քնար Հայաստանի», դ.
- ՇՀՀ—Շատ հարկավոր Հարցմունքներ մարդու համար, Շուշի, 1832:
- ՎԿ—Նազարյան Ստ., Վարդապետարան կրոնի, 1853 թ.:
- Ք—Փարոզ ավագ ուրբաթ օրին համար, Շուշի, 1833:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՆԵՐԻ ՑԱՆԿ

- Անային Հր., Հայոց լեզվի պատմություն, 1951, 2-րդ մաս:
- Արարատյան Ա., Սիամանք վարդապետարանին կրոնի, Տիգիս, 1858;
- «Բագրավեպ», 1902, № 2:
- Խճիկյան Ար., Միքայել Նալբանդյանի կյանքի և գործունեության տարեգրությունը, Երևան, 1954:
- Մատուրյան Ալ., Ընտիր բանասեղծություններ, Երևան, 1937: «Հանդես գրական և պատմական», 3-րդ դ. 1890, 6-րդ դ., 1895:
- Հովհաննիսյան Ա., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք Ա., Բ:
- «Հյուսիսափալլ», 1858, 1859, 1860, 1861, 1862, 1864;
- «Ճռարադ», 1858, 1859, 1860:
- Մարգարյան Ալ., Միքայել Նալբանդյանի լեզվագիտական գործունեությունը:
- Մանելյան Լ., Ռուսակայ գրականության պատմություն, մաս 2, 1910:
- «Մուրճ», 1905, № 2—3, 4, 1906, № 1:
- «Մեղու Հայաստանի», 1858, 1859, 1860, 1861, 1862:
- Նազարյան Ատ., Հազարս փորձական Հոգեբանության, Մոսկվա, 1851: Վարդապետարան կրոնի, Մոսկվա, 1853: Խոաշին Հոգելին կերպուր, Մոսկվա, 1853: Հանդես նոր Հայախոսության, մաս 1, 2, Մոսկվա, 1857—58: Պալլու և Վիրգինիա, թարգմ., Մոսկվա, 1858:
- Նալբանդյան Մ., Երկերի լիակատար ժողովածու, Հա. 1, 2, 3, 4, 1940—49: Երեր, Ռուսական Գունդ, Հա. 1, 2, 1903—1906: Թափառական Հրեա, (թարգմ.), Մոսկվա, 1857: Ղազար Փարպեցու բուղթը: Մեղադրությունն ստախոս արեգաներին: Թարգմանությունք և բացադրությունք Մ. Նալբանդյանց, Ա. Պետերսուրգ, 1868: Քնտիր երկեր, ՀՍՍՌ ԳԱ հրատարակություն, Երևան, 1953:
- «Նոր-դար», 1891, № 138:
- Նոր քնար Հայաստանի, Ա., Բ., Գ., Դ (1855—1857):
- Նահազիգ Երվ., Միքայել Ղաղարյան Նալբանդյանց, Մոսկվա, 1897, Խաչատոր Արուվյանի կիսագրությունը, Երևան, 1945:
- Նահազիգ Սմբ., Հրապարակախոռ ձայն, Մոսկվա, 1881:
- Պատկանյան Ա., Ընտիր երկասիրություններ, Հա. 2:
- Լյաւկան Գ. Բ. «Արմանական լինգվիստիկական մասնաշենքի հայոց լեզվի տեսություններ» (1955—1956), առաջնահանձնաժողովական աշխատակից համապատասխան պատմություններ, Երևան, 1955.
- Սևակ Գ., Ժամանակակից հայոց լեզվի տեսություններ, Երևան, 1939: Ժամանակակից կից հայերենի համապատասխան պատմություններ, Երևան, 1948:
- Վահագյան Գր., Պատմական թերականություններ, Թիֆլիս, 1906:
- Տերենեյան Արև., Միքայել Նալբանդյան, ազգության հրապարակախոռություն, Ալեքսանդր, 1910:
- «Փորձ», 1877—78, № 4:

Սերգեյ Աշոտի Գալստյան
Сергей Ашотович Галстян
ԱԿՆԱՐԿՆԵՐ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
(1850—1860-ԱԿԱՆ ԲԹ.)

Պատ. խմբագիր՝ Ա. Ղ. Գալստյան

Հրատ. խմբագիր՝ Փ. Մ. Աղոնց

Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. Գորոյան

Նկարչական ձևավորումը՝ Կ. Հ. Յուրովնշյանի

Սրբագրիչ՝ Զ. Խ. Օրմանյան

ՎՃ 07108, Հրատ. 2073, պատվեր 10, ԽՀԽ 728, Տիրած 1500

Հանձնված է արտադրության 14/VII 1962 թ.:

Ստորագրված է տպագրության 28/V 1963 թ.:

Հրատ. 7,16 մամ., տպ. 8,25 մամ., թուղթ 60 × 92¹/₁₆

Գինը կազմով 43 կոպ.

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի Էջմիածնի տպարան



ԳԻՒՅ 43 ԿՈՎ.